

Նվիրվում է Նոր Նախիջևանի (Դոնի Ռոստով)  
հիմնադրման 240-ամյակին (1779 թ.)

\*

Посвящается 240-летию со дня основания  
Новой Нахичевани (Ростов-на-Дону) (1779 г.)

\*


Dedicated to the 240<sup>th</sup> Anniversary of the Foundation  
of Nor-Nakhidjevan (Rostov-on-Don) (1779)



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ВЕРЖИНЕ СВАЗЛЯН

РЕЛИКВИИ  
УСТНОГО НАРОДНОГО ТВОРЧЕСТВА  
АРМЯН РОССИИ  
(РОСТОВ-НА-ДОНУ И ПЯТИГОРСК)



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

VERJINÉ SVAZLIAN

RELICS OF THE  
ORAL TRADITION OF THE  
ARMENIANS OF RUSSIA  
(ROSTOV-ON-DON AND PYATIGORSK)

ИЗДАТЕЛЬСТВО ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ НАН РА  
PUBLISHING HOUSE OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY NAS RA  
ЕРЕВАН – 2020 – YEREVAN

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ

ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ  
ԲԱՆԱԿՈՐ ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ՆՃԽԱՐՆԵՐ  
(ԴՈՆԻ ՌՈՍՏՈՎ ԵՎ ՊՅԱՏԻԳՈՐՍԿ)

ՀՏԴ 39(=19):93/94  
ԳՄԴ 63.5(5Հ)+82.3(5Հ)+63.3  
Ս 850

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշումով*

Խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **Սարգիս Հարությունյան**

Ռուսերենի թարգմանիչ՝ **Գայանե Հարությունյան**  
Անգլերենի թարգմանիչ՝ **Տիգրան Ծուլիկյան**

### **Սվազլյան Վերժինե**

Ս 850 **Ռուսաստանի հայերի բանավոր ավանդույթի նշխարներ (Դոնի Ռոստով և  
Պյատիգորսկ) / Վ.Սվազլյան; ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինս-  
տիտուտ – Եր.: ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատ., 2020, 288 էջ:**

Աշխատությունն ընդգրկում է Ռուսաստանի հայերի բանավոր ավանդույթի նշխար-  
ներ՝ մեկտեղելով Դրիմից և Արցախից Ռուսաստան՝ Նոր Նախիջևան և Պյատիգորսկ  
գաղթած հայ բանասացների հաղորդած ժողովրդական բանավոր ստեղծագործու-  
թյունները, որոնք գրի են առնվել հեղինակի կողմից:

Աշխատության պատմաբանագիտական ուսումնասիրությունները ներկայացվում են  
նաև ռուսերեն և անգլերեն: Ժողովածուն օժտված է բանասացների և նրանց հա-  
ղորդած նյութերի փաստագրական աղյուսակներով:

Նախատեսվում է ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 39(=19):93/94  
ԳՄԴ 63.5(5Հ)+82.3(5Հ)+63.3

ISBN 978-9939-886-08-4

© Սվազլյան Վ., 2020  
© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2020

*Печатается по решению ученого совета  
Института археологии и этнографии НАН РА*

Редактор: член-корр. НАН РА

*Саркис Арутюнян*

Перевод с армянского на русский:

*Гаянэ Арутюнян*

Перевод с армянского на английский:

*Тигран Цуликян*

### **Свазлян Вержине**

**Реликвии устного народного творчества армян России (Ростов-на-Дону и Пятигорск)/В. Свазлян; Институт археологии и этнографии НАН РА – Ер., Изд.-во ИАЭ НАН РА, 2020, 288 стр.**

В работе рассматриваются реликвии устного народного творчества армян, переселившихся в Россию (в Новую Нахичевань и Пятигорск) из Крыма и Арцаха. Вошедшие в работу историко-фольклористические исследования, записанные нами с уст сказителей-армян, представлены также на русском и английском языках.

В сборник включены документальные таблицы материалов респондентов-сказителей и информация о них самих.

Книга рассчитана на широкую читательскую аудиторию.

© СВАЗЛЯН В., 2020

© Институт археологии и этнографии НАН РА. 2020

*Printed by decision of the Scientific Council  
of the Institute of Archaeology and Ethnography of NAS RA*

Editor: Academician of the NAS RA

*Sargis Haroutyounian*

Translated from Armenian into Russian:

*Gayane Haroutyounyan*

Translated from Armenian into English:

*Tigran Tsoulikian*

### **Svazlian Verjine**

**Relics of the Oral Tradition of the Armenians in Russia (Rostov-on-Don and Pyatigorsk)/V. Svazlian; Institute of Archaeology and Ethnography of NAS RA – Yerevan, Publishing House of IAE NAS RA, 2020, 288 p.**

The work includes relics of the oral tradition of the Armenians of Russia, combining the primary source popular oral creations, communicated by the Armenian narrators emigrated from Crimea and Artsakh to Russia – Nor-Nakhidjevan and Pyatigorsk, which have been written down by the author. The historico-folkloric studies of the work is presented also in Russian and English languages.

The collection is supplied with Documentary Tables of the narrators and their communicated materials.

The book is intended for a wide circle of readers.

© SVAZLIAN V., 2020

© Institute of Archaeology and Ethnography of NAS RA, 2020

## ՆԱԽԱԲԱՆ

1959 թ. սեպտեմբեր ամսին Սովետական Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքը կազմակերպել էր «Համալիր գիտարշավ» դեպի Ռուսաստանի (ՌՍՖՍՀ) Դոնի Ռոստովի մարզի Նոր Նախիջևանի (Պրոլետարական շրջան) հայաբնակ վայրերը: Գիտարշավն ընդգրկում էր Հայաստանի Գիտությունների ակադեմիայի տարբեր ինստիտուտների և թանգարանների 16 մասնագետ գիտաշխատողների:

Հայաստանի ԳԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի տնօրինության հանձնարարությամբ, որպես ասպիրանտ, ես ևս մասնակցել եմ այդ գիտարշավին: Սույն աշխատասիրությունը նվիրված է Դրիմի հայերի խրթին բարբառով իմ գրառած ինքնատիպ բանահյուսական նշխարներին:

Նոր Նախիջևանում բնակվող հայերից բարբառագիտական սկզբունքներով իմ գրի առած «*Դրիմից Նոր Նախիջևան գաղթած հայերի բանահյուսական նշխարները*» ձեռագիր ժողովածուն պահվում էր ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում՝ **Վերծինե Սվազյանի ֆոնդում**, FS: 3740-3907: Այն հրատարակվում է սույն հատորով:

\* \* \*

Հետագայում՝ 1964 թվականի ամռանը Հայաստանի գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրինությունն ինձ գործուղել էր Ռուսաստանի Ստավրոպոլի երկրամասի Պյատիգորսկ քաղաքը, որպեսզի ուսումնասիրեմ այնտեղ ապրող հայ էթնիկ խմբի ներկայացուցիչների կենցաղն ու բանահյուսությունը:

Պյատիգորսկում բնակվող Արցախի հայերից բարբառագիտական սկզբունքներով իմ գրի առած «*Պյատիգորսկի հայերի բանահյուսական նշխարները*» ձեռագիր ժողովածուն պահվում էր ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում՝ **Վերծինե Սվազյանի ֆոնդում**, FS: 3444-3644: Այն ևս հրատարակվում է սույն հատորով:

## ПРЕДИСЛОВИЕ

В сентябре 1959 г. Отделение гуманитарных наук Академии наук Советской Армении организовало комплексную экспедицию в Новую Нахичевань Ростовской области РСФСР с целью проведения этнографических исследований в населенных армянами районах Новой Нахичевани (Пролетарский район). В состав экспедиции входили 16 научные сотрудники разных академических институтов и республиканских музеев Армении.

Будучи молодой аспиранткой, по решению дирекции Института литературы им. М. Абеяна АН Армении, я также была включена в эту научную экспедицию. Данная работа посвящена собранным мною уникальным фольклорным реликвиям, созданным на сложнейшем диалекте крымских армян.

Записанные мною материалы по народному фольклору Новой Нахичевани вошли в рукописный сборник *«Фольклорные реликвии армян-переселенцев из Крыма в Новую Нахичевань»*, который хранится в архиве фольклора Института археологии и этнографии НАН РА, в **Фонде Вержине Свазлян**, FS: 3740-3907. Указанный сборник издается в данном томе.

\* \* \*

Впоследствии, в 1964 г. дирекция Института археологии и этнографии АН Армении командировала меня в Пятигорск (Ставропольский край, Россия) с целью изучения быта и фольклора живущих там представителей армянского этноса.

Материалы по фольклору Арцаха, записанные и собранные мною по диалектологическим принципам, вошли в рукописный сборник *«Фольклорные реликвии армян Пятигорска»*, который хранится в архиве фольклора Института археологии и этнографии НАН РА, в **Фонде Вержине Свазлян**, FS: 3444-3644. Указанный сборник также издается в данном томе.

## PREFACE

In September, 1959, the Department of Public Sciences of the Academy of Sciences of Soviet Armenia had organized a complex scientific expedition to Nor (New)-Nakhidjevan (the Proletarian Region) in the Rostov-on-Don province of the Russian SFSR. It involved 16 scientific workers of various Institutes of the Academy of Sciences and Republican Museums of Armenia.

I was then newly admitted with flying colors to the post-graduate course, and the direction of the Institute of Literature after Manouk Abeghian of the Armenian Academy of Sciences recommended me to participate in that scientific expedition. The present work is dedicated to the unique folkloric relics I have written down in the abstruse dialect of the Crimea-Armenians.

The hand-written collection, entitled “*The Relics of the Popular Folklore of the Armenians emigrated from Crimea to Nor-Nakhidjevan,*” I have inscribed from the Armenians living in Nor-Nakhidjevan, was being kept in the folklore archives of the Institute of Archeology and Ethnography, NAS RA, in the **Verjiné Svazlian Fund**, FS 3740-3907. It is published in this book.

\* \* \*

Subsequently, in the summer of 1964, the direction of the Institute of Archaeology and Ethnography of the Academy of Sciences of Armenia had sent me on an academic mission to the town of Pyatigorsk in the territory of Stavropol of Russia to study the lifestyle and folklore of the Armenian ethnic group living there.

The hand-written collection, entitled “*The Relics of the Armenian Popular Folklore of Pyatigorsk,*” I have inscribed, according to the dialectological principles, from the Armenians of Artsakh, living in Pyatigorsk, was being kept in the folklore archives of the Institute of Archeology and Ethnography, NAS RA, in the **Verjiné Svazlian Fund**, FS 3444-3644. It is also published in the present volume.



ՆՃԽԱՐՆԵՐ  
ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ  
ՀԱՅԵՐԻ  
ԲԱՆԱՎՈՐ ԱՎԱՆԴՈՒՅԹԻ

Նվիրվում է Նոր Նախիջևանի (Դոնի Ռոստով)  
հիմնադրման 240-ամյակին (1779թ.)

# ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

## ՊԱՏՄԱԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ



### I.

#### ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հայոց Բագրատունյաց թագավորության անկումից (1045 թ.) հետո Անի մայրաքաղաքի և շրջակա գյուղերի հայ գաղթականների որոշ մասը բնակություն է հաստատել ոչ միայն Կիլիկիայի տարածքում, այլև՝ Ղրիմում, և այնտեղ ապրել դարեր շարունակ:

XIII դարում, երբ Ղրիմ են ներխուժում մոնղոլ-թաթարները, այլոց հետ միասին՝ հայերը ևս, ենթարկվում են Ոսկե հորդայի տիրապետությանը:

Հետագայում՝ 16–17-րդ դդ., դրիմահայերի թիվը ստվարացել է, հատկապես Ջալալիների շարժման ժամանակ ծայր առած արտագաղթի պատճառով:

Ղրիմում հայերը բնակվում էին թերակղզու Կաֆա (Թեոդոսիա), Սուդակ (Սուրոժ), Սուրխաթ (Հին Ղրիմ), Ղարասուրբազար, Ակմեչիթ (Արմյանսկ) և այլ քաղաքներում, ինչպես նաև՝ Խայալ, Բախչելի, Հորդալանսկ, Թովիթի, Խամշլի, Շահինշահ, Նախիջևան և այլ գյուղերում:

Հայերը Ղրիմում բնակչության թվով երկրորդ տեղն էին գրավում թաթարներից հետո:

Ղրիմահայերն զբաղվում էին տարբեր արհեստներով, իսկ կիսաքոչվոր թաթարները մեծ մասամբ անասնապահներ էին<sup>1</sup>:

1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի հաղթանակից հետո վերջինիս հեղինակությունն ավելի էր մեծացել: Այդ ժամանակաշրջանի պատմաքաղաքական իրադարձություններին է նվիրված ակադ. Վ. Բ. Բարխուդարյանի «Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմությունը» երկհատոր արժեքավոր ուսումնասիրությունը, որտեղ հեղինակն անդրադառ-

1 Միքայելյան Վ. Ա., Ղրիմի հայկական գաղութի պատմություն (1801-1917), Երևան, 1970, էջ 55-56:

նալով դրինահայությանը, նշում է. «...Հայտնի իրողություն է, որ այն ժամանակներից, երբ Ռուսաստանն սկսեց ծավալվել դեպի հարավ և արևելք, նա պահանջ զգաց սահմանամերձ երկրներում աջակիցներ և համակիրներ գտնելու: Հայերը, տառապելով թուրքական և պարսկական ծանր լծի տակ, բնականաբար, իրենց հայացքը հառում էին աստիճանաբար հզորացող ու ընդարձակվող հյուսիսային կայսրության կողմը»<sup>2</sup>:

Հայ անվանի պատմաբան Առաքել Բաբախանյանը՝ Լեոն, խորամուխ լինելով պատմական փաստերի մեջ, կարևոր և հետաքրքիր մանրամասներ է ներկայացրել. «...Այդ պատերազմի և մանավանդ դաշնադրության ժամանակից սկսում է արագ անուն հանել և փառքի աստիճաններով բարձրանալ մի մարդ, որին վիճակված էր Եկատերինայի թագավորության սյունը դառնալ: Այդ մարդը Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտյոմկինն էր, որ հետո ստացավ «Տավրիկյան իշխանի» տիտղոսը: Հին միջակ-ազնվական մի ընտանիքի որդի Պոտյոմկինն արժանանում է Եկատերինայի առանձին ուշադրությանը և դառնում է նրան շատ մոտիկ, շատ սիրելի մարդ: ...Պետական բոլոր գործերը Պոտյոմկինի ուզածի պես էին ղեկավարվում, արտաքին քաղաքականությունը նրա ձեռքին էր: 1768-1774 թթ. պատերազմից հետո Հարավային Ռուսաստանը ստացել էր ահագին կարևորություն: Պոտյոմկինը նշանակվեց այստեղի ընդհանուր կառավարիչ: Իշխան Պոտյոմկինի մոտիկ ծանոթներից մեկն էր Հովհաննես Լազարյանը: 1747 թ. Նոր Ջուղայից Աղազար կամ Եղիազար անունով մի հայ վաճառական իր չորս որդիների հետ գաղթեց Ռուսաստան: Դա Լազարյան հոջակավոր տոհմի նախահայրն էր: Հովհաննես Լազարյանը նրա ավագ որդին էր: Նա ուներ բնական մեծ խելք, իսկ Մոսկվայում ստանալով լավ կրթություն, փոխադրվեց Պետերբուրգ, մշտական բնակություն հաստատեց այստեղ և միանգամից մոտեցավ պետական բարձր շրջաններին: Նա մեծ հարստության տեր էր, բայց և այնպես մտավ պետական ծառայության, ստացավ բարձր պաշտոններ: Պետական բանկի վարչության անդամներից մեկն էր, և, իբրև հարուստ ֆինանսագետ, նշանավոր ծառայություններ է մատուցել ռուսաց կառավարությանը: Լազարյանը նաև խոշոր կալվածատեր էր: Իմիջիայրոց, նա գնեց գանձարանից Պետերբուրգի շրջակայքում գտնվող Ռոպչա անունով կալվածք, որ կայսերական տոհմի սեփականություն էր և իր մեջ ուներ մի ամբողջ պալատ:

Հարուստ ու փարթամ հայ ազնվականը հասավ այնպիսի աստիճանի, որ այլևս ոչինչ ավելի բան չէր կարելի պահանջել բախտից: Եկատերինայի թա-

2 **Բաբխուդարյան Վ. Բ.**, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779–1861 թթ.), Երևան, 1967, էջ 63:

գավորության բոլոր փայլուն աստղերը, բոլոր հռչակավոր պետական մարդիկ նրա մոտիկ ծանոթներն ու բարեկամներն էին՝ Օռլով եղբայրներ, իշխան Պոտյոմկին, Բեգբորոդկո, Վյազեմսկի, Ռումյանցև, իշխան և կոմս Զուբովներ, իշխան Սուվորով, Կուրակին և ուրիշ շատերը: Ռուսաշայի պալատում հաճախ հյուր էին լինում կայսերական ընտանիքի անդամները, Պետերբուրգ այցելող եվրոպական թագակիր անձինք և թագավորող տների անդամները: Հովհաննես Լազարյանը, իբրև սիրալիր տանտեր, ընդունում էր իր հյուրերին արևելյան ճոխությամբ: Եկատերինան, նրա որդին ու թոռները նույնպես սիրում էին հյուրընկալվել հայ հարուստի հարկի տակ, և, փոխադարձաբար, Լազարյանն էլ հաճախ հրավիրվում էր կայսերական պալատ: Ավստրիայի կայսրը նրան շնորհեց կոմսի տիտղոս: Սակայն այսքան փառքը չդարձրեց Լազարյանին մի անմատչելի հպարտ իշխանավոր, մանավանդ մոռացնել չտվեց, որ նա խեղճ, ցիրուցան մի ազգի գավակ է: Եվ պերճ իշխանավորն իր բարձր դիրքով, իր մեծ հարստությամբ աշխատում էր ամեն կերպ օգտակար լինել իր ազգակիցներին: Նա էր, որ ռուս կառավարությանը տեղեկություններ էր հաղորդում արևելյան գործերի մասին, պաշտպանում էր հայերի շահերը, խնդրում էր նրանց համար շնորհներ և արտոնություններ: Նա էր, որ հայերին Ռուսաստան գաղթեցնելու միտքն էր արձարծում պետական բարձր շրջաններում, համոզված լինելով, որ իր ազգակիցներն այդ ճանապարհով կազատվեն ասիական բռնակալների ճանկերից»<sup>3</sup>:

Անդրադառնալով Եկատերինա II կայսրուհու հրամանով իրականացվող դրիմահայերի գաղթին՝ ակադ. Մ. Ներսիսյանը գրել է. «...Գաղթը կազմակերպելու գործը որոշակի ընթացք է ստանում 1778 թ. ապրիլ ամսին, երբ Գրիմի ռուսական գորքերի հրամանատար է նշանակվում, արդեն ճանաչման արժանացած, վճռական և եռանդուն գեներալ Ա. Վ. Սուվորովը: Նա անհապաղ, ձեռնամուխ է լինում իրեն հանձնարարված բարձր ու դժվարին գործին, անմիջապես կապ է ստեղծում հայ և հույն հոգևորականության հետ: Խոստումներ և անհրաժեշտ ցուցումներ է տալիս, ընդունում հայ բնակչության պատվիրակներին, հորդորներ անում և ընդհանուր առմամբ աշխուժացնում գաղթի նախապատրաստումը»<sup>4</sup>:

1778 թ. ամռանը գեներալ Ա. Վ. Սուվորովի գլխավորությամբ կազմակերպվել է 12.600 դրիմահայերի գաղթը դեպի Ռուսաստան և Դոն գետի ափին հիմնադրվել է Նոր Նախիջևան քաղաքը: Եկատերինա II կայսրուհին 1779 թ.

3 **Լեո**, Երկերի ժողովածու, տասը հատորով, Երրորդ հատոր, Երևան, «Հայաստան» հրատ., 1973, էջ 329-330:

4 **Нерсисян М. Г.** Из истории русско-армянских отношений. Книга первая. Ереван, 1956, с. 16.

նոյեմբերի 14-ի ռուսերեն և հայերեն գրված հրովարտակով բազմաթիվ արտոնություններ է շնորհել նորահաստատ հայ բնակչությանը՝ 10 տարով ազատել է հարկերից, իրավունք շնորհել ազատ առևտուր անել Ռուսաստանում և նրա սահմաններից դուրս, զբաղվել երկրագործությամբ՝ յուրաքանչյուր շնչին հատկացնելով 30 դեսյատին հող, նաև իրավունք է տվել, որ նրանք հիմնեն գործարաններ ու ֆաբրիկաներ: Այլ խոսքով՝ խրախուսվում էր զարգացնել ամեն տեսակ արտադրություն և արդյունաբերություն: Վերապահվել է դավանանքի ազատության իրավունքը, մայրենի լեզվով դատավարության իրավունքը, որն իրականացվել է Աստրախանի հայոց «Դատաստանագրքով»<sup>5</sup>: Այսպիսով, Դոն գետի ափին հիմնադրվել է Նոր Նախիջևան քաղաքը:

Հայկական համայնքն ստացել է ինքնավարություն, ունեցել է 24 հոգուց բաղկացած քաղաքային Դոմա և հայ քաղաքապետ: Հայկական մագիստրատը ներկայացրել է տեղի դատարանը, ոստիկանական և գործադիր իշխանության իրավունքներով<sup>6</sup>: 1811 թ. հայկական գյուղերում հիմնվել են Տանուտերի ընտրովի պաշտոններ և հինգ հոգուց բաղկացած Ավագանու խորհուրդ: Հաստատվել է Նոր Նախիջևանի զինանշանը՝ հայերի աշխատասիրությունը խորհրդանշող մեդուների և փեթակների պատկերով<sup>7</sup>:

Նոր Նախիջևանը կառուցվել է ռուս հայտնի ճարտարապետ Ի. Ե. Ստարովի կազմած ու հաստատված նախագծով: Քաղաքն ուներ կենտրոնաձիգ փողոցներ, կենտրոնում՝ հրապարակ, որը շրջապատված էր առևտրականների և արհեստավորների (դերձակ, ոսկերիչ, ատաղձագործ, պայտար, կաշեգործ, պատշար և այլն) խանութներով: Քաղաքից ոչ հեռու հիմնվել են Չալթըր, Թոփթի, Մեծ Սալա, Սուլթան Սալա, Նեսվետայ (Նեսվիտայ) հայկական գյուղերը, որոնք կազմել են հայկական գաղթավայրի անբաժան մասը<sup>8</sup>:

Նոր Նախիջևանի հայերն զբաղվել են *գյուղատնտեսությամբ* (հացահատիկի մշակում, խաղողագործություն, ոչխարագործություն, շերամապահություն), *արհեստագործությամբ* (կաշեգործություն, ոսկերչություն, դարբնություն, պայտարություն, դերձակություն), *արքայադրությամբ* (ճարպի, բրդի, մետաքսի, աղյուսի, ծխախոտի) և *առևտրով*: Հայ վաճառականներն առևտուր են արել Դոնի Ռոստովում, Նովոչերկասկում, Տագանրոգում, Նիժնի Նովգորոդում, Ստավրոպոլում, Եկատերինոդարում և այլուր: Նրանք Ասիայի և Եվրոպայի մի շարք երկրներ են արտահանել ցորեն, ճարպ, բուրդ, յուղ, ձկնկիթ, ծխախոտ և այլ ապրանքներ:

5 **Բարխուդարյան Վ.Բ.**, նշվ. աշխ., էջ 70-71:

6 Նույն տեղում, էջ 75:

7 Նույն տեղում:

8 Նույն տեղում, էջ 55:

Նոր Նախիջևանը եղել է Նովոռուսիայի նշանավոր վաճառաշահ քաղաքներից մեկը:

1812 թ. քաղաքը ունեցել է 8.484, իսկ գյուղերը՝ 2.633 հայ բնակիչ, որոնք հետո ավելի են աճել ու բարգավաճել:

Ճանապարհորդները, լինելով Նոր Նախիջևանում իրենց օրագրերում հիացմունքով են հիշատակել տնտեսական և մշակութային վերելք ապրող քաղաքի մասին:

XVIII դ. վերջին կառուցվել են Սբ. Խաչ վանքը, ապա նաև վեց այլ եկեղեցիներ՝ Սբ. Լուսավորիչ, Սբ. Նիկողայոս, Սբ. Գևորգ, Սբ. Կարապետ, Սբ. Թեոդորոս և Սբ. Համբարձում: Հիմնվել են հայկական դպրոցներ, որտեղ գործել են նաև գրական-թատերական խմբակներ: Նոր Նախիջևանում առաջին դպրոցը բացվել է 1784 թ., Սբ. Խաչ վանքին կից: 1811 թ. հիմնվել է հայկական հոգևոր ուսումնարան, իսկ հետագայում՝ ծխական և գավառական դպրոցներ: 1857 թ. բացվել է առաջին իգական դպրոցը: 1880 թ. Ռաֆայել Պատկանյանի ջանքերով քաղաքում հիմնվել է արհեստագործական դպրոց, իսկ 1881 թ.՝ թեմական ուսումնարան: Հայկական գյուղերում գործել են ծխական դպրոցներ: 1789 թվականից Սբ. Խաչ վանքում շուրջ վեց տարի գործել է Հովսեփ Արք. Արղությանի ջանքերով Պետերբուրգից փոխադրված «Խալդարյան» տպարանը, հրատարակվել են հայերեն և ռուսերեն մի շարք գրքեր ու պարբերականներ:

1830-ական թվականներին Թեոդորոս Խաղամյանի և Սարգիս Տիգրայանի ջանքերով հիմնվել է Հայկական թատրոնը:

Այս բոլոր իրագործումները կատարվել են ազնվատոհմիկ իշխան Հովհաննես Լազարյանի մշտական բոլորեքյան աջակցությամբ և Հովսեփ Արք. Արղությանի անդուլ ջանքերով: Նա առաջին իսկ օրերից գործվանքով ընդունել և ցուցակագրել է Ղրիմից բերված շուրջ 300 գրչագիր մատյանները, եկեղեցական իրերն ու անոթները և ձեռնամուխ եղել գաղթականների առօրյա կարիքները հոգալուն<sup>9</sup>:

Ազգային, մշակութային և հասարակական աշխույժ կյանքը նպաստել է ականավոր գործիչների ի հայտ գալուն, ինչպիսիք էին՝ բանաստեղծ, պետական, եկեղեցական գործիչ Հարություն Ալամդարյանը, գրող-հրապարակախոս Միքայել Նալբանդյանը, բանաստեղծ Ռաֆայել Պատկանյանը, քաղաքական գործիչներ՝ Ալեքսանդր Մյասնիկյանը, Սիմոն Վրացյանը, Սարգիս Սրապիոնյանը (Լուկաշին), պատմաբան-արվեստաբան Ալեքսեյ Ջիվելեզովը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ Չորեքյանը, գրող Մարիետա Շահինյանը, գեղանկարիչներ՝ Մարտիրոս Սարյանը, Գրիգոր Շլոյանը, Սեյրան


9 Լեռ, նշվ. աշխ., էջ 331:

Խաթանաջանը, Մկրտիչ Գիզգիզյանը, ճարտարապետ Մարկ Գրիգորյանը, իրավաբան Գրիգոր և հրապարակախոս Եղիա Չուբարյանները և շատ ուրիշներ:

Քաղաքային և գյուղական կառավարման ազգային մարմինները Նոր Նախիջևանում պահպանվել են մինչև 1880 թ.: Այնուհետև հիմնվել են «Մարդասիրական» (1868), «Նոր Նախիջևանի հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձություն» (1889), «Բարեգործական» և այլ ընկերություններ, որոնք իրականացրել են Դոնի հայկական համայնքի ինքնավարությունը:

Խորհրդային իշխանության տարիներին գյուղական դպրոցներում պահպանվել է հայոց լեզվի դասավանդումը. լույս են տեսել երկլեզու՝ հայերեն, ռուսերեն, շրջանային թերթեր:

Հետագայում, Սովետական Հայրենիքում ծավալված համատարած գրագիտության պայմաններում համայնքի հայությունը չէր կարող անաղարտ պահել իր երբեմնի բանավոր ավանդույթներն իրենց՝ Ղրիմի, խրթին բարբառով: Հետևաբար, 1959 թ. առավելապես ավագ սերնդի ներկայացուցիչներն են եղել իմ բանասացները, և ես գրի եմ առել այն, ինչ հիշել են տարեցները, քանի որ երիտասարդները նույնիսկ չէին խոսում իրենց մայրենի բարբառով: Այդ տարիներին տակավին տեխնիկա չկար, և ես ձեռքով եմ գրառել:



## II.

### ՆՈՐ ՆԱԽԻՉԵՎԱՆԻ ԲԱՆԱՍԱՑՆԵՐԸ

Գիտարշավի 20 օրերի ընթացքում ծանոթացել և գրառումներ եմ կատարել (161 միավոր) ավագ սերնդի 15 *բանասացներից*, որոնց մասին բնութագրական հակիրճ տվյալներն ու նրանց հաղորդած նյութերի խոսքարվեստի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են՝ նշելով գրառման օրն ու վայրը:

**ԾԽՅԱՅԱՆ ԳԵՂԵՑԻԿ** («Կեղեցիկ մեծա» (Մեծ մայր), ծնվ. 1887 թ., գ. Չալթըր, տնային տնտեսուհի): Նոր Նախիջևանի Չալթըր գյուղում առաջինը ծանոթացա Կեղեցիկ Մեծային: Նա ծնվել է Չալթըրում և արդեն 72 տարեկան է: Ծխայյան Գեղեցիկը, իրոք, գեղեցիկ է: Նա իր բազմանդամ ընտանիքի պատկանելի մեծան է: Կեղեցիկ մեծան գրագետ է, սիրում է ընթերցել հայ գրականության դասականներին, որոնց գրքերի նույնիսկ պատառոտված էջերը պահում է՝ որպես նվիրական սրբություն:

Կեղեցիկ մեծան պատմել է դաստիարակչական բնույթ ունեցող «Շէն թաքավորին *սիշիզը*» հեքիաթը, որն օժտել է նաև գողտրիկ օրորոցային երգի հատվածներով: Նա հիշում է Ղրիմի մի շարք երգեր, ընդ որում՝ «*Խրիմի յերքը*», որ գաղափար է տալիս իրենց նախկին բնակավայր՝ Խարա Սուի և նրա հայ բնակիչների կենցաղի մասին: Նա երգել է նաև հարսանեկան ծիսական երգեր՝ «*Հարսի հրաժեշտը*» իր հայրական տնից, «*Մսացէք պարել, սիրեզանքույրեր*» և «*Փէսա հարցնէլու պարք* (բարք)», այսինքն՝ սովորույթը: Նա հաղորդել է «*Խաղա՛, աղջիկս, խաղա՛*» պատկերավոր ու տպավորիչ երգը, որտեղ ընդգծվում է նրանց հատուկ վերաբերմունքը հագ ու կապի, նաև շքեղ արդ ու զարդի և ունեցվածքի նկատմամբ: Նա երգել է նաև «*Հայդեցէք, դղանք, խրդրըլեզ էշթանք*» ուխտագնացության երգը և «*Զարթիր, լառ՝*»-ն՝ իր խրոխտ ու ոգեշունչ կատարումով: Կեղեցիկ մեծան հակառակ իր առաջացյալ տարիքի ունի լավ ձայն, խոսում է աշխույժ և գրավում ունկնդիրների ուշադրությունը:

Կեղեցիկ մեծայի խոսած բարբառն անաղարտ չէ. բարբառային ձևերին հաճախ նա խառնում է գրական, նաև ռուսերեն բառեր: Նման երևույթը նկատելի է և՛ հնչյունաբանության, և՛ շարահյուսության ասպարեզում: Միևնույն բառը հաճախ նա տարբեր հնչյուններով է արտասանում, օրինակ՝ էղիլ է, էղել է, յեղել է և այլն: [8 *սեպտեմբերի*, 1959 թ., գ. Չալթըր]

**ԲԱՐԱՇՅԱՆ ԱՆՈՒՇ** («Անուշ մեծա», ծնվ. 1878 թ., գ. Մեծ Սալա, տնային տնտեսուհի): Նոր Նախիջևանի այս գիտարշավի իմ ամենատարեց բանասացն է 81-ամյա Անուշ մեծան:



Նա ծնվել է Սուրբ Խաչում, հետագայում ծնողների հետ փոխադրվել է Մեծ Սալա, որտեղ և ապրում է իր տղաների, հարսների և բազմաթիվ թոռնիկների հետ:

Անուշ մեծան քչախոս է, գանգատվում է, որ հիշողությունն սկսել է իրեն դավաճանել և, իրոք, ժողովրդական «Դժիկոն» հեքիաթի տարբերակն է նրա պատմած «Բառսուն ջան սրանտղը» հեքիաթի հետաքրքիր դրվագները, որոնք, ցավոք, նա արդեն չէր հիշում մինչև վերջ, որ ինձ պատմեր, սակայն հիշում և վերարտադրում էր «Չար նագարի (ուժ)» և «Թունավորվածի» հմայական, վաղնջական աղոթքները: [14 սեպտեմբերի, 1959 թ., գ. Մեծ Սալա]

**ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՄԱՆՎԵԼ** («Դախսի Մանվել», ծնվ. 1886 թ., գ. Թովթի, կոլտնտեսության պահակ): Թովթի գյուղի կոլտնտեսության բանջարանոցում հավաքված ձմերուկի, սեխի և դդումի կույտերի մոտ հանդիպեցի «Բոստանի ստորոժ» Սողոմոնյան Մանվելին, որի առույգ դեմքը, ֆիզիկական և հոգեկան կարողությունները երբեք չեն մատնում նրա առաջացյալ տարիքը: 73 տարեկան է Մանվելը, բայց մինչև օրս էլ Թովթի գյուղում խրախճանք չի լինում, որին չմասնակցի ու չծաղկեցնի: Այդ իսկ պատճառով համազյուղացիները նրան մկրտել են «Դախսի (տաղասաց) Մանվել» անունով:

Հարսանիքներին երգած նրա երգերից գրի եմ առել «Հարսի հրաժեշտը», «Փեսա հարցնելու պարք (բարք)», «Հարսանիքի երգ», «Զանիգս, յէգ» երգերը:

Նա գիտի նաև մի շարք ժողովրդական հեքիաթներ ու նովելներ, որոնցից գրի եմ առել՝ «Թաթօն յեվ Փեթրիգէլը», «Չար բիանային հախէն էգօղ հարսը», «Բարինային խէլքը» և այլն: Պատմում է կենդանի հետաքրքրությամբ, մանրամասն նկարագրելով դեպքերն ու դեմքերը: Պատմելիս հաճախ այնքան է ոգևորվում, որ նույնիսկ հայիոյանքներով է համեմում իր բանավոր խոսքը: Խոսում է Ղրիմի և տեղի աղավաղված բարբառներով, շատ հաճախ հայերեն համապատասխան բառեր չհիշելով, ոռուներեն բառերը հայկական քերականության կանոններին ենթարկելով՝ օգտագործում է հետևյալ ձևով. «պագդարովիտ անէլ», «պապադատ ըլլալ», «սագլասիտ ըլլալ», «ոասսերոյաղ էղան» և այլն: [11 սեպտեմբեր, 1959 թ., գ. Թովթի]

**ԹՈՐՓՈՒՋՅԱՆ ԹԱԳՈՒՀԻ** (ծնվ. 1881 թ., գ. Չալթըր, տատմեր, աղոթքով բուժող): Քչախոս ու ամաչկոտ 78 տարեկան Թագուհի մեծայից հազիվ գրի եմ առել մեծ մորից սովորած «Չար աչքը» չեղոքացնող վաղնջական հմայական աղոթքը, ինչպես նաև բարգավաճում և առատություն սփռող «Հայր Արսահամի բերեթեթը մէջը թօղ ըլլա» բարեմաղթանքը: Նա խիստ աստվածավախ լինելով վախենում էր սրբերի անդորրը խոտվել, ուստի գիտակցված

զգուշությամբ և շնչալով էր արտասանում հմայական աղոթքները: [10 սեպտեմբերի, 1959 թ., գ. Չալթըր]

**ԹՈՐՓՈՒՋՅԱՆ ԵՂԻԱ ԳԵՎՈՐԳԻ** (ծնվ. 1881 թ., գ. Չալթըր, թոշակառու): Չալթըր գյուղում է ծնվել այս պատկառելի ծերունին. նա 78 տարեկան է: Անցյալում հողագործ է եղել, այժմ թոշակառու է, նրա ազնվության, նաև պարկեշտության մասին շատ գրույցներ են պատմում:

Համազյուղացիների կարծիքով՝ նա շատ երգեր է իմացել և իր կոտ ձայնով երգել, հիացրել բոլորին: Այն, ինչ գրառել են նրանից՝ լրիվ չէ, բայց գրեթե միայն ինքն էր հիշում «*Խարիբ Մէլթօն*» վիպական երգը և «*Փեսա հարցնելու պարք* (բարք)» ծիսա-արարողական հնամենի երգը: [10 սեպտեմբերի, 1959 թ., գ. Չալթըր]

**ԳՅՈՒՐՋՅԱՆ ԼՈՒՍԵՂԵՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ** (ծնվ. 1884 թ., գ. Մեծ Սալա, թոշակառու): Լուսեղեն Գյուրջյանը 75 տարեկան է: Վտիտ ու տանջված կերպարանքով մի մարդ: Անգրագետ է, բայց հիշում է մի շարք երգեր, հանելուկներ ու հեքիաթներ:

Դեպի Մեծ Սալա կատարած մեր հապճեպ արշավի ժամանակ հնար գտա այցելելու նրան և մեկ ժամ տևող գրույցի ընթացքում գրառել են «*Փերատ մարդ*» (Չար մայրը) տպավորիչ հեքիաթը, «*Մարյամ*» սիրային երգը, նաև կենցաղային «*Հւ, քւ, հւրս*» երկարապատում երգը: Նա պատմում և երգում է աշխույժ՝ հետաքրքրություն առաջացնելով և իրական կյանքի տպավորություն ստեղծելով ունկնդիրների շրջապատում: [12 սեպտեմբերի, 1959 թ., գ. Մեծ Սալա]

**ԽԱՉԳԻՆԱՆՅԱՆ ՂԱԶԱՐՈՍ ԽԱՉԵՐԵՍԻ** (ծնվ. 1893 թ., գ. Թովթի, փայտահատ): Մերթ խորասուզված իր մտքերի մեջ, մե՛րթ թաղված իր սիրած գրականության մեջ, ահա այսպես կարելի է տեսնել 66-ամյա ընթերցասեր այս անձնավորությանը:

Նա կոլտնտեսության անտառում փայտահատ է աշխատում, բայց գրեթե ամեն երեկո հաճախում է տեղի ակումբը՝ գրքեր ու թերթեր կարդում, երբեմն գանգատվում է, որ իրենց մոտ բացակայում են Բաֆֆու, Շիրվանզադեի, Թումանյանի երկերի լիակատար հրատարակությունները:

Նրանից գրի են առել «*Զօնոր ձախօղը*» (Ածուխ ծախողը) հեքիաթը և «*Թէմբէլ ախշիզը*» (Ծույլ աղջիկը) երգիծական երգը, որի տարբերակը նաև տարածված է Կ. Պոլսո հայ համայնքում:

Ղազարոս Խաչերեսի Խաչգինանյանի մոտ ուշագրավ է այն, որ նրա ոչ միայն լեզուն, այլև լեզվամտածողությունը տեղայնացված է: Նա օգտագործում է ոչ միայն ռուսերեն բառեր ու արտահայտություններ, այլև դեպքերն ու

դեմքերը կապում է տեղի աշխարհագրական և հասարակական միջավայրին: Այսպես օրինակ՝ «*Քօմոր ձախօղր*» հեքիաթի հերոսը ոտքով գալիս անցնում է Չալթըր, Թոփթի գյուղերով և Նախիջևանով, իսկ Թեմբել աղջիկը հարս է գնում վարդանջիի (հարմոնահար), որը հատուկ է ռուսական իրականությանը: [9 սեպտեմբերի, 1959 թ., գ. Չալթըր]

**ՄԱԼԽԱՍՅԱՆ ԽԱՍԲԻՔԱ ԱՐՈՒԹՈՒՆԻ** («Խսարիքա մեճա», ծնվ. 1893 թ., գ. Մեծ Սալա, տնային տնտեսուհի): Խսարիքա մեճա՝ այսպես են անվանում Մեծ Սալայի այդ բարի, հյուրասեր, կնոջը: 66 տարեկան է նա, շատ տանջանքներ է կրել. պատերազմի դաշտում զոհվել են նրա երկու որդիները, նրանց տխուր հիշատակով է մխիթարվում, բայց միաժամանակ հպարտությամբ է խոսում նրանց մասին, ովքեր ընկել են պատերազմի դաշտում՝ «*Մեր ոտիսան վօղբի գանքնեցնելու համար*» (Մեր հայրենիքը ոտքի կանգնեցնելու համար):

Նրանից գրի են առել մանկախաղացի «*Դան, դան*» ուրախ երգը, մի շարք վիճակի երգեր, ինչպես նաև բացառիկ արժեք ներկայացնող հիվանդի և այլ վաղնջական հմայական աղոթքներ ու «*Նորալուսնի աչքալուսանք*», որոնք նա սովորել էր իր հեքիմ մեծ մայրիկից: Նրա մասին երախտագիտությամբ ասում էր. «*Ասդվաճ օղորմի՛ հօրուն. մեճաս ինձի սօրվեցուցիլ իր*»: [14 սեպտեմբերի, 1959 թ., գ. Մեծ-Սալա]

**ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ՀԱՅԿ** (ծնվ. 1899 թ., գ. Լենինավան, կոլտնտեսության հաշվապահ): Նոր Նախիջևանի Մյասնիկյանի շրջանի Լենինավան գյուղում ծանոթացա 60-ամյա Հայկ Սողոմոնյանին: Նա ամեն ինչի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող մի անձնավորություն է, հաճելի գրուցակից:

Հայկ Սողոմոնյանը, պատմելով իր կյանքից որոշ դրվագներ, նշում է, որ կամավոր կերպով մասնակցել է քաղաքացիական կռիվներին ու Հայրենական Մեծ պատերազմին, կորցրել է իր առողջությունը՝ ձախ ձեռքի մատները, բայց հարուստ հիշողություններ ունի պատերազմական կյանքից: Նա հիշում է նաև մի շարք «*սալդաթի*» (զինվոր) երգեր, որոնցից որպես նմուշ գրի են առել «*Ես իմ վիճագս հանեցի, էլս սալդաթ կնացի*», «*Առջի սալդաթի յերթը*», նաև «*Թուփթի կյուղի անվախ քաչն են*» խրոխտ երգը:

Հայկ Սողոմոնյանը նաև պատմել է «*Օվ գըպանի, ան՝ գուղե*» (Ով աշխատի, նա կուտի) և «*Խենթուգը*» (Խենթուկը) բարոյախրատական հեքիաթները:

Հայկ Սողոմոնյանը գրագետ է, աշխատում է Լենինավան գյուղի «Կոմունիզմի ուղիով» կոլտնտեսությունում՝ որպես հաշվապահ:

Նա առանձին հետաքրքրություն է ցուցաբերում դեպի հայ ժողովրդական բանահյուսությունը, գիտի մի շարք երգեր, հանելուկներ և հեքիաթներ: Հայկ Սողոմոնյանը տարիների ընթացքում գրի է առել 25 հեքիաթ, բայց բո-

լորն էլ գրական լեզվի վերածելով, որոնք գրկվել են գիտական արժեքից: Ուստի, ես նրան ծանոթացրեցի գրառման հիմնական սկզբունքներին, որպեսզի, այսուհետև, նրա գրառումները որոշակի նպատակի ծառայեն: [15 սեպտեմբերի, 1959 թ., գ. *Լենինավան*]

**ԼՈՒԼԵՋՅԱՆ ՌՈՒԲԵՆ** (ծնվ. 1900 թ., գ. Չալթըր, երգասաց): Ռուբեն Լուլեջյանից՝ Չալթըրի հայտնի երգասացից, գրի եմ առել Դրիմից իրենց հետ բերված՝ «Արոջանը» (Ապարանջան) հեքիաթային, սիրային գողտրիկ գուգերգը, որը շատ ընդհանրացած է տեղի հայության շրջանում և, նույնիսկ, հիմք է դարձել համանուն հեքիաթի համար: Այն իր հերթին նպաստել է այս էպիկական սյուժեի հետագա ընդարձակմանը: [8 սեպտեմբերի, 1959 թ., գ. *Չալթըր*]

**ՉՈՐԱՆՅԱՆ ԵՎԳԻՆԵ ՂԱԶԱՐՈՍԻ** (ծնվ. 1907 թ., գ. Մեծ Սալա, տնային տնտեսուհի): Այդ 52 տարեկան եռանդուն կնոջը միշտ կտեսնեք տնային գործերով ու թոռնիկների խնամքով զբաղված: Նա կիսագրագետ է, հիշում է «Ալեմի ջարհոը» (Աշխարհի խայտառակը) խոհափիլիսոփայական ու դաստիարակչական նպատակամղվածության հեքիաթը, որը և գրի եմ առել: Հեքիաթը պատմելիս նա առանձնապես ընդգծում է հեքիաթի գաղափարական և բարոյախոսական կողմը: Նա հաղորդել է շատ անեծքներ և օրհնանքներ, հիշում է նաև իր տատիկից սովորած «Չար նաֆասի» (Չար շնչի) համար ասվող ժողովրդական հմայական աղոթքը, որը ևս գրի եմ առել: [14 սեպտեմբերի, 1959 թ., գ. *Մեծ Սալա*]

**ԼՈՒԼԵՋՅԱՆ ՄԿՐՏԻՉ ՌՈՒԲԵՆԻ** (ծնվ. 1921 թ., գ. Չալթըր, երաժշտության ուսուցիչ): Նոր Նախիջևանի Չալթըր գյուղի բնակիչ, տեղի միջնակարգ դպրոցի երաժշտության սիրված ուսուցիչ Լուլեջյան Մկրտիչը ինձ է հաղորդել իրենց ավագներից լսած խորհմաստ առածներն ու ասացվածքները, նաև՝ օրհնանքները: [13 սեպտեմբերի, 1959 թ., գ. *Չալթըր*]

**ԼՈՒԼԵՋՅԱՆ ԱՍՏԳԻԿ ՌՈՒԲԵՆԻ** (ծնվ. 1922 թ., գ. Չալթըր, կուլտնտեսության գանձապահ): Իր հոր՝ Ռուբեն Լուլեջյանի պես երգեր շատ սիրող ու շատ երգող Աստղիկից գրի եմ առել «Կնացեք, ասեք բարբայիս» վիպերգը, որն իր պատկերավորությամբ ու տարաբնույթ կերպարներով հուզիչ է և տպավորիչ: Օրիորդ Աստղիկը 37 տարեկան է, ունի 7-ամյա կրթություն, աշխատում է դրամարկդում, մեծ խնամքով է պահում իր ձեռքով զգուշությամբ արտագրված հայերեն երգարանը: [13 սեպտեմբերի, 1959 թ., գ. *Չալթըր*]

**ՇԱՀԻՆՅԱՆ ՇԱՀԵՆ** (ծնվ. 1928 թ., գ. Չալթըր, գլխավոր խմբագիր): Նոր Նախիջևանի Չալթըր գյուղում բնակվող և տեղի «Կոմունար» թերթի գլխավոր խմբագրի պաշտոնն զբաղեցնող Շահեն Շահինյանը սիրով ինձ հա-

դորդեց իրենց մեծերից լսած առածներ ու օրհնանքները, և, մանավանդ, Ղրիմում իրենց պապերի պատմած «Արոջանը» զուգերգով շարահյուսված ողբերգական հեքիաթը, որն ինքը գրի էր առել 1957 թ., Չալթըրում Լուսեղեն Չիբիչյանից:

Շահեն Շահինյանը վերհիշեց «Ունանը» վիպական երգը և «Սամպիգի դէրան»՝ Հայրենական մեծ պատերազմի օրերին հյուսված զինվորի երգերը: [15 սեպտեմբերի, 1959 թ., գ. Չալթըր]

**ՉԻԲԻՉՅԱՆ ԼՈՒՍԵՂԵՆ ԱԼԵՔՍԱՆԻ** (ծնվ. 1870 թ., գ. Չալթըր, թոշակառու): Այս բանասացի մասին պատմել է Շահեն Շահինյանը, քանի որ նա արդեն ոչ ևս էր: Լուսեղեն Չիբիչյանը մանուկ հասակում Նոր Նախիջևանի Նեավետայ գյուղի չաղջի (սվագող) Մանուկից լսել է անցյալում Ղրիմում շատ տարածված «Արոջանը» հեքիաթը՝ երգային հատվածներով: [20 սեպտեմբերի, 1959 թ., գ. Չալթըր]

Հիշյալ բանասացներից գրառել են 161 միավոր ժողովրդական բանահյուսության նյութ, որոնք մինչև օրս հրատարակված չէին:



### III.

## ՆՈՐ ՆԱԽԻՉԵՎԱՆԻ ԲԱՆԱՅՅՈՒՄՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԱՅԻՆ ԵՎ ԹԵՄԱՏԻԿ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նոր Նախիջևանի հայոց բանավոր ավանդույթը, հայ ժողովրդի բանավոր մշակույթի բաղկացուցիչ մասը կազմելով, գոյատևել է ազգային բանահյուսության համընդհանուր ավանդներով, սակայն ընդհանրությունների և նմանությունների հետ միասին այն ներառել է նաև տեղային խիստ բնորոշ և ինքնատիպ յուրահատկություններ, որոնք պայմանավորված են նրանց անցյալի ու ներկայի պատմահասարակական կյանքի հանգամանքներով: Օրինակ՝ հնավանդ *«Խրիմի յերքի»* մեջ նրանք վերհիշում են իրենց անցյալը Ղրիմի Խարա Սու (Սև Ջուր) հայկական բնակավայրում իրենց տներն ու այգիները:

Հետագայում՝ Նոր Նախիջևանի հայության ժողովրդական բանահյուսությունը գեղարվեստորեն արտացոլում է նրանց հասարակական, տնտեսական կյանքի պայմանները, տեղի բնությունն իր բուսական ու կենդանական աշխարհով, շրջապատի գյուղերն ու քաղաքներն իրենց բազմազգ բնակչությամբ և ինքնատիպ խոսվածքներով:

Այսպես, օրինակ, հեքիաթներից մեկում հերոսի՝ ածխավաճառի գործողությունները սերտորեն կապվում են Դոնի Ռոստովի և նրա շրջակա՝ Թովթի, Չալթըր, Մեծ Սալա հայաբնակ գյուղերի հետ, իսկ լամպի մասին գաղափար տվող *«Քիրմանի կտազ՝ թեփէն ձագ»* (Քիրմանի գդակ՝ գագաթը ծակ) հանելուկի մեջ համեմատության եզր է դառնում *«Քիրմանի կտազը»*, այսինքն՝ Նովոչերկասկ քաղաքի բնակիչների գործածած յուրօրինակ գլխարկը:

Եվ կամ՝ *«Խելքիդ նսդիմ՝ Դայդան էշթամ»* (Խելքիդ նստեմ՝ Դայդան գնամ) արտահայտության մեջ նկատի է առնված Տագանրոզ քաղաքը, որը Նոր Նախիջևանի բարբառում *«Դայդան»* ձևով է արտասանվում, քանի որ Ղրիմի բարբառի տառադարձությամբ՝  $q > \eta$ ,  $p > պ$ ,  $կ > գ$ ,  $ր > շ$ ,  $ծ > գ$  և այլն<sup>10</sup>:

Նույնպես և ժողովրդական *«Մարյամը»* երգի մեջ սիրեցյալը մոտակա Նեավետայ գյուղից է գալիս գիշերային հանդիպման.

10 Մեծ լեզվաբան ակադեմիկոս Հր. Աճառյանն իր «Քննություն Նոր Նախիջևանի (Խրիմի) բարբառի» ձեռագիր աշխատության մեջ նշում է. «...Ռոստովի, Նոր Նախիջևան քաղաքի, Մեծ և Փոքր Սալաների ու Նեավետայ գյուղերի խոսակցականի բաղաձայնային համակարգը տարբեր է Չալթըր և Թովթի գյուղերի արտասանականից, որը ճիշտ Պոլսի բարբառի ձայնային դրությունն է. բաղաձայների երկու աստիճան միայն կա՝ թրթռուն և շնչեղ խույ: Շնչեղ թրթռուն բաղաձայները ջնջված են»: **Աճառյան Հր.**, Քննություն Նոր Նախիջևանի (Խրիմի) բարբառի, Երևան, 1925, էջ 27-28 [ձեռագիր]: Հարկ է նշել, որ սույն աշխատության բնագրերը գրի են առել մեծ մասամբ Չալթըր և Թովթի գյուղերից:

«Բազար դարած, նաշխած, պէրած Մարյամն,  
Վաշթ պացվիլ էր գարմիր-ջերմագ թուշերրր.  
Նեավերայէն ընձի յէգաձ կիշէրր»:

«Բազար տարված, նախշած, բերված Մարիամն,  
Վարդը բացվել էր կարմիր-ճերմակ թշերիդ.  
Նեավետայն ինձի էկած գիշերդ»:

Հետևաբար, Գրիմից գաղթած հայերը, ապրելով նոր, ռուսական միջավայրում, հարազատացել են այդ տեղավայրին ու շրջակա ռուս բնակչությանը: Այդ նկատելի է նրանց պատմած **իրասպարում հեքիաթներում**, որտեղ հերոսների գործողությունները կատարվում են ոչ միայն Դոնի Ռոստովում (Նոր-Նախիջևան) և շրջակա հայկական գյուղերում, այլև՝ ռուսական Նովոչերկասկ, Տագանրոգ և այլ քաղաքներում: Բացի այդ, որպես գործող անձինք, հանդես են գալիս ոչ միայն հայերը, այլև ռուս բարիններն ու բարինաները, կազակներն ու մուժիկները, որոնք օգնում են հայ գաղթականներին:

Ուշագրավ է նաև, որ բանահյուսական տարբեր ժանրի նյութերի մեջ հաճախ պատահում են բազմաթիվ օտարամույժ՝ թուրքերեն բառեր, որոնք Գրիմում կիրառվել են նրանց առօրյա խոսվածքում. այսպես, օրինակ. «Քօփուր» (Քյոփրի) – կամուրջ, «Սոխախ» – փողոց, «Խում» – հող, «Չորվախ» – աղբյուր, «Խամչի» – մտրակ, «Շամդան» – մոմակալ, և այլն:

Եթե նրանց բարբառում թուրք-թաթարական լեզվական փոխառությունները հին ծագում ունեն, ապա Գրիմից գաղթելուց հետո, նրանց բառապաշարի մեջ մուտք են գործել ռուսերեն շատ բառեր. օրինակ՝ «Կուզնեց» – դարբին, «Պրոդոլեց» – վաճառող, «Դոնոգ» – սայլ, «Սեմեյսուվո» – ընտանիք, «Խազլախն» – տանուտեր և այլն, նաև՝ ռուսերեն արտահայտություններ, որոնք ենթարկվել են հայոց լեզվի քերականական կանոններին. օրինակ՝ «Պազդարովիւր արեցին» – բարևեցին, «Ախրանյար ըրավ» – պահպանեց, «Սազլասիւր էղավ» – համաձայնվեց և այլն:

1959 թ. Նոր Նախիջևանի հայերի ժողովրդական բանավոր ստեղծագործություններն արդեն գրեթե մոռացության էին մատնված, սակայն իմ հետևողական պրպտումներով հնարավոր է դարձել գրառել և անհետ կորստից փրկել նրանց բանավոր ավանդույթի անգուգական 161 նշխարները:

Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը բազմազան է ու բազմասեռ.

- I. **Վիպական բանահյուսություն** (12 միավոր),
- II. **Քնարական բանահյուսություն** (31 միավոր),
- III. **Ասույթային բանահյուսություն** (118 միավոր):

**I. Վիպական բանահյուսության** բաժնում ամփոփված են *հրաշապարում* և *իրապարում հեքիաթները*: Բանասացների վկայությամբ, իրենք այլևս չեն հավաքվում գյուղական օդաներում հեքիաթ լսելու նպատակով, ինչպես՝ Ղրիմում:

*Հրաշապարում հեքիաթներից* ինքնատիպ է «Արոջանը» (Ապարանջանը), որի սյուժեն զարգանում է Ղրիմից բերված համանուն երգի մոտիվներով: Այդ լիրո-էպիկական սիրերգը, հեքիաթի նյութ դառնալով, որոշ զարգացում է ապրել և՛ պերսոնաժի, և՛ սյուժետային գծի տեսակետից: «Արոջանը» հեքիաթում որպես գործող անձինք հանդես են գալիս ոչ միայն սիրող զույգերը՝ Խամբերն ու Արզուն (ինչպես երգի մեջ է), այլև՝ բնության և հասարակության չար ուժերը մարմնավորող Կախարդ-պատավր: Այդ չար էակը մինչև մահ վրեժխնդրությամբ է հիշում մանկության օրերին իր ջրի փարչը կտտրած Խամբերին և անվերջ պատուհասում է նրան՝ խափանելով սիրող զույգի երջանկությունը: Այս Կախարդ-պատավի կերպարի ներկայությամբ է պայմանավորվում տվյալ հեքիաթի հրաշապարտում բնույթն ու սյուժետային գծի հետագա զարգացումը: Հրաշապարտում բնույթի է նաև «Շէն թաքավորին ախշիզը», որը հայտնի «Կոնսար աղջիկը» հեքիաթի երգային հատվածներով օժտված ինքնատիպ տարբերակն է: Նախ՝ թևերը կտրված աղջիկն ի նշան իր անմեղության կոչվում է Աղավախ, բացի այդ, նա, տանջվելով նենգ հարսի չարությունից, օրորոցում պառկած իր եղբորորդուն պատմում է իր վիշտը հետևյալ երգի միջոցով.

*«Նանիգ, նանիգ, անուշներով,  
Օսգի բեշիք, արգաթ գամար,  
Մէշի բառգօղը յէխպօրը գավագ:*

*Նանիգ գասէի յէխպօրը օշթուն,  
Մագիս թելերօլը գրգաբէի,  
Միրդիս գրագովը գըչօրցնէի,  
Նանիգ գասէի յէխպօրը օշթուն»:*

*«Նանիկ, նանիկ, անուշներով,  
Ոսկուց օրորոց, արծաթից կամար,  
Մեջը պատկողը եղբոր գավակ:*

*Նանիկ կասեմ եղբորս որդուն,  
Մագիս թելերով կկապեի,  
Մրտիս կրակովը կչորցնեի,  
Նանիկ կասեմ եղբորս որդուն»:*

Մրտակեղեք մեղեդի ունեցող այս օրորոցային փոքրիկ երգն առանձին հմայք և հուզականություն է հաղորդում հեքիաթին: Մակայն «Օսգի Յուզը» (Ոսկե ձուկը) օգնում է Աղավախուն, որը դառնում է այլ երկրի Թագուհի և վերականգնում իր նախկին հեղինակությունը: Իսկ չար հարսին «գաբէցին ցիին բօջէն, վագէցուցին ցիխօն, քարին գրավ, ջօլին գրավ, մինձ գօրը անգանչը մնաց» (կապեցին ձիու պոչից, վագեցրին ցեխերի մեջ, քարին կպավ, չոլին կպավ, մեծ կտորն ականջը մնաց): Դաստիարակիչ, խրատական բնույթի հեքիաթն ավարտվում է այդ խոսքերով:

Ինքնատիպ են նաև «Փէրար մարը» (Չար մայրը), «էրգաթէ կալը» (Երկաթե գայլը): Այս երկու հեքիաթներում որպես գործող անձինք հանդես են գա-



լիս նաև մի շարք կենդանիներ՝ մարմնավորելով բնության և հասարակության մե՛րթ չար և մե՛րթ բարի ուժերը:

**Իրապատում հեքիաթները**, գեղարվեստորեն պատկերելով կյանքում հաճախ պատահող իրական դեպքերն ու դեմքերը, ունեն դաստիարակչական-բարոյախրատական բնույթ: Իրական դեպքերի շուրջ են հորինված «*Քօմնոր ձախօղը*» (Ածուխ ծախտողը), «*Օլ գը պանի, ան՝ գուդե*» (Ով աշխատի, նա՛ կուտի), «*Խէնթուգը*» (Խենթուկը), «*Ալէմի ջարիգը*» (Աշխարհի խայտատակը), «*Թաթօն յէվ Փէթրիգէլը*», «*Չար բիանային հախէն էգօղ հարսը*» (Չար սկեսրոջ հախից եկող հարսը), «*Բարինային խէլքը*» (Բարինայի խելքը) իրապատում հեքիաթները: Հետաքրքիր է նաև «*Քառսուն ջան սրանօղը*» հեքիաթը, որը «*Դժիկոն*» ժողովրդական հեքիաթի տարբերակն է: Այդտեղ տղան իր հորը ճաշ տանելու ժամանակ ոչնչացնում է ճանճերին և պատտառի վրա գրում ոչ թե ճանճ, այլ՝ ջան: Այս իրապատում հեքիաթների փոքր ծավալն ու հանգույցի հանկարծակի լուծումը նրանց տալիս է ժողովրդական նովելի տեսք:

**II. Քնարական բանահյուսության** երգերը ևս հին ծագում ունեն, որոնց միայն բեկորներն են մնացել՝ վկայելու համար, որ համայնքի հայերն ունեցել են նաև քնարական հարուստ ու բազմազան մշակույթ:

Թեև քանակով քիչ, բայց մտահղացման տեսակետից հետաքրքիր են **մանկախաղացի երգերը**, որոնք մանուկներին զվարճացնելու համար երգվող աշխույժ «*Դանդաններ*» (Մանկախաղացի երգեր), ռիթմիկ «*Հավջիվներ*» (Հավի ճվճվոցի երգեր), սրամիտ բառախաղերով ողողված **շուրասելուկներ** և ուրախ ավարտ ունեցող **մանկական խաղերգեր** են:

Իր հնությամբ ու պատկերավորությամբ ուշագրավ է «*Խրիմի յերքը*», որտեղ նրանք վերհիշում են իրենց անցյալը՝ Դրիմի Խարա Սու (Սև Ջուր) հայկական բնակավայրում, տեղի գողտրիկ տները, կանաչապատ այգիները, որտեղ զբոսնում էին սիրեցյալները.

*«...Բահչանները գրքալէինք,  
Մէնք դէսօփն գրսիրէինք,  
Մէգի գասին՝ խարասուցի,  
Մէնք դօնուշմա գրսիրէինք:*

*Տիմաց-դիմաց խաներս,  
Տիմացն ալ՝ խանութներս,  
Տուն հողէն յէլ, յէս՝ հօտէն.  
Թող քօռ լան դուշմաններս:*

*...Տիմացէն դեսա քէգի,  
Ջերմագ վաշթ կիդցա քէգի,  
Ֆօդ անէլու չիւրմիշէցի,  
Ուրիշին դվին քէգի...»:*

*«...Պարտեգներում կքայլեինք,  
Մենք սիրունին կսիրեինք,  
Մեզ կըսեին՝ խարասուցի.  
Մենք գրուցել կսիրեինք:*

*Դիմաց-դիմաց իջևաններս,  
Դիմացն էլ՝ խանութներս,  
Դու այնտեղից էլ, ես՝ այստեղից.  
Թող կուրանան թշնամիներս:*

*...Դիմացից տեսա քէգի,  
Ճերմակ վարդ գիտցա քէգի,  
Հոտոտելու չհամարձակվեցի.  
Ուրիշին տվին քէգի...»:*

**Ծիսական երգերը** ևս գրեթե անհետացել էին, և միայն պատատիկներ էին հիշվում: Հայկական հարսանիքներն այլևս չէին կատարվում երգերի ու պարերի ավանդական ծիսակատարությամբ: Ուստի, հետևողական որոնումներով գրի եմ առել հարս ու փեսա հանդերձավորելու հնաբույր երգերը: Անցյալում այս տեղավայրի հայությունն ունեցել է փեսա հազցնելու հատուկ «պարք» (իմա՝ սովորույթ, բարք), որի ընթացքում երգել են.

«Այսօրիկ իս նօր,  
Այսօրիկ թաքավօր իս նօրիկ...  
Փէսին գառէթան էգավ, գայնէցավ,  
Փէսան քաշից մէջքը թուրը,  
Փէսին կրակը գարույր մօշթի.  
Այսօր հասար մորաաղիւր, օշթի՛ն»:

«Այսօր դու նոր ես,  
Այսօր նոր թագավոր ես...  
Փեսայի կառքը եկավ, կանգնեց,  
Փեսան թուրը մեջքին քաշեց,  
Փեսի գդակն է կապույտ մորթի.  
Այսօր հասար նպատակիդ, որդի՛ն»:

Իսկ հարսն իր հայրական տնից դուրս գալու պահին երգել է.

«...Հայրիկ, մայրիկ, Կոք պարէվ գէցիք,  
Տոք ալ պարէվ գէցիք. զիս առին, դարին,  
Էմջէնէր, յանգանէր, Կոք ալ պարէվ գէցիք.  
Տոք ալ պարէվ գէցիք. զիս առին, դարին,  
Հօրքորնէր, մօրքորնէր, դոք ալ պարէվ գէցիք,  
Տոք ալ պարէվ գէցիք. զիս առին, դարին,  
Մսացէք պարէվ, սիրեգան քոյրեր,  
Դարօսը գէր աչքին...»:

«...Հայրիկ, մայրիկ, դոք բարով մնացեք,  
Դոք ևս բարով մնացեք. ինձ առին, տարին,  
Հորեղբայրնէր, հորեղբորկիսնէր,  
դոք ևս բարով մնացեք.  
Դոք ևս բարով մնացեք. ինձ առին, տարին,  
Հորքորնէր, մորքորնէր,  
դոք ևս բարով մնացեք,  
Դոք ևս բարով մնացեք. ինձ առին, տարին,  
Մսացեք բարով, սիրեկան քոյրեր,  
Տարօսը ձեր աչքին...»:

Իսկ հարսնուրները պատասխանել են.

«Գեշթասս մեզմէն շաղ չուզէիս,  
Անդէղ գերածար չամիչով թուզ է,  
Աչքը գուլա, սիրողը գուգէ.  
Հօրմէն, մօրմէն պարնվիլ չուգէր...»:

«Կերթասս մեզնից շատ չուզելով,  
Այնտեղ կերածդ չամիչով թուզ է,  
Աչքը կուլա, սիրտը կուգէ.  
Հորից, մորից բաժանվել չուզեր...»:

1959 թ. այդ բողոքի միայն հիշատակն էր մնացել. իրականում ո՛չ ծեսերն էին կատարվում, և ո՛չ՝ նրանց համապատասխան երգերն ու պարերը: Այնուամենայնիվ, տեղի հայերի ավագները դեռևս հիշում էին անցյալի ծիսական երգերից պատառիկները:

**Կենցաղային երգերը** ևս հին են, որոնք հյուսված են իրական դեպքերի ու դեմքերի գեղարվեստական վերհուշով: Օրինակ՝ հայ գաղթականների հողերն անխղճորեն բռնագրաված ու նրանց վաստակով հղփացած, Նոր Նախիջևանի մեծահարուստ քաղաքապետ Հարություն Խալիբյանի անձնավորության շուրջ հորինված երգը.

«Շաղ գուլում մաշթ էր Խալիբ Աղան՝  
Մեր քաղաքի գալում գալավան...»:

«Շատ դաժան մարդ էր Խալիբ աղան,  
Մեր քաղաքի անխիղճ գլխավորը...»:

Նման երգերը հիմք են տալիս ենթադրելու, որ այս տեղավայրի հայերն ունեցել են նաև իրական, պատմական անցքերի շուրջ հյուսված վիպական երգեր:

Թվում է, գեղանկարչի վրձինով է պատկերված հարուստ Աթոյի Սիմոնի աղջկա կերպարը, նրա ճոխ հանդերձանքն ու շքեղ արդ ու զարդը, և, ի վերջո՝ հպարտ ու ինքնավստահ կեցվածքը.

«Գազ ու գէս ցեպրուշկան վիզը գախաձ,  
Մարքարիդէ խուլանը մէջքը գարաձ,  
Խաղան, ախչիգս, խաղան,  
Աթոյի Սիմոնին ախչիգն իս.  
Հէջ ումուրըր թող չիլլա»:

«Երկար շղթան վիզդ կախած,  
Մարգարիտե գոտին մեջքդ կապած,  
Պարի՛ր, աղջիկս, պարի՛ր,  
Աթոյի Սիմոնի աղջիկն ես.  
Բնավ վեճըդ թող չինի»:

Հակումը դեպի հարստությունն ու փողը զգալի է հետևյալ երգի մեջ.

«Դեսօք թող լա, թող չիլլա,  
Թէք ըսդագր բճլ թող լա,  
Իդա ախչգանը մարը  
Իմիս բիանասա թող լա»:

«Տեսքով թող լինի, թող՝ չիլի,  
Միայն ստակը շատ թող լինի,  
Այդ աղջկա մայրը  
Իմ գոքանչը թող լինի»:

«Հւ՛, քւ՛, հւ՛րար» կենցաղային երկարապատում երգի մեջ նորահարսին մտերմաբար դիմող սկեսուրը նորանոր հանձնարարականներ է տալիս, որոնց հիմքում ևս հակումն է հարստության և ունեցվածքի նկատմամբ: Նորահարսը, ըստ չգրված օրենքի, պարտավոր է «խաթըրը խոշ անել» (սիրաշահել) իրարիաջորդ հյուրերին՝ կնքահորը, հորն ու մորը, սկեսրայրին, զարգացած չելերիին, որպեսզի արժանանա նրանց նվերներին՝ հոր կտակի ոսկիներին, մոր թանկարժեք գերդանլիսին, սկեսրայրի ոչխարներին, զարգացած չելերիի լեզուչեքին: Այդ բոլոր պատկերավոր դրվագները մատուցվում են հետհարսանեկան սովորությանն արարողակարգի ընդունված պատշաճությունների նկարագրությամբ՝ հարավփոփոխ իրավիճակներում, տիպական նոր կերպարների հանդես գալով: Հանգամանքներ, որոնք Դրիմից բերված այս հնաբույր երգը դարձրել են շարժուն ու դինամիկ, պատկերավոր ու ցուցանելի, նաև՝ ոչ միայն կենցաղային, այլև՝ ծիսակարգային:

«Հւ՛, քւ՛, հւ՛րար, յէլ գայնէ,  
Յէգվօրներուն ընթունէ,  
Առաջ՝ հալավլը փօխէ,  
Յէդքն ալ՝ ցեռքերը համփորէ:

Հւ՛, քւ՛, հւ՛րար, ժողօղվէ,  
Հանսա բաբադ գրգանչէ,  
Փսագները բիդ բաքնէ,  
Միրասս օսգին բիդ բախշէ:

...Հւ՛, քւ՛, հւ՛րար շոդ արա,  
Մամադ հանսա ցան գոդա,  
Էրգու թուշէդ բիդ բաքնէ,  
Գերդանլիսը բիդ բախշէ:

...Հարս ես՝ կնս պադ շոր պէր,  
Լվացվողին՝ սրփիչ պէր,  
Չայը քաշէ՛, շաքար պէր,  
Մէգ-մէգ բաժակ չայ ալ պէր:

Հւ՛, քւ՛, հւ՛րար բադրասողվէ,  
Քօղը վերոր ու բահէ՛,  
Աշթըի ժամը անցաձ է.  
Գունն ալ մաքրէ՛ ու ավլէ՛...»:

«Ա՛յ, հարս, դէ, ել, կանգնիր,  
Եկվորներին ընդունիր,  
Առաջ՝ հագուստդ փոխիր,  
Հետո՝ ձեռքերն համբուրիր:

Ա՛յ, հարս, դէ, հավաքվիր,  
Ուր որ է՝ հայրդ կկանչի,  
Ձեր պսակը պիտ օրհնի,  
Ժառանգ ոսկին պիտ բաշխի:

...Ա՛յ, հարս, դէ, շուտ արա,  
Մայրդ, շուտով ձայն կտա,  
Այտերդ պիտ համբուրի,  
Վզնցը քեզ պիտ բաշխի:

... Հարս ես՝ գնս պադ շոր բեր,  
Լվացվողին սրբիչ բեր,  
Թեյը քաշիր, շաքար բեր,  
Մեկ-մեկ բաժակ թեյ էլ բեր:

Ա՛յ, հարս, դէ, պատրաստվիր,  
Քողդ վերցրու ու պահիր.  
Արդեն ժամը անցել է,  
Տունն էլ մաքրիր ու ավլիր...»:

Այս բաժնում առկա են նաև ուխտագնացության երկու երգ, որոնք ընթերցողին գաղափար են տալիս, որ Ղրիմի հայրերը նաև ուխտի են գնացել դեպի Մշո Սուլթան Սբ. Կարապետ ուխտատեղի:

*«Խարիբ Մելքոնը օխարը փարի ցավ քաշիլ էր,  
Սուրբ Գարաբեդ ուխտի հասիլ էր,  
Մուրադ առիլ էր...»:*

*«Պանդուխտ Մելքոնը յոթ տարի ցավ քաշել էր,  
Սուրբ Կարապետ ուխտի գնացել էր,  
Նպատակին հասել էր...»:*

Սակայն ուխտագնացությունը՝ «Խորլեզր», ինչպես ասել են դրինահայերը, նաև ուրախության՝ «աղջիկտեսի» առիթ պետք է լիներ. իսկ աղջիկը պետք է լինի «կեղեցիկ պնտթթով, կեղեցիկ անունով» (գեղեցիկ բնավորությամբ, գեղեցիկ համբավով), այսինքն՝ ըստ ամենայնի կատարյալ:

Հեռավոր կերպով հայ ժողովրդական միջնադարյան «Ասլան Աղա» վիպերգն է հիշեցնում «Կնացեք, ասացեք բարայիս» տխրերգը: Այդ երգի մեջ բանտարկված որդին խնդրում է հորը տունը-տեղը ծախել և պահանջված գումարով իրեն բանտից ազատել: Հայրը հրաժարվում է օգնել որդուն: Նույն կերպ են վարվում նրա բոլոր հարազատները: Միայն սիրած աղջիկն է պատրաստ ամեն տեսակ զոհողության: Նվիրվածությամբ ու անկեղծ սիրով է համակված նրա վճռական որոշումը.

*«...Վզիս մեղալիօնը գրձախիմ,  
Հինք հարյուր կրոշ ալ գրշինիմ,  
Գրշինիմ, սիրեզանս, գրշինիմ,  
Գրշինիմ, գրհանիմ քեզ պանտիցը»:*

*«...Վզիս մեղալիոնը կծախեն,  
Հինգ հարյուր գրոշ ալ կշինեն,  
Կշինեն, սիրեկանս, կշինեն,  
Կշինեն, կհանեն քեզ բանտից»:*

Ուշագրավ են նաև «Օկա և Իսրիր (Իստրա) մամաները» կենցաղային երգի հերոսները՝ մամաները, որոնք խորհրդանշում են Ռուսաստանի տարածքով հոսող երկու գետերի անունները: Հայ ժողովուրդը «Մայր Արաքս» է անվանում իր կենսատու գետին, այստեղ նույնպես զույգ մայր-գետերը՝ Օկան և Իստրան, իրենց կենարար ջրով սերունդներ են սնուցանում:

Հետաքրքիր են նաև «Մարիամ մորքորմա» և «Ունանը» երգերը: Նուրբ հումորով է հյուսված «Բարսի, փուն ինծի վորի՛ն քիդի դաս» երգը: Այս երգի մի այլ տարբերակը տարածված է նաև Հայաստանում, ըստ որի հայրն իր ծույլ

աղջկան ի վերջո տալիս է գուռնաչու, որպեսզի նա միշտ ուրախ լինի: Այս նույն երգը Նոր Նախիջևանի հայաբնակ գյուղերում երգվում է, սակայն բնութագրականն այն է, որ Ղրիմից գաղթած հայերն արդեն ոչ միայն ընտելացել են, այլև հարազատացել են ռուսական միջավայրին, և աղջիկը նախընտրում է «*վարդանշիհի*» (հարմոնահարի) հետ կյանքը կապել:

1779 թ. Եկատերինա Երկրորդ կայսրուհին առանձին հրովարտակով թույլատրել էր հայ գաղթականներին զինվորագրությունից ազատել, բայց հետագայում, փոփոխված հանգամանքներում, հայերը զրկվում են այդ արտոնությունից, և «*սալդասր գնալը*» գաղթականների համար դառնում է ողբերգություն:

**Զինվորի երգերի** մի շարք տարբերակներ են գրի առել. «*Ես իմ վիջագս հանեցի, էլա սալդասր կնացի*» (Ես իմ վիճակս հանեցի, էլա զինվոր գնացի) կամ «*Սալդասրի յերթը*» (Զինվորի երգը): Ուշագրավ է նաև Հայրենական Մեծ պատերազմի օրերին հորինված «*Սամպիկին դերան*» (Սամպիկի ձորը) սրտակեղեք, բայց հաղթանակի լավատեսությամբ անմահացող հերոս զինվորի երգը:

**III. Ասույթային բանահյուսության** ստեղծագործությունները: Ժողովրդական դարավոր կենսափոխության, բնության և հասարակության, իրերի ու երևույթների խորը ընդհանրացման արգասիք են տեղի հայության **ստածներն** ու **ասացվածքները**: Այդ սեղմ ու պատկերավոր ասույթները գեղարվեստորեն խտացնում են նրանց պատմական կենսափորձը, մարդկային բնավորության լավագույն հատկանիշները, իսկ վատ արարքները՝ դատապարտվում են պատկերավոր ու դաժան անեծքներով:

Անա աս թաքավօրին հարսը խիսղ չար գըլլա: Նարա չարութուն անէլու բաղջառը ան գըլլա, վօր ԱղաՎսին ժէնմէն դէսօք գըլլա: Աս հարսը գըբաշլայի չարութին անէլուն, դուշմանութին անէլուն, գըբաշլայի սող պանիր ոյունմիշ անիլ<sup>2</sup> ԱղաՎսիին վրան: Գէլլէ գասէ. «ԱղաՎսին՝ սաբէս արավ, ԱղաՎսին՝ դա-

1 Դէսօք – գեղեցիկ:

2 Ոյունմիշ ընէլ, ոյդուրմիշ ընէլ (թուրք.) – հնարել (ստու):

բէս արավ»։ Թաքավորը յէվ թաքնուիին խիստ կիողէին, վոր ախչիգը խաբահաթ<sup>3</sup> չունի, պայց գէնէ<sup>4</sup> գասէին Աղաճիսին։

— Ախչիգս, վնաս չունի, ինչքան ալ ան փերատ<sup>5</sup> ասէ. տուն համփէրէ, սուս էղիր, գառավարվէ<sup>6</sup>։

Շաղ անքամ ալ հարսը ժէն էրգանը գասէ.

— Աղաճիսն ասրէս արավ. Աղաճիսն աղբէս արավ։

Էրիգը խիստ կիողէր, վոր ան ուղորմիշ գանէ, գասէ.

— Խէլօք էղիք, գառավարվէցէք։

Պայց ան դահա ավէլի գշարնագէր, վագ չէր անցնէր։ Անրէս վոր դղան ալ գհալվէր, գմաշվէր. վոր քուրը խաբահաթ չունէր։

Թաքավորն ու թաքնուիին ալ հարսին գեռքը չտիմացան, հալվեցան, մաշվեցան։

Հարսը աղ քանի մը դարվան մէջը մէքամ դղա մը ունեցավ։ Աղ թօռին թաքավորն ու թաքնուիին ժէնց աչքին լուսէն ավէլի գհիրէին։ Նարանցից ալ ավէլի թաքավորին ախչիգը՝ Աղաճիսն, գըսիրէր աղ յերէխային։

Պայց հարսը՝ ընդհագառագը, գասի.

— Աղաճիսն դղին գգարնէ, գղանչէ, — վորբէսի ժէն էրգանը աչքէն հանէ։

Անքան չարութիւն արավ, վոր թաքնուիին յէվ թաքավորը չտիմացան, մէռան։

Աղաճիսն ալ աղ փերաղ հարսին գեռքը գղանչվէր ժէն յէխայօրը գավագին բէշիքին<sup>7</sup> քօլը գընսղէր գերքէր.

*«Նանիգ, նանիգ անուշներօլ  
Օսգիէ բէշիք, արգաթ գամար,  
Մէշի բառգօղը՝ յէխայօրը գավագ,  
Նանիգ գասէի յէխայօրը օշթուն։  
Աչքիսը արողըսօքօլը գըլվայի,  
Մագիսը թէլէրօլը գըգաիսէի,  
Սիրողիսը գրագօլը գըչօրցընէի,  
Նանիգ գասէի յէխայօրը օշթուն»։*

Աս փերաղ հարսը դահա շաղ սուղէր ուղորմիշ արավ, ամա չգրցավ էրգանը հավաղացնէլ դալ։

Օր մը կնաց առավ տանագը, ժէն գավագին բէշիքին մէջը մօշթեց։

3 Խաբահաթ (թուրք.) – հանցանք։

4 Գէնէ (թուրք.) – սորից։

5 Փերատ – վատ, չար։

6 Գառավարվիլ – հարմարվել, կառավարվել։

7 Բէշիք (թուրք.) – օրորոց։

Աղաժնին ալ քուն էր: Հարսը տանագը դարավ Աղաժնիին ջերը<sup>8</sup> խօթեց: Ինքն ալ մեզ ժամ անցնելէն յեղել բաշլայից լաւու<sup>9</sup>, օքուրմիշ<sup>10</sup> անելու:

— Յէլէք հասէք, նայեցէք, ինչ է առիլ Աղաժնին. դղային բեշիքին մէշը մօշ-թէլ է: Ահա, դէսաք մեզ հադ գավագնիս մօշթել է հանլի բէս, ցքիլ է:

Թաքավօրին բալադագանները ժուտ էլան<sup>11</sup>, ամա հարսը՝ վայո ռավս<sup>12</sup>, «Աղաժնին է արել», — գասի:

Կնային Աղաժնիին քօլը: Ան քուն էր դահա: Նաքա չէին խյմիշին<sup>13</sup> գու-գարթեցնելու, ամա հարսն ալ թէքմա<sup>14</sup> գըզարնէ, գասէ.

— Գընայիք, սուդ մեղավօր է:

Ժողօվուրթը գասէ.

— Հաքա ինչօ՞վ գըհասդադիս, վօր ան է:

Ան գասէ.

— Նայեցէք վրան, բէքիմ<sup>15</sup> տանագ ալ ունի քօլը:

Գըսգսին փնտտելու, արունօդ տանագը ջերէն գհանին: Հարսը նօրէն գը-բաշլայի մագէրը փեղիլ...

— Դէսմք, — գասէ, — ան է մարթասբանը:

Ժողօվուրթը գըսգսի մղածէլ. «Աս ինչ պան է. Աղաժնիին բէս շադ լավ պնավօրութան դէր ախչիգ ադ դէսագ պան չանիր»:

Աղաժնին քունը կլօխն էր: Հարսը թէքմայօլ գզարնէ, գասէ.

— Տադեցէք, վօչնչացրէք. ֆաքտը ֆաքտ<sup>16</sup> է. վօր Աղաժնին խաքայաթը<sup>17</sup> է:

Տադը գանին, գըվօրօշէն ըսբանէլ Աղաժնիին, ամա ժողօվուրթը գուզէ չըսբանէլ Աղաժնիին, գասէ՝ գեռքէրը գդրէլ:

Աղաժնիին գեռքէրը գդրէլէն առաջ գասի.

— Աղա<sup>18</sup>, ինձի մի՛ հավադա. աադձուն հավադա, վօր յէս չէմ ըսբանէլ դղան:

Բալադագանները Աղաժնիին գեռքէրը գըգդրին:

---

8 Ջէք (թուրք.) – գրպան:

9 Բաշլայիլ (թուրք.) – սկսիլ:

10 Օքուրմիշ (թուրք.) անէլ – սգալ, ողբալ:

11 Ժուտ էլան – շրջել, իրար անցնել:

12 Վայօ ռավս (ռուս.) – միևնույն է:

13 Խյմիշիլ (թուրք.) – խնայել:

14 Թէքմա (թուրք.) – աքացի:

15 Բէքիմ, բէքիմ (թուրք.) – գուցե:

16 Ֆաքտը ֆաքտ է (ռուս.) – փաստը փաստ է:

17 Խաքայաթըլ (թուրք.) – հանցավոր:

18 Աղա – մեծ եղբայր:



Աղաժսին գէշթա անդառ, յէմիշներ<sup>19</sup> գուդի, գաբրի, Էփփէի<sup>20</sup> ժամանագ գաբրի:

Էշթալէն, Էշթալէն գհասնի բօսդանի մը մէջ ցմեռուզներուն, սէխերուն վրան գիյնա, գուդի:

Ուրիշ դերութեան թաքավօրին դղան գուկա, գդէսնէ, վօր ժէն բօսդանը գրձաձ է, գէրաձ է. «Ադ խօյանի<sup>21</sup> գէրաձ չէ, շունի գէրաձ չէ, բէդք է խարավուլլէմիշ անէլ<sup>22</sup>, վօր սա պանը իմանանք», — գասէ:

Թաքավօրին դղան ինքը գուկա, գդէսնու կշերին գէսը մէգ պան մը փօրսօդ դալէն գուկա գումուդնու բօսդանը, գուբաշլայէ ակահապար ուղէլ, ան միդք գասէ. «Աս մաճշթ է, մաշթ չէ, հաբա ինչի՞ փօրսօդ դալէն գուկա»: Գումօդէնա գասէ.

— Տուն օվ էս, դէդդ գայնէ, թէ չէ գըզարնէմ:

Գըդէսնէ հալավը<sup>23</sup> փէդաձ, գաշին ալ գօշդացաձ է. ամա Աղաժսին անքան դէսօք է, վօր թաքավօրի դղան գըզարմանա, գասէ.

— Անդէր պան էս նէ, յէս քէզ գդանէմ դուն, գհաքցնէմ:

— Ռաս<sup>24</sup> տուն ինձի կդար նէ, տոն ինձի ըսբանէ. ինչ գուզէս արա:

Դղան առավ Աղաժսիին դուն դարավ:

Դարան լվացին, հաքվէցուցին հալավը: Առաջ ալ դէսօք էր, համա հիմա ավէլի դէսօք էր՝ մացավ թաքավօրին ալ, թաքուհիին ալ:

— Հայրիկ, — ասաց թաքավօրի դղան, — աս իմ խամէթն<sup>25</sup> է, ինձի գնիզ բդի ըլլա:

Թաքավօրը, թաքուհին ալ Աղաժսիին պնավօրութիւնը իմացան, ժէնց դղին գնիզ առին: Աղաժսիին պնութքը<sup>26</sup> շնդ լավ էր, թաքավօրը, թաքուհին խիսդ սիրէցին:

Անցավ մէզ, էրգու դարի: Թաքավօրի դղան բադէրագմի կնաց: Աղաժսին ձանդրաձ էր: Օր մը Աղաժսին էրգու մանր գավագ ունէցավ: Էրգուսի մագէրը օսգիէ էին, թաքավօրը յէվ թաքուհին շադ ուրախացան յէվ բաշլայէցին ավէլի Աղաժսիին սիրելու: Լուր դրգէցին թաքավօրի դղային, վօր աչքդ լուս, օշթի,

19 Յէմիշ (թուրք.) – միրգ, պտուղ ընդհանրապէս:

20 Էփփէի – բավական:

21 Խօյան – նապաստակ:

22 Խարավուլլէմիշ (ռուս.) անէլ – պահակություն անէլ, ռուսերեն «караул» բառի աղավաղված ձևն է:

23 Հալավ (թուրք.) – հագուստ:

24 Ռաս (ռուս.) – քանի որ:

25 Խամէթ (թուրք.) – ճակատագիր, բախտ:

26 Պնութք – բնավորություն:

երգու մանչ գավագ ունեցաք, շաղ կեղեցիկ, մազերը օսգիէ, աչքերն ալ փայլուն արեվի բէս:

Նամագը դվին ցիավօրին, վօր դանէ թաքավօրի դղին, պայց ինչբէս վօր ասինք ամէն մաշթ, վօրօվհեղէվ շէն թաքավօրի դրաբէզը<sup>27</sup> պաց էր, գրկնար գրիյորասիւրվէր, գրկնար ժէն կօրծին: Աս մէր ցիավօրն ալ կնաց աղ Շէն թաքավօրին դունը, աս չար հարսը աղէթ<sup>28</sup> ունէր, նայէլ, ամէն պան իմանալ. օվ վղէղ գէշթա, վղէղէն գուկա: Ան մաշթն ալ գասէ. «Ֆլան թաքավօրի դունէն խաբէր գըղանսիմ: Ան հարսը էրգու գավագ ունեցավ ֆլան, ֆլան»:

Մաշթը կիշէրը բառգէցավ, ան պացից չամադանը<sup>29</sup>, հանից կիրը գաշթաց. «Գինդ էրգու հաղ մանչ գավագ ունեցավ, էրգուսի մազերը օսգիէ է:

— Աչքիս փնշը, մինչի այժմն ալ գաբրի, դահա թաքուհի է էղէլ, թաքավօրի դէսօք գավագնէր ալ ունի: Գտնի գըկրի. «Աչքդ լուս էղավ գինդ էրգու շունի բալանէր ձնեցավ, — անօր հեղէվէն ալ գավէլցնու. էրգու ցեռքէրը չէղաձ գնգանէն ինչ գըլլա: Քու խոսքը, ինչ գուզիս հրամայէ»:

Յիավօրին ջէրը տրավ նամագը, ցիավօրը առավ դարավ: Դղան գաշթաց, կլուխը գախէց, դրդմեցավ, առավ թուխթը, կրից. «Ինչ անէմ, բարսն, խսմէթս է, թօղ գէնա մինչէվ բաղէրագմէն կալուս մի պան գանինք»: Յիավօրը առավ նամագին բադասիսանը, էգավ Շէն թաքավօրին դունը, հյուրասիւրվէցավ, կէշին<sup>30</sup> դունը, բառգավ: Կէշը առավ նամագը, գաշթաց, գաղղեցավ, թուխթը բաղոց, կրից. «Աս նամագը առածիդ բէս դոցըր վօչնչացրու, մօրն ալ փախցու դնէն»:

Թաքավօրը յէվ թաքուհին յէփ վօր առան նամագը ասին. «Ինչ գա բաղջատը»: Դայց դղին կրաձն էր: Բալադագանները թօփ արին, պայց գավագներուն հէրգէի<sup>31</sup> մէչ քցեցին, մէզը՝ էղէվէն, մէզը՝ առչէվէն: Աղաճնիին օմուզէն<sup>32</sup> գըղգախին յէվ գէլլէ, գէշթա:

Գէշթա, գէշթա մէզ հաղ օզան<sup>33</sup> գըղհասնի, անօր վրա քօփուր<sup>34</sup> գըլլա, անդէղէն անցաձ ժամանագը չուր խմիմ գասէ, գավագըները գիյնին օմուզին վրա՝ յէն, չուրը գըղանէ, ինքն ալ ցեռք չունի, վօր առնէ: Լալէն, լալէն, գէշթա գավագները անբէս դէղ գէշթան, վօր օզանին քէնարը<sup>35</sup> գավագները գառնէ, ասողէղը

27 Դրաբէզ (ռուս.) – սեղան:

28 Աղէթ (թուրք.) – սովորություն:

29 Չամադան (ռուս.) – ճամպուկ:

30 Կէշ – չար, վատ, տգեղ:

31 Հէրգէ (թուրք.) – հայրէ, երկկողմ տուարակ:

32 Օմուզ (թուրք.) – ուս:

33 Օզան (թուրք.) – առվակ:

34 Քօփուր (թուրք.) – կանուրջ:

35 Քէնար (թուրք.) – ափ:

գելլէ, գէշթա: Էշթալէն, Էշթալէն չուրին ան քովը: Աղ դէղը արբաճ գըլլա Օսգի Յուգին ախշիգը, ան գմէխքնա՝ ժէն հորմէն իրավունք գառնի, վոր մէգ հաղ բալաղ խօշթինք, վոր ախշիգը ժէն գավագնէրով արբի: Գխօշթին մէգ հաղ բալաղ մը, պայց ցեռքէրը սաղ չին:

Յուգին ախշիգը գասի.

— Առ սա ֆարֆար<sup>36</sup> քարը յէվ էրգու ցեռքէրդ քսէ՝ ցեռքէրդ գասաղնա:

— Աղաժնին գըքսէ, ցեռքէրը գըսաղնա: Գէշթա ան դունին մէչը ժէք դարի գարբի ժէն գավագնէրով: Դղաքը ժէք-ժէք դարի գըդառնան:

Հիմա տառնանք Աղաժնիին յէխպօրը:

Թաքավօրը գուկա, գըդէսնա նշանաճը չիգա, գավագնէրը չիգան, թաքավօրը գուկա: Գասէն.

— Տուն կրիլ էիր, վոր նամագը առաճնուս բէս վօշընչացնունք՝ մօրէրնուն ալ, դոցն ալ: Ինչ անինք, մէնք չուգէինք:

Գինը անքան չարութին առիլ է, վոր մաշթը չի տիմացել գնգանը ցեռքը: Միդք գանի, թէ Աղաժնիին ալ սուղ ասավ՝ գօրցրէց, իմ կլուխն ալ բիդի ուղի:

Գէշթա քրօչը փնտտէլու:

Թաքավօրը բաքային, մամային գասի.

— Յէս բդի կնամ, փնտտիմ նարանց:

Ջամփու բաշար գառնու, գընգնի ջամփու: Փնտտէլու ժամանագ ցիավօրի մը ռաստ գուկա, գըխօսին: Թաքավօրին դղան գասէ՝ սաբէս, սաբէս, իմ գինը պէրաճ է էրգու մանչ գավագ՝ մագէրը օսգիէ, աչքէրը՝ փայլուն արէվի բէս:

— Հւ՛, — գասէ մէգալը, — յէս ալ քրօչս գըփնտտիմ:

Մէգը քրօչը գըփնտտէ, մէգն ալ նշանաճին գըփնտտէ: Գասին՝ էրգուսիս ջամփան ալ մէգ է, անբէս էլ է վաղը, ցիէրը հէճնինք, կնանք փնտտէլու:

Փնտտէլէն, փնտտէլէն գհասնին մի դէղ, մաշթիգը գասին. «Ասդէղ մէգ հաղ գնիգ մը գարբի բալաղին մէչը»: Գէշթան գդէսնան էրգու հաղ գավագ օսգիէ մագէրով, գինն ալ կէղէցիկ, դէսօք է, պայց էրգու ցեռքէրն ալ սաղ էն:

Կշէրը գմնան առ բալաղը: Մաշթգանց քնացաճ ժամանագը Աղաժնին ժէն յէխպօրը չամաղանի մէչը ժէն օսգի արոջանը յէվ մանյագը գըգդնէ, յէփ գէշթան, գնիգը գըղրգի գավագնէրին, թէ՛ կնացէք, ասէք, թօղ կան հէղ:

Ասօնք գըգարմնան, գըհարցնին, գասին, ինչ գասիս:

— Յէս ցէզի աղէգութին արի հյուրասիբէցի յէվ թահմիլ չէի անիլ, թէ ցէզի բէս բաղիվօլ մաշթիգը կօղութին արիք, ամօթ չէ՛:

Մաշթիգը գըգարմնան, գըմնան:

— Էղէր կօղութին արէլ էնք կլօխնէրս գդրէլ դուր, — գասէն:

36 Ֆարֆար (ռուս.) – ճենապակի:

Աղաժխին ալ գրնայի չամադանը, գրնայի օսգի արոջանը յէվ օսգէ մանյագը գրհանի:

— Ահա՛, — գասի:

Նարանք բուզ<sup>37</sup>, փայդ գորէցան: Ախպարը գասի: Ամէնէվին, — գասի, — յէս կօղսաճ չէմ, — գասի:

Աղաժխին գասի. — Աղա՛, ան ինչբէս է, վօր ցեոքէրս գորսաճ քէնէնը<sup>38</sup> «աղա, հավադան ասդձուն» գասէի, տուն՝ չէիր հավադար, անբէս սլ հինա:

Գիմանան, վօր ան Աղաժխին է, դոցն ալ գառնին, գէշթան թաքավօրի, թաքուիուն մօդ, մէճ ուրախութուն գանին յէվ գանչէցին ան մաշթուն հարցուցին, թէ ջամփան ո՛ր կացիր:

Գասի. — Շէն թաքավօրի քօվը կացի:

Գանչէցին ան չար գնիգը, գաբէցին ցիին բօչէն, վագէցուցին ցիխօն, քարին գբավ, չօլին գբավ. մինձ գդօրը անգանչը մնաց:

## 2 (2).

### ԷՐԳԱԹԷ ԿԱԼԸ<sup>39</sup>

Ժամանագօվ մէգ հադ մաշթ գաբբէր ժէն ընտանիքօվ: Ադ մաշթուն գնիգը խիսդ շադ պան դէսաճ գըլլա աշխարքին յէրէսը, համա մէգ հադ կալ դէսաճ չէր:

Աս գնիգը ժէն էրգանը ամէն անքամ գասէ. «Մա՛շթ, ինձի կալ ցըցուր»: Էն մաշթն ալ հօս գըման կա, հօն գըման կա, կալ չիկտնի, վէրչ վէրչօ գէշթա կուգնիջինէրուն<sup>40</sup> գասէ.

— Տուք ինձի դէի<sup>41</sup> մէգ հադ էրգաթէ Կալ խօշթէլու գըլլսմք:

Նաքա ասին.

— Ինչի՛ չէ, գըխօշթինք, ախպար:

Գըխօսդանան, վօր չօրս օրէն հագիր<sup>42</sup> գըլլա:

— Գնի՛գ, — գասէ, — Կալը չօրս օրէն հագիր է:

Յէփ գանցնի ժէք օրը, չօրսում օրին սաբախդան<sup>43</sup> գնիգը ժէն մաշթուն գասէ.

— Հադէ՛, շո՛ղ արա, կնա՛, պի՛ր:

37 Բուզ (թուրք.) – սառույց:

38 Քէն – ժամանակ:

39 Կալ – գայլ:

40 Կուգնիջի (ռուս.) – դարբին, ռուսերեն «кузнец» բառի աղավաղված ձևն է:

41 Դէի (թուրք.) – համար (օր.՝ ինձի համար):

42 Հագիր (թուրք.) – պատրաստ:

43 Սաբախդան (թուրք.) – առավոտյան:

Մաշթը գելլէ, գըլձէ դոօգը<sup>44</sup>, գէշթա կուզնին<sup>45</sup>: Կուզնիջիններն ալ Կալը խօշթաձ, հազիր արաձ գէցիլ ին՝ մաշթուն ջամփան գընային: Մաշթը գուդա սդագը կուզնիջիններուն, Կալին խօշթելչէքը<sup>46</sup> դոօգին մէշը գըտնէ, գըպէրէ դուն:

Գնիզը իրէն բալաչադաներուն<sup>47</sup> հէդ գելլէ դոօգէն վար գառնուն Կալին, դուն գըխօթին, գըտնին, գըբաշլային կալի վրա նայելու: Անքան գնային, անքան գնային, վօր քաղցաձ էդաձն ալ չին իմանար: Էրգու-ժէք օր ադրէս նայելօվ, անքան նայեցան, վօր Կալը սախցավ:

Կալը սախցավ, ամա քաղցաձ է. ինչ թօղ անէ:

Գօլդըրվի<sup>48</sup> մաշթուն գասէ. «Քաղցաձ իմ»: Մաշթն ալ շաշըրմիշ գանէ. կուզնիի խօշթաձ Էրգաթէ Կալը սաղնամ, «Քաղցաձ իմ, ասէ՛»:

Շադ միդք չանիլ, գասէ, — Կնա չօլը, ֆէլան դէղը մէգ քէսէք<sup>49</sup> դավար ունիմ, գէր:

Կալը գելլէ, գէշթա: Իդա դավարին գըհասնի, արարիչ ասդվանձ, գըյնի դավարին մէշը, գըբաշլայէ ուղէ: Չանցնի մէգ ամիս, վօր իդա դավարը թէմիզ գուղէ: Անգից գէնէ, գելլէ դուն գուկա, մաշթուն գասէ.

— Քաղցաձ իմ:

Մաշթը գասէ:

— Կնա՛, ժէք քէսէք օչխար ունիմ, իդա գիր:

Կալը գելլէ, գէշթա: Գէշթա իդա ժէք քէսէք օչխարին գըհասնի, գըբաշլայէ ուղէլու, ժէք ամիս չանցնիլ գըվէրչացնու: Կալը գէնէ գըմնա քաղցաձ, գէնէ գելլէ, գուկա դէրոջը դունը, գասէ.

— Դէր, քաղցաձ իմ:

Մաշթը գասէ.

— Կնա՛, մէգ հադ մէձ քէսէք յըլխը<sup>50</sup> ունիմ, գիր ինչքան գուզիս:

Կալը գելլէ, գէշթա, գըհասնի յըլխըին, գըբաշլայէ ճաշթել ուղէլու: Էրգու-ժէք ամըսվա մէջ գվէրչացնու:

Հօս ալ մաշթը ժէն դունին մէշը խասէվէթի<sup>51</sup> բաթիլ է. «Շինդըլի Կալը կա նը, ինչ բղի անիմ», — գասէ:

Իդա ժամանագը Կալը գուկա, տիմացը գըգային.

44 Դոօգ (ռուս.) – դրոժկա՝ քառանիվ թեթև սայլակ:

45 Կուզնին (ռուս.) – դարբնոց, ռուսերեն բառի կրճատված ձևն է:

46 Խօշթելչէք (թուրք.) – սարքելու գին:

47 Բալաչադա (թուրք.) – գավակ, որդի:

48 Գօլդըրվի – ման կգա:

49 Քէսէք (թուրք.) – հոտ, զանգված:

50 Յըլխը (թուրք.) – ձիու երամակ:

51 Խասէվէթ (թուրք.) – մտածմունք:

— Քաղցած իմ, դէր, — գասէ:

Մաշթը գասէ.

— Ինձի գէր:

Կալը մաշթուն գուդէ:

Գնիգն ալ ինքը խիթրի<sup>52</sup> ըլլալով գըպոնի, մէգ հադ ախչգանը յէվ դղին կըսէ:

Դէրօշը ուղէլուն էդէվ Կալը գուկա գինմաշթուն գասէ.

— Քաղցած իմ:

Գինմաշթն ալ գասէ.

— Դղիս գի՛ր:

Կալը դղին գուդի: Հէդո գասէ.

— Քաղցած իմ:

— Ախչգաս գի՛ր, — գասէ գինմաշթը:

— Մէգալ աչխիգանն ալ գուդէցընէ:

Կալը գասէ.

— Քաղցած իմ:

— Ինձի գի՛ր, — գասէ գինմաշթը:

Կալը գինմաշթուն ալ գուդէ:

Կալը շինդըխ միդք գանէ, գասէ. «Սա մաշթը՝ էրիկ, գնիգ, ժէք ախչիգ, էրգու դղա ոնէր, յէս գէրա էրգու ախչիգ, մէգ դղա, յէվ ժէսց էրիգ գնգան, պայց մէգ ախչիգ, մէգ դղան վըդէ՛խն ին»:

Գըբաշլայի փնտոէլը: Գըփնտոէ, գըփնտոէ, պայց չի կըդնուլ, գէշթա Փոնավիլին<sup>53</sup> գըհարցնէ.

— Մէգ հադ դղան, մէգ հադ ախչիգը վըդէ՛խն ին:

Ան ալ գասէ.

— Չիդի՛ն:

Կալն ալ գասէ.

— Է՛յ, քու մուրօտ հէրդ անիճած, — գէշթա Ավէլին:

— Ավէ՛լ, տուն ամէն դէդ գավլիս քօշա-բուջախը<sup>54</sup>, ասա վըդէ՛խ բահված ին

դղօվ ախչիգը:

Ավէլն ալ գասէ.

— Չիդի՛ն:

---

52 Խիթրի (ռու.) – խորամանկ:

53 Փոնավիլ – փոան ավել:

54 Քօշա-բուջախ (թուրք.) – անկյուն:

Կալը գասէ. — Քուգուդն ակ՝ թօգօս<sup>55</sup> էրէսդ ու գէշթա դունին թէփէի<sup>56</sup> Խամիշին<sup>57</sup>.

— Խամի՛շ, — գասէ, — վղէխ էն սա դոսվ ախչիգը:

Խամիշն ակ գասէ.

— Էղէվէս գղէ<sup>58</sup>, վրղէխ գայնիմ նը՝ հօն ին:

Կալը ժէն թաթօվ խամիշին էղէվէն գըգղէ, Խամիշն ակ շիդագ գըյնի դոցը վրան: Դղաքն ակ գահրին<sup>59</sup>.

— Վայ՛, Կալը կղանվ, — գասին:

Շինդըխ Կալը Խամիշին էղէվէն գէշթա: Խամիշը յէդ գանէ, դախդագը գըվէրցնու, գընայի դղին հէդ ախչիգը նսդան էն հօս:

— Հայ՛, տուք հօս իք, — գասէ, — ինքն ակ խունդում էղան գառնու դղին հէդ բարաբար<sup>60</sup> ախչգանը գհանէ չօլը<sup>61</sup> մէգ հադ օբայի<sup>62</sup> վրա գընստէցընու.

— Սըղէխ նսղէք, — գասէ, — էշթամ լէշ կղնում նէ՝ լէշ գուղիմ, լէշ չկղնում՝ գուկամ ցէգի գուղիմ:

Դղաքն ակ գուկան, ինչ անէլունէրը չիղին:

Իդա սիհէլին<sup>63</sup> մէգ հադ Կօմէշ գուկա:

— Ինչո՛ գուլաք, բալիքնէր, — գասէ:

— Կօմէշ ախպանր, ինչբէս չըլանք, Կալը մեր ունէցան-չունէցանը գերավ, բարայիս, մամայիս, աղայիս, քրօնէրուս գերավ, շընդըխ ակ մէճի հօս պերից նսղէցուճ, ասաց. «Էշթամ լէշ կղնում նէ՝ լէշ գուղիմ, չկղնում նէ՝ ցէգի գուղիմ»:

Կօմէշը գասէ.

— Նսղէք վրաս:

Դղան ու ախչիգը գընսղին Կօմէշին վրան: Կօմէշը գըսգսի էշթալ: Շադ գէշթան, քիչ գէշթան մէգ հադ կէղի մօդ գըհասնին, Կօմէշը գըհարցնէ.

— Քօվէրըտ ինչ ունիք:

Ախչիգը գասէ.

— Մամաս փէշքիր<sup>64</sup> դվիլ էր՝ էրէս սրփէլու դէյին, մէգ հադ սանդըր դվիլ էր՝ մագ սանդըրէլու դէյին, մէգ հադ մգրադ՝ օղունկ գըրէլու դէյին:

55 Թօգ (թուրք.) – փոշի:

56 Թէփէ (թուրք.) – գագաթ:

57 Խամիշ (թուրք.) – եղեգն: Դրիմի գրեթե բոլոր ստերի երգիկները ծածկված են եղել եղեգնով:

58 Գղէլ – հրէլ:

59 Ահրիլ – ահաբեկվել:

60 Բարաբար – միասին:

61 Չօլ (թուրք.) – անսպաս:

62 Օբա (թուրք.) – վրան:

63 Սիհէլ (թուրք.) – ժամանակ:

64 Փէշքիր (թուրք.) – սրբիչ:

— Ըրինդ է<sup>65</sup>, — գասէ Կօմէշը, տէհ, ջամփանէրս էշթանք:

Կօմէշը «յամխ, յամխ, յամխ» ասելէն գէշթա, դղան ու ախչիգը վրան նսդամ:

Կալը գուկա, գընայի օբային վրան չիգան նսդամ դղան ու ախչիգը, գըրաշայէ չօրս քօլը նայելու: Մէգ սէմթէն<sup>66</sup> գըդէսնու, մէգ հադ փօքը խարա<sup>67</sup>, գըրաշայէ իդա խարային էշթալու:

Շադ գէշթա, քիչ գէշթա արթըխ խարային գըմօդգընա, գընայի մէգ հադ Կօմէշ՝ վրան ալ դոզլ ախչիգը նստամ, գէշթան: Գըրաշայէ խաթի-խաթի<sup>68</sup> էշթալու:

Կօմէշը գըհարցնէ դղին.

— Էդէվնէրդ նայեցէք, — գասէ, — Կալը գուկամ:

Դղան գնայի, գասէ.

— Գուկամ, մէգ վէրստ<sup>69</sup> դէդ մնացիլ է:

— Հայդէ, — գասէ Կօմէշը, — ինա սրթին<sup>70</sup> հասնինք ու սանդրը գըթարլիք վար:

Սըրթին հասամնէրուն բէս, Կօմէշը սանդրը թարլու գուդա, իդա դէդը անբէս մէգ գօգանլըխ<sup>71</sup> գըլլա սըխ<sup>72</sup>, վօր գարելի չէ անցնէլ: Կօմէշը գէշթա: Կալը գուկա գօգանլըխին գհասնի, գնայի չօրս քօլը, գըմուդնու գօգանլըխը ժէն գօվդան<sup>73</sup> բադդդէլէն տիժար գանցնի գօգանլըխէն, գըդէսնու վօր Կօմէշը նօմայ դէդ կնացիլ է: Գէնէ վագէլէն յօնօմիշ<sup>74</sup> գըլլա, Կօմէշին Էդէվէն: Աշթըխ<sup>75</sup> Կօմէշէն մօդգընալու վրա էր՝ Կօմէշը գըհարցնու դղին.

— Կալը գուկամ:

Դղան ալ գասէ.

— Աշթըխ գըմօդգընա:

Կօմէշը գասէ.

— Տըք մգրադը:

Դղան գըքքէ մգրադը, մէգ փուշ գըլլա, մէգ փուշ գըլլա՝ սըխ, վօր հիչ պան անցնէլու չըլլար, անգարելի էր անցնէլը:

---

65 Ըրինդ – լավ:

66 Մէմթ (թուրք.) – կողմ:

67 Խարա (թուրք.) – ցամաք, հող:

68 Խաթի (թուրք.) – շուտ:

69 Վէրստ (ռուս.) – ռուսական չափի միավոր, համարժեք է 1.067 կմ-ի (հնգ.):

70 Սըրթ (թուրք.) – լեռների կողմը:

71 Գօգանլըխ (թուրք.) – պտղատու այգի:

72 Սըխ (թուրք.) – խիտ:

73 Գօվդա (թուրք.) – մարմին, իրան:

74 Յօնօմիշ (թուրք.) ըլլալ – շարունակել:

75 Աշթըխ – թուրքերեն ալթըխ բառի աղավաղված ձևն է՝ այլևս:



Կօմէշը գէշթա, Կալն ալ գուկա, գըհասնի փուշին. աս քօվը գնայի՝ ձարը չէրէվալ, ան քօվը գընայի՝ ձարը չէրէվալ: Ինչ անէ. գհաքցնէ<sup>76</sup> փուշին մէշը անցնելու, սաղ վրան-կլուխը գըգդրդէ փուշէն, իպիփի ալլահ<sup>77</sup>, գանցնի փուշէն, գէշթա ժէն ջամփան՝ Կօմէշին էդէվէն:

Աշթըխ Կօմէշին մօզգընալու սրա<sup>78</sup> էր, Կօմէշը ասաց դոին.

— Կալը գուկա՛:

Դոն գասէ.

— Աշթըխ գմօզգընա:

— Այս տարամայէն<sup>79</sup> անցնինք, փէշքիրը գըթաբլիք:

Տարամայէն անցածնէլօվը փէշքիրը դոն գըթաբլէ, գըլլա մէգ հադ մէճ ձօվ, գէշթա մէգ հադ գանանչ դէդ մօրիին յանաշան<sup>80</sup>, Կօմէշը գասէ.

— Ընչիք վրայէս յալ արէք<sup>81</sup>:

Դոն աչխիգը գըընչնին Կօմէշին վրայէն, սա դէսօք գանանչ արօդի դէդ յանաշան ալ մօրին<sup>82</sup>՝ արքաութինը վօր գա՝ ան է:

Կօմէշը գասէ.

— Դոնք, տուք գըդէսնում վօր ուղէլիք ալ չունիք, հիչ պան ալ չունիք, հայդէ՛, — գասէ, — ինձի մօշթէցէք օսկօրնէրս դուն խօշթէցէք, գաշիս ալ վրան փոէցէք, միսս ալ աղէցէք, գերէք: Տուք փրգվանձ իք:

Դոն գըմօշթէ Կօմէշին, օսկօրնէրը դուն գըխօշթէ, գաշին ալ վրան գըփոէ, միսն ալ գաղին ու գուդին:

Կալը գուկա գըհասնի ձօվին, գընսդի ան քօվը անելու պան չունի: Խամիշը բօրօգան<sup>83</sup> գխօշթէ<sup>84</sup>, գըբաշայէ չալէլու: Ժէն չալաձօվը գուգէնս ախչգանը ժէն քաշէլ, անա աչխիգը չի խափվիլ: Կալը գուգէնս թոչէլ անցնէլ ժէն համար գըվազէ. «Հանա թոչիմ, — գասէ, — գըպարցըրնս գիյնի ձօվը, գըխըխդըվի»:

Դոն քրոչը գասէ.

— Քուրիկ, յէս հայդէ էշթամ մօրին ախօտի<sup>85</sup>, տուն ալ գէրագուր էփէ:

Ամէն օր դոն ախօտի գէշթա, քուրն ալ գէրագուրը գէփէ, ախպարն ալ գուդի, գհանգադանան:

76 Հաքցնէլ – մտնել:

77 Իպիփի ալլահ (թուրք.) – Աստծո օգնությամբ:

78 Սրա (թուրք.) – հերթ:

79 Տարամա (թուրք.) – խորդուրդ:

80 Յանաշա (թուրք.) – մտիկ:

81 Յալ անէլ (թուրք.) – հանգստանալ:

82 Մօրի – անտառ:

83 Բօրօգան (թուրք.) – փող:

84 Խօշթէլ – շինել:

85 Ախօտ (ռուս.) – դրս:

Օրին մեզ օրը ախչիգը գասէ. «Մա ախսպարս գէշթա սաղ օրը մօրիին մէշը գըման կա, ինչ գըբադահի, ինչ չի բադահի, յես հիչ չիդիմ, արի՛ մէմը յես ալ էշթամ մօրին ման կամ», — գասէ ու գէշթա շաղ գըման կա մօրիին մէշը, քիչ գըման կա՝ շաղը քիչը ինքը կիդէ, մեզ հաղ չօրվախի<sup>86</sup> քօվը բաղ չուր գըլամէ, գընսդի, քիչ մը ժամանազ գանցնի վօղքի ցան գըլսէ, չօրվախին քօվը ձառին վրա գէլլա, գընսդի, ատ վօղքի ցանն ալ թաքավօրին դղին ախսօտի էլաձ ցիէրուն վօղքին ցանն է, վօր ցիէրուն գըպէրին չօրվախէն չրէլուն նէ, ցիէրը գուկան, բռունգնէրը չուրին գպցնէլու օխթարմիշ<sup>87</sup> գըլլան նէ՝ համան թէպ էդէվ գըքաշվին: Ադ ալ ինչի՞ համար գըքաշվին, ախչգանը շօլհան<sup>88</sup> չօրվախին մէշը գէրէվա, ցիէրը չին մօդգընսա:

Թաքավօրի դղան գարմանքօվ գուկա, գընսայի չօրվախին մէշը ինչ գա, վօր ցիէրը չուր չին խմիլ, գըփախչին, ինքը գընսայի չօրվախին մէշը ինչ գըդէսնա, մեզ հաղ դէսօք<sup>89</sup> ախչգա շօլհա, վէր գընսայի պանցը ձառին թէփէն<sup>90</sup> մեզ հաղ ախչիգ նսդաձ, նարա սաղ չօրս քօվը շօլհա փովաձ է: Թաքավօրի դղան բաշլայից ցան դալ ախչգանը.

— Վարն ընչիր, վարն ընչիր, — պայց ախչիգը չի ինչնիլ: Թաքավօրի դղան միդք գանէ ինչրէս անիմ, վօր ախչգանը վար առնիմ՝ շաղ դէսօք ախչիգ է: Միդք գանէ, միդք գանէ, վէրչը միդքը գըլնի. «Էշթամ, — գասէ, — Ջադուջի<sup>91</sup> մէձային<sup>92</sup> պէրիմ, ան ինչ ալ անէ, վար գառնէ»:

Համան գըհէձնու ցին, գէշթա իդա Ջադուջի մէձային գըպէրէ: Մէձան ալ հէդը գառնէ մեզ հաղ կուշ<sup>93</sup> գառնէ, մեզ դօմ<sup>94</sup> ալ չամիչ, գուկա չօրվախին մօղը:

Թաքավօրի դղան ու ցիանէրը թէմիզ գըբըհօղվին: Բառավը մէյնագը չօրվախին գընսդի, գըբաշլայի չամիչ հնդրէլու: Չամիչը՝ կուշը, չօփը չուրը ցքէլու դէդը, հաբա չամիչը չուրը, չօփը՝ կուշը գըցքէ: Ախչիգը վէրէն գըդէսնու.

— Մէձա՛, մէձա՛, — գասէ, — չամիչը կուշը ցքէ, չօփը չուրը ցքէ, ինչի՞ դէի դուն յալընը<sup>95</sup> գանէս:

Բառավը գասէ.

— Բալան, աչքէրս չիդէսնուլ, ինչ անէմ:

86 Չօրվախ (թուրք.) – աղբյուր:

87 Օխթարմիշ (թուրք.) ըլլալ – թեքվել:

88 Շօլհա (թուրք.) – շողք, արտացոլում:

89 Դէսօք – գեղեցիկ:

90 Թէփէ (թուրք.) – գազաթ:

91 Ջադուջի, ջադու (թուրք.) – չար կախարդ:

92 Մէձա – մեծ մայր:

93 Կուշ – փայտից աման:

94 Դօմ – չափ:

95 Յալընը (թուրք.) – սխալ:

Ախշիզը գասէ.

— Սաբր արա<sup>96</sup>, մէճա՛, յէ շինդըխ յարդըմ<sup>97</sup> գանէմ քէզի:

Ախշիզը ձառէն վար գընչընի, մէճային քովը գուկա գըցուցընէ, գասէ.

— Հանա սիբէս արա՛ չամիչը կուշը ցքէ, չօփն ալ չուրը ցքէ:

Ախշիզը աղբէս անէլ գըբաշլայէ, բառավը համանդէն<sup>98</sup> խաթմիշ<sup>99</sup> գանէ ախշգանը, գըբաշլայէ համոզէլու.

— Տուն ինձի ախշիզ, յէս քէզի՛ մէճա:

Իդա սիհէլին թաքավորին դղան իրէն բուհոված դէղէն տուս գըթոչի, համան գըվազէ ախշգանը ցէռքէն գըպոնէ, գառնէ գըդանէ ժէն տաչանքային<sup>100</sup>:

— Տուն ինձի՛ հարս, յէս ալ քէզի՛ փէսա, — գառնու գղանէ դուն:

Ախշիզը գասէ.

— Թաքավորի դղա՛, յէս ունիմ մէզ հադ ախպար, վորը իրիզվաննէրը դունը գուկա, սաղ օրը ախսօտի է, էգէր կա ինձի չդէսնու նէ՛ լէղին բադառ պիղ լա:

— Վըդէլս է, — գասէ թաքավորի դղան, — էս շինդըխ մաշթ գըղրգիմ, գըպէրիմ:

Թաքավորի դղան տաչական լձէլ գուդա, մաշթ գըղրգէ ախշգանը ախպօրը էդէվէն:

Գէշթան դղին դունը, դղին գըբադմին պանին վօրբէսութինը, դղան գասէ թաքավորի դղին.

— Հա, բա տուն ինչ իրավունքօվ իմիս քուրս գըկօղնասա:

Թաքավորի դղան գըբաշլայէ դարան համօզէլու գասէ.

— Քու քրօշը յէս պէրիլ իմ վօրբէսի ինձի հարս ըլլա, էգէր տուն ալ ասօր հօժար չիս նը, յէս ասէլու պան չունիմ, էգէր հօժար իս նը, արի՛ մէզ դրաբէզի<sup>101</sup> մաշթ լանք՝ յէս քու քրոչդ գառնիմ ինձի հարս, քէզի ալ գուդամ իմիս քրոչս:

Իդա սիհէլին քրոչն ալ գըպէրին, դղան ալ քրոչը գըդէսնու, գըհաժփի, նշանօք գանին, վէրչն ալ մէճ հարսնիք գըսարքին, օխթն օր, օխթը կշէր հարսնիք գանին. կինի, ռախի, գըխմին:

Անոնք գըհասնին ժէնց մուրադին, ասօնք ալ՝ ժէնց մուրադին<sup>102</sup>:

Վէրէն ալ ընգավ ժէք հադ խնձօր. մէգը՝ ասօղին, մէգը՝ լսօղին, մէգն ալ՝ անգաջ տնօղին:

96 Սաբր անէլ (թուրք.) – համբերել:

97 Յարդըմ (թուրք.) – օգնություն:

98 Համանդէն (թուրք.) – իսկույն, անմիջապէս:

99 Խաթմիշ անէլ – թուրքերեն խափմիշ անէլ բառի աղավաղված ձևն է, նշանակում է բռնել:

100 Տաչանքա (ռուս.) – կառք:

101 Դրաբէզ (ռուս.) – սեղան:

102 Մուրադ (թուրք.) – նպատակ:

### 3 (3).

#### ԱԲՈՋԱՆԸ<sup>103</sup> (Դրիմի հեքիաթ)

Սուլթան Բեգ թաքավորը խիստ զենգին թաքավոր էղիլ է: Սաղ աշխարքին սուղյան<sup>104</sup> ական էղիլ է: Ունեցիլ է մեզ քանի քուր: Քուրերէն մեքադէն՝ Ջուֆիյա խանումէն առանց նշանվաճի դղա, այսինքն՝ վոր փիչ<sup>105</sup> ընձայիլ է: Հին ժամանագը աղիգը խիստ ամօթ էղիլ է, յեվ թաքավորը հրաման դվիլ է դղին պավուլ անելու, դանելու մօրին թարլելու, վոր կազանները ուղին:

Թաքավորին նագիր-վեզիրները աղբէս ալ գանին: Մարը գագիճին չի թիմանա, գրհիվըննա, դօշագ գըյնի, գըմէնի: Համա դղան աաղձու հրամանօվ սաղ գըմնա, էրգինքէն նարա համար նաֆաղա<sup>106</sup> գըխրգին: Ասբէս ալ դղան գըմէզնա, չօրս դարեզան գըլլա:

Օրին մեզ օրը Սուլթան Բեգ թաքավորին միդքը թոչունի միս գըյնի յեվ գըխրգէ իրէն մաշթօցը մօրի: Թաքավորին մաշթիքը յեփ վօր գուկան մօրին, գըղէսնուն, վօր մեքադ չօրս դարեզան գըյրգ դղա գըվագէ: Թոչունի վօրսին վրայօվ դաքա գըմօղնան յեվ գտնուն դղին, գըպէրին, մանգադուն գուդան: Դղան գըմէճնա, գալաջէ գըսօրվի: Անգից գուդան դարա վարժադուն: Իսկ վօրօվհէղէվ կղնվաճ դղա է, անունը գըտնին Խամբէր:

Վարժադունին մէչը Խամբէրը խիստ ըռինդ գըսօրվէնա, էնգը առչի աշագերդը գըլլա: Ան ժամանագն ալ ամէն աշագերդ գունէնա մեմեքադ օխլլա<sup>107</sup>: Խամբէրն ալ ունացիլ է աղ օխլլան:

Հին ժամանագն ալ ամէն աշագերդ իրէն ամանը ունեցիլ է: Սաբախվանէն մինչէվ իրգուն վարժադունը գեցիլ ին, հացերը գէրիլ ին, իրգվան ալ օխլլաներօվ խաղալէն դունէրը էգիլ ին:

Մէգ անքամ ալ դունը էգաճ ժամանագները գընային, մեգաղ մէճա փարչօվ չուր առիլ է, տրիլ է վարը, չօրստին գընայի: Աս Խամբէրը գասէ նը. «Հայդա՛, սյա մէճային փարչին նշան առնունք»: Ինքը ամէնէն առչօվ դուգէն գանէ<sup>108</sup> օխլլան յեվ մէճային փարչին գըգարնէ, գըգօղրէ: Մէճան գընայի յեվ գասէ.

103 Գրի է ստել «Կոմունար» թերթի գլխավոր խմբագիր Շահեն Շահինյանը 1957 թ. չալթըր-ցի **Լուսեղեն Ալեքսանի Չիբիչյանից** (ծնվ. 1870 թ.): Նա մանուկ հասակում լսել է Նեավիթայ գյուղի «չալդչի» Մանուկից: **Շահեն Շահինյանը** 1959 թ.՝ մեր գիտաժողովի օրերին, այն հանձնել է ինձ:

104 Սուղյա (ռուս.) – դատավոր:

105 Փիչ – ապօրինի գավակ:

106 Նաֆաղա (թուրք.) – ապրուստ, սնունդ:

107 Օխլլա (թուրք.) – սլաք, աղեղի նետ:

108 Դուգէն (թուրք.) անել – պատրաստել:

— Տուն, Խամբէր, թաքավորի գարն իս, շաղ չանհիճիմ. Արգունին սիրուն հանտըրբիս:

Տուն մ'ասիլ, վոր աղ մեճան ալ ջաղու գըլլա:

Դդան գըլէրքէ.

«...Ինչ վոր էղիլ է, էղիլ է,  
Ջագաղիս սէվ քրվիլ է,  
Արգունին սէրը ինձի գուլում էղավ»:

Արգունին անունը գըլսէ նը Խամբէրին սիրողը շկիլ գըլնի: Հարցունք-փորցունք գանէ իրէն հէղի սորվէցողներէն: Դարա Արգունին գըցուցունուն յէվ գասին, վոր ֆէլան խաթի գէնգին թաքավորին ախչիգն է: Բայձառ, սիրուն ախչիգ է, գըհաժնին մեմեճգի, մեգղէղ ալ գըսորվէնան: Առաչվան ժամանագն ալ ախչիգ, դղա մեգղէղ սորված գըլլան:

Մէգ անքամ ալ, յէփ վոր Խամբէրը մանգաղունէն վարժաղուն գուկա, գըղէնսու վոր Արգուն դահա էգած չէ: Հօս գընայի, հօն գընայի, չիգա: Արգուն ալ մինչէվ վարժաղուն չորի էշթամ, գասէ: Գէշթա, դալղըրմիշ գանէ, գըվէրցունու, համա չուրը առած քէնը ցէոքի օսգի արոջանը չուրը գըլնի, հանէլու չիլա, գուկա: Խամբէրը վէրչը գըհանէ Արգունէն կաղղուկ: Արգուն յէղ գըտառնա նը, արոջանը աշտիս հանած գըլլա, համա վօլ հանօղը չիղէ, ախտ': Արգուն գուկա վարժաղուն, գըբաշլայի ախչիգներուն հարցունէլու: Նաքա ալ չին քիղնա Արգուն ալ համա Խամբէրէն դահմիլ<sup>109</sup> գանէ յէվ նարա գըհարցունու.

«Փարչս առի, չուրի կնացի,  
Դալղըրմիշ արի, վէրուցի,  
Հօքիս-հավաղս, Խամբէր.  
Արոջանս գօրուցի»:

Դդան աղօր տիմացը գասէ.

«Ասօր յէս չօրվախ կնացած չիմ,  
Ցէոքս, էրէսս լվացած չիմ,  
Աղու<sup>110</sup> դաս նը՝ գըխմիմ,  
Արոջանսր դէսած չիմ»:

Ախչիգը չի հավաղա յէվ գասէ.

«Աղու ուզանաս նը՝ աղու գըլլամ,  
Ինձի ուզանաս նը՝ յէս գուկամ,  
Պայց իմ արոջանս ալ  
Ջէրմագ ձօցիտ մէջ բէնգ<sup>111</sup> է»:

109 Դահմիլ (թուրք.) անել – միտք անել:

110 Աղու (թուրք.) – թույն:

111 Բէնգ (թուրք.) – խաղ:

Գոհան յեփ վօր գըլսէ ախսզանը «յէս գուկամ» ասածը, անգաջներուն չի հավադա, խունդում գըլլա, համա գէնէ չասի դէղանագ, վօր արքջանդ յէս կղիլ իմ դէյին: Գըհարցունու Արգուին.

*«Քաղաքը մէձ փօրվաձ էր,  
Ջէրմագ օջխարը խոզիյօլ էր,  
Արքջանիւր վրան քու,  
Ինչքիսի քիր քրվաձ էր»:*

Ախչիգը իրէն արքջանին նշանները գըլսէ նը, խունդում գըլլա, յէվ գասէ Խամբէրին.

*«Քաղաքը մէձ փօրվաձ էր,  
Ջէրմագ օջխարը խոզիյօլ էր,  
Արքջանիս վրան իմ,  
Անունս ալ քրվաձ էր»:*

Խամբէրը շինըլս Արգուին պէրանին չափը քիդնալ գուզէ դա գըհարցունու.

*«Չուրը գէշթար օլուխ-օլուխ,  
Գըքաշէյիք թօլուխ-թօլուխ,  
Արքջանսր կղնօղին,  
Ինչ քիդի դաս մնշթալուխ<sup>112</sup>»:*

Ախչիգն ալ, ախր, գըհասգնա դա դղին ինչի՞ ջամփա նայածը, գասէ նը.

*«Չուրը գէշթար օլուխ-օլուխ,  
Գըքաշէյինք թօլուխ-թօլուխ,  
Արքջանս կղնօղին,  
Ինքս գէշթամ մնշթալուխ»:*

Արգուն ադքան պան գասէ նը, դղան գըհանէ արքջանը, գընայի նշանները խօշորքիյալ<sup>113</sup> ախչիգանը ասածին բէս էլլան: Գուդա արքջանը:

Աղլը ջադու<sup>114</sup> մէձան մօոցաձ չէ դա, մէքադ ֆօղէ փարչ գօդիլ է Խամբէրը օխլայօլ, գըման կա սս քօլ, ան քօլ: Շէնը չի մդաձ, չի քնացաձ, դէղը չի մնաց: Գըման կա, գըփնտոէ ինչէս անէի, վօր Խամբէրին նաղէցունէի<sup>115</sup> դէյին: Անբէս յօժօնմիշ<sup>116</sup> էղիլ է, վօր դղին ալ, ախչիգանն ալ օր ցուցունէլու չէ, շտէ, սէվ բիդ անէ օրէրը:

Խամբէրը գիմանա ջադուին հալէքէթ արածը, գասէ Արգուին.

112 Մնշթալուխ (թուրք.) – նվեր:

113 Խօշորքիյալ (թուրք.) – իրոք:

114 Աղլը ջադու, արլը (թուրք.) – խելացի պատալ:

115 Նաղէցունէլ – բանտարկել:

116 Յօժօնմիշ (թուրք.) ըլլալ – որոշել:

*«Աստղեր ինձի մէջք գանին  
Գէնջ<sup>117</sup> կլոխս խրյնալամիշ գանին<sup>118</sup>,  
Էգէր էրգուսս մէգ լանք նը,  
Մէգի գնդան<sup>119</sup> գըցքին»:*

Ախշիզն ալ աղօր տէմը գասէ՝

*«Դունին դիրէգը<sup>120</sup> մարջան<sup>121</sup> է,  
Հօգիյիս սիրաձը Խամբէր թուն իս  
Էգէր էրգուսիս մէգ գնդան ցքին նը,  
Ջնդանը մէգի առքայութին է»:*

Ջաղուն կդավ իդօր հնարը, անբէս արավ, վօր էգան, չէ քի սալթ  
Խամբէրին, հաբա Արգուին ալ նարա հէդ գնդան ցքէցին: Մէգ օխտն ամիս  
նստան ադ գնդանը:

Խամբէրը աշթիս ամէն պանէն ցէռք վերուցիլ է, վազ էգիլ<sup>122</sup> է: Գըլէրքէ.

*«Ինչ վօր էղիլ է, էղիլ է,  
Ջազադիս սէվ կրվիլ է,  
Արգուին սէրը ինձի գուլում էղալ»:*

Շինը օխտն ամիս նսդան: «Սյա ինչվանի յէփ բիդ փակինք», — սսին,  
հանէցին: Արգուին հիչ խաբահաթը<sup>123</sup> չի հանէցին, ախո, Խամբէրն է փարչը  
գօղոցը: Դարա հէդ մէգ ժէքաղըմ ալ դղա գուդան, գըխրգին օրէնքադուն՝  
Սուլթան Բէգ թաքավօրին: Հէռու չիլալ գայէր, միժադաշ գըլլա: Գուկան հօս ալ  
մէճ նէրէթ գըլլա, օխտն ամիս ալ հօս գըզայնին: Հօն ալ մէգ ուժօվ թաքավօր  
ուժօվ-թուրօվ գուկա յէվ Արգուին գառնու իրէն դղին համար: Շաղ խմիչքնէրօվ,  
գակուսկինէրօվ<sup>124</sup> գուկա: Շինը դիօցը սրան գուկա, գըմուդնուն օրէնքադուն  
աստղը Խամբէրը յէրք գասէ.

*«Բէգը իմիս դայիս<sup>125</sup> է,  
Գդուաձ օրէնքին խայիլ իմ,  
Ալէմ աշխարքին հէդ չիմ փօխի,  
Արգուն իմիս փայս է»:*

117 Գէնջ (թուրք.) – երիտասարդ:

118 Խյնալամիշ (թուրք.) ընէլ – մսաղաց դարձնել:

119 Ջնդան (թուրք.) – բանտ:

120 Դիրէգ (թուրք.) – սյուն:

121 Մարջան, մէրջէն (թուրք.) – բուստ:

122 Վազ գալ – դադարել, հրաժարվել:

123 Խաբահաթը (թուրք.) – հանցավոր:

124 Զակուսկա (ռուս.) – խորտիկ:

125 Դայի (թուրք.) – մորեղբայր:

Բէգը գընայի. «Մյա դդան մէքադ փան չաժան փարչ գօղոհի է դէյին, ինչի օրէնք բիդ անիմ», — գասէ յէվ գարուլ դա<sup>126</sup>: Դդաքը իրէնց քաղաքը թէլ գըզար-նին<sup>127</sup>, վօր ազադիլ ին յէվ գըշդգնան դունը:

Հօս ալ ինա աղլը թաքավօրը հարսնիք գանէ դդին: Արգուն ալ մադիգ-մադիգ է մախսումը<sup>128</sup>, իմացիլ է Խամբէրին ազադանը, անէլու փան չունի գըյէրքէ:

*«Կէդնին վրայէն չօրս ցիավօր գուկան,  
Չօրսին մէգադը մորսաղլը է,  
Յէս գըջանշնամ Խամբէրին,  
Օշթայի տօռու ցիօվը Խամբէրն է»:*

Հարսնիքին մէջն ալ ինա ջադուն թէվէրը չօգան, փէշէրը վերուցան, դնօդ-վէրցունօղ է: Լսից, վօր թէլ էգան է. «Իդա փէրանը քաքանս գուկա, ինչ անիմ, վօր իդօր Արգուն էրէսը չիցուցունում», — ասաց:

Դդաքը գուկան դա չօրս հօքի: Ջադուն, ախաւնրս, դացա գալու ջամփուն վրան թաքավօրին փէրան գակուսկիները գըհանէ քաղաքին քէնարը<sup>129</sup>, խուրաքյա<sup>130</sup>, փախլավա<sup>131</sup>, սուրալի<sup>132</sup>, խառախսան<sup>133</sup> խնցօրնէր շտէ, կլօխին վրան տրան սինիյօվ<sup>134</sup>: Դդաքը էգան հասան չօրս ցիավօր: Խամբէրը նայէցավ, չի-ջանչցավ ալ ջադուին:

— Մէճան, սյա ինչ գա, վօր սյաքան ուղէլու փան պէրիլ ին տիմացներս, — գասէ:

— Կրօղին, չար մահին ռաստ էգա թաքավօրին դիվէրէնը, — գասէ ջադուն ալ, — սյա քէնարի չունէվօր մարդու դունէրուն մէջը փայ բիդ անիմ սյա հօքէհացը:

— Վօրին հօքուն է, մէճա,— գըհարցունու Խամբէրը:

— Մէքադ ախչիգ մէռավ, վօր, — գըթուֆթուֆա մէճան,— էրգնային լուս էր:

Դդան գէնէ գըհարցունու.

— Մէճան, վճօվ է մէռնօղը:

---

126 Գարուլ դալ (թուրք.) – թույլ տալ:

127 Թէլ գարնիլ – հեռագրել:

128 Մախսում (թուրք.) – խնդն:

129 Քէնար (թուրք.) – եզր:

130 Խուրաքյա – թխվածքի տեսակ:

131 Փախլավա – թխվածքի տեսակ:

132 Սուրալի – թխվածքի տեսակ:

133 Խառախսան – սառեցրած:

134 Սինի (թուրք.) – սկուտեղ:



— Փէրանիս ալ չէշթա ասէլու...

— Վճօլ է, մէճա՛:

— Աղքան զօռ գանիք նը, բիդ ասիմ, գայէր՝ Արգուն, — գասէ ջադուն: Դղան Արգուին անունը գըլսէ նը, նօրէն-նօրէն գըհարցունու.

— Վճօլ, վճօլ:

— Արգուն, — գասէ գէնէ ջադուն ալ:

Յէփ վօր էրգու անքամ հարցուց, նօրէն Արգուին անունը լսից նը, Խամբէրը թարփմիշ էղավ<sup>135</sup> ցիին վրայէն վար գախսվեցավ, ընգավ քաղաքին քէնարը փուշէրուն մէշը: Ախ չօրս ցիավօր էին: Հէդի դոպըր վախեցան մեռավ դէյին յէվ խաբահաթը իրէնց վրան գըցքին դէյին թաբլեցին, փախան: Խամբէրին ցին ալ կնաց նացա հէդ: Դղան այմիշ էղավ<sup>136</sup>. «Վայ, սյա ջադուն էր», — ասաց ու յէրքից:

*«Ինչ վօր էղիլ է, էղիլ է,  
Ջագադիս սէվ կըվիլ է,  
Ջադուն խոդորմիշ էղավ<sup>137</sup>,  
Պարնից Արգուին ինձիմին»:*

Էվէլքի<sup>138</sup> մաշթիքը գասէին, վօր՝ օքուօ դղան մինչէվ հօրսակ գըխնդա, իմիսն ալ գայէր<sup>139</sup>, ադբէս էղավ, բաբա չէղաճ, մամա չէղաճ,— միդք արավ դղան, էլավ նսդավ, վրան նայեցավ: Վրան թաքավօրական հալավ<sup>140</sup> էր: «Ասրէս հալավօլ ինձի գըջանշանս», — ասաց:

Քաղաքի ամիրա մաշթիքը իրէնց չօփէրը քաղաքին քէնարը գըվօթէին: Քնաց, իդա չօփլուկներէն<sup>141</sup> մէքադ բադոդաճ պալտո<sup>142</sup> կղավ, հաքավ իդան, մէքադ ալ դայախ<sup>143</sup> պոնից, խօշտվեցավ<sup>144</sup> բարի յէվ ասաց.

— Ինչ անինք, վօր նշնվաճս մեռավ: Սաղ մաշթուն արրէլ բէդք է:

Էգավ իդարէս ալ իրէնց քաղաքը մդավ: Քաղաք մդավ, քաղաքն ալ շէն է, հօս՝ քէֆի ցան, հօս՝ դավուլ-գոունայի ցան, հօս՝ քէմէնչէյի, հօս՝ դաֆի<sup>145</sup> ցան:

135 Թարփմիշ (թուրք.) ըլլալ – ուշագնաց լինել:

136 Այմիշ (թուրք.) ըլլալ – գլխի ընկնել:

137 Խոդորմիշ ըլլալ (թուրք.) – կատաղել:

138 Էվէլքի (թուրք.) – առաջվա:

139 Ջայէր (թուրք.) – երևի:

140 Հալավ (թուրք.) – հագուստ, զգեստ:

141 Չօփլուկ (թուրք.) – աղբանոց:

142 Պալտո (ռուս.) – վերարկու:

143 Դայախ (թուրք.) – գավազան:

144 Խօշթիլ – շինել:

145 Դաֆ (թուրք.) – դափ, դիոլ:

Շինը դարա քովն հարսնիքվորները թօփ-թօփ գանցնին յեվ ամենն ալ գասին քի. «Սյա բարին ալ չիդէ, գայեր, վօր չէշթա»: Դոն չի հասգնա, վդէդ է իդա էշթալուն: «Մենա մաշթու ոռաստ քամ նը՝ բիդ հարցունում», — գասէ: Ադբէս ալ գանէ: Ռաստ էգաձօվը գրհարցունու.

— Սյա, բարամ, ինչ գա, վօր քաղաքը շէն է:

— Չիդին, գայեր, բարի՛, — գասին, — հարսնիք է: Թաքավօրը ամենայն չէշիթ<sup>146</sup> ուղէլէդէնը, խմիչքը պերիլ է, լցիլ է: Թամամ քէզի լալու դէդ է, վն:

— Հւն, անբէս է նը էշթամ, — ասաց Խամբէրն ալ յեվ շոգցալ թէրի հարսնիքին դունը: Էգալ հարսնիքին դունը, համա իդա բարիյի հալավօլ էրէսին շիկնաց նէս մդնէլու: Իդա ժամանագն ա քաղաքի ամիրա մաշթիքը իրէնց կալյասկանէրօլ<sup>147</sup>, գնիգնէրօլ, ախչիգնէրօլ հարսնիք գուկան: Խամբէրը իդա դէդը գըլլա կօնյուխ<sup>148</sup>: Ամիրանէրուն ցիէրը գընայի, կալյասկանէրը շարքի գըխօթէ:

Շինը<sup>149</sup> ինա ջադուն ալ հօղ էդա, ախո՛: Համան գըջանշնա Խամբէրին: Թաքավօրը հէդը գաթի խուզէի խօրօվաճնէր պերիլ էր, փօրէրը չամիչ, պրինձ լցաճ, գարմիր-ջէրմագ գարաքօլ դարգաճ: Ջադուն իդօնց վրան աղու<sup>150</sup> գըրցանէ, գրհանէ դղին: Համա Արգուն ալ քառսուն ախչիգօլ հարսնիքին դունն է, նա ալ գըջանշնա Խամբէրին, ջադուին էդէվէն ալ գըհէդէվէ: Շինը գըդէսնու աղու ցանաճը իմացունէլ գուզէ դղին, պայց էրէսին չէշթա տուս էլլէլու: Խամբէրն ալ Արգուին փէնջէրէին<sup>151</sup> դագը գէշթա, գուկա: Արգուն գըլէրքէ.

*«Մի՛ ուղի, Խամբէ՛ր, մի՛ ուղի,  
Ինչ ալ պերին նը, մի՛ ուղի,  
Շաքար ցանաճ լա նը, մի՛ ուղի,  
Աղու ցանաճ է, մի՛ ուղի»:*

Խամբէրը գըլսէ յեվ գըհասգընա թէմիգ<sup>152</sup>: Ջադուն էգալ պերից ուղէլիքը, համա դոն հիչ չիմադից ա, դարալ չօփլուգ թափից: Ջադուն գէլլէ, գէլլէ, գընայի դոն սաղ է:

— Վւնյ, բալամ, — գասէ նօրէն, — սյա գընայիմ, ժէք-չօրս օր է, գըմանքաս: Մէր թաքավօրը ամեն պան պերիլ է, լցիլ է, տուն ալ մէքամ պանէ մասնագից էդաճ չիս, էշթամ, պերիմ տուն ալ մասնագից էղիր:

146 Չէշիթ (թուրք.) – տեսակ:

147 Կալյասկա (ռուս) – սայլակ:

148 Կոնյուխ (ռուս) – ձիապան:

149 Շինը, շընդըխ, շիմդիք (թուրք.) – հինա բառի աղավաղված ձևերն են:

150 Աղու – թույն:

151 Փէնջէրէ (թուրք.) – պատուհան:

152 Թէմիգ (թուրք.) – մաքուր, նաև՝ ամբողջ:

Դեղան ցան չի հանիլ: Խօշորքի ալ աշթիս չօրս օր է, թաքավորագան հարսնիքն ալ օխտն օր, օխտը կշերէն գարջ գրլլւմ, հիչ ալ պերանը պան տրանձ չէ: Ջադուն վազից նէս, մէմալ գընայիս թավայօլ մէքամ խուզի պերից, փօրն ալ չամիչօլ պրինձ, խաթի ուղելու պան է, համա նշանածը ասիլ էր, ախտ՝ մի՛ ուղիլ դէյին: Աս ջադուն ալ վախէցավ դղան իրէն տիմացը գուդէ, փաթլամիշ գրլլա<sup>153</sup>, խաբահաթը գրլլամ դէյին, թարլից, փախավ, նէս մղավ: Խամբերը թավան ցեռքը շղահօլ խուզիին վրան գնայէր, Արգուն նէսէն նօրէն յերքից.

*«Մի՛ ուղի, Խամբէր, մի՛ ուղի,  
Խուզի ալ պերին նը, մի՛ ուղի,  
Շաքար ցանսձ լա նը, մի՛ ուղի,  
Աղոս ցանսձ է, մի՛ ուղի»:*

Խամբերը իղա ալ լսից նը թավաները վրա-վրա տրից, դարավ չօփուօը թարլից:

Թաքավորը օխտն օր, օխտը կշեր հարսնիք արավ, ժամանագը էգավ հարսը դանելու: Առաջվան մօղօլ<sup>154</sup> ալ հարսը մէքադ ցիի վրա գընսղէցունէին, չուլբուրը<sup>155</sup> փիյադէ<sup>156</sup> մաշթու ցեռք կուդային, անբէս գըղանէին:

Հարսանիքավօրները էլլան, գդոիջները գդոիջներօլ գայնէցան, ախչիգները՝ ախչիգներօլ, Չալօղները<sup>157</sup> ջօգ, էշթալ բէդք է: Համա չուլբուր պոնելու մաշթ չին կուդնու: Դարա գասին՝ ոյմիշ չիլա, նարա գասին՝ ոյմիշ չիլա: Իղա արալըխը մէքադ չաթլարէր մաշթ չի համփրիլ, գասէ քի.

— Սյա, դահա մաշթ փնտոել բէդք է, վօր հանա կօյուլիը գա վոն:

Մէգալօնք ալ ադօր հէդ ըրագի գրլլան յէվ գուդան չուլբուրը Խամբերին ցեռքը: Յօնօմիշ գրլլան դաքա: Չալօղները ընգան առչէվ, անգի փէսան իրէն գդոիջներօլ, կալյասկաները շարքի մղան, ընգան ջամփա: Ինս ջադուն ալ գէնէ յէդ չի մնա, գէշթա հէդէրը:

Դեղան ալ էսգը եղէվէն չուլբուրը պոնսձ գէշթա: Արգուն շինիս եղէվանց դղին չի ջանշնա, Խամբերն է հէ՛, ուրիշն է հէ՛, միդք գանէ «Արի մէ մը, — գասէ, — ցիին թէփինգէլէմիշ անիմ, թօ գարնէ, եղէվը նայի նը՝ գըջանշնամ»: Ադբէս ալ գանէ: Յին սիրդօլ գըգարնէ դղին, համա դղան եղէվը չի նայի, միդքէն գասէ. «Աս մէ՛գ»:

Գընայի ադբէս չէդավ նը, ախչիգը գըլէրքէ.

153 Փաթլամիշ (թուրք.) ըլլալ – պայթել:

154 Մօղա (ռուս.) – նորածնություն:

155 Չուլբուր (թուրք.) – սանձ:

156 Փիյադէ (թուրք.) – հետիոտն:

157 Չալօղ (թուրք.) – նվագող:

«Դեվեները<sup>158</sup> յոթլեմիշ էղան<sup>159</sup>,  
Ջեհեզներգ<sup>160</sup> գարվեցան,  
Ումեդր<sup>161</sup> գրոե փուն, Խամբէր,  
Կնա, կնա, քու կլօխիտ ջարեն նայե»:

Դղան գէնե-գէնե, եղեվը չի նայի, միայն միդքեն գասե. «Աս՝ էրգու: Հարա շինդրիս, ախո զէնգին թաքավօրին հարս է: Հարգե ինձի բէս Խամբէրին ադբէս բիդ ասե», — գասե:

Ախշիգը նօրեն գրլերգե.

«Դեվեները յոթլեմիշ էղան,  
Ջեհեզներգ գարվեցան,  
Էգեր սաղ լանք նը, Խամբէր,  
Մէր կիրը միշդ մէկդէդ է»:

Դղան նօրեն չինայի եղեվը: «Աս ալ՝ ժէք», — գասե միդքեն: «Արի, յէս ալ յերքիմ, — գասե յէվ գրլերքե.

«Հա յէնգէլէր<sup>162</sup>, յէնգէլէր,  
Սար հօշօլման յէնգէլէր,  
Արգուին ջերմնագ վօդքերը  
Ջէնգուին մէշը քար գրոէր»:

Դղին խօսքը ասոճու նէֆէսին<sup>163</sup> գրհասնի, յէվ ասոճու հրամանօվ ախշիգան վօտքերը ձունգերեն զէնգուին<sup>164</sup> մէշը քար գրգդոյի: Արգուն գուլա, գաղաչե, աչքերեն արդասունքի դէդ արուն գրգաթի: Դղան նօրեն գրլերքե.

«Հա յէնգէլէր, յէնգէլէր,  
Սար հօշօլման յէնգէլէր,  
Արգուին էրգու խալիգները<sup>165</sup>,  
Դիգգինին<sup>166</sup> հէդ քար գրոէր»:

Դղին խօսքը ասոճուն գրհասնի, յէվ ախշիգանը ցեռքերը դիգգինին հէդ քար գրգդոյին: Ախշիգը գուլա, գաղաչե, աչքերեն արդասունքի դէդ արուն գուլա յէվ գասե.

158 Դեվե (թուրք.) – ուղտ:

159 Յոթլեմիշ (թուրք.) ըլլալ – բարձել:

160 Ջեհեզ (թուրք.) – օժիտ:

161 Ումեդ, ումուդ (թուրք.) – հույս:

162 Յէնգէ (թուրք.) – քեռակին:

163 Նէֆէս, նաֆաս (թուրք.) – շունչ:

164 Ջէնգու (թուրք.) – ասպանդակ:

165 Խալիգ (թուրք.) – բագուկ:

166 Դիգգին (թուրք.) – ծունկ, ազդր:

— Խամբեր մի՛ դանչի ինձի, յէս քառսուն օր քառսուն, կշեր միքադ չորի էշթանք, քառսուն ախչիգօվ քու զուքտ բիդ բահիմ, իդաքան ադէսվան մէշը մէմէձգի գրկուդնունք: Էգեր չի կուդնունք նը, հանա աղուն ձօցս է, բիդ ուդիմ, փաթլամիշ բիդ լամ, համա նացա հարար լալու չիմ:

Դղան միդք կանէ. «Սյաքան պան գասէ նը, — գասէ, — աղաչիմ ասդձուն բէլքիմ<sup>167</sup> գրհասնի ցանս իրէն»:

Դղին ցանը խօշդօրքիյալ գրհասնի ասդձուն, շմխտ-շմխտ ախչիգանը ցեռքերէն, վօղքերէն քարը գրթափի:

Շինը գուկան, գրհասնին աղը թաքավօրին դունը: Համան գրփաթթին հարսին վար գաննուն, գրդանին նէս: Աս դղին վրան նայօխ չիգա, մէգ կավաթ խամիչք ալ դուվօղ չիգա: Հօս ալ նաքա օխտն օր, օխտը կշեր հարսնիք գանին, իսկ դղան գաննու դայախը գէշթա:

Հարսնիքէն էդէվ ախչիգը գաննու քառսուն ախչիգ յէվ գէշթա իրէն ասաձ դէղը զուք<sup>168</sup> պոնէլու: Խամբերն ալ էոսուն ինը օր գրփնտոէ Արգուին մէխտրվէլէն<sup>169</sup>, պայց մէգ դէղմ ալ չի քուդնու:

— Խափից, — գասէ, — էյ հարա գէնգին թաքավօրին հարս լալէն էդէվ ինձի բէս ախքատի՛ն բիդ քար:

Էոսուն իննուն օրը դղան գէլլէ մէքհադ մէձ չորի էթաք. «Հայդը, — գասէ, — պա չուրը բօյը<sup>170</sup> էշթամ, քուդնում նը՝ գը քուդնում, էգեր չի քուդնում նը, իմիսն ալ ջագադիս քիրը ադէ, գայեր<sup>171</sup>»: Գէշթան, գէշթան, գրդէսնու մէքադ դէսօք խայֆէյի<sup>172</sup> մէշքառսուն ախչիգ գըլէրքին, գըշէնանան, ալայյօրօխչիչագ<sup>173</sup>: Իդա ախչիգնէրը չուրին ան քօվէն գրհանվին, գրհանվին, գըցադգին չուրը յէվ գըբաշլայիս լվացվէլու: Խամբերը միդքը գանէ, նարա հէղիհններն ին, չէնէ չէ՞ դէյին: Արի յերք ասիմ, գիմանան, գասէ, գը յերքէ:

*«Էրգու ցեռքս վաշթ առիլ էիր,  
Չուրին հէդ գրխադայիր,  
Լիզույօվ ինձի գրխափէիր»:*

Արգուն յէփ վօր ադ յերքը գըլսէ, գըպարնվի իրէն օշթախներէն<sup>174</sup> յէվ գըբաշլայի յադօվօվ<sup>175</sup> Խամբերին ոաստ քալու: Խամբերն ալ հօւէն գըցատգի

167 Բէլքի (թուրք.) – գուցէ:

168 Զուք – սուգ:

169 Մէխտրվէլ – մեղավոր զգալ:

170 Բօյ (թուրք.) – 1. հասակ, 2. երկարություն:

171 Զայեր (թուրք.) – երևի:

172 Խայֆէյ (թուրք.) – սրճարան:

173 Յօրօխչիչագ (թուրք.) – բացված ծաղիկ:

174 Օշթախ (թուրք.) – ընկեր:

175 Յալօվ (թուրք.) – ժայռ:

չորը, գեշթա թերի Արգուին: Չորին օշթան ոսստ գուկան<sup>176</sup>, գրփաթթվին մեմեձգի, հանա գարօղները բիդ առնեին, դագ մդան, վրա էլլան, սօրեն դագ մդան յեդ խխդվեցան:

Ադրեն պանն ալ չորը, ախ՛ո, չունթունի: Քանի վօր էդեվ գրհասնե մարմինները գըքքե չորին էթաքը:

Ինա ջադուն գիմանա, վօր դաքա մեգդեղին:

— Իդա պերանները քաքաձներս սօրեն կդիլ ին մեմեձգի, էշթամ, — գասե, — սադերուն հասնիմ նը, սօրեն իրիր-չիրիր անիմ, մեռելները կոտնում նը, քովե քով չի գեցունում:

Գը նադի խայրլի<sup>177</sup>, յելքենը<sup>178</sup> գըբանա, օցե խամչին<sup>179</sup> ալ ցեռքը պոնաձ գուկա: Գընայի, չորին էթաքն Արգուին հետ Խամբերն խխդվաձ ընգաձ ին:

Շինը մեգ մաշթ հավադալու չե իմ ջադու էդաձիս, մեգ մաշթ ալ ինձի պոնելու չե ջադոյութին անելու: Ավելի ըռինդ է, մեռելները քովեքով չիգեցունում, — գասե: Գըհանե գենջալը<sup>180</sup> գըխօթե փօրը, գընի մեջդեղները:

Առաջվան ժամանագը Սուրփ Գարաբեդ ուխտ էշթալ գար: Ուխտավորները գըդեանում, վօր ժեգադ մեռել ընգաձ ին, դահմին գանին, վօր ձերը՝ մարերն է, մեգալօն ալ՝ դդին հեդ ախչիգը:

— Արիցէք, — գասին, — թաղինք, ուխդերս ընթունելի գըլլա:

Գըթաղին: Ջադուին մեջդեղները, Արգուին հետ Խամբերին ալ նարա էրգու գողը: Ժէնք գեշթան:

Ցմեռը գանցնի, բահերին<sup>181</sup> ամեն ձառ ու գանանչ գըգարթին: Դդին հեդ ախչիգանը կերեգմաններուն վրան վաշթի ձառ գըպացվի, ջադուին վրան ալ՝ մասուրի փուշ: Ամեն անքամ, յեփ վօր վաշթերը թօփ գըլլան մեմեձգի կալու, օխտարմիշ<sup>182</sup> գըլլան, մասուրին փուշը գըձագե նացա, գըպարնե:

176 Ռաստ (թուրք.) կալ – հանդիպել:

177 Խայրլի (թուրք.) – նավակ:

178 Յելքե (թուրք.) – առագաստ:

179 Խամչի (թուրք.) – մորակ:

180 Կենջալ (ռուս.) – թուր, ռուսերեն кинжал բառի աղավաղված ձևն է:

181 Բահեր, բահար (թուրք.) – գարուն:

182 Օխտարմիշ (թուրք.) ըլլալ – մոտենալ:

## 2. ԻՐԱՊԱՏՈՒՄ ՅԵՔԻԱԹՆԵՐ

1 (4).

### ՕԿ ԳԸՊԱՆԻ, ԱՆ ԱԼ ԳՈՒԴԷ

Ժամանագով մաշթուն մեզը էրիզ գնիզ գրլլա, գունէնա մեզ ախչիզ: Ադ մաշթը իրա համար խազիասթվա<sup>183</sup> գունէնա՝ ցի ու գով յեվ մեզ ջուխտ էլ խեվ աչառ: Ադ մաշթուն ախչիզը անքան թեմբել գրլլա, վօր ինքը ժէն հալաժն ալ չի հաքնիր, վօղքի այախարին<sup>184</sup> ալ չի հաքնիր, գերագուր ուղելու ժամանագ ալ մօրը խիստ նեղութին գանի: Մարը արթըխ ցեռքը չի տիմանա. «Ինչ անիմ, վօր աս ախչիզամէս յես ազադիմ», — գասէ:

Մէզ օր մը տացա սօխախօվ<sup>185</sup> մեզ հադ դղա գըման կա, գըհարցնէ, թէ յեզեր ձախօղ չիգան: Կալէն, կալէն, իդա մաշթուն տուրը գուկա, գըհարցընու.

— Յէզ չունիք ձախելու:

Մաշթը գասէ.

— Ունիմ մեզ ջուղ խեվ աչառ:

Դղան գասէ.

— Ձախէ՛, — գինին վրան գալաջի<sup>186</sup> գանին:

Մաշթը գասէ. — Ա՛ն, դար հելալ ըլլա քեզի, պայց նայէ, վօր կլուխտ պան չպէրին, խեվ ին:

Դղան գասէ.

— Զարար չունի, — գառնէ խեվ աչառնէրուն գըղանէ դուն:

Դուն դանելէն էղել գըլձէ մեզ հադ արբայի գըպառնա, գառնու մեզ հադ ալ փայդ, գընսդի արբան<sup>187</sup> ձունգէչօք գըբաշլայէ քշելու: Ատ խեվ աչառնէրը խիստ շադ վազիլին գէշթան, արթէն գուիօքնին, գըզայնին: Դղան գասէ.

— Էղա՛վ, սօրվեցան լուծի:

Շինդըխ<sup>188</sup>, ամէն օր գըլձէ, իրէն վար ու ցանը գանէ, ադ դղին ընդանիքը՝ սէմէյստվան<sup>189</sup>, մար ու դղա ին:

Գանցնի ժամանագ, մեզ, էրգու դարի, մարը գասէ.

— Դղան, քեզի համար մեզ հադ ախչիզ կղիր գարքվէ, յես իշվանի յեփ քեզի լվանամ, հալաժնէրդ լվանամ, գերագուր էփիմ, արթըխ ձերացեր իմ, չիմ լալ:

183 Խազիասթվա (ռուս.) – տնտեսություն, ռուսերեն хозяйство բառի աղավաղված ձևն է

184 Այախարի (թուրք.) – ոտնաման:

185 Սօխախ (թուրք.) – փողոց:

186 Գալաջի (արաբ.) – գրույց:

187 Արբա (թուրք.) – սայլ՝ արաբա բառի աղավաղված ձևն է:

188 Շինդըխ (թուրք.) – հիմա:

189 Սէմէյստվա (ռուս.) – ընտանիք:

Էդ դղան ալ գասէ.

— Յէս վըդէխէն կդնում ինձի գօրա ախշիգ, վօր գարքըվիմ:

Միդքը գընգնի ժէն աչառ ձախօղին, գասէ. «Դա մաշթը աչառները ձախից, չըլլա՞ թէ ախշիգն ալ դա»:

Գէլլէ, գէշթա շիդագ իդա մաշթուն տուռը, մաշթը յէփ վօր դղին գըդէսնու նը ահրլէմիշ գըլլա. «Չըլլա՞ թէ դղին կլուխը աչառները մէգ պան պէրին, յէս ալ խաբահաթը<sup>190</sup> գըլլամ»: Դղան գուկա, պարէվ գուդա, հարց ու փորձ գանէ, վէրչը գասէ.

— Տուն, — գասէ, — շատ շնօրհագալ իմ, վօր ինձի աչառներդ ձախէցիր, յէս նացա սօրվէցուցի, նացամօլ ալ գըպանիմ: Շինդըխ, — գասի, — յէս ուրիշ պանի էգիլ իմ, ասինք վօր ախշգանդ խնամի էգիլ իմ:

Մաշթը գասէ.

— Խիստ ըրինտ արիլ իս, էգիլ իս, ամա իմիս ախշիգս խաթի<sup>191</sup> թէմբէլ է: Չիդիմ ինչքէս բիդի աբրիս հէդը:

Դղան գասէ.

— Ջարար չունի, մէգ չէշիտ մը սրա գանինք հայդէ նշանդօք անինք:

Դարա նշանդօքն ալ ինչ բիդի ըլլա. մէգ կավաթ ոախի, մէգ գդօր ալ քանիքօլ հաց, նշանդօք գանին, անգից հէդօ հարսնիք գանին: Դղան գառնու ախշգանը գըդանէ:

Հարսնիքէն յէդէվ, դղան սաբախդան գըլձէ յէգէրը, գէշթա չօլը պանէլու, մարն ալ դունը գըժօդուդէ գավլէ, գէշթա գէրագուր գէփէ, հագիր գանէ, դղին ջանփան գնայի: Հարսն ալ մանամէնթի<sup>192</sup> քէս գայնած է: Իրիգվանը դղան դուն գուկա, յէգէրը գարցըգէ, ցէոքը-էրէսը գըլվանա, դուն գըմըդնու:

Մարը գասէ.

— Դղան, հայդէ, հաց գէրէք:

Դղան գասէ.

— Մամա՛, ասօր պանը վճճ պանիցավ:

Մարն ալ գասէ.

— Դղան, յէս ու տուն:

— Հայդէ՛, մամա՛, պիր դրաբէգը<sup>193</sup>, տիր հաց ողիինք: Գընսդին մար ու դղա հաց գուդին, հարսն ալ գանկնած է հէռուն: Գուդին, գըվէրչացնուն, պէրանները-ցէոքէրը գըսրփին յէվ գըհանքսդանան:

---

190 Խաբահաթը (թուրք.) – մեղավոր, հանցավոր:

191 Խաթի – շատ:

192 Մանամէնթ, մոնոմէնտ (ռուս.) – հուշարձան:

193 Դրաբէգ (ռուս.) – սեղան:



Միգալ օրին սաբախդանը դղան գելլե դեղեն, գրլձե յեգնէրը, չօլ գեշթա: Հարսն ալ գէնէ գայնաձ, մարն ալ դունը գավլլե, գրժօղըղէ, գերագուրն ալ գեփէ, հազիր գանէ, դղին ջամփան գընայի: Դղան գէնէ չօլէն գուկա, յեգնէրը տվարմիշ գանէ<sup>194</sup>, խօղ գուդա յեգնէրուն, դուն գըմուղնու:

— Մամա՛, պանը վճօլ պանիլ է, — գասէ:

Մարն ալ գասէ.

— Յէս ու տուն, դղան:

— Հայդէ՛, մամա՛, պիր գերագուր ուղինք, — գասէ: Հարսն ալ հէռուն գայնաձ է:

— Հայդէ, պիր գերագուր ուղինք հանքսդանանք:

Գընսղին, մար ու դղա գերագուրը գուդին, ցեռքէրը, պերանները գըսրփին ու գըհանքսդանան:

Սաբախդան դղան դեղեն գելլէ: Յեգէրը կեշթան պանէլու, մարն ալ գըբաշլայէ դունը ավլլելու, էղա ժամանագը հարսին փորցելու համար փէնջէրէէն<sup>195</sup> տուս գընայի. «Հայտ-հոյտ» գասէ, գելլէ տուս գըվագէ:

Հարսն ալ հրէշման<sup>196</sup> գըվագէ, գառնու ավլլը համան շուղ մը թեգ դունին գէսն ալ գավլլէ, գեշթա գէնէ ժէն դեղը գըգայնի:

Իրիգվան գըլլա, դղան դունը գուկա, յեգնէրը տվարմիշ գանէ, խօղ գուդա, գըվացվի, դուն գըմըղնու:

— Մամա՛, գասէ, — ասօր պանը վճօլ պանիցալ:

— Յէս ու տուն, դղան, — գասէ, — հարսն ալ դունին գէսը ավլլից:

— Հայդէ՛, մամա՛, պիր դրարէզը հաց ուղինք, — գասէ:

Հաց ուղելու գընսղին: Դղան գառնու հաց ու տանագը, տանագին գոնագին թանճրութիւնօլ գէս դիլիմ հաց գըգորթէ, բիգդի գոթօր պանիր վրան գըղնէ, գուդա հարսին:

Հարսն ալ, վօր քաղցաձ էղաձին աչքէրը մթնաձ, ախր ժէք օր է, գառնէ իղա գէս դիլիմ հացը՝ մեգէն գըսքէ պերանը, գուլ գըղա:

Իրիգվանը ամէնն ալ գըբառգին, գըհանքսդանան: Սաբախդան դղան գելլէ դեղեն, գըլձի յեգէրը, գեշթա: Մարն ալ հարսին փօրցելու համար, դեղեն չէլլէր, բառգիլ է:

Հարսը համան հրշման գորաձ գելլէ դեղեն գիմանա վօր պան չիպանօղին հաց չին դալ դէի, գըվագէ գօլ գըգըթէ, հեղօ դունը գավլլէ, գըժօղօլըղէ, անգից

194 Տվարմիշ (թուրք.) ընէլ – արձակել:

195 Փէնջէրէ (թուրք.) – լուսամուտ:

196 Հրէշման – իսկոյն, շտապ:

ալ գերագուրը գեփե, հագիր գանե, գեշթա առանը<sup>197</sup> աչառնէրուն, յեգնէրուն խօղ հագիր գանե, ինքն ալ գուկա շէն ուրախ, բայճառ էրեսօլ էրգանը ջամփան գընայի: Դղան չօլէն գուկա, հարսը գըվագէ դիմացը, յեգերը տըվարմիշ գանե, էրգանը ցեռքէրը լվալու չուր գուլու, անգից ալ գըվագէ դուն:

Դղան գուկա, դուն գըմուդնու, մօրը քօվը գեշթա, մարը գըլինդա, գասէ.

— Մանան, ասօր պանը վօ՛վ պանիլ է:

— Տուն ու հարսը, դղան, — գասէ:

— Հայդէ, պէրէնք դրաբէգը հաց ուղինք, — գասէ:

Շընդիխ, հարսը հացը գըմանդրէ, գերագուրը գուլու, գըտնէ դրաբէգին վրա, համա ժէն դէյին չուլու:

Դղան գասէ.

— Ինչի՞ համար քեզի դէյին գերագուր չիս ուլու:

— Տուք գերէք, — գասէ, — վէրչը յէս գուղիմ:

Դղան գասէ.

— Յէս քեզի գըսօրվէցնում, վօր ամէն պանն ալ կիդէնաս լի՛ց գերագուր, նիստ յանաշաս, գիր:

Հարսն ալ գուլու գերագուրը, գընսդի դղին յանաշանը յեվ քօքադան<sup>198</sup> գիմանա, քի աղ դունը չպանօղին հաց չին դա:

Աղքիսօլ թէմրէլ ախչիգը պանէլ սօրվէցալ:

Օր մը ախչգանը հարը միդքի բաթէցալ<sup>199</sup>.

— Սա, — գասէ, — իսէվ աչառնէրուս, ախչիգիս դարալ, ինչ յէս բարա յէմ, վօր սիրդս քան է, ինչ չէրթամ չիմանամ նացա տրութինը:

Գնգանը գասէ.

— Յէս ասօր ախչգանը դունը բդի էշթամ, նայինք մէյ մը ինչ գանին, հալնէրը հէվալնէրը<sup>200</sup> իմանամ: Դայախը<sup>201</sup> առալ, յօլումիշ էղալ<sup>202</sup>, կնաց ջամփու տէրի ախչգանը դունը, ախչգանը սօխախը<sup>203</sup> հասնէլուն յեղէվ գընայի վօր փէսին մէգ հաղ աչառը ագրարէն գըվագէ, ախչիգն ալ յեղէվէն գըվագէ՝ տարցընէլու դէյին:

Ախչիգը յէփ վօր հօրը գըդէսնու նէ՝ համան գըգանչէ.

— Բարան, — գասէ, — իդա աչառին տարցու, թէ չէ ասդէղը պան չպանօղին՝ հաց չին տալ: Տուն ալ պան պանամ գըլլաս:

197 Առան – ախտո:

198 Քօքադան (թուրք.) – արմատից, հիմքից:

199 Միդքի բաթէցալ – մտածեց:

200 Հալնէրը հէվալնէրը (թուրք.) – վիճակները-ձևերը:

201 Դայախ (թուրք.) – գավազան:

202 Յօլումիշ (թուրք.) ըլլալ – ճամփա ընկնել:

203 Սոխախ (թուրք.) – փողոց:

Հարը գիմանա պանի էութինը, գասէ.

— Քուգուտն ալ հախիտ էգիլ<sup>204</sup> ին. պան պանիլ սորվեցուցիլ ին, — գասէ, — կիցիր ախչիգս, — գասէ, — պան չի պանաճ մաշթս հաց չի ողիլ:

Ասբէսով տուք գրհասնիք ցեր մուրադին, պայց դղա, ախչիգներն ալ՝ թամբալ թօղ չըլլան, օրինակ առնուն տարամէն<sup>205</sup>:

## 2 (5).

### ԽԵՆԹԼՈՒԳԸ

Մաշթ ու գին գըլլան, ժէք հադ դղա գունէսան՝ էրգու հադը խելօք գըլլան, մէգ հադն ալ խելքը թէթէվ գըլլա:

Մաշթը գըմէռնի, մէռնէլու ժամանագը գասէ.

— Սա իմիս ունեցաճ գարիքս<sup>206</sup> ժէքիդ մէշը բարաբար փայ արէք:

Մաշթը ինքը գըմէռնի, դղաքը գըպոնին էրգու հադ բաղ<sup>207</sup> գըլխօշթին, իղա բաղէրուն տուրը էրգուսինն ալ քովէքով գանին, գըբաշլայէն դավարը քշէլու, վօրը վօր բաղը մղավ՝ իղա նարա փայն է արթըխ թէմիգ գըմըդնէին բաղէրը: Ժէքում ախսարը մէգ հադ չօխմառ<sup>208</sup> ցէռքը պոնաճ գուկա, գըհասնի փայ արաճ դէղը. «Սա ալ իմիս փայս է», — գասէ, գըվէրցընու չօխմառը գըզարնէ, էնգը վէրչին թօփալ վօղքով աչառին գըզըղէ<sup>209</sup>: Աղանէրը<sup>210</sup> գէլին, գասին դղին.

— Ինչ է քուկդ արաճդ մէգ հադ պան փայդ բիդ լար, իղա ալ սադգեցուցիր: Խէնթուգը գասէ.

— Իմիս փայս է, — գասէ, — Ինչ գուգիմ, գանիմ:

Գառնէ, գըժօղըղէ, գաշին գըքէրթէ, բազար ձախէլու գըղանէ: Բազարին դէղը դոսօզով<sup>211</sup> գըզանգնի, ինքն ալ հէռու գէշթա, գըպիուղվի:

Շընդըխ, գընայի, գընայի մէգ հադ մաշթ քովը չիգալ:

Ինչ թօղ անէ, արէվը դաք է, քիչ մը ադէն ալ սաբըր գանէ<sup>212</sup>, մէգ հադ գէնգին<sup>213</sup> աղա մաշթ գուկա դոսգին քովը՝ սս քովէն գօղըրվի, ան քովէն

204 Հախէն կալ – հաղթահարել, գլուխ բերել:

205 Դարամէն – դրանից:

206 Գարիք – ունեցվածք:

207 Բաղ (թուրք.) – այգի:

208 Չօխմառ (թուրք.) – 1. մահակ, 2. սեպ:

209 Զըղէլ – սպանել:

210 Աղա – ավագ եղբայր, պարոն:

211 Դոսօզ (ռուս.) – քառանիվ սայլ:

212 Սաբըր (թուրք.) ընէլ – համբերել:

213 Զէնգին (թուրք.) – հարուստ:

գօլորդովի, ցեռքը գըխօթէ գընայի միսը արթըխ արեվին դաքին հօղելու բաշլայիլ է, դդան համան գըվազէ, գասէ.

— Ինչ գուզիս միսէս:

Գընայի միսին մէչը արթըխ<sup>214</sup> վօրթէր գան.

— Ինչ է, — գասէ, — միսը վօրթնօղէցուցիր իս, գարազիտ արիլ<sup>215</sup> իս, — գասէ.

— Գը ցան դա, պալիցէյսկի<sup>216</sup>, — գասէ. — Ինչ գարէլի է անէլ սա մաշթուն իմ միսս յօխ արավ:

Մաշթն ալ գասէ.

— Սա ինչ է քօ ասաձդ:

— Յէս քաղաքի մէչը առաչի մաշթն էմ, ինչ է քուզըդ ասաձդ:

— Չէ, — գասէ դդան, — էշթանք ուչապթա<sup>217</sup>, անդէդ տուն իմիս աչառիս սդազը գուդաս: Մէյմը յէս քէզի ջարիզ անիս<sup>218</sup>:

Մաշթն ալ գասէ.

— Աման, ինչ գասիս, նա՛ սա հիսուն մանէթը, կնա խափանէ կլուխիս վրայէն:

Դդան չէ՛, մէ՛ գասէ, գառնի հիսուն մանէթը, մաշթուն խարան<sup>219</sup> փազվաձին բէս, համան յօնօմիշ գըլլա, տէրի դուն, գըպէրէ քաղաքին քէնարը մէգ հաղ դէրայի<sup>220</sup> մէչ գըթափիլէ աչառին ալ, գէլլէ գուկա դուն:

Ադանէրը գուկան իմանալու, թէ ինչ արավ ախապարը իդա աչառին միսը:

Ախապարն ալ գասէ.

— Հանա յէս ձախէցի աչառին միսը հիսուն մանէթի չէ՛ք հավադա հանա սդազը:

Ադանէրը գըդէսնուն խօշթ է ձախաձը, մէգալում օրը իրէնց էդաձ դավարը գըբաշլային մօշթելու: Գըմօշթին, գըդանին բազար ձախէլու: Սաղ օրը գըգայնին բազարին դէղը, պաչտի<sup>221</sup> պան չին ձախիլ. միսէրը յօխ<sup>222</sup> գըլլան: Օրէնքէն մաշթ գուկա յէվ ժէնց ալ ըրիհոզէք աշտոռաֆավատ<sup>223</sup> գանին յէվ գառնուն միսէրը յէդ գըպէրին, ջամփան գըթարլին յէվ ժէնք ալ խօրուրթ գանին,

214 Արթըխ (թուրք.) – այլևս:

215 Զարազիտ (ռուս.) անիլ – վարակել:

216 Պալիցէյսկի (ռուս.) – ոստիկան:

217 Ուչապթա (ռուս.) – տեղամաս:

218 Զարիզ (թուրք.) անիլ – խայտառակել:

219 Խարա (թուրք.) – կերպարանք:

220 Դէրա (թուրք.) – ձորակ:

221 Պաչտի (ռուս.) – գրեթե, համարյա:

222 Յօխ (թուրք.) ըլլալ – ոչնչանալ:

223 Աշտոռաֆավատ, շտոռաֆավատ (ռուս.) – տուգանել:

վոր էշթան դունը ախպորը ձէճին: Գուկան դունը ինչ գրդէսնէն: Մարը մէռած է. ախպորը ձէճէլուն փոխարէն մօրը կօլասասնքը բաշլայէցին անիլ:

— Էշթանք, — գասին, դերդերը պերինք, դանինք թաղինք:

Աս Խէնթուգը գէլլէ, գասէ.

— Սաբր արէք, յէս մամային բիդ դանիմ ձախիմ:

Մէյմալումին<sup>224</sup> օրը մէռած մօրը նսդէցուն դոօգին մէշը, չուվանօլ ալ գարըրդից, առավ քսան հադ հավգիթ, կնաց բազար: Բազարում դէղը հասալ, մօրը գարած չուվանները քագից, ինքն ալ հավգիթը մօրը փէշին մէշը տրից, ինքն էլ բուհուդվէցալ: Մէգ հադ մաշթ էգալ. «Էյ, գիդի անուշ քուն, սվօր քսան հավգիթը կօղնամ դանիմ, — գասէ, — ինչ բիդ ըլլա, արի գարթէցնում, ադ հավգիթը կնիմ, հէլալ սրդօլ գուդիմ»:

— Տյոնոյա<sup>225</sup>, տյոնոյա, քանի է հավգիթը:

Էդա թութմիշ արած<sup>226</sup> քէնը, մարը դոօգին գիյնի:

Դդան ալ գրվազէ գուկա, ինչ արիի մամայիս.

— Մամաս մէռէլ է, — գասէ, — ինչի մէռուցիի:

Գըբաշլայէ ցան դալու «Մաշթիքնէր, — գասի, — մամայիս մէռուց»:

— Ախպար, — գասէ մաշթը, — Ինչ բիդի լա օրէնքին ցան դաս, արի մէգ չէշիտ գըղըվինք:

Իդ դէղը իդա մաշթը գուդա իրա մօրը ջերմէն<sup>227</sup> խիստ նօմայ սդագ, դդան գառնու իդա սդագը, մօրն ալ դոօգը գտնէ, դունը յօղնըմիշ գըլլա: Գուկա մէգ հադ դէրայի քօվը փօս գըփօրէ, գըթաղէ, ինքն ալ գէլլէ, գուկա դուն: Դուն գուկա, գընգան հէդ խորիուրթ գանէ.

— Հայդէ, — գասէ մամային հօքու բիդի անինք<sup>228</sup>, յէս ստօլին<sup>229</sup> բդի ասէմ՝ աս պի՛ր, ան պի՛ր, տուն ալ ասա՝ չիկա, ինչ պէրիմ, յէս ալ գէլլիմ, քէգի տանագօլ գըգարնիմ վիգիտ, տուն ալ վիգիդ դագը փուշդուգօլ<sup>230</sup> արուն գըգարիս, յէփօր յէս քէգի տանագօլ գարնիմ նէ, փուշդուգը գըբադոի արունը գըվօթի, մաշթիքնէրն ալ գիմանան, վօր տուն ընգար, մէռար, վէրչը յէս գառնէմ խավալը<sup>231</sup>, գըբաշլայիմ չալիլը, քէգի ալ գուկամ թութմիշ գանիմ, տուն ալ համան դէղէդ գէլլէս, գըբաշլայիս խաղալը:

224 Մէյմալումին – հաջորդ:

225 Տյոնոյա (ռուս.) – մորաքոյր:

226 Թութմիշ (թուրք.) անիլ – բռնել:

227 Ջերմա, ջարմա (թուրք.) – տուգանք, վիսաս:

228 Հօքու բիդի անինք – հոգեհաց պիտի տանք:

229 Ստօլ (ռուս.) – սեղան:

230 Փուշդուգ – պարկ:

231 Խավալ (թուրք.) – սրինգ:

Իդրէս նաքա Էրգուսը մէզ խօսք գրլլան, գրնայիս, աղանէրը գուկան:  
Աղանէրը նէրս գրնուդնան դիսուրգէգ գրհարցընուն ախպօրը.

— Ինչ արիր մամային:

Նա ալ գասէ.

— Ձախէցի չէնէ հօքու բիդի անիմ:

Գրնսդի ստօլին կլուխը գասէ գնգանը.

— Գնիգ, հայդէ, ուղէլիք պէր:

— Ինչ գա վօր, ինչ պէրիմ, — գասէ գնիգը:

— Հայդա՛, սօմայ<sup>232</sup> գալաջի<sup>233</sup> մի անիլ, պիիր:

Գնիգն ալ չպէրիլ: Աս դղան ալ գասէ.

— Մամայիս խալսիլ իմ, տուն ալ ինչ իս յա՛, — գառնու տանագը, գըվագէ,  
գնգանը գըմօշթէ: Վէրչէն ալ գառնու խավալը գըբաշլայի չալէլու:

Գնիգը բառգաճ է, գէշթա թութմիշ գանէ.

— Գնիգ, յէլ դէդէդ:

Գնիգն ալ գէլլէ դէդէն, գըբաշլայէ խաղալը, աղանէրն ալ գընային. «Սա ինչ հրաշք պան է. մէր գնիգները մէր խօսքէրը մդիկ չէն անիլ, մէյմալ թէ մդիկ չանին՝ միւնք ալ գըմօշթինք»: Գէլլին դունէրը գէշթան: Էրգու ախպարն ալ գէշթան գնիգներուն գըբաշլային ան դուր, ան դուր, ուղէլու պան դուր.

— Ինչ դանք, ինչ ունիք, վօր ինչ դանք, — գասէն գնիգները:

— Նօմայ գալաջի մի՛ անիք, — գասին մաշթիքը, տանագները գառնուն  
գնիգներուն վրան գըվագին, գըսպանին:

Գառնին խավալները, գըբաշլային չալէլու.

— Ինչ բառգիլ իք մէռաճի բէս, յէլէք դէդէրէդ, — գէշթան քօվէրը, թութմիշ  
գանին, պայց, ավանդ, մէռաճ ին, ինչ թօղ անին, անէլու պան չունին: Միդք  
գանին. «Է՛յ, մէր Խէնթուրը մամային դարիլ իր, ձախիլ իր, հայդէ՛, մէնք ալ  
դանինք, ձախինք»:

Մէմալումին օրը գըտնին դոօգը գնիգներուն, բագար գըդանին ձախէլու.  
«մէռէլ, մէռէլ» գանչէլէն գըքալցընուն, մէգ ալ օրէնքէն գուկան, արէստօվատ  
գանին<sup>234</sup>, վօր մէռէլ գըձախին դէի շտրաֆ<sup>235</sup> գուդան, գագադին: Գըպէրին  
գնիգներուն, գըթադին: Էրգու ախպար մէգ գըլլան. «Հայդէ, — գասին, էշթանք,  
դա մէր Խէնթուրգին դանինք չուրը թարլինք, ազադինք»:

Խէնթուրը գըդէսնա, վօր աղանէրը գուկան, գնգանը գասէ. «Բիդ էշթամ

---

232 Նօմայ – շատ:

233 Գալաջի (թուրք.) – գրույց:

234 Արէստօվատ (ռուս.) անիլ – ձերբակալել, կալանավորել:

235 Շտրաֆ (ռուս.) – տուգանք:

հայաթը<sup>236</sup> չվալին<sup>237</sup> մէջը բիդ մղնում, տուն ալ շուդ արա, պէրանը գաբէ»:

Գուկան աղանէրը, գասէն.

— Վդէդ է իդա Խէնթուրը:

Գնիզն ալ գասէ.

— Հանա հայաթը չուվալին մէջն է:

Աղանէրը գառնուն չվալով դդին, դոսգին մէջը գրտնին, շիդագ Թէնի<sup>238</sup> քէնարը գրտնին, ժէնք ալ խօրուգ<sup>239</sup> դէդ գրփնտոին:

Շընդըխ Խէնթուրը ինչ թօղ անէ, մադօվ, մադօվ չուվալը գրձագէ, գգանչէ. «Յէս թաքավօրի փէսա ըլլալ չուգիմ, — գասէ, — գօնօվ ինձի փէսա բիդ անին», իդա սիհէլին մէգ հադ չօբան գրվագէ գուկա.

— Սնս էդիր, ախպար, — գասէ, — յէս գըլլամ, — գասէ:

— Հւմ, տուն գըլլաս նէ, շուդ արա չուվալը մդիր, — գասէ:

Չօբանը գըքագէ չուվալին պէրանը, Խէնթուրը գէլլէ: Չօբանը գըմնողնու չուվալին մէջը: Խէնթուրը ալ գէշթա, Չօբանին օջխարը գառնու գէշթա:

Շընդըխ աղանէրը դէդ փնտոսաձ դէդէրէն գուկան գըպոնին չուվալին էրգու քօվին, գըդանին «Ճօմպ» գանին գըթարլին<sup>240</sup>, ժէնք ալ դունը յօլըմիշ գըլլան:

Քիչ մը դէդ գուկան, ինչ գընային աչքէրուն գէրէվա. Խէնթուրը ախպարը մէգ քէսէք<sup>241</sup> օջխարօվ դուն գէշթա:

— Հւմ, ձօ, սա ինչ է, — գասէն, — մէնք քէզի չուրը թաբլէցիսք:

— Հւմ, — գասէ Խէնթուրը, — ինձի սայը<sup>242</sup> դէդ թաբլէցիք յէս չուրին դագէն աշխարքին օջխարը պոնէցի, էգէր խօրունք ցքաձ ըլլայիք նէ, անդէդը խօշօր գօդօշօվ յէգէր գային, անօնք բիդի առնէի, — գասէ:

Աղանէրը գասէն.

— Հայդէ, իդօնք միսք էշթանք առնունք, դար մէզի իսկը խօրունք դէդը ցքէ, նայէ յէգէրը առնելու ըլլանք:

Է դդան՝ չէ՛, մէ՛ գասէ, պայց գէշթա հէտնէրը մէձ-մէձ քար գըգաբէ վիզէրէն, յէդէվսէրէն չուրը գըքքէ, յէփօր, մէք հադը չուրը գըլնի նէ, չուրը բօլօդ-բօլօդ գանէ.

— Վւյ, գասէ մէգալ ախպարը, — յէգէրը նա պոնից, շնդ արա ինձի ալ ցքէ:

---

236 Հայաթ (թուրք.) – սրահ:

237 Չվալ (թուրք.) – պարկ:

238 Թէն – Դոն գետի անվանումը՝ ըստ տեղի հայերի:

239 Խօրուգ – խորունկ բառի աղավաղված ձևն է:

240 Թարլիլ (թուրք.) – գցել:

241 Քէսէք (թուրք.) – զանգված:

242 Սայը (թուրք.) – ծանծաղ:

Դրան տարա ալ գդից չորը, ատ ալ կնաց չորը՝ խէխթըվէցալ:  
Խէխթըվուգը միամիտ սրդօվ էգալ դունը, ժէն գնգան հեդ մինչէվ ասօր ալ  
գարբի:

Վէրէն ալ ընգալ ժէք հադ խնծօր, մէգը՝ ասօղին, մէգը՝ լսօղին, մէգն ալ՝  
անգաջ տնօղին:

### 3 (6).

#### ԹԱԹՕՆ ՅԷՎ ՓԵԹԻԳԵԼԸ

Թաթօն յէվ Փէթրիգէլը մէգ դէդ ջնաբար կնացին, բաղխախին<sup>243</sup> կլուլը՝  
հասան մէգ մէձգէգ պագդարօվիտ անէլու<sup>244</sup>:

— Պարէվ, Թաթօ:

— Ասդձուն պարին քէգ Փէթրիգէլ, ինչ գըդանիս:

— Փուշտ<sup>245</sup> գըտնիմ, գըդանիմ, — գասէ Փէթրիգէլը: Տուն ալ ինչ գըդանիս:

— Գաղին:

— Հայդէ՛, փուշտիս հեդ գաղինը փոխիսք, վօր բօթէն<sup>246</sup> դէղը շարուխներս<sup>247</sup>  
չըմաշէցընունք:

Փուշտին հեդ գաղինը փոխէցին:

Փուշտին չուվալին մէշը մէգ օռօքի<sup>248</sup> փուշտ էր, մնացածը արանի մէջի  
մանար էր, խափիլ էն գնաչիթ<sup>249</sup>:

Ան գաղին դանօղինը հարուր հադ սաղ գաղին էր. իդօր մէջինը աշնակ<sup>250</sup>  
գուդ էր, մէգալն ալ՝ գջէր էր:

Էրգունն ալ մէգ մէգու խափէցին:

Սուփ Սարքիս ուխտին, միգ մէյգին պապադատ էղան<sup>251</sup>:

— Պարօվ, Թաթօ:

— Ասդձուն պարօվ, Փէթրիգէլ:

— Ինչ իս իրէլ, գաղինդ ինձի հասալ: Հայդէ՛, մինք էրգուսս մէգմէգու  
չըխափիսք, ուրիշ մարթ խափիսք, մէգ հադ ալ մէձայի արդարթ<sup>252</sup> գըպոնիսք:

243 Բաղխախ, բաթախ (թուրք.) – ճահիճ:

244 Պագդարօվիտ (ռուս.) անէլ – բարևել, ողջունել:

245 Փուշտ – բուրդ:

246 Բօթէն դէղը, բոշէն դէղը (թուրք.) – իզուր տեղը:

247 Չարուխ (թուրք.) – տրելիս:

248 Օռօք – ճախարակ:

249 Զնաչիթ (ռուս.) – ուրեմն:

250 Աշնակ – սերմ, միջուկ:

251 Պապադատ (ռուս.) ըլլալ – հանդիպել:

252 Արդարթ – հենարան:



Մեզ հաղ ալ մեճա արղաթ պոնից: Մեճան ասաց.

— Յէս երգուսիդն ալ արղաթ գրպոնիմ նե՛ մեզ հաղին ասաց:

— Գովս արօղի բիդի դանէս, — մեգալին ալ, — չօր-չօփները բիդ դանէս տիրացինին ագբարը<sup>253</sup>:

Աղբէս ալ հօժար էղան՝ Թաթօս մնաց դունը, մեճան ասաց.

— Գօվս չօլը արօղի գրհանիս, սա սրինգը գրչալիս ըրինդ<sup>254</sup> գօվս գրլսադա, գրգըշդանա: Անգէց յեղէվ գարձէս, գըչրէս, գըպէրիս:

Մեգալին ալ ասաց.

— Տուն ալ սա չօր-չօփները գըժօղօլըղիս, գըղանիս տիրացինին ագբարը գուլուս:

Էրգուսն ալ սագլսասիտ էղան<sup>255</sup>, կնացին:

Թաթօս մնաց չօրչօփ ժօղօլօղ: Տրացինները էլան, պոնէցին Թաթօյին, անխղար<sup>256</sup> ձէճէցին, անխղար ձէճէցին, սաղգէցուցին ձէճէլէն, չունքի իմիս ագբարիս չօփս իլում նե տիրացինին ագբարը՝ ռասէրոյադ գըլլա<sup>257</sup> չէ՛:

Թաթօս դայալմիշ էղիլ<sup>258</sup> էր ստօլբային<sup>259</sup>, խէխշ էղաճ գայնիլ էր, դահա Փէթրիգէլն էգաճ չէր: Ան ալ յեփօր խավալը<sup>260</sup> պէրանը տրից, գօվը բաշլայից տրտինգ դալու, վագէլու: Գօվը գըվագէր, Փէթրիգէլը գըվագէր, գօվին յեղէվէն գըվագէր, չէր հասնիր, գօվը չէր գայնիր: Իրիգունը Փէթրիգէլը պոնից գօվը, պէրեց դուն: Թաթօս դայալմիշ էղաճ էր սունին, հէռուէն գըլխնդար:

Փէթրիգէլը գասէ Թաթօյին.

— Ի՞նչ գըլխնդաս, օրթալիս<sup>261</sup>:

— Ա՛յ, դղա, — գասէ, — արի չօրչօփը դարի տրացինին ագբարը լցրի, տրացինները պոնէցին մեզ բաղիվ մը. մեզ բաղիվ մը՝ կինի, ռախի<sup>262</sup>, բիվա, միչվանը<sup>263</sup> կլուխս գըբըդվի, — ամա տրացինները սաղգէցուցիրին ձէճէլէն. ձէճ գէրաճին համար է, ցավուն չըտիմանար մարմինը:

— Հապա ի՛նս, օրթալիս, — գասէ Փէթրիգէլը, — արի գօվը արօղի դարի,

---

253 Ագբար – բակ:

254 Ըրինդ – լավ:

255 Սագլսասիտ (ռուս.) էղան – համաձայնվեցին:

256 Անխղար (թուրք.) – այնքան:

257 Ռասէրոյադ (ռուս.) ըլլալ – գայրանալ, բարկանալ:

258 Դայալմիշ (թուրք.) ըլլալ – հենվել:

259 Ստօլբա (ռուս.) – սյուն:

260 Խավալ – սրինգ:

261 Օրթալիս (թուրք.) – ընկեր:

262 Ռախի (թուրք.) – օղի:

263 Միչվանը – մինչև հիմա:

Էլան Կալմիկովի<sup>264</sup> ախշիզները, Նէտրոնի<sup>265</sup> ախշիզները, պօլօրը գրխադան, գյանք էր, գյանք, մէյ մը մէզ ախշիզին հէդ թալաշմիշ գըլլայի<sup>266</sup>, մէյ մը մէզալ ախշիզի հէդ թալաշմիշ գըլլայի, — գըխափէ:

— Անբէս է նէ, յես վաղը գօվը արօղի դանսիմ, տուն ալ ազբարը ժողվօղ էղիր, — գասէ ձէձ ուղօղ Թաթօն:

Չօրչօիր մէզ մը պէրէս նէ, մէզ ալ պէրէս նէ, ինչ գանէն, անխղար ձէձէցին Փէթրիզէլին:

Թաթօն ալ գօվի յէղէվէն վազէլէն ձում<sup>267</sup> պէրանօղ դուն էգավ: Էրգունս ալ արթըլի խափէլու պան չունին:

— Հայդա՛, սա քաֆթառ<sup>268</sup> մէձային ցեռքը գըմէռնինք, սա դունէն փախշինք, ռասչօտ անինք<sup>269</sup>, — գասին:

Մէձան ալ Կապրէլ Մքէին դօն շնահօր կնացիլ էր, տունն ալ կպղիլ էր, պատակնօյ կրիշէն<sup>270</sup> հիչ էլէլու դէդ չկա:

Թաթօն գասէ քի.

— Հադէ՛, սվօր գօվը մօրթինք:

Մօրթէցին գօվը:

— Յէս քէզմէն ուժօղ իմ, — գասէ Թաթօն, — գըդուրէն տէր վէր պարցրնամ, — գասէ, — վէրէն չուվանը գըզախիմ, — գասէ, — չուվալօղ միսը գըհանինք, քէզ ալ գըհանինք, գըլլա՛:

— Հա՛, հա՛, օշթանլս, գըլլա՛, — գասէ Փէթրիզէլը, — ամա միդքին մէշինը կիդէ:

Թաթօն նարա օնուզին<sup>271</sup> վէրա գայնէցավ, էլալ օճախըլիսէն<sup>272</sup> տէրի վէր: Փէթրիզէլը մնաց: Փէթրիզէլը ալ կիդէ, վօր նա հանէլու չէ իրէն, չուվալին մէշը ինքը մղավ, վրան ալ մէզ քանի գդօր միս քաշից. «Թաթօ՛, քաշէ՛, քաշէ՛, տէրի վէր»:

Թաթօն քաշից, նայից վրան միս է, գծգծէցուց չուվալին պէրանը, զարգից գոնագը, գումբո՛ր-գումբո՛ր գըփախշի. «Շինդըլի<sup>273</sup>, — գասէ, — թօղ սադգէցընէ մէձան Փէթրիզէլին»: Ադբէս կիդէ յա:

Դարալ, դարալ մէզ հադ քարի զարգից:

264 Կալմիկով – տեղանուն:

265 Նէտրոն – տեղանուն:

266 Թալաշմիշ (թուրք.) ըլլալ – սիրաբանել:

267 Չում – ծում:

268 Քաֆթառ – անատամ:

269 Ռասչոտ (ռուս.) անիլ – հաշիվը մաքրել:

270 Պատակնօյ կրիշ (ռուս.) – երդիկի տակ:

271 Օնուզ (թուրք.) – ուս:

272 Օճախըլիս (թուրք.) – վառարան, ծխնելույց:

273 Շինդըլիս (թուրք.) – հիմա:

— Լէշո խավարած, սա ինչ ձանդր միս է, — ասաց, — բաղոնեցավ չուվալը<sup>274</sup> Փէթրիգէլը մէջէն էլավ:

— Հովարդա<sup>275</sup>, խաբրդա<sup>276</sup> գողորդեցիր յա, — ըսավ, — յես կիդէի չուվալին մէջի էղածը միս է դօշը քարին զարգի:

Ախր իրենց սուդ խափան էղածը իրենք կիդէին յա: Սէլսավէթ<sup>277</sup> ալ գէշթան՝ հի՛չ հավաղացօղ չկան, նարկօս<sup>278</sup> ալ գէշթան՝ հի՛չ հավաղացօղ չկան:

Իդրէս ալ ռասխադիտսա էղան<sup>279</sup>, կնացին մէգմէգալէն:

#### 4 (7).

### ՉԱՐ ԲԻԱՆԱՅԻՆ ՅԱԽԵՆ ԷԳՕՂ ՅԱՐՍԸ

Յէրէք ախպար գըլլան, էրգու հադը գարքված գըլլան, մէգալը՝ դահա չէ: Անա սա էրգու հարսէրը անքան կէշ բիանա գունէնան, քի էրգու հարսին գոնագը գրհէճնէ, գըման կա դունին մէջը, գոնակնէն չի ըչնիր մինչվանը ինքը՝ բիանան<sup>280</sup>, չիօքնէլը:

Մէգ օր մը բգդիգ դոյային ալ գարքէցին, էլավ բիանան թէլգաթան<sup>281</sup> կլուխին վրա տրած պովառը<sup>282</sup>, ցէռքը գասէ. «Գրս՛գ իմ, գրագ իմ» իրէն չար էղածը գըբաղմէ գոյա, վօր հարսն ալ իրէնմէ վախնա:

Հարսը գասէ.

— Գրագիտ վրօվն անցընօղն իմ:

Չառօգորունքին զիրագին բգդիգ հարսը դունը մնաց: Ժէք ախպար, էրգու հարս կնացին ժամ, ճաշակվէցան, իդա ադէսվան մէջը ախչիգը գըլէրքէ.

«Նօճիի ձառը շադ պարցր է,

Միրած յարը շադ քաղցր է»:

Իշդէ, իդրէս գըլէրքէր, բիանան հօյ ցադգէցավ տարանա գոնագը: Ախչիգը ման էգավ, ման էգավ. բիանան արթըլս հօքնիլ է, իդա յէրգու մուսկուլնէրէն<sup>283</sup> պոնսած՝ զխ՛կ, զխ՛կ, չօրս բադին զարգից, վէրչն ալ պօլի<sup>284</sup> վրա զարգից, ժէք հադ խաբուրդան գօղրէցավ, լէգուն պէրանը գարվէցավ:

274 Չուվալ (թուրք.) – պարկ:

275 Հովարդա (թուրք.) – անպետք, անբարո մարդ:

276 Խաբրդա (թուրք.) – կողոսկր:

277 Սէլսավէթ (ռուս.) – գյուղատվետ:

278 Նարկօս (ռուս.) – ժողկոմ:

279 Ռասխադիտսա (ռուս.) ըլլալ – բաժանվել:

280 Բիանա – սկետուր:

281 Թէլգաթա – հարսանիքի համար պատրաստվող թխվածք:

282 Պովառ – բուրվատ բադի աղավաղված ձնն է:

283 Մուսկուլ (ռուս.) – մկան:

284 Պօլ (ռուս.) – հատակ:

Դոպրը էգան.

— Օդորմի՛ ասոված, մաման, — ըսին, — մաման հիչ գալաջա<sup>285</sup> անիլ չի գըրնալ:

— Ըն՛, ըն՛, — չօրս բաղը գըցուցընէ, մեմալ դա հարսին գըցուցընէ, պօլը գըցուցընէ, ասէլու չիլալ:

— Մաման, — գասէն, — քուգդ ասած պանէրուս մէջէն հիչ ռազաբրաթ<sup>286</sup> անէլ չիլալ, — գասէ մէճ ախապարը:

— Մաման, խէղջը՝ Քրիստօս մեր մէջ յեղիլ է, լիգուն պէրանը գաբվիլ է, — գասէ բգդի հարսը, — դունին չօրս բաղը գըցուցընէ, ինճի գըցուցընէ, բգդի դղիս հէդ, բգդի հարսիս թօղ ըլլա՛ դունը-դէղը, — գասէ:

Ադդէղին մէգալ ախապարները գէշթան ժաքդի դները գընստին: Մամային բաղիվօլ գըթաղին: Բգդի հարսին հէդ բգդի դղան դունին դէրը գըլլան:

## 5 (8).

### ԲԱՐԻՆԱՅԻՆ ԽԵԼԹԸ

Էրիկ գնիգ գըլլան խաթի<sup>287</sup> ուրախ է տարցան գյանքը, վօրօվիէտէվ վօր գէնգին<sup>288</sup> էն: Հանգարճ բախտը յերէս տարցրէց խարիբցան<sup>289</sup>: Խարիբնալուն հէդէվ գնիգը երգանը վախցուց.

— Քանի վօր ախքադ իս, — կլխիցս հէռացիր:

— Անխղջմդանք գնիգ, էլմ՛վ, — ասաց մաշթը, — գոնէ ջանապարի հաց տուր, վօր քաղցան չմէռնիմ:

Մաշթը էլալ կնաց, փաղի բազարը գայնէցալ: Էգալ մէգ հադ բարինի<sup>290</sup> գնիգ:

— Զդարով<sup>291</sup>, դէդուշկան<sup>292</sup>, — ասաց, — ըղաթ<sup>293</sup> գըքալին:

— Հարա չիմ քալի:

Բարինա գինմաշթը շիդագ առալ Ռաստօվի Բալշօյ<sup>294</sup> պրասպէկտի<sup>295</sup> բայնին<sup>296</sup> դարալ: Դարալ բայնին, հանվէցալ գինմաշթը, իրէն հալամէտըրը

285 Գալաջա, գէլէջի (թուրք.) – գրույց:

286 Ռազաբրաթ (ռուս.) անէլ – պարզաբանել, մեկնաբանել:

287 Խաթի – շատ:

288 Զէնգին (թուրք.) – հարուստ:

289 Խարիբնալ (թուրք.) – աղքատանալ:

290 Բարին (ռուս.) – պարոն, աղա:

291 Զդարով (ռուս.) – ողջույն:

292 Դէդուշկա (ռուս.) – պապի:

293 Ըղաթ (թուրք.) – շիտակ:

294 Բալշօյ (ռուս.) – մեծ, խոշոր:

295 Պրասպէկտ (ռուս.) – պողոտա:

296 Բայնի (ռուս.) – բաղնիք, ռուսերեն «баня» բառի աղավաղված ձևն է:

դարավ պոնելու դվավ: Մաշթը գինմաշթուն հալամվետրը սրդին գոխան գեցավ: Գինմաշթը գըլվացվի, վերչը արալըխ<sup>297</sup> արավ տոտը: Հալամվետրը հաքավ, հանից իդոր մեգ հադ բաջախլը<sup>298</sup> դվից, վոր սա հալամվետրը պոնիլ է, ախրանյաթ արիլ է:

Մաշթը դասն օր կնաց, դաս հադ բաջախլը վասդըգեցավ:

«Շինդըխ<sup>299</sup>, — ասաց, — հարսդութինօլ էշթամ նե գնիգս չըփամխ դա»: Էլավ կնաց Ռաստօվին օրային<sup>300</sup> քօլը մեգ հադ կիրք գարթացան խազախ<sup>301</sup> բաբի գար հայերէն ալ կիդեր: Մաշթը դասը հադ բաջախլըն պերից, տարան դվից, վոր բիդի էրթա դահա բիդի վասդըգե:

Ադ խազախ բաբին ասաց.

— Զարար<sup>302</sup> չունի, գավմագս, թօդ գէնա իմ քօլս, ցելի բուդիթ վաշը գօլօթը<sup>303</sup>:

Մաշթը էլավ կնաց բարինային<sup>304</sup> քօլը: Բարինան ասաց. — Դուն չկնացի՞ր:

Մաշթն ալ գասէ.

— Կնացի, ջանփան սիրէս, սիրէս, կիրք գարթացան բաբին դվի բաջախլընէրը:

Բարինան ասաց.

— Էնգի<sup>305</sup> կէշ բաբին է, հայդա՛ կնա բաջախլընէրը յէդ ուզա:

Մաշթը կնաց, բաբին ասաց.

— Սա էրեգվա դասը հադ բաջախլընէրը յէդ գուդան մը յա:

— Անասընը սէնի<sup>306</sup>, — բաբին բաշլայից<sup>307</sup> նեղանալուն, — վօ՛վ քու բաջախլըտ առիլ է, — ընգավ փադօլ էդէվէն:

Մաշթը ասաց. «Լավ է կնամ տէրի յէդ՝ Բարինան»:

— Սարէս, սարէս պան էդավ, — ասավ:

— Հայդէ՛, մինք նարան կլուխին օյին գըխաղանք, — ասաց Բարինան:

297 Արալըխ (թուրք.) – անցք, ճեղք:

298 Բաջախլը (թուրք.) – օսմանյան ոսկեդրամ:

299 Շինդըխ (թուրք.) – հիմա:

300 Օրա (թուրք.) – բնակավայր:

301 Խազախ – կազակ:

302 Զարար (թուրք.) – վնաս:

303 Ցելի բուդիթ վաշը գօլօթը (ռուս.) – Լրիվ կլինի Ձեր ոսկին:

304 Բարինա (ռուս.) – տիրուհի:

305 Էնգի – ամենից:

306 Անասընը սէնի (թուրք.) – հայիոյանք է՝ քո մայրիկը:

307 Բաշլայից (թուրք.) – սկսեց:

Չօրս հարուր հադ բաջախլը, հարուր հադն ալ բիթուն<sup>308</sup> չօրսնօց, առավ կնաց բաբիին, դասնվեց դարեգան ախչիգ ունէր ան ալ հէղը առավ կնաց.

— Սա բաջախլընէրը, — ասաց, — բաբիին դվաճս հանա<sup>309</sup>, տուն ալ քովէն գասիս. «Իմիս բաջախլընէրս դսն մը նա ակահուրթունը վրան գըլեցվի, քեզի դաս հադ բաջախլըին դէղը քառսուն հադ, հիսուն հադ գուդա:

Էգավ Գինմաշթըր ասաց.

— Պարեվ քեզի, խոյունջի<sup>310</sup> բաբի, սա իմիս նշանաճս Յէրուսաղէն կնաց, սա օսկիին քօվս գէնալու գըվախնանք. գուկան հարամիները գըմօրթէն դէյի, գըխնթրիմ քեզի, դաքա քեզի գըհանցնիմ էրէք ամիս ադէն մինչվա իմ մարթս հէռու դէղին կալուն:

— Պօժալուստա<sup>311</sup>, գավագս, ցելի բուդիտ, թօղուր զի հօս, — գասէ բաբին:

Իդա ադէնը մարթըր գասէ.

— Ինս դասը բաջախլընէրս դաս մը յսն:

Պապին ադ դասը բաջախլըին դէղը հիսուն հադ հանից դուվից: Ակահուրթինը վրան լցվի իր՝ մեգէլը առնէլու համար:

Իդա ադէնը ան քօվին խնտալէն էգավ ախչիգը ըսավ.

— Մանս, էմջէբա<sup>312</sup> Յէրուսաղըմէն էգիլ է, մէճի բիդիկ պանիւր ալ առիլ պէրիլ է. Լավանչն ալ պէրիլ է, սսէռն ալ պէրիլ է, մադնին ալ պէրիլ է, արոջանն ալ պէրիլ է:

— Ան ադինը խաթի<sup>313</sup> ադէգ ա, հոքին, — գասէ խազայկան<sup>314</sup>, ինս չօրս հարուր բաջախլըս դուր, վսնք սաղունձու իմիս նշանաճս իմիս քօվս գէցաճ է, ախչիգս ալ ալայ<sup>315</sup> պանէրը թախըմ<sup>316</sup> է, լավաշն ալ ունի, սսէռն ալ ունի, մադնին ալ ունի, արոջանն ալ ունի:

Մար ու ախչիգ գըխաղան: Դարա դասը հադ բաջախլուին դէղը հիսուն հադ առիլ է՝ դա ալ գըխաղա: Բաբին ալ գընայի վրանէրը, գընայի, գընայի. գըբաշլայի խաղալը:

Բարինան գասէ բաբին.

---

308 Բիթուն (թուրք.) – բոլորը:

309 Հանա – պահ:

310 Խոյունջի (թուրք.) – ոսկերիչ:

311 Պօժալուստա (ռուս.) – խնդրեմ:

312 Էմջէբա (թուրք.) – 1. հորեղբայր, 2. հայր:

313 Խաթի – շատ:

314 Խազայկա (ռուս.) – տանտիկին:

315 Ալայ – բոլոր:

316 Թախըմ (թուրք.) – զգեստասարք:

— Հօսն նայէ, իմիս էրիգս իմիս քօլս է՝ ադ ուրախութիւնէս գըխաղամ, ախշիգան ալ ալայ պանէրը պերիլ էն՝ ան ուրախութիւնէս գըխաղամ, սա ալ դասը բաջախլըին դէրը հիսուն հադ առիլ է՝ ադ ուրախութիւնէս գըխաղամ, հարատուն ալ ինչի՞ համար գըխաղամ:

— Յէս ալ ասքէս բադուհասի հանթիքամ չէի. յէս ալ անոր համար գըխաղամ:

## 6 (9).

### ՓԵՐԱՏ ՄԱՐԸ<sup>317</sup>

Ադէնօվ, ժամանագօվ գար, չիգար մէգ հադ բարի գար, մէգ հադ ալ մէձա, ունէին մէգ հադ ախշիգ: Ժամանագին ընգավ մէձան մէռավ, բարին մնաց մէյնագ: Ինչ թօղ անէ, ախշիգն ալ փօքը է, գարէլի չէ առանց դանդիգինի գէցունէլ, մդաձէց. «Էրթամ մէգ հադ ուրիշ գինմաշթ առնում, վօր իմիս յերէխալիս գէցընէ»<sup>318</sup>:

Կնաց, կդավ մէգ հադ գինմաշթ պերից, ան ալ մէգ հադ ուրիշ ախշիգ ունէր հէրը բարաբար<sup>319</sup>: Գէցան մէգ, էրգու դարի նիչէվօ<sup>320</sup> էին ապրում, վերչարէս ասօնց մէչը խրօվութիւն ինգավ, մարը աս օրայը<sup>321</sup> ախշգանը չուգէր բահէլ դունին մէչը, վերչացնէլ գուգէր:

— Դանր ախշիգդ, ինչ գուգէս ըրէ, վերչացնոր, — գասէ:

— Է վօրոն դամ, ինչ ընէմ, — գասէ մաշթը:

Մաշթը միդք արավ. «Աս կշէր առնիմ դանիմ անդառը, թօղցընում անդէդ, կալէրը, կազանները գուդին, գըխալըսցէն ախշըզանս»:

Հէդըբուրդոր<sup>322</sup>, չուր առավ էլավ կնաց: Կնաց անդառին մէչը խօվուշ<sup>323</sup> ձառ մը կդավ:

— Նիսդ ախշիգս, — ըսավ, — փիլավ յէփի քէգ համար, — յէս ալ յերթամ՝ յէմիշ<sup>324</sup> կդնիմ:

Ախշիգը ըսգսէց փիլավ յէփէլ, ինչ բիդ անէ քաղցամ ալ է, բաշլայից<sup>325</sup> ուղիլը: Մէգ հադ Մուգ տուրս էգավ.

317 Փէրատ մարը – չար մայրը:

318 Գէցընէլ – պահել, ապրեցնել:

319 Բարաբար (թուրք.) – միասին:

320 Նիչէվօ (ռուս.) – ոչինչ, ոչ վատ:

321 Օրայ – ժամանակ:

322 Բուրդոր – հացահատիկ:

323 Խօվուշ (թուրք.) – փչակ:

324 Յէմիշ (թուրք.) – միրգ, պտուղ:

325 Բաշլայիլ (թուրք.) – սկսել:

— Ախչի՛գ, մի կտալ գուդանս, քաղցած էմ:

— Ինչի չէ՞, հը՛, — լցից վարը, Մուգը գերավ, գըշդացավ:

— Յէս քօ արած աղէգութիւնը դէղը աղէգութին գանէմ, — ըսավ, էլավ կնաց:

Ադ կշերը ախչիգը աղ ձառին մէշը քուն էղավ, մնաց: Մէմալ գընայիս Արչը էգավ:

— Հան, սա ինչ համօվ բդուղ էգիլ է սըղէղ: Ախչի՛գ, — գասէ, — Հայդէ՛, էլիը աչքըգար օյին<sup>326</sup> խաղանք էրգուսս: Էգէր տուն ինձի խափիս նէ՛ հարուր վօսգի գուդամ, էգէր իս քէգի խափիմ նէ՛ քէգի բիղ ուղէմ: Գուդամ ցէոքս մէգ հաղ գվանօք<sup>327</sup>, գըբաշայիս տուն գվանօքօվ քալէլը, — գվանօքը դվից ցէոքը, ախչիգը գարից Այուվին<sup>328</sup> աչքէրը:

Ան քօվէն անցավ իրիգվա Մուգը էգավ. — Դնր գվանօքը, շուղ արա, — ըսավ:

Մուգը առավ գվանօքը ցէոքը, բաշայէց ջընգըլ-ջընգըլ վագէլու: Այուվը սս բաղին գըվագէ, մէգալ բաղին գըվագէ: Մուգը մէյ մը վէր գէլլա, մէյ մը՝ վար:

— Ամէնէն<sup>329</sup> չէղավ, օ, ախչիգ, — ըսավ Այուվը, — հօքնէցա յէս, դուն ինձի ձալլէցիը, կագէ՛ աչքս: Ախչիգը քագէց աչքը, Մուգը չկա, խօս գանգը քօլը գէցած է: Այուվը հանից հարուր վօսգի դուվից. «Պարօվ գէցիը», — ըսավ, էլավ կնաց:

Էրգուսում օրում հարը միդք արէց. «Էրթամ դէսնամ ախչիգը ինչ էղավ: Գէլնի վօր օսգօնէրն ալ չիգան»: Կնաց դէսավ ախչիգը սաղ է:

— Ախչի՛գ, ինչ գանէս:

— Ինչ բիղի անէմ, բարս՛, յէս ասղէղ աչքըգար օյին գըխասղամ մէձ քսագ վօսգի վասղագէցա:

Մաշթը գուրախանա, գասէ.

— Հայդէ՛, վասղագէցար նէ՛ բէլթիմ մամայի աչքը գըմդնիս, ախչի՛գս, քէգ մէ չփախ դալ դունէն:

Առավ մաշթը դարավ ախչիգը դուն: Գնիգը յէլավ.

— Գէնէ՛ պէրիը, շուղ արա, դա՛ր հէռու: Գայնէ՛, գայնէ՛, ախչիգը մէձ սղագ վասղըգած յէգած վդէ՛ղ գըփախցընէս ախչգան:

— Ինչը:

— Ըսըէս, ըսըէս, սղագ վասղըգէցավ:

---

326 Աչքըգար օյին – աչքակապուկի խաղ:

327 Զվանօք (ռուս.) – գանգ:

328 Այուվ (թուրք.) – արջ:

329 Ամէնէն – ամեննին բառի աղավաղված ձևն է:



— Քօ ախշիգը վասդըգեցալ նէ, ինը հարա ինչքան բողի վասդըգի, աս կշէր ալ իմ ախշըգան դար:

Մաշթը ինչ թօղ ընէ: Առալ ադ կշէրը մեգալ ախշգանը դարալ: Ախշիգը բաշլայեց փիլալ էփիլը, մաշթը հեռացալ: Փիլալ էփած քէնը<sup>330</sup> Մուգը էգալ:

— Քորի՛գ, քիչ մը փիլալ չէս դա:

— Կնս, գօրիբ սդէղէն, քաղցած շոն, — ըսալ մեգ հադ ալ կլխուն դվալ:

— Լսն, միդքտ բահէ, — ըսալ, կնաց:

Անցալ ժամանագ, մեգալ կշէրը էգալ: Արչը գէնէ էգալ:

— Օ՛, պարեվ էգիլ էս, ախշի՛գս, — գասէ, — յէս էգիլ էմ քէգի հեդ աչքըգար օյին խաղամ, էգէր տուն ինձի խափիս նէ, յէս քէգ հարուր վօսգի բիղի դամ, յէս քէգի խափիս նէ՝ բիղի ուղիս քէգի, հօժսն էս:

— Հօժսն էմ, — գասէ ախշիգը:

— Այուվը դվալ գվանօքը ցեռքը, գաբէլ դվից աչքէրը, բաշլայեցին վագիլը: Այուվը խափմիշ արուց, պոնից, բաշլայից ուղիլը, մաղին ձարէրը թողուց, էլալ կնաց:

Մաբախդան գնիգը գասէ բարբին.

— Շուդ արա կնս, վօլ իմանա ինչքան սդագ վասդըգեցալ ախշիգս:

Մաշթը էլալ կնաց, կնաց ինչ գըղէսնի, մի յանը մաղէրին ձարի վօսգընէրը մնացած է, մեգալը՝ գէրէլ է Այուվը: Պոնից հալաճէրը, մաղէրին ձարէրը ժօղվըղից, հալաճէրին մէշը լցրից, առալ, դարալ մօրը:

Մարը առչէվը վագէց, ըսալ.

— Ինչբէս է, շադ սդագ պէրէց ախշիգս:

— Ախշգանդ Այուվը գէրիլ է:

— Վան, վան, ախշգան գէրէլ է Այուվը, շուդ արա դարան ալ փախցրու:

— Քէգի՛ գըփախ դամ, ախշգանս չէմ փախ դա, — գասէ մաշթը:

Հէքիաթը վէրջացալ: Նաքա հասան ժէնց մուրաղին, տուք ալ հասնիք ցէր մուրաղին:

---

330 Քէն – ժամանակ:

## ՔՕՍՈՒՐ ՁԱՆՕՐԸ

Ժամանագով մաշթուն մեզը քօմուր<sup>331</sup> գրձախէր: Առդուն գելնէր, գէշթար մօրին փաղ, ձառ գրգդրէր, գրլսանձէր, գրձախէր: Պէրից, ախպարս, մէգ պէռ Թօփթի, Չալթըր, Սալա՝ ձախէլէն, ձախէլէն կնաց մղավ Նախչաւման: Նախչաւմանին մէչը քօմուրը ձախից վէրչացուց: Ինքն ալ սէվ, քօմուր ձախօղը իշդէ հայդնի է, մաշթ էղաձը իշդէ հիչ բէլլի<sup>332</sup> չէ, միայն ագոանէրը ջէրմագ գէրէվան, մէգալը սէփ-սէվ էն՝ հալավ, էրէս, աչք, օնք, ինչ վօր գա՛ նէ:

Ձախից էգավ քաղաքին քէնարը ցիին արձ հանից<sup>333</sup> արօղին վրա, ինքն ալ, կավաթին մօղիգ էր, կնաց պէրից չայօվ ոախին<sup>334</sup>, խմից, բէդքին բէս հարփէցավ մնաց:

Էգան ժուլիգները<sup>335</sup>, ֆայտօնօլ<sup>336</sup> էգան, դարին նսղէցուցին, արին դարին շիդագ բաղնիք: Լվացին թէմուգուցին<sup>337</sup>, ամա ան ինքիրէնը հիչ չիկիղէր: Դարին մէգ հաղ կօմնատի<sup>338</sup> մէջ բառգէցուցին՝ կօյկան<sup>339</sup> թէմիգ, վրան սավան, պարց, վօղքին դագն ալ մէգ հաղ պարցը հայլի տրին՝ կէդիսէն վէրը գրբաձ:

Ժամանագ անցավ մաշթը գարթնէցավ, գրնայի չօրս քօլը գահ-գարասիք, հայլի, բառգաձ դէղը՝ թէմիգ, գյանքին մէչը աղբէս պան հիչ դէսաձ չէր: Ամա, պէրօղ, լվացօղ, բառգէցնօղները դէյմիշ<sup>340</sup> գանէն: Դէրը էլաձը, չօրս գօղմ նայաձը, դէսաձներնուն բէս՝ մղան նէրս:

— Ինչ շաշըրմիշ<sup>341</sup> էղաձ չօրս գօղմդ գրնայիս, — ըսին, — տուն աշխարքին էրէսը քէնը<sup>342</sup> մէգ հաղ քօմուր ձախօղ աղդօղ մաշթ էիր, մէռար, արքայութին կնացիր, շինդըլս<sup>343</sup> արքայութինին մէջ իս, սարը արա<sup>344</sup> շինդըլս իշդէ էղէվէդ բիդի կան, դահա դէդ բիդի էշթաս:

331 Քօմուր (թուրք.) – ածուխ:

332 Բէլլի (թուրք.) – հայտնի:

333 Արձ հանէլ – արածացնել:

334 Ռախի (թուրք.) – օղի:

335 Ժուլիգ (ռուս.) – խաբէրա:

336 Ֆայտօն (թուրք.) – կառք:

337 Թէմիգընիլ (թուրք.) – մաքրել:

338 Կօմնատ (ռուս.) – սենյակ:

339 Կօյկա (ռուս.) – մահճակալ:

340 Դէյմիշ անիլ – սպասել:

341 Շաշըրմիշ (թուրք.) – շվարած:

342 Բէն – ժամանակ, մինչև հիմա:

343 Շինդըլս, շինդըք (թուրք.) – հիմա, այժմ:

344 Սարը (թուրք.) անէլ – համբերել:

Պերին, ախպարս, դահա գէներալի հալաժներ գրհաքցնուն: Մաշթը գէներալի<sup>345</sup> հալաժները<sup>346</sup> հաքաճ, գողէն՝ սուրը գախաճ: Դարին նսդէցուցին ֆայտօնը<sup>347</sup>: Էգավ մէգ հադ ալ գնիգմաշթ ցեդըը բայուսագ, նսդավ յանաշան<sup>348</sup>, քշէցին շիդագ խախվէջիին խանութը: Կնացին մդան խախվէջիին<sup>349</sup> խանութը: Առաչվա ժամանագը ադրէս բադվավօր մաշթիք կէդէն, քաղաքէն գամ վօրդէդէն պան կնէլու էրթային նէ՝ «Համէցէք», գանէին, չայ գըտնէին առաչները: Նսդաճնուն բէս առչէժները չայ տրին լիննօվ: Մաշթը հիչ պան չիդէ, սուս նսդաճ գընայի շաշըրմիշ էդաճ է: Ան գնիգմաշթը ճատանէրուն, պրիկագչիկներուն<sup>350</sup> գասէ. «Մէգ թօփ իդա արբանքէն դվէք»:

Պերին, տրին առչէժները:

«Մէգ թօփ ֆլան արբանքէն, մէգ թօփ անգից»: Մէգ խօսքօվ մէգ դասդաննիհնգ հագարի մօդ պան պէրին, տրին իրա դէդը, գնիգմաշթը պացից ոէդիկյուլը<sup>351</sup>:

— Օ՛յ, նէրէցէք սդագը մօցցիլ իմ: Հայդէ՛, մաշթս հօս թօղ գէնա էրթամ արբանքը յիս դանիմ, սդագը պէրիմ:

— Միչաշ ժէ՛<sup>352</sup>, — թօփ արին<sup>353</sup>, գարէցին, փաթթէցին, տրին ֆայտօնը, գնիգմաշթն էլ նսդից յանաշան, էլլան կնացին:

Աս մէր արքայութուն կնացօղը դահա նսդաճ է: Մէգ սահաթէն<sup>354</sup> բիդի կան, մէգ սահաթը էրգու էդավ, էրգուսը՝ ժէք, նսդաճ է մաշթը, սդագն ալ՝ չիգան, գնիգմաշթն ալ՝ չիգան: Արթըլիս դաքա բաշլայէցին սամնիվաթսա<sup>355</sup> ըլլալը: Էլան միլիցա ցան դվին, միլիցան էգավ, տուտէն նայէցավ ինչ դէսնա՝ գէներալը նսդաճ է, գէներալին քօվը դահա ինչ բիդի անէ, «նէրօղութուն» ասէց, կնաց:

Շինդըլիս դաքա անէլու պան չունին: Խանութը փագէլու ժամանագը էգավ, արքայութուն կնացօղը դահա նսդաճ է, գինմաշթն ալ՝ չիգան: Դարա գըմօդգընան, գրհարցընին, — Դուն վօժ էս, ինչ մաշթ էս:

— Յէս, — գասէ, — քօմուր ճախօղ Մարգօսն էի աշխարքին վրա ժամանագս՝ կէդիինին վրան, մէռա՝ արքայութին էգաճ էմ յէս շինդըլիս:

345 Գէներալ (ռուս.) – գէներալ:

346 Հալալ (թուրք.) – զգեստ:

347 Ֆայտօն (թուրք.) – կառք:

348 Յանաշա (թուրք.) – կողք, մոտ:

349 Խախվէջի (թուրք.) – սրճարան, սրճեփ:

350 Պրիկագչիկ ռուս.) – գործակատար:

351 Ռէդիկյուլ (ռուս.) – ձեռնապայուսակ:

352 Միչաշ ժէ (ռուս.) – անմիջապէս:

353 Թօփ անէլ (թուրք.) – հավաքել:

354 Մըհաթ (թուրք.) – ժամ:

355 Սամնիվաթսա (ռուս.) ըլլալ – կասկածել, երկմտել:

Միոք գանին, վոր ժուլիզները խափիլ ին: Նաքա դասնհինգ հազար մաների պանը դարին, դահա առնելու պան հիչ չունին խօ:

Ջարգին էդելեն, խանութեն տուրս սքեցին: Էլավ կնաց դունը: Կնաց դունը, ցին դոսգը դահա հօն գեցաձ էին, գինն ալ գրդէսնա գասէ.

— Պան, Հերիքնագ, տոն իս, յես արքայութին կնացիլ էի, հօնէն գուկամ:

— Մահին կլուխին դագը կնացել էիր տուն ալ, դահա ջամփադ նային:

## 8 (11).

### ԱԼԵՄԻ ՋԱՐԻՉԸ

Մի գըրիջ<sup>356</sup> մը վօրսի գերթա: Ձերունիգ մարթ մը գդէսնէ դունին գօղքին նսդաձ: Գըրիջը պարէվ գուդա նարան:

— Պարէվ յեգար գըրիջ՝ ալէմի՛ սուլթան<sup>357</sup>, — գասէ Ձերունիգը: Դոան նօրէն տէր էդէվ գուկա վօրսէն, նօրէն պարէվ գուդա ձեր բարբին.

— Պարէվ յեգար գըրիջ՝ ալէմի՛ սուլթան, — գասէ բարբին:

Դոան միոք գանէ: Գուկա գընշանվի, նօրէն վօրսի գէշթա, բարբին նօրէն գըդէսնա, նօրէն պարէվ գուդա:

— Պարէվ յեգար, գըրիջ՝ մէգ հադի սուլթան, — գասէ բարբին:

Դոան գէշթա, համա միոք գանէ. «Ինչի՛ ադբէս սասց բարբին»: Վօրսէն տէրի դուն գուկա, նօրէն բարբին գըդէսնա, — գասէ:

— Բարբի՛, ինչի՛ ինձ մէգ հադի սուլթան ասիր:

Բարբին ալ գասէ.

— Գըրիջ, տուն առաչ ալէմի սուլթան էիր, շինդըլս ալ՝ մէգ հադի սուլթան իս:

Դոան գէշթա դունը, միոք գանէ, գասէ. — «Յէս բիդ պարնվիմ<sup>358</sup> նշանվաձէս. յես չուզիմ մէգ հադի սուլթան ըլլալ, յես գուզիմ՝ ալէմի սուլթան ըլլալ»:

Գըպարնվի նշանվաձէն, նօրէն գէշթա վօրսի: Ադ բարբին գըդէսնէ, բարբին ալ գասէ.

— Պարէվ էգար դդաս, աշխարքի ջարիգ<sup>359</sup>:

Դոան գըհարցնէ.

— Բարբի՛, ինչի՛ տուն ինձի ադբէս գասիս:

Բարբին ալ գասէ.

356 Գըրիջ – կտրիճ բառի աղավաղված ձևն է:

357 Ալէմի սուլթան (թուրք.) – աշխարհի սուլթան:

358 Պարնվիլ – բաժնվիլ բառի աղավաղված ձևն է, որը հատուկ է այս բարբառին:

359 Ջարիգ (թուրք.) – խայտառակ:

— Աշխարքի գանօնը մէ՛գ հաղի հեղ արբիլ է. տուն չընշանվա՛ճ՝ աշխարքի սուլթան էիր, նշանվեցար՝ մէ՛գ հաղի սուլթան էդար, շընդըլս ալ պարնըվեցար՝ աշխարքի ջարի՛գ էդար:

Թօղ ալայը մդաճին ադբէս պանէր թօղ չանին, աշխարքիս ջարի՛գ թօղ չըլլան:

9 (12).

### ՔԱՌՍՈՒՆ ՋԱՆ ՄԲԱՆՕՐԸ

Ադէնօվ ժամանագօվ մէ՛գ մաշթ, մէ՛գ հաղ դղա գունէնա, ինքը չօլը<sup>360</sup> գէշթա, դղային հացի գըխրգէ:

— Կնա՛, — գասէ, — հաց պէր, ուղէնք:

Դղան գէշթա դուն, մաման հացը էփաճ չիլար, հացը փոտին մէչն էր դահա:

Դղան գըբառգի, քուն գըլլա: Մաման հացը փոտէն գըհանէ գըշարքէ, ջանջէրը գընսդին հացի վրան:

Դղան գէլլէ դէղին՝ գըզարնէ, գըպոնէ քառսուն հաղ ջանջ, ինքն ալ գասէ, քի քառսուն ջան սրանէցի:

— Է՛, — գասէ մարը, — հայդէ՛, յէլ բարաղ քաղցաճ է:

Դղան առ չի լսէր, գըկրէ փաչավրայի<sup>361</sup> մը վրա, ջամփա գէշթա: Շաղ գէշթա, քիչ գէշթա, գըհօքնի, գըբառգի, կլօխին դագը գըտնէ փաչավրան, քուն գըլլա:

Իդա դէղը ժէք հաղ դէվէր գարբէին: Գուկան գըդէսնին դղին բառգաճ, գըզաշթան իդա կիրը, գըվախէնան գարթէցընէլու, գուզին տարան փէսա անիլ իրէնց:

Դղան գըզարթի քունէն, գըդէսնա իդա դէվէրուն, ինքն ալ նացանէն գըվախէնա:

Դէվէրը գըհարցընին.

— Տուն մէ՛զի փէսա գըլլա՛ն:

Ան ալ գասէ.

— Հա՛, հա՛, գըլլամ, — չունքի<sup>362</sup> շաղ վախէցաճ էր իդօնցմէն:

Դէվէրը աղ դղին գըդանին դունէրը, յօթ օր, յօթ կշէր հարսնիք գանէն, գուդէն, գուրախասնան, քի փէսա ունին:

360 Չօլը (թուրք.) – դաշտ, անդաստան:

361 Փաչավրա (թուրք.) – կտոր, լաթ:

362 Չունքի (թուրք.) – քանի որ:

## II.

### ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

#### 1. ՄԱՆԿԱԽԱՂԱՑԻ ԵՐԳԵՐ

1 (13).

ԴԱ՛Ն, ԴԱ՛Ն

Դան, դան, դան, դան,  
Օսգիէ շանդան<sup>363</sup>,  
Էգիլ ին դիս ցան գոդան,  
Տոտ փէնջերէն<sup>364</sup> վար գոդան,  
Խալմու խամչին<sup>365</sup> հազիր արէք,  
Թանիու, թանիու, թող էշթա:

2 (14).

ՀԱՎ, ՋԻՎ

Հավը էլավ թարաքը,  
Գերավ մերդով<sup>366</sup>-գարաքը,  
Թընոտ, բարիին էրթիգը,  
Ընգավ հավին վարդիգը:

---

363 Շանդան, շունդան (թուրք.) – աշտանակ:

364 Փէնջերէ (թուրք.) – պատուհան:

365 Խալմու խամչի (թուրք.) – կալմիկի մտրակ:

366 Մերդ – մերդ բառի բարբառային ձևը:

## 2. ՍԻՐԱՅԻՆ ԵՐԳԵՐ

1 (15).

ԴԵՍՕՔ ԹՕՂ ԼԱ, ԹՕՂ ՉԻԼԼԱ  
(ԽՐԻՄԻ ՅԵՐՔ)

Դէսօք<sup>367</sup> թօղ լա, թօղ չիլա,  
Թէք<sup>368</sup> ըսդագը բօլ թօղ լա,  
Իդա ախչգանը մարը,  
Իմիս բիանաս<sup>369</sup> թող լա:  
Բախչաները գըքալէինք,  
Մէնք դէսօքին գըսիրէինք,  
Մէզի գասին խարասուցի<sup>370</sup>,  
Մէնք դօնըշմա<sup>371</sup> գըսիրէինք:  
Տիմաց-տիմաց խաներա<sup>372</sup>,  
Տիմացն ալ խանըթներս,

Տուն հօղէն յէլ, յէս՝ հօւէն.  
Թօղ քյօղ լան դուշմաններս:  
Տիմացէն ֆէներ գուկար,  
Միդքիս ինչէր գուկար,  
Դահա դարիքս փոքր,  
Կլուխիս ինչէր գուկար:  
Տիմացէն դէսս քէզի  
Ճէրմագ վաշթ գիդցա քէզի,  
Ֆոդ անէլու չիւրյմիշէցի<sup>373</sup>,  
Ուրիշին դվին քէզի:

2 (16).

ԹՕՓԹԻ ԿՅՈՒՂԻ ԱՆՎԱԽ ԲԱՉՆ ԷՍ

Թօփթի կյուղի անվախի քաչն էմ,  
Թօփթի<sup>374</sup>, Չալթըր<sup>375</sup> վօդքիս դագըն է,  
Յէրփ վօր հէճնէմ ալաման ցիս,  
Թօփթի, Չալթըր սաղ ման գուկամ:  
Խալմուխ խամչիս<sup>376</sup> թէվէս գախաձ,  
Չարցու<sup>377</sup> թախըմ արձաթ թափաձ,  
Ցիոս վրա հարփաձ, բառգաձ,  
Թօփթի, Չալթըր կէղ ման գուկամ:  
Թօփթի, Չալթըր շաղ ման էգա,  
Սրդիս սիրաձ յարիս չկդա,

367 Դէսօք (թուրք.) – գեղեցիկ:

368 Թէք (թուրք.) – միայն:

369 Բիանա (թուրք.) – գոքանչ:

370 Խարասուցի – Ղրիմի Խարա Սու հայկական բնակավայրի բնակիչ:

371 Ղօնըշմա (թուրք.) – զրուզել:

372 Խան (թուրք.) – իջևան, օթևան:

373 Չիւրյմիշիլ (թուրք.) – չխնայել:

374 Թօփթի – Նոր Նախիջևանին շրջակա գյուղ:

375 Չալթըր – Նոր Նախիջևանին շրջակա գյուղ:

376 Խալմուխ խամչի – կալմիկի մտրակ:

377 Չարցու – մտրակի ծայրի ծոպ:

Ուխտին փռուր Մէձ-Սալային  
Մէգին դէսս սիրդըս վառվէց,  
Ինքը դէսօք խիտդ գեղանաք,  
Բօյօվ բօսօվ խիտդ լմանաք:

Միդքէս անցավ՝ արի բաչէմ,  
Գարմիր ջերմագ վաշթ թշերէն,  
Ինքս ինձմէն ամաչէցի,  
Մագի թելին ցէոք չդվի.  
Հոիշման գրդրած հէձա իմ ցիս,  
Իրիգվան չհանգի, հասս Թօփթի:

Էգա սաի. - Բարսւ՛, մամսւ՛,  
Սիրդիս սիրած յարիս կդա:  
Դվէք ինձի ցէր օրհնութին,  
Անգից անցիք արքաութին,  
Բարաս, մամաս, ինձ օրհնէցին,  
Պարի փասգի արժանացրին:

### 3 (17). ԱԲՈՉԱՆԸ

Արգու՛  
Փարչս արի չորի կնացի,  
Դալդըրմիշ արի<sup>378</sup> վէրուցի,  
Հօքիս, հավադս , Խամբէր,  
Արոջանս<sup>379</sup> գօրուցի:

Խամբէր՛  
Յէս սսօր չօրվախ<sup>380</sup> կնացած չիմ,  
Յէոքս, էրէսս լվացած չիմ,  
Ադու դաս նը գրիմիմ,  
Արոջանդ դէսսձ չիմ:

Արգու՛  
Ադու ուզէնաս նը՝ ադու գըլլամ,  
Ինձի ուզէնաս նը՝ յիս գուկամ,  
Պայց իմ արոջանս ալ,  
Բէնգ<sup>381</sup> է ձօցիւր մէչ ջերմագ:

378 Դալդըրմիշ ընէլ (թուրք.) – մտասույզ լինել:

379 Արոջան – ապարանջան:

380 Չօրվախ (թուրք.) – աղբյուր:

381 Բէնգ (թուրք.) – խալ:



Խամբեր՝

Քաղաքը մէճ փորված էր,  
Ջերմագ վոջիսարը խուզիով<sup>382</sup> էր,  
Արոջանին վրան քօ,  
Ինչքիսի կիր կրած էր:

Արգու՝

Քաղաքը մէճ փորված էր,  
Ջերմագ վոջիսարը խուզիով էր,  
Արոջանի վրան իմ  
Անունս ալ կրած էր:

Խամբեր՝

Չորը գերթար օլուխ-օլուխ<sup>383</sup>,  
Գըքաշէինք թօլուխ-թօլուխ,  
Արոջանս կղնօղին,  
Ինչ քիդի դաս մուշթալուխ<sup>384</sup>:

Արգու՝

Չորը գէշթար օլուխ-օլուխ,  
Գըքաշէինք թօլուխ-թօլուխ,  
Արոջանս կղնօղին,  
Ինքս գէշթամ մուշթալուխ:

Խամբեր՝

Ասդդերը ինձի մէխք գանին,  
Գէնճ<sup>385</sup> կլուխս իյմալամիշ<sup>386</sup> գանին,  
Էգեր էրգուսս մէգ լանք նէ,  
Մէգի զնդան<sup>387</sup> գըցքին:

Արգու՝

Դունին թէրէքը<sup>388</sup> մարջան<sup>389</sup> է,  
Հօքիս սիրաձը Խամբէր, տոնն իս,  
Էգեր էրգուսս մէգ զնդան ցքին,  
Ջնդանը մէգի արքայութին է:

382 Խուզի (թուրք.) – գտնուի:

383 Օլուխ (թուրք.) – ջրհորդան:

384 Մուշթալուխ (թուրք.) – նվեր:

385 Գէնճ (թուրք.) – երիտասարդ:

386 Իյմալամիշ (թուրք.) ընել – մսադաց անել:

387 Ջնդան (թուրք.) – բանտ:

388 Թէրէք (թուրք.) – կտուր:

389 Մարջան – բուստ:

Խամբեր՝

Բեգը իմիս դայիս է,  
Գդրաձ օրէնքին խայիլ իւ<sup>390</sup>,  
Ալէմին<sup>391</sup> հէդ չի փոխիլ,  
Արգուն իմիս փայս<sup>392</sup> է:

Արգու՝

Ինչ էղիլ է, էղիլ է,  
Ջագադար սեվ կրվիլ է,  
Ջագադար սեվ կրվաձը  
Խամբերին գուլում էղիլ է:

4 (18).

ՄԱՐՅԱՄԸ

Բագար դարաձ, նախշաձ, պերաձ Մարյամն,  
Վաշթ պացվիլ էր գարմիր-ջերմագ թուշերր,  
Նիավիթայէն<sup>393</sup> ընձի յեգաձ կիշերր,  
Նագ մի՛ անիր, նագ մի՛ անիր, նագ ախշիգ,  
Անգլիցգա կարէթ նարիր, ինձ արի:

5 (19).

ՁԱՆԻ՛ԳՍ, ՅԷ՛Գ

Չայջին էգավ չայնիգներով, այ խօջա,  
Փող է ուզում վէքսիլներով, ջանն խօջա,  
Կառիգս յեգ, բալիգս յեգ, ջանիգս յէ՛գ, յէ՛գ:  
  
Թե գարձում էս, վօր յես ծեր իմ, այ ախշիգ:  
Յօթը ջահէլ յես գրջարթէմ, ջանն ախշիգ,  
Կառիգս յեգ, բալիգս յեգ, ջանիգս յէ՛գ, յէ՛գ:  
  
Քօ աչքերը գրագ էն տաոցէլ, այ ախշիգ,  
Մօդս արի մի՛ ամաշի, ջանն ախշիգ,  
Կառիգս յեգ, բալիգս յեգ, ջանիգս յէ՛գ, յէ՛գ:

390 Խայիլ (թուրք.) – համաձայն:

391 Ալէմ (թուրք.) – ամբողջ, աշխարհ:

392 Փայ (թուրք.) – բաժին:

393 Նիավիթա – Նեավիթայ՝ Նոր Նախիջևանին շրջակա գյուղ:

### 3. ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

1 (20).

ՄՆԱՅԵՔ ՊԱՐԵ՛Վ, ՍԻՐԵԳԱՆ ԲՈՒՅՐԵ՛Ր<sup>394</sup>

— Մնացէք պարեւ, սիրեգան քոյրէր,

Դարձը ցէր աչքին:

— Կէրթասս մէզմէն շաղ չուզէիս

Անդէղ գերածղ չամիջով թուզ է,

Աչքը գուլա, սիրողը գուզէ.

Հօրմէն, մօրմէն պարնւլիլ<sup>395</sup> չուզէ:

2 (21).

ՀԱՐՍԻ ՀՐԱԺԵԾՏԵ

Հայրիկ, մայրիկ, փոք պարեւ գէցիք,

Տոք ալ պարեւ գէցիք զիս առին, դարին,

Էմջէնէր<sup>396</sup>, յէնգէնէր<sup>397</sup>, փոք ալ պարեւ գէցիք

Տոք ալ պարեւ գէցիք, զիս առին, դարին,

Հօրքորնէր, մօրքորնէր, փոք ալ պարեւ գէցիք,

Տոք ալ պարեւ գէցիք, զիս առին, դարին:

3 (22).

ՓԵՍԻՆ ԳԱՌԵԹԱՆ

Այսօրիկ իս նօր,

Այսօրիկ թաքաւօր իս նօրիկ,

Փէսին գառէթան էգալ գայնէցալ,

Փէսան քաշից մէջքը թուրը,

Փէսին կրակը գարույր մօշթի,

Այսօր հասար մարաղիւր, օշթի:

394 Երգասաց **Գեղեցիկ մեծան** երգը երգելուց առաջ նշել է. «Աս յերբը հարսին դունէն հանաճ աղէնը գլորէին»:

395 Պարնւլիլ – բաժնւլիլ:

396 Էմջէ (թուրք.) – հորեղբայր:

397 Յէնգէ, յանգա (թուրք.) – հորեղբորկին:

4 (23).

**ՓԵՍԱ ՀԱՔՑՆԵԼՈՒ ՊԱՐՔ-1<sup>398</sup>**

Այսօրիկ իս նօր, այսօրիկ թաքավօր իս նօրիկ,  
Բարօն Մանդիգը սէր հնազանթ Մանդիգը,  
Յէլ բադմէ այժմն րոտն Շահ գոդար  
Գոդար գարից յէլն արէքագանց:

5 (24).

**ՓԵՍԱ ՀԱՔՑՆԵԼՈՒ ՊԱՐՔ-2**

Այսօրիկ իս նօր, թաքավօր իս նօրիկ,  
Բարօն Մանդիգ սէր հնազանթ Մանդիգը  
Յէլ բադվէ գմէգ րոտն Շահ  
Գոդար և գարից յէլն արէքագան,  
Ի ժէք իսաչէն անտն օշնից թաքավօր:

6 (25).

**ՀԱՐՍՆԻՔԻ ԵՐԳ<sup>399</sup>**

Դէ, հինա յէգէք մէր ճնշուրին<sup>400</sup>  
Ասէնք շնօրհավօր,  
Նա էլ յոր հարսի հէդ  
Լինէն պահդավօր:  
  
Մէր մէլիքներն ուրախանան,  
Իրանց վօրթիքն ամուսնանան,  
Մէր սրդէրը ուրախ գվարթ  
Նրանց միանան:

398 Պարք – բարք, սովորույթ, նույն ծիսական երգի երկու տարբերակ՝ տարբեր բանասացներից գրի առնված:

399 Ըստ բանասաց **Մանվել Սողոմոնյանի**՝ «Պլը Պուլիի երգերից է», որն ինքը՝ երգասաց դադչի Մանվելը, երգում է հարսանիքներին:

400 Ճնշուտ – ժողովուրդ:

#### 4. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՐԳԵՐ

1 (26).

ԽԱԼԻԲ ԱՂԱՆ

Շաղ գոլում<sup>401</sup> մաշթ էր Խալիբ Աղան՝  
Մէր քաղաքի գալում գալավան<sup>402</sup>:

2 (27).

ԽԱՂԱ՛, ԱԽՉԻ՛ԳՍ, ԽԱՂԱ՛

Խաղա՛, ախչի՛գս, իսաղա՛,  
Հիչ ումնորդի թօղ չիլլա.  
Աթօյին Սիմօնին ախչի՛գն իս,  
Մազդ էղէվէղ թէլքօվ ֆսաճ<sup>403</sup>.  
Աթօյին Սիմօնին ախչի՛գն իս:

Գազուգէս ցէփլուշգան<sup>404</sup> վիզդ գախաճ,  
Աթօյին Սիմօնին ախչի՛գն իս.  
Խաղա՛, ախչի՛գս, իսաղա՛,  
Հիչ ումնորդի թօղ չիլլա:

Մարքրիդէ խուլանը<sup>405</sup> մէջքդ գաքաճ,  
Աթօյին Սիմօնին ախչի՛գն իս:  
Խաղա՛, ախչի՛գս, իսաղա՛,  
Հիչ ումնորդի թօղ չիլլա:

3 (28).

ՅԱ՛, ԶԱ՛, ՅԱ՛ՐՍԸ

Հա՛, քա՛<sup>406</sup>, հանրա՛ր, յէ՛լ իսաղա,  
Հէչ ումնորդի թօղ չիլլա,  
Միրտր գուզէ չղլամա<sup>407</sup>,  
Բիանսար գէփէ իսաթլամա<sup>408</sup>:

Հարսը ուրախ օր անցուց,  
Հօրը, մօրը ինդացուց,  
Օսգին վիզին շօղ դվաճ,  
Ալն էրէսէն գաթգթաճ:

401 Զուլում, գալում (թուրք.) – դաժան:

402 Գալավա (ռուս.) – 1. գլուխ, 2. գլխավոր:

403 Ֆսաճ – հյուսաճ:

404 Յէփլուշկա, ցեփ (ռուս.) – շղթա, զարդ:

405 Խուլան (թուրք.) – գոտի:

406 Արևմտահայոց խոսակցականի ձայնարկություն՝ հա – այո, քա – աղջկան դիմելու կոչական:

407 Չղլամա – մեղրաջրով թխվածք:

408 Խաթլամա – Նոր Նախիջևանի շերտավոր թխվածք:

Հւ՛, քա՛ւ, հա՛րար, յէ՛լ գայնէ,  
Յէգվորնէրուն ընթոնէ,  
Առաջ՝ հալավր<sup>409</sup> փօխէ,  
Յէդքն ալ՝ ցեղքէրը համնիրէ:

Հւ՛, քա՛ւ, հա՛րար, ժողօղվէ,  
Հանսա բարադ գրգանչէ,  
Փսագնէրդ բիդ բարնէ,  
Միրաս<sup>410</sup> օսգին բիդ բախշէ:

Հւ՛, քա՛ւ, հա՛րար շոդ արա,  
Մամնդ հանս ցան գոդա,  
Էրգո թուշէդ բիդ բարնէ,  
Գերդանլըրիւր<sup>411</sup> բիդ բախշէ:

Հւ՛, քա՛ւ, հա՛րար, յէ՛լ գայնէ,  
Մէճ չէլէրիւր<sup>412</sup> դուն գուկա,  
Հէդը խօսէ, խօսք սաս,  
Լէգուչէքը<sup>413</sup> քէգ գոդա:

Հարս-սանամար, հոս արի,  
Փէշքէշնէրը<sup>414</sup> թօփ արի,  
Արի՛, գասիմ, ցեղքէս առ,  
Յէս ալ գոդամ մէգ սէվ կատ:

Հւ՛, քա՛ւ, հարար սանդրվէ,  
Հանս փէսար գայնաճ է,  
Հայդէ՛, հէդը յէլ խադա.  
Գնքահարը գրցանգա:

Հարս ես՝ կնս պաղ չոդ պէ՛ր,  
Լվացվօղին՝ սրիհչ պէ՛ր,  
Չայը քաշէ՛, շարար պէ՛ր,  
Մէգ-մէգ բաժակ չայ ալ պէ՛ր:

Հւ՛, քա՛ւ, հա՛րար բարասարվէ՛,  
Քօղդ վէրոդ ու բահէ՛,  
Աշթըխ<sup>415</sup> ժամը անցսճ է.  
Դունն ալ մարբէ՛ ու ավլէ՛:

Հւ՛, քա՛ւ, հա՛րար, յէ՛լ նայէ,  
Չոլաման ալ բարասարէ,  
Էդին մէշը թօղ լօղա,  
Մէդրն ալ վրան թօղ ցօլա:

Հարար ընծան ժողօղվէց,  
Ամէնքէն շադ կօհ մնաց,  
Խոնդում, ճոխում դուն կնաց՝  
Ամէն մորարդին հասսաճ:

#### 4 (29).

#### ԹԵՄԲԵԼ ԱԽՉԻԳԸ

- Բարս, Կոնն ինճի վօրին բիդի դաս,
  - Բալանն<sup>416</sup>, յէս քէգի սարանջիի<sup>417</sup> բիդի դամ:
  - Բարս, յէս սարանջիի չին էշթա.
- Չօլը յէգ նայէլու գրիւրգին:

409 Հալավ (թուրք.) – հագուստ:

410 Միրաս, մէրաս (թուրք.) – ժառանգ:

411 Գերդանլըրիւ – վզնոց:

412 Չէլէրի (թուրք.) – զարգացած ու լուրջ անձ:

413 Լէգուչէք – չխոսկան հարսին խոսելու համար տրված նվեր:

414 Փէշքէշ (թուրք.) – նվեր:

415 Աշթըխ, ալթըխ (թուրք.) – այլևս:

416 Բալա – զավակ:

417 Սարանջի (թուրք.) – հողագործ:

— Բարսի, Կոնն ինձի վօրին բիդի դաս,  
 — Բալանն, յէս քէզի զոռնասչի<sup>418</sup> բիդի դամ:  
 — Բարսի, յէս զոռնասչի չին էշթա.  
 Թէնը<sup>419</sup> խամիշի<sup>420</sup> գրիւրգին:  
 — Բարսի, Կոնն ինձի վօրին բիդի դաս,  
 — Բալանն, յէս քէզի արբաջի<sup>421</sup> բիդի դամ:  
 — Բարսի, յէս արբաջի չին էշթա,  
 Խանութը խաթրանի<sup>422</sup> գրիւրգին:  
 — Բարսի, Կոնն ինձի վօրին բիդի դաս,  
 — Բալանն, յէս քէզի վարդանջի<sup>423</sup> գոդամ:  
 — Բարսի, յէս վարդանջի գէշթամ,  
 Վարքէդ խաղալ<sup>424</sup> գըսօրվին:

### 5 (30).

#### ՈՒՄՏԱԳՆԱՏՈՒԹՅԱՆ ՅԵՐԲ

Շայդցէք, դիւնք, խորլէզ<sup>425</sup> էշթանք,  
 Խորլէզ էշթանք, ախչիզ նայինք:  
 Ախչիզ նայինք՝ կէդէցիկ դէսքօվ,  
 Կէդէցիկ պնութքօվ, կէդէցիկ անունօվ,  
 Սրնա<sup>426</sup> մազօվ, մէրմէր<sup>427</sup> ջագադօվ,  
 Գամար օնքօվ, գանթէդ աչքօվ,  
 Բագլա<sup>428</sup> քիթօվ, օյնախ<sup>429</sup> պէրնօվ,  
 Խայթան<sup>430</sup> բոռնօվ, մարքըրիդ ազոօվ,  
 Չաթալ<sup>431</sup> գըզագօվ, կէդէցիկ անունօվ,  
 Կէդէցիկ պնութքօվ, կէդէցիկ դէսքօվ:

418 Զոռնասչի – զոռնա փչող:

419 Թէն – Դոն գետի անվանումն է՝ ըստ Նոր Նախիջևանի բարբառի:

420 Խամիշ (թուրք.) – եղեգն:

421 Արբաջի (թուրք.) – կառապան:

422 Խաթրան (թուրք.) – ձյութ:

423 Վարդանջի – հարմոնահար:

424 Խաղալ – պարել:

425 Խորլէզ – ուխտագնացություն:

426 Սրնա (թուրք.) – ոսկեթել:

427 Մէրմէր – մարմար:

428 Բագլա (թուրք.) – լոբագգի բոյս:

429 Օյնախ (թուրք.) – մատնոց:

430 Խայթան (թուրք.) – բամբակյա պարան:

431 Չաթալ (թուրք.) – 1. Պատառաքաղ, 2. երկուսի բաժանված:

Քամին ալ փչից քօղն ալ պացից  
Էրէսն ալ չորար<sup>432</sup>, կէղէցիկ դէսօվ:

6 (31).

ԽԱՐԻԲ<sup>433</sup> ՄԷԼՔՕՆ

Խարիբ Մէլքօն զարբ դարի ցալ քաշիլ էր,  
Սորբ Գարաբէդ ուխտի հասիլ էր,  
Մորադ<sup>434</sup> առիլ էր:  
— Գօխմէ՛ զէնգուր<sup>435</sup>, գորբո՛ւր խամչին<sup>436</sup>,  
Մի՛ մոռնալ խալիսին<sup>437</sup>:  
— Չի՛մ լալ, հայրի՛կ, չի՛մ լալ մայրի՛կ,  
Ինչքէս էշթամ յէս:  
— Գօխմէ՛ զէնգուր, գորբո՛ւր խամչին,  
Մի մոռնալ խալիսին:  
— Գօխէ՛ցի՛ զէնգուն, գորբէ՛ցի՛ խամչին,  
Հէ՛դ չմնացի խալիսէ՛ն:

7 (32).

ԳԱՐԱԲԵԴ ՅԵԳՆԱՆ

— Գարաբէդ յէգնա՛<sup>438</sup>,  
Հասի յարդըմի,  
Նէդ դէդ է փէասն.  
Խամիշ<sup>439</sup> ընձէլու կնացիլ է,  
Բաթիլ է<sup>440</sup>, յարդըմի<sup>441</sup> հասի:  
Գարաբէդ յէգնան գասի.  
— Մէ՛գ շիշա՝ ուսիհ<sup>442</sup>:

432 Չորար (թուրք.) – ծաղկատար:

433 Խարիբ (թուրք.) – պանդուխտ:

434 Մուրադ (թուրք.) – նպատակ:

435 Զէնգու (թուրք.) – ասպանդակ:

436 Խամչի (թուրք.) – մտրակ:

437 Խալիս (թուրք.) – ամբոխ:

438 Յէգնա (թուրք.) – քրոջ ամուսին:

439 Խամիշ (թուրք.) – եղեգն:

440 Բաթիլ (թուրք.) – ցեխը մտնել:

441 Յարդըմ (թուրք.) – օգնություն:

442 Ռալիսի (թուրք.) – օղի:



8 (33).

ՕԿԱ ԵՎ ԻՄԴԻՐ ՄԱՄԱՆԵՐԸ

Ֆշնայի<sup>443</sup> ձառը հասիլ է,  
Բեշիկով<sup>444</sup> դղան լացիլ է.  
Օկս մամանն դէսիլ է.  
— Տավս փօրս, — սսիլ է:

Իտիիր մամանն դէսիլ է.  
— Վսյ, զավսնգս, — սսիլ է:  
Չոնսգին, ձոնսգին ձէձիլ է.  
Օրնր-օրնր լացիլ է:

9 (34).

ՄԱՐԻԱՄ ՄՕՐՔՈՒՐՄԱ

Մարիամ մօրքորմնւ,  
Քրօստ դղան՝ Կալուսդր,  
Վաշթէրէս աղային խանութր.  
Էրէսիս քաշից չէք շամսո<sup>445</sup>:

Ան ալ կիդէս ինչի՞ համար էր,  
Մէքստ ախշիգի համար էր,  
Ան ալ ինձի չէր սիրէր.  
Քրօստ դղին քիդ առնէր:



443 Ֆիշնէ (թուրք.) – բալ:

444 Բեշիկ (թուրք.) – օրորոց:

445 Շամսո (թուրք.) – սպտակ:

## 5. ՎԻՃԱԿԻ ԵՐԳԵՐ

### 1 (35).

Էլա մօրին<sup>446</sup> կնացի,  
Վօսգի գացին ցեղքս պոնսաձ,  
Քանի վօր քարին, փաղին զարգի.  
Լուսինգան ձօցս խաղաց:

### 2 (36).

Էլա սարիս վրան,  
Նայեցա աշխարքիս վրան,  
Դասվերգու լուձ լձվաձ էր.  
Էդ էլ իմ նասիքիս<sup>447</sup> վրա:

### 3 (37).

Փոնսավելլը<sup>448</sup> քոդ անէին,  
Ցախսավելլը մօմ անէին,  
Թէք<sup>449</sup> դանէին, թէք դանէին.  
Թէք դանէին, հաւրս անէին:

---

446 Մօրի – անտառ:

447 Նասիք (թուրք.) – ճակատագիր, վիճակ:

448 Փոնսավելլ – փոփ ավելլ:

449 Թէք (թուրք.) – միայն:

## 6. ՉԻՆՎՈՐԻ ԵՐԳԵՐ

1 (38).

### ԱՌՉԻ ՍԱԼԴԱԹԻ ՅԵՐԹԸ

Օրէն առաջ կիր էգամ, Աշխարքներս մթնէցամ, Օ՛ֆ, օ՛ֆ, օ՛ֆ, հայրիկս, Ցամ քաշիլ էր մայրիկս:	Օ՛ֆ, օ՛ֆ, օ՛ֆ, հայրիկս, Ցամ քաշիլ էր մայրիկս:
Քսանմէգս գօխէցի, Հօրս, մօրս լացուցի, Օ՛ֆ, օ՛ֆ, օ՛ֆ, հայրիկս, Ցամ քաշիլ էր մայրիկս:	Հայի չիքմէսս հանէցին, Սալդաթի շինէլ հաքուցին, Օ՛ֆ, օ՛ֆ, օ՛ֆ, հայրիկս, Ցամ քաշիլ էր մայրիկս:
Դարին սրանօկ <sup>450</sup> խօթէցին, Լանքէրս, բոյէրս չափէցին,	Թութոս բօռչօւլ, դայիշ <sup>451</sup> հաց, Յէփ բիդ մօնսամ ջէրմագ հաց, Օ՛ֆ, օ՛ֆ, օ՛ֆ, մայրիկս, Չիգս մէզի ազադում:

2 (39).

### ՍԱՄՊԻԳԻՆ ԴԵՐԱՆ

Դասնութն էր դարիքս,  
Գրագ ցքից Կէրմանիան,  
Մնաք պարօլ, իմ ձնօղնէր,  
Յէվ թանգակին ընգէրնէր:

Սամպիգին դէրան կնացինք,  
Ալաշ-թալաշ մնացինք,  
Կէրմաննէրը աղէցին,  
Համի դէղ ալ չի փրին:

Սէվ ցիին արպան լձէցին,  
Արուն-թաթախ հանէցին,  
Ռասարօվի բօլնից հասցուցին,  
Հօքիս փօրէս հանէցին:

Հօնէն ընգանք մէձ ճամփան,  
Հասանք կէղի կէրէզման,  
Չնօղներս թօփ էղան,  
Ինձի փրին կէրէզման:

450 Ստանօկ (ռուս.) – միայն:

451 Ղայիշ (թուրք.) – 1. կաշի, 2. կոշտ:

Մնաք պարով, իմ ձնօղնէր  
Յե՛վ թանգակին ընգէրնէր,  
Սամսիգին դերան<sup>452</sup> կնասցինք,  
Ալաշ-թալաշ մնասցինք:

3 (40).

ՅԷՍ ԻՄ ՎԻՉԱԳՍ ՅԱՆԷՑԻ

Յէս իմ վիջագս հանեցի, էլա սալդաթ կնացի,  
Դանհց դէղից գրրգրվէցի, զինվորութեան մէջ ընգա,  
Իմ մայրիգս ինծ պերիլ է անուշ զավագի հմար,  
Օրօրօցիս մէջ մէռնէի՝ կուցէ զինվոր չըլլայի:

Հայրս ձերացել է, մօրս դերդը շաղացել է,  
Հայրս մահով մահացավ, մօրս աչքը գորացավ,  
Մնաք պարե՛վ, իմ ընգէրնէր,  
Կուցէ հէդ մէնք չփառնասք:



---

452 Դէրէ (թուրք.) – ձոր:

## 7. ՎԻՊԱԿԱՆ ԵՐԳԵՐ

1 (41).

ՉԱՐԹԻՐ, ԼԱՌ՝

Կրօղը դանի քորդ Արօյին.  
Մբանէլ է մէճ Արօյին,  
Իլլան մացէր Արաբօյին.  
Զարթի՛ր, լաճ, օքնի՛ր հայուն:

Խէղճ մշէցին մնաց լալօլ,  
Հէոու յերգըրնէր ման կալօլ,  
Մէոավ թորքին բարդըր դալօլ.  
Զարթի՛ր, լաճ, օքնի՛ր հայուն:

Չոր յերփ մնամ էլու<sup>453</sup> րոնէր,  
Յէրթամ կրնէմ զիմ խէղճ կառնէր,  
Զորքիմ զիմ բահւչայի ձառէր.  
Զարթի՛ր, լաճ, օքնի՛ր հայուն:

Սէֆիլ<sup>454</sup>-շիվար<sup>455</sup> մնացած հայէր,  
Էղաճ անդէր, բնավէր հավքէր:  
Դէ՛ր, րոն փրկի՛ր, պահի՛ր արթուն.  
Զարթի՛ր, լաճ, օքնի՛ր հայուն:

2 (42).

ԿՆԱՅԷՔ, ԱՍԷՔ ԲԱԲԱՅԻՍ

— Կնացէք, ասէք բաբայիս,  
Դունը, դէղը թօղ ձախէ,  
Հինք հարուր կրօշ<sup>456</sup> ալ թօղ  
շինէ.

Թօղ շինէ, թօղ հանէ պանտիցը:

— Դոնս դէղս չի՛մ ձախի,  
Հինք հարուր կրօշ ալ չի՛մ շինիլ,  
Չի՛մ շինիլ, զավանգս, չի՛մ շինիլ.  
Չի՛մ հանի պանտիցը:

— Կնացէք, ասէք մամայիս,  
Վիզի շալը թօղ ձախէ,  
Հինք հարուր կրօշ ալ թօղ շինէ.  
Թօղ շինէ, թօղ հանէ պանտիցը:

— Վիզիս շալը չի՛մ ձախի,  
Հինք հարուր կրօշ ալ չի՛մ շինիլ,  
Չի՛մ շինիլ, զավանգս, չի՛մ շինիլ.  
Չի՛մ հանի պանտիցը:

— Կնացէք, ասէք ախպօրս,  
Մադի մադնին թօղ ձախէ,  
Հինք հարուր կրօշ ալ թօղ շինէ.  
Թօղ շինէ, թօղ հանէ պանտիցը:

— Մադիս մադնին չի՛մ ձախի,  
Հինք հարուր կրօշ ալ չի՛մ շինի,  
Չի՛մ շինիլ, ախպանս, չի՛մ շինի.  
Չի՛մ հանի պանտիցը:

— Կնացէք, ասէք քրօշս,  
Ցէոքի արքջանը թօղ հանէ,  
Հինք հարուր կրօշ ալ թօղ շինէ.  
Թօղ շինէ, թօղ հանէ պանտիցը:

— Ցէոքիս արքջանը չի՛մ հանի,  
Հինք հարուր կրօշ ալ չի՛մ շինի,  
Չի՛մ շինիլ, ախպանս, չի՛մ շինի.  
Չի՛մ շինի, չի՛մ հանի պանտիցը:

453 Էլ (թուրք.) – օտար:

454 Սէֆիլ (թուրք.) – խէղճ:

455 Շիվար (թուրք.) – մոլորված:

456 Կրոշ (ռուս.) – արժույթի տեսակ:

— Կասցէք, ասէք սիրեգանիս,  
Վիզի մէղայօնը թող ձախէ,  
Հինք հարուր կրօշ ալ թող շինէ.  
Թող շինէ, թող հանէ պանտիցը:

— Վիզիս մէղայօնը գրճախիմ,  
Հինք հարուր կրօշ ալ գրշինիմ,  
Գրշինիմ, սիրեգանս, գրշինիմ.  
Գրշինիմ, գրհանիմ քէգ պանտիցը:

### 3 (43).

#### ՈՒՆԱՆԸ

Սէլն էգալ Ոննանին դարալ,  
Ոննանին հարը լալէն մնաց:  
– Մի՛ լալ, բարսւ՛, մի՛ լալ, բարսւ՛.  
Աս իմ քաշաճս քօ մէխքն է:

Սէլն էգալ Ոննանին դարալ,  
Ոննանին մարը լալէն մնաց:  
– Մի՛ լալ, մամսւ՛, մի՛ լալ մամսւ՛,  
Աս իմ քաշաճս քօ մէխքն է.  
Օրին մէգ օրը հաց գէփէիր,  
Ախրար գոկար՝ հաց չէր դայիր:

Սէլն էգալ Ոննանին դարալ,  
Ոննանին աղան լալէն մնաց:  
– Մի՛ լալ, աղսւ՛, մի՛ լալ, աղսւ՛,  
Աս իմ քաշաճս քօ մէխքն է.  
Օրին մէգ, օրը դաշուլ գանէիր,  
Խալիսին<sup>457</sup> քուլթան<sup>458</sup> գրկօղնայիր:

Սէլն էգալ Ոննանին դարալ,  
Ոննանին յանգան<sup>459</sup> լալէն մնաց:  
– Մի՛ լալ, յանգսւ՛, մի՛ լալ, յանգսւ՛.  
Աս իմ քաշաճս քօ մէխքն է.  
Օրին մէգ օրը իսապ գրլայիր<sup>460</sup>,  
Գարթիր գէսը չոր գրհասունէիր:

457 Խալիս (թուրք.) – չքավոր ժողովուրդ:

458 Բուլթա (թուրք.) – ունեցվածք:

459 Յանգա (թուրք.) – հորեղբորկին:

460 Խապ լալ – խաբէլ:

### III.

## ԱՍՈՒՅԹԱՅԻՆ ԲԱՆԱՅՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ

### 1. ԱՌԱՃՆԵՐ, ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ

1 (44).

Ալայ գլօրը խնցօր չի լա:

2 (45).

Աղէգ լօխման<sup>461</sup> պէրանն է:

3 (46).

Ամէն մաշթ՝ քուն, գէնջ<sup>462</sup> հարսը՝ արթուն:

4 (47).

Այուվը խարիբը<sup>463</sup> գըխաղցունէ, թաքախը<sup>464</sup> գէնգիւնը գըբողցնէ:

5 (48).

Անամօթին էրէսը թուքիլ ին, թաթավ<sup>465</sup> գուկա ասիլ է:

6 (49).

Անցուգը մօոցուգ է:

7 (50).

Անուշ լէգուն օցը ձագէն գըհանէ:

8 (51).

Աշխարիը մաշթ չէղած քէնը խօրօզին թաքավօր արիլ ին:

9 (52).

Աչքօլ նայէ, փէշօլ ձաձգէ:

10 (53).

Ասիս՝ գէշ գըլլաս, չասիս՝ էշ գըլլաս:

11 (54).

Բասը գէրավ վաշթաբէղը, ջէրմէն<sup>466</sup> քաշէց Հայրաբէղը:

---

461 Լօխմա (թուրք.) – պատառ:

462 Գէնջ (թուրք.) – երիտասարդ:

463 Խարիբ (թուրք.) – պանդուխտ:

464 Թաքախ (թուրք.) – 1. ափսե, 2. դրամի աման:

465 Թաթավ (թուրք.) – անձրև:

466 Ջէրմա (թուրք.) – վնաս:

12 (55).

Բարոսքը՝ դալեն, մեղքը՝ լալեն:

13 (56).

Գաշիէտ յէլ, խօսքէտ մի՛ յէլար:

14 (57).

Գօվին գօվգիթ գըվայլի, չէ քի էգէր<sup>467</sup>, մէր ախշիգնէրուն ալ՝  
փէսա չէ՝ քավալէր:

15 (58).

Դունին հէսարը, բազարը չի լալ:

16 (59).

Ջէնահաթը<sup>468</sup> օսգէ արոջան է:

17 (60).

Էրգիսքէն փնդոսաճը գէղինէն կդավ:

18 (61).

Էրգու խօյանի<sup>469</sup> էղէվէն վագօղը մէգ հաստ ալ չի պոնիլ:

19 (62).

Թէգ<sup>470</sup> պաննալ, շուդ տառնալ:

20 (63).

Թիլքին<sup>471</sup> իրէն բօշը վգա պէրիլ է:

21 (64).

Ինչ սխոթօր գէրիլ իմ, վօր պէրանս գօգճի:

22 (65).

Լիզուն առանց օսգօտ է, ամա մաշթուն մէշքը գըգօղրէ:

23 (66).

Խափօղին դունը գրագ ընգիլ է՝ հավաղացած չին:

24 (67).

Խէլքիդ նստիմ Դայղան<sup>472</sup> էշթամ:

---

467 Էգէր (թուրք.) – թամբ:

468 Ջէնահաթ (թուրք.) – արիեստ:

469 Խօյան (թուրք.) – նսպաստակ:

470 Թէգ (թուրք.) – շուտ:

471 Թիլքի (թուրք.) – աղվես:

472 Դայղան (թուրք.) – Տագանրոզ քաղաք:



25 (68).

Խամէթ լա նէ՝ Հինդէն գուկա, չըլլա նէ՝ ցեռքէն գէշթա:

26 (69).

Խօսքը պերանտ է՝ քուգըտ է, պերանէդ էլավ՝ քուգըտ չէ:

27 (70).

Կինին գըհնդրին համօվ, ախշիգը՝ նամօվ<sup>473</sup>:

28 (71).

Կօրձը քէզմէն թօղ վախնա. տուն կօրձէն մի՛ վախնար:

29 (72).

Հնդստան օնգուգ գօղրվի նէ, ան՝ մէչէն գէլլէ:

30 (73).

Մաշթը մաշթու երէսը գընայի, ասդվաձ՝ մաշթու սիրդը գընայի:

31 (74).

Մաշթուն խէլքը բէշիգէն<sup>474</sup> բէլլի գըլլա:

32 (75).

Մաշթուն խէվոթյունը հազար չէշիդ գըլլա:

33 (76).

Մի՛ արդօրալ<sup>475</sup>, խալխին խնդայք մի՛ լալ:

34 (77).

Յէն ժամէն գուկամ, ան ինձի «Օղօրմի ասդվաձ» գասէ:

35 (78).

Յուպկադ<sup>476</sup> սօր քէնէն բահբանէ, նամուդ՝ եաշ<sup>477</sup> քէնէն:

36 (79).

Շիդագ խաբէրը<sup>478</sup> դղէն գը լիսիս:

37 (80).

Չամուտէն<sup>479</sup> էլավ, բաթխախը<sup>480</sup> մդավ:

---

473 Նամ (թուրք.) – 1. անուն, 2. նամուս:

474 Բէշիգ (թուրք.) – օրորոց:

475 Արդօրալ – շտապել:

476 Յուպկա (ռուս.) – փեշ, կիսաշրջագետս:

477 Եաշ (թուրք.) – վաղ:

478 Խաբէր (թուրք.) – լուր:

479 Չամուտ (թուրք.) – ցելս:

480 Բաթխախ, բաթախ (թուրք.) – ճահիճ:

38 (81).

Չօքանը<sup>481</sup> շաղ լա նէ, օչխարը բաշթախ<sup>482</sup> գըմնա:

39 (82).

Պանը՝ պանէլօվ, ջամփան՝ քալէլօվ:

40 (83).

Պանը պանօղին՝ շաղ պան, բարար բառգօղին՝ շուք շաղ:

41 (84).

Պանօղ ցէռքը չի մուրալ:

42 (85).

Պէրանը կապէկօվ գըպացվի, մանէթօվ չի գօցվիր:

43 (86).

Պէրանտ պացաձէդ՝ աչքտ պաց:

44 (87).

Ջէյմագ ցէռքը ուրըշի աշխատանքը գըսիրէ:

45 (88).

Սէրը պէրօղը լէգուն է, սէրը դանօղն ալ լէգուն է:

46 (89).

Սիրդօվ դվաձը, ցէռքօվ դվաձէն վէր է:

47 (90).

Սօխին անուշը չի լալ:

48 (91).

Սունգուն<sup>483</sup> չուվալը<sup>484</sup> չի մըդնի:

49 (92).

Սուդ խէվ գըլլա, վանքին հավէրը գուդէ:

50 (93).

Սուդին ջամփան էրգան չի լալ:

---

481 Չօքան (թուրք.) – հովիվ:

482 Բաշթախ (թուրք.) – անտեր:

483 Սունգու (թուրք.) – նիզակ:

484 Չուվալ (թուրք.) – տուպրակ:

51 (94).

Մղագ վաստրգիլը քիչ է, ան խարջելն<sup>485</sup> է մարիֆէթը:

52 (95).

Մղագը վաստգողին խելքը՝ մեզ, թօփ անօղինը՝ դասնըմեզ:

53 (96).

Վդէդ ընգնելըտ քիդնասս նը՝ դագտ գագօղ գանէս:

54 (97).

Տանագի եարան աղէգ գըլլա, լուգուին եարան աղէգ չի՛ լալ:

55 (98).

Ցին ջանցըցիր քայլվածքէն, ախչիգը՝ նայվածքէն:

56 (99).

Ցօրէգը ջանջի վրա չի գօխիլ, կշէրը՝ մաշթ գըսքանի:

57 (100).

Ոնիս՝ տուն իս, չունիս՝ շուն իս:

58 (101).

Փօրձանքը խաբէր չի՛ անիլ:

59 (102).

Քէզի չի գամեցածը ուրիշին ալ մի՛ գամէնար:

60 (103).

Քօռ խուշին<sup>486</sup> պանը Ասդվաճ գըլսօշթէ:

61 (104).

Օցը գաշին գը փօխէ, մաշթը պնութքը չի՛ փօխիլ:

62 (105).

Օքսուզին խրադ դվօղ շադ գըլլա:

---

485 Խարջել (թուրք.) – ծախսել:

486 Խուշ (թուրք.) – թռչուն:

## 2. ՕՐՅՆԱՆՔՆԵՐ

- 1 (106).  
Անթառամ բսակի արժան ըլլաս:
- 2 (107).  
Ասդդտ բայճատ թօղ ըլլա:
- 3 (108).  
Ասդվաճ պանդ հաջօղէ:
- 4 (109).  
Ասդվաճ քէզի յարդըմջի<sup>487</sup> լա:
- 5 (110).  
Արէվտ չխավարի:
- 6 (111).  
Հայր Աբրահամի բերէքէթը մէջը ըլլա:
- 7 (112).  
Հէլալ գաթ ձրձօղ ըլլիս:
- 8 (113).  
Ձլիս ու ձաղգիս:
- 9 (114).  
Շաղ արբիս, շաղ խնդաս:
- 10 (115).  
Շէն գէնաս, խունդունըղ շաղ ըլլա:
- 11 (116).  
Ֆօղ պոնիս՝ օսգի տառնա:

---

487 Յարդըմջի (թուրք.) – օգնական:

### 3. ԱՆԵՃՔՆԵՐ

- 1 (117).  
Ասոլվաճ անէ տատաստանտ:
- 2 (118).  
Գաղղիս՝ միստ ուղիս:
- 3 (119).  
Գղբըվի<sup>488</sup> չանգատ<sup>489</sup>:
- 4 (120).  
Կրօղին դագը էշթաս:
- 5 (121).  
Ջավագէտ չխնդաս:
- 6 (122).  
Լէգուղ բերանիտ մէշը բաբընձի:
- 7 (123).  
Խե՛վասս՝ իսէվ բադէրը իյնաս:
- 8 (124).  
Խունդումի էրէս չըղէննուս:
- 9 (125).  
Մուրադտ փօրղ մնաս:
- 10 (126).  
Շունի, կալի գէր ըլլաս:
- 11 (127).  
Չգիղնասս քալան ջամփատ:
- 12 (128).  
Փառաքէսէք ըլլաս<sup>490</sup>:
- 13 (129).  
Քիթէտ էլլէ գէրածտ:

---

488 Գղբըվէլ – կողպվէլ:

489 Չանգա (թուրք.) – կգակ:

490 Փառաքէսէք (թուրք.) ըլլալ – կտոր-կտոր լինել:

#### 4. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1 (130).

Չօրս քօշա քուրսի,  
Մէջը իլինք օսգի,  
Ինսամինէրը գրկան խօսքի:  
(Յէկէդէցի)

2 (131).

Չօրս ախպար քարքաղ գըպոնին,  
Չօրս հադը գըպոնին.  
Հինկումը մէջէրը գըբըդըդի:  
(Կուլբա կօրծէլու շյուդէր)

3 (132).

Ալալօս, փալալօս,  
Ցադգըդան Մարգօս:  
(Լու)

4 (133).

Չադ-չուդ գանէ,  
Իսամէրէէն<sup>491</sup> տուրս գըլնի:  
(Չափութ<sup>492</sup>)

5 (134).

Չօրս ախպար բալչըլ<sup>493</sup> գըշադվին,  
Էրգու հադն ալ ասձուն գաղաչին,  
Մէգ հադն ալ ջանջ գըփախ տա:  
(Յէգ)

6 (135).

Ինքը կէր,  
Յէդ չունի:  
(Բարձ)

7 (136).

Մէգ բնագ դուգու ունիմ,  
Չի կդնօղին ինչ ապիմ:  
(Թուգ)

---

491 Իսամէրէ, կամերա (ռուս.) – սենյակ, խուց:

492 Չափութ (թուրք.) – բոված եգիպտացորեն:

493 Բալչըլ (թուրք.) – ցել:

8 (137).

Էրզանը՝ աչքը քօռ,  
Գնզանը՝ էրէսը չուրար<sup>494</sup>:  
(Ասէդ, օյնախ<sup>495</sup>)

9 (138).

Դագը կօց, վրան կօց,  
Գէլլէ գըզանչէ մէռէլօց:  
(Խօրօզ<sup>496</sup>)

10 (139).

Մութը դուն, մութը դուն,  
Հօնօմ բարին մէջը քուն:  
(Լէգու)

11 (140).

Կնա կդիր,  
Մէջը մդիր:  
(Անգօղին)

12 (141).

Վէց ախպար՝ վրան խադա,  
Ինքն ալ՝ լաց ըլլա:  
(Զոռնսա)

13 (142).

Ժէք օդքօվ, վէց աչքօվ,  
Հօքի չունի, գըքալէ:  
(Նալ<sup>497</sup>)

14 (143).

Ճընգըլ աման,  
Խուրմաշի թավա:  
(Մամացույց)

15 (144).

---

494 Չուրար – խայտաբղետ:

495 Օյնախ (թուրք.) – մատնոց:

496 Խօրօզ (թուրք.) – աքլոր:

497 Նալ (թուրք.) – Պայտ:

Էրզան աղէք,  
Ձարը՝ ձաղէգ:  
(*Լամնպի պարտրոյգ*)

16 (145).

Ցէոք, վօոք չունի՝  
Գընգարէ:  
(*Մառոյց*)

17 (146).

Էրզան կամ, Էրզան կամ,  
Նսդիմ վրէն, Էշթամ կամ:  
(*Մալնջախ*<sup>498</sup>)

18 (147).

Մէթէ<sup>499</sup> մէթէյի վրա,  
Մէթէ մէթէյի վրա,  
Էնգը թէփէն՝  
Կալի բօջ:  
(*Իսամիշ*<sup>500</sup>)

19 (148).

Սըմուլա է, սըմուլա է,  
Սըմուլայը ինչ գանէ,  
Լօրիա չի սիրիլ,  
Ջէթունը<sup>501</sup> գէնէ անբէս.  
Թահին<sup>502</sup> հալվան աշխանք է,  
Կտակին թէփէն<sup>503</sup> բուղ-բուղ է,  
Օրը դաս կապէկի<sup>504</sup> գուղ գուղէ:  
(*Մայմուն*<sup>505</sup>)

20 (149).

---

498 Մալնջախ (թուրք.) – օրորոց:

499 Մէթէ (թուրք.) – տակառ:

500 Իսամիշ (թուրք.) – եղեգն:

501 Ջէթուն (թուրք.) – ձիթապտուղ:

502 Թահին (թուրք.) – ծեծած, ձեթը չքամած կտավատ:

503 Թէփէ (թուրք.) – գագաթ:

504 Կապէկ – կոպէկ բառի աղավաղված ձևն է:

505 Մայմուն (թուրք.) – կապիկ:



Վօղ չունի, գըվազէ,  
Իսանադ<sup>506</sup> չունի, գըթոչի:  
(Ամս)

21 (150).

Մէգ հադ ակսչիգ ունիմ  
Էրգան բօյօլ,  
Մէգ հադ ակսչիգ ալ ունիմ  
Գարջ բօյօլ, չուբար<sup>507</sup> էրէսօլ:  
(Ասէդ, օյմնախ<sup>508</sup>)

22 (151).

Քիրմանի կտագ,  
Թէփէն ձագ:  
(Ֆէնար<sup>509</sup>)

23 (152).

Իսաթ, խաթ, խաթլամա<sup>510</sup>,  
Օշթան<sup>511</sup> մէգ հադ դայամա<sup>512</sup>:  
(Լահանա<sup>513</sup>)

24 (153).

Հօս դիդիգ, հօն դիդիգ,  
Տուոին դագը՝ դիդիգ:  
(Ավէլ)

---

506 Իսանադ (թուրք.) – թև:

507 Չուբար (թուրք.) – ծաղկատար, խայտաբղետ:

508 Օյմնախ (թուրք.) – մատոնց:

509 Ֆէնար (թուրք.) – լամպ:

510 Խաթլամա – շերտավոր թխվածք:

511 Օշթա, օրթա (թուրք.) – մեջտեղ:

512 Դայամա (թուրք.) – գավազան, հենարան:

513 Լահանա (թուրք.) – կաղամբ:

## 5. ԱՂՈԹՔՆԵՐ

1 (154).

ՉԱՐ ՆԱՖԱՍԻ<sup>514</sup> ԱՂՈԹՔ

Էլա մօրին<sup>515</sup> կնացի,  
Գացինը ծէոս պոնսաձ,  
Անդէդ մէգ մէձ ձառ մը գար,  
Էնօր մէչը պուն մը գար,  
Պունին մէչը մէձ օց մը գար,  
Օցը պոնէցի, առանց տանագ մօշթէցի,  
Առանց գրագ էփէցի,  
Առանց պէրան գէրցուցի,  
Թէդէ՛, նէխէ՛ թափան կլխից.  
Գդրիս չար յլանջըխը<sup>516</sup>,  
Գդրին չար աչքը, չար նագարը<sup>517</sup>,  
Սէվ օց, չուբար<sup>518</sup> օց, տէղին օց,  
Թէդէ՛, նէխէ՛, թափան կլխից.  
Գդրին չար աչքը, գդրիս չար նէֆէտը.  
Իմ ծէոս չըլլա, իմ պէրանս չըլլա,  
Ասվաձամօր պէրանը ըլլա:

2 (155).

ՉԱՐ ԱՉՔԻ ԱՂՈԹՔ

Թարսը թուրսը ձօվ ասէս.  
Ավէր ճաղացք,  
Հանդիպիլ է անհուն ցավի,  
Ան գուլա, ան գօղպա,  
Կնացէք պէրէք սուր մգրադը,  
Գդրէցէք անօր չար աչքը, չար նագարը,  
Իմիս ծէոքս չըլլա.  
Հէքիմ սուփ Աքսէնտի ծէոքն ըլլա,  
Աս ձառայիս պժշկութիւն ըլլա:  
(Մգրադը ժէք հադ պօլին<sup>519</sup> գրդիէն)

514 Նաֆար, նէֆէս (թուրք.) – շունչ:

515 Մօրի (թուրք.) – անտառ:

516 Յլանջըխ (թուրք.) – բանասարկություն, թուրքերեն «յըլան»՝ օձ բառից:

517 Նագար (թուրք.) – չար աչք:

518 Չուբար (թուրք.) – ծաղկատար:

519 Պօլ (ռուս.) – հատակ:

3 (156).

**ՉԱՐ ՆԱԶԱՐԻ ԱՂՕԹՔ**

Մայրիկ Մարիամ ո՞ր գերթաս,  
Կոռալէն գօծգրողալէն,  
Ա՛ն սէվ գօթ տանագը,  
Մի՞ի՛ր Ադամա տրախտը,  
Գդրէ՛ չա՛ր աչքը,  
Գդրէ՛ չա՛ր նագարը.  
Պժշկէ՛ վօրին գաղօթիմ նը:

4 (157).

**ԹՈՒՆԱՎՕՐԿԱՁԻ ԱՂՕԹՔ**

Մէվ օցը գթէցինք,  
Առանց մագարթ մագրթէցինք.  
Մայրը գերավ՝ ճաթէցավ,  
Տուստըրը գերավ՝ բայթէցավ.  
Մայրամը գերավ՝ ազադէցսւվ:

5 (158).

**ՀԻՎԱՆՏԻ ԱՂՕԹՔ**

Անանիա՛, Անանիա՛ գանչէցի,  
Անանիան չուրն ինգավ,  
Չուրին մէչը ձառ մը գար,  
Ձառին վրա օց մը գար,  
Օցին առանց տանագ մօշթէցի,  
Աս հիվանտիս էփէցի, ուղէցուցի:  
*(Իդա աղօթքը գասիս,  
լուցգին գըքցիս չուրին մէչը)*

6 (159).

**ՎԱԽՆՈՐ ՉԱՓԵԼՈՒ ԱՂՕԹՔ**

Հավը՛ թառ,  
Չիրախը<sup>520</sup>՝ վառ,  
Լէրթը՛ դէղը,  
Սիրդը՛ դէղը:

7 (160).

ԱՂՕԹՔ ԱՄԴԱՁԱՄՕՐԸ

Աստվածամանր, մէղսն քեզ,  
Օրհնած չրօվ լվան մեզ,  
Սուրփի աղօթքօվ սրփե՛ մեզ,  
Ամէնայն չարէն փրգե՛ մեզ:  
Ամէն:

8 (161).

ՆՕՐԱԼՈՒԲՆԻ ԱԶՔԱԼՈՒԲԱՆՔ

— Նօր լուսին, նօր շնավօր,  
Իմ ախապարս նօր թաքավօր,  
Ձեր կնացիր, գէնջ<sup>521</sup> էկար.  
Ինձ ինչ պէրիր արմաղան<sup>522</sup>:  
*Լուսին*. — Յէրէսիտ՝ քիսպէտ<sup>523</sup>,  
Սրդիտ՝ սուն<sup>524</sup>,  
Յէռնիտ՝ բերէքէթ<sup>525</sup>:

---

521 Գէնջ (թուրք.) – մատաղահասակ:

522 Արմաղան (թուրք.) – նվեր, ընծա:

523 Քիսպէտ (թուրք.) – շնորհք:

524 Սուն (թուրք.) – սնունդ:

525 Բերէքէթ (թուրք.) – օրհնություն, առատություն:

**ՓԱՍՏԱԳՐՈՒՄ**  
**ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԲԱՆԱՍԱՑՆԵՐԻ**  
**ԵՎ**  
**ՆՐԱՆՑ ՀԱՂՈՐԴԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ**  
**(1959 թ.)**

Հ/հ	Բանասացի անուն-ազգանունը	Ծննդյան տարեթիվը և վայրը	Գրառման վայրը
<b>I.</b>			
<b>ՎԻՊԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ</b>			
<b>1. ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐ</b>			
1 (1).	Գեղեցիկ Ծյայայան	1887 թ., գ. Չալթըրը	գ. Չալթըրը
2 (2).	Հայկ Սողոմոնյան	1899 թ., գ. Լենինավան	գ. Լենինավան
3 (3).	Շահեն Շահիյան	1928 թ., գ. Չալթըրը	գ. Չալթըրը
<b>2. ԻՐԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐ</b>			
1 (4).	Հայկ Սողոմոնյան	1899 թ., գ. Լենինավան	գ. Լենինավան
2 (5).	Հայկ Սողոմոնյան	1899 թ., գ. Լենինավան	գ. Լենինավան
3 (6).	Մանվել Սողոմոնյան	1886 թ., գ. Թոփթի	գ. Թոփթի
4 (7).	Մանվել Սողոմոնյան	1886 թ., գ. Թոփթի	գ. Թոփթի
5 (8).	Մանվել Սողոմոնյան	1886 թ., գ. Թոփթի	գ. Թոփթի
6 (9).	Լուսեղեն Գյուրջյան	1884 թ., գ. Մեծ Սալա	գ. Սուլթան Սալա
7 (10).	Ղազարոս Խաչգինանյան	1893 թ., գ. Թոփթի	գ. Թոփթի
8 (11).	Եվգինե Չոբանյան	1922 թ., գ. Չալթըրը	գ. Չալթըրը
9 (12).	Անուշ Բարաշյան	1878 թ., Մեծ Սալա	գ. Մեծ Սալա
<b>II.</b>			
<b>ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ</b>			
<b>1. ՄԱՆԿԱՆԱՂԱՅԻ ԵՐԳԵՐ</b>			
1 (13).	Խասրիքա Մալխասյան	1893 թ., գ. Չալթըրը	գ. Մեծ Սալա
2 (14).	Խասրիքա Մալխասյան	1893 թ., գ. Չալթըրը	գ. Մեծ Սալա
<b>2. ՍԻՐԱՅԻՆ ԵՐԳԵՐ</b>			
1 (15).	Գեղեցիկ Ծյայայան	1887 թ., գ. Չալթըրը	գ. Չալթըրը
2 (16).	Հայկ Սողոմոնյան	1899 թ., գ. Լենինավան	գ. Լենինավան

3 (17).	Ռուբեն Լուկեջյան	1900 թ., գ. Չալթըր	գ. Չալթըր
4 (18).	Լուսեղեն Գյուրջյան	1884 թ., գ. Մեծ Սալա	գ. Մեծ Սալա
5 (19).	Մանվել Սողոմոնյան	1886 թ., գ. Թովթի	գ. Թովթի
<b>3. ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ</b>			
1 (20).	Գեղեցիկ Ծխայայան	1887 թ., գ. Չալթըր	գ. Չալթըր
2 (21).	Գեղեցիկ Ծխայայան	1887 թ., գ. Չալթըր	գ. Չալթըր
3 (22).	Մանվել Սողոմոնյան	1886 թ., գ. Թովթի	գ. Թովթի
4 (23).	Մանվել Սողոմոնյան	1886 թ., գ. Թովթի	գ. Թովթի
5 (24).	Եղիա Թորփուջյան	1881 թ., գ. Չալթըր	գ. Չալթըր
6 (25).	Մանվել Սողոմոնյան	1886 թ., գ. Թովթի	գ. Թովթի
<b>4. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՐԳԵՐ</b>			
1 (26).	Գեղեցիկ Ծխայայան	1887 թ., գ. Չալթըր	գ. Չալթըր
2 (27).	Գեղեցիկ Ծխայայան	1887 թ., գ. Չալթըր	գ. Չալթըր
3 (28).	Լուսեղեն Գյուրջյան	1884 թ., գ. Մեծ Սալա	գ. Մեծ Սալա
4 (29).	Ղազարոս Խաչգինանյան	1893 թ., գ. Թովթի	գ. Թովթի
5 (30).	Գեղեցիկ Ծխայայան	1887 թ., գ. Չալթըր	գ. Չալթըր
6 (31).	Ղազարոս Խաչգինանյան	1893 թ., գ. Թովթի	գ. Թովթի
7 (32).	Ղազարոս Խաչգինանյան	1893 թ., գ. Թովթի	գ. Թովթի
8 (33).	Շահեն Շահիյան	1928 թ., գ. Չալթըր	գ. Չալթըր
9 (34).	Շահեն Շահիյան	1928 թ., գ. Չալթըր	գ. Չալթըր
<b>5. ՎԻՃԱԿԻ ԵՐԳԵՐ</b>			
1 (35).	Խասրիքա Մալխասյան	1893 թ., գ. Չալթըր	գ. Մեծ Սալա
2 (36).	Խասրիքա Մալխասյան	1893 թ., գ. Չալթըր	գ. Մեծ Սալա
3 (37).	Խասրիքա Մալխասյան	1893 թ., գ. Չալթըր	գ. Մեծ Սալա
<b>6. ԶԻՆՎՈՐԻ ԵՐԳԵՐ</b>			
1 (38).	Շահեն Շահիյան	1928 թ., գ. Չալթըր	գ. Չալթըր
2 (39).	Շահեն Շահիյան	1928 թ., գ. Չալթըր	գ. Չալթըր
3 (40).	Հայկ Սողոմոնյան	1899 թ., գ. Լենինսկական	գ. Լենինսկական
<b>7. ՎԻՊԱԿԱՆ ԵՐԳԵՐ</b>			
1 (41).	Գեղեցիկ Ծխայայան	1887 թ., գ. Չալթըր	գ. Չալթըր
2 (42).	Աստղիկ Լուկեջյան	1922 թ., գ. Չալթըր	գ. Չալթըր


3 (43).	Շահեն Շահինյան	1928 թ., գ. Չալթըր	գ. Չալթըր
<b>III.</b>			
<b>ԱՍՈՒՅԹ-ԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ</b>			
<b>1. ԱՌԱԾՆԵՐ, ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ</b>			
1 (44) – 62 (105).	Մկրտիչ Լուլեջյան Շահեն Շահինյան	1921 թ., գ. Չալթըր 1928 թ., գ. Չալթըր	գ. Չալթըր գ. Չալթըր
<b>2. ՕՐՀՆԱՆՔՆԵՐ</b>			
1 (106) – 11 (116).	Մկրտիչ Լուլեջյան Շահեն Շահինյան	1921 թ., գ. Չալթըր 1928 թ., գ. Չալթըր	գ. Չալթըր գ. Չալթըր
<b>3. ԱՆԵԾՔՆԵՐ</b>			
1 (117) – 3 (129).	Եվգինե Չոբանյան	1922 թ., գ. Չալթըր	գ. Չալթըր
<b>4. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ</b>			
1 (130) – 24 (153).	Գեղեցիկ Ծիսայան Հայկ Սողոմոնյան Լուսեղեն Գյուրջյան	1887 թ., գ. Չալթըր 1899 թ., գ. Լենինապան 1884 թ., գ. Մեծ Սալա	գ. Չալթըր գ. Լենինապան գ. Մեծ Սալա
<b>5. ԱՂՈԹՔՆԵՐ</b>			
1 (154).	Եվգինե Չոբանյան	1922 թ., գ. Չալթըր	գ. Չալթըր
2 (155).	Թագուհի Թորփուջյան	1881 թ., գ. Չալթըր	գ. Մեծ Սալա
3 (156).	Անուշ Բարաշյան	1878 թ., գ. Մեծ Սալա	գ. Մեծ Սալա
4 (157).	Անուշ Բարաշյան	1878 թ., գ. Մեծ Սալա	գ. Մեծ Սալա
5 (158).	Խասաբիքա Մալխասյան	1893 թ., գ. Չալթըր	գ. Մեծ Սալա
6 (159).	Խասաբիքա Մալխասյան	1893 թ., գ. Չալթըր	գ. Մեծ Սալա
7 (160).	Խասաբիքա Մալխասյան	1893 թ., գ. Չալթըր	գ. Մեծ Սալա
8 (161).	Խասաբիքա Մալխասյան	1893 թ., գ. Չալթըր	գ. Մեծ Սալա





ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ  
ՓՕՏՕ  
PHOTOS

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆ  
НОВЫЙ НАХИЧЕВАНЬ  
NOR-NAKHIDJEVAN



Նոր Նախիջևանի զինանշանը  
Герб Новой Нахичевани  
The coat of arms of Nor-Nakhidjevan



Նոր Նախիջևանի հայկական Սր. Խաչ եկեղեցին  
Армянская церковь Св. Креста в Новой Нахичевани  
Holy Cross Armenian Church of Nor-Nakhidjevan



*Նոր Նախիջևանի հայկական Սր. Կարապետ եկեղեցին  
Армянская церковь Св. Карапета в Новой Нахичевани  
St. Karapet Armenian Church of Nor-Nakhidjevan*



*Նոր Նախիջևանի հայկական Սր. Հարության եկեղեցին  
Армянская церковь Св. Воскрешения в Новой Нахичевани  
St. Resurrection Armenian Church of Nor-Nakhidjevan*

ԱՐՑԱԽ (ՂԱՐԱԲԱԳ)  
АРЦАХ (КАРАБАХ)  
ARTSAKH (KARABAGH)



Արցախցի (Ղարաբաղ) կին  
Арцахская (Карабах) женщина  
Woman from Artsakh (Karabagh)




Արցախցի (Ղարաբաղ) կին (Հայաստանի պատմության թանգարանի ֆոնդ)  
Арцахская (Карабах) женщина (Фонд Музея истории Армении)  
Woman from Artsakh (Karabagh) (Fund of the History Museum of Armenia)

ՆՇԽԱՐՆԵՐ  
ՊՅԱՏԻԳՈՐՍԿ ԳԱՂԹԱԾ  
ԱՐՑԱԽԻ ՀԱՅԵՐԻ  
ԲԱՆԱՎՈՐ ԱՎԱՆԴՈՒՅԹԻ

# ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

## ՊԱՏՄԱԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ



### I.

#### ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

1964 թվականի ամռանը, ժամանելով Պյատիգորսկ, ես հետաքրքրվեցի և տեղեկացա, որ այնտեղ առանձին թաղամասում ապրում են Ղարաբաղից (Արցախ) գաղթած հայեր: Այդ տարիներին Ղարաբաղը մեզ՝ հայագետ-մտավորականներին, համար անմատչելի էր: Ազերիները հայ հնագետներին թույլ չէին տալիս գնալ այնտեղ և պեղումներ կատարել, քանի որ նրանք սարսափում էին, որ 1921թ. իրենց շնորհված այդ չքնաղ երկրամասի բնիկ հայկական լինելը վկայող բազում և անհերքելի փաստեր կհայտնաբերվեն:

Իսկ ինձ՝ որպես բանագետ-ազգագրագետի, հետաքրքրում էր, թե նրանք նրբ և որտեղից են գաղթել Պյատիգորսկ, տեղաբնիկների հետ համակեցության պայմաններում էթնոմշակութային ինչ փոփոխություններ են կրել, և, որ ամենակարևորն է, արդյո՞ք հոգեհարազատ են մնացել իրենց բնօրրանի ավանդույթներին և այլն:

Պյատիգորսկ քաղաքի առանձին թաղամասում բնակվող հայ համայնքի ներկայացուցիչներից առաջինն իմ ուշադրությունը գրավեցին տնակների առջև նստած արցախցի հայ տարեց կանայք՝ իլիկը ձեռքներին: Նրանք բուրդ էին մանում, որպեսզի, ըստ իրենց բնօրրանի ավանդույթի, գունազարդ, գեղեցիկ գորգեր գործեն: Նրանք Ղարաբաղի ինքնատիպ տարազով էին՝ հատկապես, սևի ու կանաչի, նաև սևի ու մանուշակագույնի ներդաշնակ համադրությամբ: Նրանց ճակատնոցները զարդարված էին արծաթյա դրամներով, իսկ «*հալավի*»՝ շապիկի և «*դարայի*»՝ վերնազգեստի թևերի եզրերին ազուցված էին արծաթյա զարդանախշերի ձևավոր բոժոժներ: Այդ մեծահասակ կանայք իրենց մեջքերին կրում էին արծաթյա «*կյուրե*»՝ գոտի, որն էլ մշտապես ձիգ էր պահում նույնիսկ զառամյալ կանանց կեցվածքը: Առաջին իսկ տպավորությունս

գրավիչ էր և հուսադրող: Ես մտածում էի, որ արտաքննապես բնօրրանի տեղային երանգը պահպանած այս կանայք, անշուշտ, իրենց հոգում և մտքում անթեղած պետք է լինեն նաև նախնիներից ավանդված հոգևոր արժեքները:

Մտերմիկ զրույցի ընթացքում պարզվեց, որ նրանցից շատերը Գանձակից ու Արցախից գաղթել էին տակավին 1905–1906 թթ.՝ թաթար-ազերիների ոտնձգությունների, ազգամիջյան բախումների պատճառով, իսկ հետագայում՝ 1921 թ., երբ Խորհրդային Միության ղեկավարությունը Նախիջևանն ու Ղարաբաղը բռնակցել էր Ադրբեյջանին, օրեցօր սկսել էր վատթարանալ հայերի վիճակը՝ տեղի տալով արտագաղթի նորանոր ալիքների: Թեպետ խորհրդային սահմանադրությամբ բացառվում էին ազգային խտրականության դրսևորումները, սակայն փաստն այն էր, որ ազերիների վարած հայատյաց քաղաքականության հետևանքով հետևողականորեն հայաթափվում էին Նախիջևանն ու Արցախը: Շատերն աշխատանք և ապահով կյանքի պայմաններ գտնելու հույսով գաղթում էին Բաքու, Մումգայիթ, ինչպես նաև՝ Ռուսաստան: Պյատիգորսկ քաղաքի մոտակայքում գտնվող, բարեկարգ և ակնահաճո հայկական այդ թաղամասը տեղաբնիկներն անվանում էին «Արմյանսկի Նյու Յորք» («Армянский Нью-Йорк») – Հայկական Նյու Յորք):

Պյատիգորսկում դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսին գոյություն է ունեցել հայկական համայնք, կառուցվել է Ս. Թարգմանչաց հայկական եկեղեցին: Հայ բնակչությունը հիմնականում զբաղվել է առևտրով:

Իսկ արդեն 20-րդ դարի երկրորդ կեսին՝ 1964 թ., երբ ես նրանց հետ ծանոթացա, արցախահայ գաղթականներն այնտեղ ապրում էին համեստ, բայց արժանապատիվ ու հայաշունչ կյանքով: Նրանք ապրում էին համախումբ, խուսափում էին խառնամուսնություններից, թեպետ արդեն նկատվում էին որոշ դեպքեր: Չնայած երեխաները հաճախում էին մոտակա ռուսական դպրոցը, բայց տան խոսակցական լեզուն շարունակում էր մնալ արցախի գորեղ բարբառը: Տղամարդիկ աշխատում էին տեղի գործարաններում կամ կոլտնտեսությունում, այդ պատճառով իմ բանասացները բացառապես ավագ սերնդի՝ 70–90 տարեկան տնային տնտեսուհիներն էին: Բացառություն էին կազմում երեքամյա *Մարգարիտա* և *Անժելա Ավագյանց* գույզ քույրերը, որոնք թոթովում էին Արցախի բարբառով:

## II.

### ՊՅԱՏԻԳՈՐՄԿԻ ԱՐՑԱԽՑԻ ԲԱՆԱՍԱՑՆԵՐԸ

Գիտարշավի 20 օրերի ընթացքում ծանոթացել և գրառումներ են կատարել (100 միավոր) ավագ սերնդի 12 *բանասացներից*, որոնց մասին բնութագրական հակիրճ տվյալներն ու նրանց հաղորդած նյութերի խոսքարվեստի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են՝ նշելով գրառման օրն ու վայրը:

Այժմ ներկայացնեն Ղարաբաղում (Արցախ) ծնված և Պյատիգորսկում բնակվող իմ տասներկու բանասացներին՝ իրենց բնութագրական հակիրճ տվյալներով:

**ԱՆՆԱ ԲԱԳԴԱՍԱՐՈՎՆԱ ԱԿՈՊՈՎԱ** (ծնվ. 1876թ.): Տառապած դեմքով, հյուծված ու վտիտ կառուցվածքով Աննա Բագդասարովսան կորաքամակ կին էր: Արդեն նա 88 տարեկան էր, երբ ես նրան հանդիպեցի Պյատիգորսկում: Դժվար է եղել նրա կյանքը: Ծնվել է Ղարաբաղում, 1905–1906 թթ. ազգամիջյան խլրտումների ժամանակ խույս է տվել ջարդարարներից և շատերի հետ գաղթել ու հաստատվել է Պյատիգորսկի մոտակայքում գտնվող հայկական թաղամասում, որը հետագայում կոչվել է «Армянский Нью-Йорк»: Նա այնտեղ կորցրել է ամուսնուն: Իր ութ երեխաներին խնամելու համար աշխատանքի է անցել հայոց եկեղեցում: Այնուհետև, նա աշխատել է գորգի արհեստանոցում, որտեղ աչքի է ընկել իր նուրբ ճաշակով ու վարպետությամբ: Չնայած կյանքի դժվարին պայմաններին, նրա ութ զավակները բարձրագույն կրթություն ունեին:

Աննա Ակոպովան շատ հեքիաթներ է իմացել, որոնք, ցավոք, մոռացել էր, բայց հիշածն իսկույն վերարտադրում էր, որպեսզի հայրենիքից եկած բանահավաքին, իր մշակած այգու պտուղները հյուրասիրելուց բացի, մատուցի նաև իր հոգու և մտքի հարստությունը: Նրա հաղորդած «Աննահական ճյուղը», «Իրեք ախպոր հեքիաթը», «Օխց տղան» հրաշապատում հեքիաթները գրեթե նույն համահայկական հեքիաթային մոտիվներն են: Ինքնակենսագրական բնույթ ունի նրա վերհիշած օրորոցայինը, որտեղ մայրը չքնող երեխային վախեցնում է դաժան Ջելիմ խանի կերպարով:

Աննա Ակոպովան վերհիշել է նաև իրենց բնօրրանում կատարված հարսանեկան ծեսի որոշ մանրամասներ, որոնք կատարել է իրենց երգային մեղեդիներով: Նա հաղորդել է նաև մի շարք պատկերավոր հնարքայր հանելուկներ և շուտասելուկներ: [10 *օգոստոսի*, 1964թ., Պյատիգորսկ]



**ՄԱՅԿՈ ՄԱՅՐԻԿ** (ծնվ. 1897 թ.): 67 տարեկան էր Մայկո մայրիկը. գիրուկ, կարմրաթշիկ ու կենսուրախ: Երգում էր, բայց աղավաղված մեղեդիով: Որդու մահը ծանր էր ազդել նրա վրա, հիշողությունը խաթարվել էր: Հազիվ կարողացել էմ գրանցել մանկությունից նրա հիշողության մեջ տպավորված աշխատանքային մի շարք երգեր. «Կալի երգը», ինչպես նաև ավելի ուշ շրջանի «Կոլխոզի երգը» և «Մոր բաղձանքը», որտեղ ասվում է.

*«Օնեմ մի բալա,  
Անունն է Արշակ,  
Նաչալնիկից՝ ծնի սրացած  
Մին մենծ մեղալ.  
Օգրմ՝ ըմ տեսունա  
Մենծ գեներալ»:*

*«Ունեմ մի տղա,  
Անունն է Արշակ,  
Ղեկավարից ստացել է  
Մի մեծ մեղալ.  
Ուզում եմ դառնա  
Մեծ գեներալ»:*

[12 *օգոստոսի, 1964 թ., Պյատրիգորսկ*]

**ՎԱՐՍԵՆԻԿ ԳՈՂՈՍՅԱՆ** (ծնվ. 1904 թ.): Նա 69 տարեկան է: Գաղթել է Հադրութի Վանք գյուղից: Նա շատ քչախոս, ամաչկոտ կին է, հազիվ պատմել է «Վրեթեսն<sup>2</sup> ու Մուկունը» (Միջատն ու Մուկը) խորիմաստ առակը և սահմանափակել իր ասելիքը: [14 *օգոստոսի, 1964 թ., Պյատրիգորսկ*]

**ԱՍՏՂԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** (ծնվ. 1904 թ.): 65 տարեկան, մարդամոտ և հյուրասեր այդ կինը պահել, մեծացրել և բարձրագույն կրթության էր տվել իր երեք որբ թոռներին, որոնք կորցրել էին իրենց ծնողներին և մնացել տատի խնամքին: Այնպես որ, նրա խելքն ու միտքը իր թոռների խնամքն էր ու նրանց ապագան:

Նա հաղորդել է մի շարք ավանդական խաղիկներ, որոնց թվում է նաև կտակ հիշեցնող իր ստեղծագործած քառյակը.

*«Զյեզ եմ տալիս իմ իրեք խոխան,  
Անմաշ պաղարկա եմ տալիս  
Ինձնից հիշատակ էր իրեք խոխան,  
Մաղթում եմ՝ նրանց բարը տու քաղիս»:*

*«Զեզ եմ տալիս իմ երեք տղաներին,  
Մնայուն նվեր եմ տալիս  
Ինձնից հիշատակ այս երեք տղաները,  
Մաղթում եմ նրանց պտուղը դու քաղես»:*

Նա հաղորդել է նաև «Ծիպրը ծառին փիփիկ արալ» ռուսերեն փոխառյալ բառերով շարահյուսված, բայց իր արմատներին հավատարիմ կատակերգը: [15 *օգոստոսի, 1964 թ., Պյատրիգորսկ*]

**ԱՐԵՎՀԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ** (ծնվ. 1905 թ.): 59 տարեկան է, ծնվել է Ղա-րաբաղում: Բնակվել է Բաքվում, ապա՝ Ղափանում: 1948 թվականից ապրում

1 Նաչալնիկ (ռուս.) – ղեկավար:

2 Վրեթես – ինքնապաշտպանվելու համար տհաճ հոտ արձակող միջատ:

է Պյատիգորսկում, ունի երկու տղա: Թոշակառու է: Պատմել է «Վրենթես մոքիրը» առակը և «Թաքավերի քյամբախար տղան ու հարսը» հեքիաթը, որտեղ չար ուժերը մարմնավորող կախարդ պատավր պահանջում է իրեն թաղել թագավորի վաղամեռիկ տղայի ու հարսի արանքում: Թագավորի տղայի շիրմին մանուշակ է բուսնում, հարսի վրա՝ վարդ, իսկ այդ երկուսի արանքում՝ փուշ, որը խանգարում և չի թողնում, որ նրանք միանան՝ թեկուզ հետմահու:

Ավելի իրատեսական է նրա պատմած «Անկուշտ մարդը» իրապատում հեքիաթը, որտեղ քննադատվում է աչքածակությունը: [16 *օգոստոսի, 1964 թ.*, Պյատիգորսկ]

**ԼՈՒՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ** (ծնվ. 1904 թ.): Օժտված այս բանասացը հայ ժողովրդական մի շարք խաղիկներ է հաղորդել, ինչպես նաև՝ «Հարրբան» սիրային գուգերգը, հողագործի «Հորովելն» ու ավանդական «Զեգ Բարեկենդան, մեզ՝ բարի Զարիկ» ծիսական երգը: Նա վերհիշել է գրական հայերենով «Մարդի 8-ն է, սյ նանի» և «Կոլտնտեսային» խորհրդային շրջանի երգերն ու «Կիսավողակի օրհորդները» կատակերգը, որոնք երգում էր իր ջինջ ու գեղեցիկ ձայնով: [18 *օգոստոսի, 1964 թ.*, Պյատիգորսկ]

**ՍՈՆՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ** (ծնվ. 1904 թ.): Պատմելու և երգելու շնորհքով օժտված այս բանասացից գրի են առել «Հալալ հերը» հեքիաթը, որտեղ թագավորի աղջիկը զրպարտվում է խորթ եղբոր կողմից: Աղջիկն իր հայր-թագավորի պալատում ծառա է դառնում, գլխին ոչխարենի է հագնում, որ իրեն չճանաչեն: Աղջկա ամուսինը՝ աշուղ դարձած, գալիս, պատմում է իր կորցրած ընտանիքի մասին: Թագավորի աղջիկը աշուղի սագը վերցնում և նույնպես պատմում է իր կյանքի դառը պատմությունը: Ճշմարտությունը պարզվում է. թագավորն իր չար տղային պատժում է: Նրան կապում են ձիու պոչից և բաց թողնում արձակ դաշտերը: Հեքիաթասացը՝ հուզումով է պատմել այդ երկարաշունչ հեքիաթի տխուր դեպքերը:

Նա երգել է նաև մի շարք սիրային խաղիկներ և այլ երգեր: [21 *օգոստոսի, 1964 թ.*, Պյատիգորսկ]

**ՎԱՐԴԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ** (ծնվ. 1904 թ.): 60 տարեկան այդ կինը գիտեր ժողովրդական շատ երգեր ու ասացվածքներ: Նա իր եռանդով ու կայտառությամբ կարողանում էր ստեղծել ունկնդիրների լսարան:

Ռուսերենով տեղ-տեղ համեմված նրա երգերի մեծ մասը գրական հայերեն են: Ինչպես, օրինակ. «Զոյրիկիս՝ տուֆլի, կալոշ» Կ. Պոլսում<sup>3</sup> և այլուր

3 Սվազլեան Վ., Պոլսահայոց բանահիստությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, էջ 427–428:

շատ տարածված քաղաքային երկարապատում, պատկերավոր ու զավեշտական երգը և կամ՝ «Նեմե'գ, նեմե'գ, կոդա՛ տի» կովի երգը:

Նա կատարել է նաև զինվորի երգեր.

«Հույս ամավա քսանհինգին,  
Մոսին հրացանը բռնած ձեռքին,  
Թուրքի ոխը մեջը սրտին  
Կարոն գոչեց՝ տղերք, կովի'...»:

Թվում է, 1920 թ. Կիլիկիո Հաճրն քաղաքում թուրքերի դեմ իրականացված հերոսական ինքնապաշտպանության վերհուշն է կրկնվում նաև ֆաշիստական հորդաներին ջարդ տվող «Կարոն ընկավ՝ վրեժ կանչելով»<sup>4</sup> պատկերավոր տողում: Հետևաբար, բանաստեղծական հին ավանդույթները պահպանվում և հարատևում են նոր ժամանակներում: [23 *օգոստոսի, 1964 թ., Պյատիգորսկ*]

**ԹԱՆԿԵ (ԹԱՆԿԱԳԻՆ) ՍԱՐԳՍՅԱՆ** (ծնվ. 1903 թ.): Շտրիպալի բանասաց Անուշկա մայրիկի աղջիկն էր Թանկեն, 61 տարեկան, խելամիտ ու բանիմաց: Նա արդեն թոռների տեր էր և ջանք չէր խնայում, որպեսզի նրանք գոնե հայերեն խոսք լսեն, քանի որ նոր սերունդը գրեթե չի խոսում հայերեն: Եվ տատը նրանց համար հեքիաթներ էր պատմում, ինչպես՝ հայ ժողովրդական տարածված «Օվջի Փիրումը», որտեղ գովերգվում է թշնամու լեզուն անգամ գիտենալու անհրաժեշտությունը: Նա հաղորդել է նաև «Մոթանլ, մոթանլ» բնօրրանի կարագ հարելու աշխատանքային երգը և մի շարք խորիմաստ առած-ասացվածքներ: [25 *օգոստոսի, 1964 թ., Պյատիգորսկ*]

**ԱՇԽԵՆ ՄՈՒՍԱՅԵԼԻ ՎԱՆԻԼՈՎԱ** (ծնվ. 1904 թ.): 58 տարեկան տանջված, տառապած այս կինը վշտից չորացել, բայց պահպանել էր իր ոգու ստեղծագործ կարողությունը և իր խոսքը հանգավորված էր մատուցում:

Նա հաղորդել է իր ստեղծագործած «Թող լճիս սարին խաղաղ, երջանիկ» ինքնակենսագրական բանաստեղծությունը, որտեղ նկարագրում է Արցախի հայերի ծանր վիճակը բնօրրանում, թե ինչպես նրանք ստիպված թողել, հեռացել են հարագատ վայրերից, հասել մինչև Պյատիգորսկ, և հույս է հայտնում, որ հայ ազգը կրկին իր պատմական իրավունքների տերը կդառնա:

Աշխեն Վանիլովան իր կենսուրախ բնավորությամբ նաև հուսադրող, լավատեսական մաղթանքներ է հաղորդել, ինչպես նաև «Զնիր ու աճիր» օրորոցայինը, որտեղ հայության հույսը կապվում է աճող սերնդի հետ: Նա հաղորդել

4 «Ո՛վ հաճընցի քաջ պատանի» երգը տե՛ս **Սվազլեան Վ.**, Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 163: **Նույնի**, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, էջ 628:

է նաև «Խելքով աղջիկը» իրապատում հեքիաթը, որտեղ աղջիկը՝ հակառակ իր շրջապատին, ճիշտ է կողմնորոշվում և չի ամուսնանում հարուստ, բայց գանամյալ ծերունու հետ, ասելով՝ «Պատավ ծին ջրհիլւննայ չի, թնն խօզիս պոչն ու յալը» («Պատավ ձին չի ջահեղանա, եթե խուզես նրա պոչն ու բաշը»), ինչպես նաև «Կոռն ու կյրնգյըրավերը» («Գոռն ու գանգարվողը») հեքիաթը:

Նա երգել է նաև «Նազիկ, Նազիկ, նազ մի՛ անի» երգը, որը հիշեցնում է Կիլիկիայի քեսաբցիների նույնանման պարերգից մի հատված: Դա վկայում է ժողովրդական բանահյուսության նույն ակունքներից սնվելու հանգամանքի մասին: [28 օգոստոսի, 1964 թ., Պյատիգորսկ]

**ՄԱՐԳԱՐԻՏԱ և ԱՆԺԵԼԱ ՌՈՒԲԵՆԻ ԱՎԱԳՅԱՆՑ** (ծնվ. 1961թ.) գույգ քույրերը երեք տարեկան են:

Ուշագրավ է, որ նոր սերնդի անուններն արդեն նոր միջավայրի հնչեղությունն ունեն:

Նրանք ավելի շատ լսում են, քան՝ խոսում, երգում, քան՝ պատմում: [30 օգոստոսի, 1964 թ., Պյատիգորսկ]

### III.

## ՊՅԱՏԻԳՈՐՄԿ ԳԱՂԹԱԾ ԱՐՑԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԲԱՆԱՅՈՒՄՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԱՅԻՆ ԵՎ ԹԵՄԱՏԻԿ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընդամենը 20 օրերի ընթացքում Պյատիգորսկի երկու հազարի հասնող հայ համայնքից գրառել են 100 միավոր բանահյուսական նյութեր՝ իրենց բարբառային նրբերանգներով, որոնք տողատակում թարգմանված են՝ նշելով բառի ծագումը<sup>5</sup>:

Իսնդրո առարկա նյութերը հետևյալ բնույթի են.

- I. **Վիպական բանահյուսություն** – *Հրաշապարում հեքիաթներ* (6), *Իրապարում հեքիաթներ* (4), *Առակներ* (2),
- II. **Քնարական բանահյուսություն** – *Օրորոցայիններ* (10), *Սիրային երգեր* (20), *Հարսանեկան ծես և երգ* (1), *Կենցաղային և Ծիսական երգեր* (3), *Աշխարանքային երգեր* (4), *Կարակերգեր* (3), *Հայրենասիրական և Զինվորի երգեր* (10),
- III. **Ասույթային բանահյուսություն** – *Մանկական թոթովանքներ* (2), *Հանելուկներ* (7), *Առածներ* (12), *Շուրասելուկներ* (4), *Մաղթանքներ* (5), *Օրհնանքներ* (7):

I. **Վիպական բանահյուսություն** բաժնում *հրաշապարում* և *իրապարում հեքիաթներն* իրենց սյուժետային բովանդակությամբ և մոտիվային համակարգով մեծ մասամբ առնչվում են պատմական Հայաստանի և Կիլիկիայի հայ ժողովրդական հեքիաթներին<sup>6</sup>: Քանի որ 11–13-րդ դդ. Մեծ Հայքի հայաբնակ վայրերից, նաև Արցախից հայերի հոսքը դեպի Կիլիկիա վիթխարի չափերի էր հասել<sup>7</sup>, այդ առումով ուշագրավ են. «*Օխց տղան*» («*Օձ տղան*»), «*Անմահական ճնորք*», «*Իրեք ախպոր հեքիաթը*», «*Թարավերեն ախշիգը*», «*Օվջի Փիրումը*» («*Որսորդ Փիրումը*») և այլ հեքիաթներ, որոնք ևս իրենց նմանատիպ գուգահեռներն ունեն Մայր Հայաստանի հեքիաթների հետ:

Արցախի հայերի *հրաշապարում հեքիաթներն* սկսվում են ավանդական «*Իլնիլ ա, չիլնիլ*» («*Լինում է, չի լինում*») բանաձևով, սակայն ոչ միշտ են ավարտվում «*Երկնքից ընկավ երեք ինձոր*» վերջաբանով, այլ՝ շատ ավելի կտրուկ որևէ

5 Բանահյուսական սկզբնաղբյուրների բարբառային նրբերանգները ճշգրտվել են լրագրող, բանաստեղծ, արմատներով արցախցի **Ռուբեն Գրիգորյանի** կողմից:

6 Արցախի հրաշապարում և իրապարում հեքիաթների շարքը հրատարակվել է նաև նախկինում. «Հայ ժողովրդական հեքիաթներ» գիտական բազմահատորյակի 5–7 հատորներում (Ե., 1966–1979), ընդ որում՝ «Արցախ–Ոստիք» (Շուշի, Արցախ, Գանձակ), կազմողներ՝ Նազիկյան Ա., Մվազյան Վ., հ. 6, Երևան, 1973:

7 **Սվազյան Վ.**, Կիլիկիա..., էջ 11–12:

գործողությամբ. «Էն րդեն կապրմ ըն ծիանը հնարյվան, պէց թողնրմ հնարգնկ դաշտերը» («Էն րդին կապում են ձիու պոչից և բաց թողնում արձակ դաշտերը») և կամ՝ ավելի կարճ «Վոյր ի վայր» («Ահա և բոլորը») ռուսերեն արտահայտությամբ: Անշուշտ, սա նոր՝ ռուսական միջավայրի ազդեցությունն է, որը նաև առիթ է տվել զգալի չափով փոխառյալ բառերի և արտահայտությունների ներթափանցմանը. օրինակ՝ «մոմենտ» (պահ), «սարոլ» (սեղան), «ուժե» (արդեն), «կամպանիա» (ընկերություն), «կուկլա» (տիկնիկ), «կակոսազ» (հենց այդ), «պրեդանիե» (օժիտ), «յելի-յելի» (հազիվ-հազ), «մնադարիչ» (նվեր), «կառասուլ» (պահակ) և այլն: Նման ներթափանցումներն օրինաչափ են, հատկապես երկար տարիներ համակեցությամբ ապրողների կենցաղում և լեզվական մշակույթում:

**Իրապատում հեքիաթներից** ուշագրավ է հատկապես «Հլուվերի պահասիանը Շահ Աբասին» («Ալևորի պատասիանը Շահ Աբասին»): Իր գավթողական արշավանքներից վերադարձող Շահ Աբասը ծիծաղում է արմավի ծառ տնկող ալևորի վրա, ասելով, թե նա չի հասցնի համտեսել իր տնկած ծառի պտուղը, քանի որ նրա մահը մոտ է: Արցախցի իմաստուն ալևորը պատասխանում է. «Ա՛յ, ախպեր, մըհենգ էլ ես ծրծաղրմ քեզ յրա: Մըեր պապերը ծառ ըն րնգալ, մոնք բարը կերալ ընք: Մհենգ էլ մոնք բիդի րնգինքյ, հանցու մըեր հերազաները օրին» («Ա՛յ, եղբայր, հիմա էլ ես ծիծաղեմ քեզ վրա: Մեր պապերը ծառ են րնկել, մենք պտուղը կերել ենք: Հիմա էլ մենք պիտի րնկենք, որ մեր հեղինորդները ուրեն»):

Գրառված երկու **սուսկները**, ինչպես՝ «Վըթեան ու մուկունը» և «Վըթեթես մոքիրը» համահայկական հայտնի սյուժեներ են, որոնց միայն գործող անձինք՝ կենդանական կերպարներն են փոխված, այսինքն՝ տեղայնացված, հարմարեցված են Արցախի կենդանական աշխարհին:

**II. Քնարական բանահյուսության** տեսականին ևս իր բնույթով բազմազան է և համահունչ համահայկականին: Այդ բաժնում առկա են՝ օրորոցայիններ, սիրային, հարսանեկան, ծիսական, պանդխտության, աշխատանքային երգեր, կատակերգեր նաև հայրենասիրական և զինվորի երգեր:

Քնարական այս երգերի մեջ գեղարվեստորեն պատկերվում են հայրենի բնության գեղեցկությունները, առօրյա կյանքի ու կենցաղի տարաբնույթ երևույթները.

«Քնիր ու աճիր,  
 Շուր արա, բալեն,  
 Կոունկներն էկան,  
 Թողին մըեր երկիր  
 Սև ամպով պապած:  
 Քնիր ու աճիր,  
 Դարդերս քշիր,

Շուր արա, բալեն:  
 Հուլունք եմ կապել,  
 Կախել օրոցքից,  
 Քո զար աչքերից  
 Որ հեռու մաս  
 Թշասմո աչքից»:

Ուշագրավ է, որ թջնամու կերպարն արտացոլվել է նույնիսկ մանկական *օրորոցայինում*, երբ մայրը չքնող երեխային վախեցրել է դաժան խանի կերպարով.

«Լւնյ-լւնյ-լւնյ արա, քնն իլ,  
Ջելիմ խանը կիկյա՝ քլեզ փանե.  
Բւնյ, բալւն, բւնյ, կուկլա բալա,  
Բւնյ, բալա ջան, բւնյ, ջան, բալւն»:

«Լւնյ-լւնյ-լւնյ արա, քնիր,  
Ջելիմ խանը կգա՝ քեզ տանի,  
Բւնյ, բալւն, բւնյ, կուկլա բալա,  
Բւնյ, բալա ջան, բւնյ, ջան, բալւն»:

Իսկ կրկնելով «կուկլա» և «բալա» բառերի առկայությունը վկայում է ռուսական օրորոցայինի ազդեցությունը:

*Միրային երգի* օրինակ է.

«Նազիկ, Նազիկ, նազ մի՛ անի,  
Չոխեդ<sup>8</sup> քաշի, թոզ<sup>9</sup> մի՛ անի»:

Գրառված սիրային երգի այս տողերն ակամայից հիշեցնում են կիլիկյան՝ Քեսապի պարերգի նմանատիպ պատկերը.

«Աման, իշգեյն, ծիր վաթանը յ՞ գրննս.  
Շյուդ մի՛ ժգըղվա չախշօրիս մըրօդ գրննս»<sup>10</sup>:

«Ա՛յ, աղջիկ, ձեր հայրենիքը որտեղ կլինի,  
Շատ մի՛ շորորա, քղանցքդ կփռոշտվի»:

Այս նմանությունը վկայում է ժողովրդական նույն արմատների մասին:

Պյատիգորսկի Արցախի հայերը *կենցաղային և ծիսական երգերից* հիշում և երգում էին «Ձեզ՝ Բարեկենդան, մեզ՝ բարի Զարիկ» ավանդական տոնական երգը, թեպետ ծիսական տոներն այլևս նախկինի պես հանգամանորեն չէին կատարվում:

Այնինչ, հիշում և կատարում էին *Համբարձման րոնին* երգվող հատ ու կենտ քառյակներ, որոնց համանման տարբերակներն առկա են հայկական բանարվեստում.

«Ախչի, ո՛ր ես, դուն հոր ես,  
Ես ծարավ եմ, դուն ջուր ես,  
Համբարձում օրը ո՛ր ես,  
Արի ըսրեղ պար բոնենք:  
Հայր՛ ջան, հայր՛ն,  
Համբարձում, հայր՛ն»:

8 Չոխա (ժող.) – նուրբ մահուդից երկար վերարկու:

9 Թոզ (թորք.) – փռշի:

10 **Սվազյան Վ.**, Կիլիկիա..., Ե., 1994, էջ 127: Տես նաև՝ **Չոլաբեան Յ.**, Քեսապ, հ.Բ, Հալեպ, 1998, էջ 497–498:

Պյատիգորսկի Արցախի հայերը կարոտով էին վերհիշում բնօրրանում Համբարձման տոնին կատարվող ձեռք-ձեռքի բռնած իրենց տոհմիկ երգն ու պարը, քանի որ նոր միջավայրում այլևս նման հավաքական տոնախմբություններ չէին իրականացնում:

**Հարսանեկան ծեսը** նեղ շրջանակում դեռ պահում էր ավանդական որոշ երանգներ, ինչպես, օրինակ՝ հարսի գլխին շաքար, չիր ու չամիչ, մանրադրամներ տեղացնելու կամ հարսի ոտքի տակ ավստ ջարդելու սովորույթները: Ծիսական արարողակարգը բավականին մանրամասն գրի է առնված՝ մեջբերելով հարակցվող երգերը ևս: Հուզիչ է հայրական տանը հարսի հրաժեշտի երգը.

«Վայ, ազի ջան, փանըմ ըն,  
Հորաս, մորաս հանըմ ըն,  
Վայ, ազի ջան, փանըմ ըն,  
Ազիզ մորաս հանըմ ըն»:

«Վայ, մայրիկ ջան, տանում են,  
Հորիցս, մորիցս բաժանում են,  
Վայ, մայրիկ ջան, տանում են,  
Սիրելի մորիցս բաժանում են»:

Արցախում, երբ հարսը ոտք է դրել փեսայի տուն, մոմավառություն են կատարել և վառված մոմերով դիմավորել փեսային՝ երգելով.

«Վայ, ազի ջան, աշքղ լիւս,  
Տղեք պերենք, հարսպ պերենք,  
Եկած պարիկամներեք աշքղ լիւս»:

«Վայ, մայրիկ ջան, աչքդ լույս,  
Տղիդ բերինք, հարսիդ բերինք,  
Եկած բարեկամներիդ աչքը լույս»:

Բանասաց Աննա Ակոպովան պատմել է. «Արցախում փղի փանը հաց ըն օտըմ, պրծըմ, սագանդարը<sup>11</sup> նստըմ ա, փղի բարեկամները նվերներ են փալիս՝ մերել<sup>12</sup> ա, սնդուկ, կուվշին<sup>13</sup>, փող և այս բոլորի մասին բարձրաձայն հայփարարում է «փեի խփողը»<sup>14</sup>: Երբ հարսը ներս է մտնում, նրա ոտքերի փակ փսես են ջարդում, իմում են ինսամինների, հարս ու փեսի կենսացները...»:

**Աշխարանքային երգերը** ևս հիմնականում համահայկական ավանդական բնույթ ունեն. «Ձիզ փուր, քաշիր, այ եզո», «Հով արա, Ջեյրան ջան» և կամ՝ կարագ հարելու «Մոթալ<sup>15</sup>, մոթալ, ջան մոթալ» երգերը:

Հանապազօրյա հաց թխելու գործընթացը միահյուսվել է սիրած յարի պանդխտության գնալու հետ.

«Հաց ըմ թրխալ՝ կյարի ա,  
Իմ յարըս սափարի ա,  
Սափար էրթայիլը մընոնիմ.  
Խոսքերքո շաքարի ա»:

«Հաց եմ թխել՝ գարի է,  
Իմ յարը պանդուխտ է,  
Պանդխտությանդ մեռնեմ.  
Խոսքերդ շաքարից են»:

11 Սագանդար (բրբռ.) – նվագող:

12 Մերել (ոռու.) – կահույք:

13 Կուվշին (ոռու.) – ջրաման:

14 Տեի խփող (բրբռ.) – թմբկահար:

15 Մոթալ – հատուկ եղանակով պատրաստվող պանիր:



Գրառված երգերից մեկում, ամենայն հավանականությամբ, ակնարկվում են ազգամիջյան լարված փոխհարաբերությունները.

«Ա՛յ, տղան, տուն արի,  
Վրեններդ՝ շաղովն արի,  
Էս թաղը դըմըղալ ա.  
Երէ թաղավն արի»:

«Ա՛յ, տղան, տուն արի,  
Ոտքերդ՝ շաղովն արի,  
Այս թաղում իրարանցում է.  
Վերին թաղովն արի»:

Արցախում հարազատների կողմից չի խրախուսվել տղամարդկանց պանդխտելը, հատկապես նավթարդյունաբերական կենտրոն՝ Բաքու, ուր բազմաթիվ հայեր ապրուստի հոգսից ստիպված գնում էին աշխատանք գտնելու.

«Ծառի տակը լաքի յա,  
Իմ յարը Բաքի յա,  
Բաքվա սարը թող շոռ կյա.  
Բայքի իմ յարը տուն կյա»:

«Ծառի տակը գոլ է,  
Իմ յարը Բաքվում է,  
Բաքվի սարը թող շոռ գա.  
Գուցե իմ յարը տուն գա»:

Պյատիգորսկի Արցախի հայերի երգացանկում առկա էին նաև գրական լեզվով նորոյա **կոլտնտեսային** կյանքին նվիրված, ժողովրդականություն վայելող երգեր.

«Ծլել է արբու, ծփում է արբու,  
Կորել է դարդու, ջանն,  
Եկել է նորը, ինդության օրը,  
Գյոզալ<sup>16</sup> տրակտորը, ջանն...»:

Խորհրդային ժամանակների նորոյա ինքնատիպ երգերից է նաև **Կասանց միջազգային տունին՝ Մարտի 8-ին** նվիրված երգը.

«Լաչակի<sup>17</sup> բանց, այ նանի<sup>18</sup>,  
Քիթկալդ բանց, այ նանի,  
Թող արև տա, չորանա  
Արցունք ու լաց, այ նանի»:

Հոկտեմբերը քեզ համար  
Նոր կյանք բերավ, այ նանի,  
Ցուրտ ձմեռը վերացավ,  
Գարուն դարձավ, այ նանի»:

Էնքան չինսնի<sup>19</sup> կապ մնաց,  
Տափակել է ա, այ նանի,  
Քիթ-բերանդ ծոմովել,  
Տես վիճակդ, այ նանի»:

Ականջներդ բանց արա,  
Էսօր Մարտի 8-ն ա,  
Շաբա<sup>20</sup> կանչի, ծափ արա,  
Կասանց տունն ա, այ նանի»:

16 Գյոզալ (ժող.) – գեղեցիկ:

17 Լաչակ – գլխաշոր:

18 Նանի (ժող.) – մայրիկ:

19 Չանա (թուրք.) – ծնուտ:

20 Շաբա (զվն.) – երաժիշտներին տրվող դրամական պարգև:

Առաջին հայացքից նոր իմաստ ու բովանդակություն արտահայտող այս երգի մեջ գարնան զարթոնքի, ձմռան ցրտերի դեմ տարած հաղթանակի, իրական աշխարհի զգացողության խորհուրդն է ամփոփված: Ավանդական բանահյուսության մեջ բազում գործառույթներով օժտված Նանիին կոչ է արվում ազատվել կանացի հմայքը խաթարող ավելորդ հանդերձանքից: Ժողովրդական երգ ու պարով, խրախճանքով վերահաստատվում է գարնան զարթոնքը՝ կանանց տոնը դիմավորելու նրանց պատրաստականությունը: Այստեղ, միաժամանակ, նկատելի է ինքնագիտակցության եկող և զարթոնք ապրող նահապետական հայ կնոջ անխզելի կապն ու մերձեցումը բնության հետ:

Պյատիգորսկում տարածված **կարակերգերից** է.

*«Բույրիկիս՝ փոֆլի<sup>21</sup>, կալո<sup>22</sup>,  
Մայրիկիս՝ կոշիկներ,  
Բակ հայրիկիս՝ մի զոյգ փրեխ,  
Էն էլ փոկեր չունենա...»:*

Արևմտահայոց՝ հիմնականում պոլսահայոց<sup>23</sup>, շրջանում տարածված գավեշտական տարաբնույթ պատկերներով շարահյուսված այս երգը նաև երգում էին արցախցի երիտասարդները:

Պյատիգորսկում Արցախի հայերն իրենց ավանդական ապրելակերպին խորթ և անհարիր երևույթներն անվարան երգիծում էին.

*«Կիսավոդոսկի օրիորդները  
Ժամը փասին ըն զարթում,  
Մաշքը<sup>24</sup> կոտրած կարվի նման,  
Ման են կյնլի բուլվարում<sup>25</sup>...»:*

Ռուսական նոր միջավայրը, մարդկային նոր հարաբերությունները ևս լեզվական նորամուծությունների պատճառ են դարձել.

*«Ծիրը ծառին փիփիկ արավ,  
Ախտրնիկը<sup>26</sup> ուրիշ արավ<sup>27</sup>,  
Վրեննան փոնավ, դամոյ<sup>28</sup> փարավ,*

21 Տուֆլի (ռուս.) – կոշիկ:

22 Կալո (ռուս.) – կրկնակոշիկ:

23 **Սվազյան Վ.**, Պոլսահայոց բանահյուսությունը, 2000, Երևան, էջ 427–428:

24 Մաշք – մեջք:

25 Բուլվար (ռուս.) – ճեմելիք:

26 Ախտոնիկ (ռուս.) – որսորդ:

27 Ուրիտ անել (ռուս.) – սպանել:

28 Դամոյ (ռուս.) – դեպի տուն:

*Ժարոմխիկում<sup>29</sup> ժարիտ արավ<sup>30</sup>,  
Նարեց, մի լավ կուշիտ արավ<sup>31</sup>,  
Ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ»:*

Ժամանակի ընթացքում նրանց բառապաշարի մեջ տեղ են գտել «ախուր-նիկ», «ուքիտ անել», «դամոյ», «ժարոմխիկ», «ժարիտ անել», «կուշիտ անել» և այլ բառեր ու բառակապակցություններ:

Սակայն Պյատիգորսկ գաղթած արցախցիները չէին ընդունում, որ իրենք սկանայից տուրք են տալիս լեզվական փոխառություններին և ասում էին. «Նասաբարոտ<sup>32</sup>, մոնք չիարի<sup>33</sup> արմյանսկի<sup>34</sup> ընք խոսըմ»:

Թեպետ Պյատիգորսկ գաղթած արցախցիների բառային կազմը 1964թ. ռուսերենից արդեն զգալի ազդեցություններ էր կրել, սակայն նրանք իրենց ազգային ինքնությունն ու արցախցու արժանապատվությունը շարունակում էին բարձր պահել: Այդ հասցամանքն իր գեղարվեստական արտացոլումն է գտել հատկապես նրանց *Հայրենասիրական* և *Ջինվորի երգերի* մեջ:

Այդ օրերին ինձ հաջողվել է արցախահայերից գրի առնել նաև 1905թ. Ասկերանի կիրճում կատարված պատմական հայտնի իրադարձությանը նվիրված երգի մի դրվագ, որտեղ պատմվում է, թե ինչպես Շուշիի հայերից թալանված երկու ֆուրգոն ավարով ջարդարար թաթար-ազերի բեկերի մեծաթիվ հեծելագործ գալիս, հասնում է Խոջալու: Քանի որ հրազենի ձայն չէր լսվում, մտածում են, որ իրենք կարող են ապահով անցնել Ասկերանի կիրճը: Դարանակալած հայ մարտիկները՝ քաջորդի Համազասպի մշակած խելացի ռազմավարությամբ և Վարդանի աջակցությամբ, շրջափակում, օղակի մեջ են վերցնում թշնամուն և ոչնչացնում ավելի քան 200 թաթար-ազերիների<sup>35</sup>.

*«Ինչպես կորյուն քաջ Վարդանը,  
Համազասպը քաջանուն  
Ասկերանի բերդի միջից  
Կոպորեցին թշնամուն»:*

1905 թ. օգոստոսի 17-21-ը Համազասպի գլխավորությամբ տեղի ունեցած հաղթական մարտերի շնորհիվ, Արցախի ինքնապաշտպանական ուժերին հաջողվում է անստիկ պահել ռազմավարական կարևոր նշանակություն ունե-

29 Ժարոմխիկ (ռուս.) – տապակ:

30 Ժարիտ անել (ռուս.) – տապակել:

31 Կուշիտ անել (ռուս.) – ուտել:

32 Նասաբարոտ (ռուս.) – ընդհակառակը:

33 Չիստի (ռուս.) – մաքուր:

34 Արմյանսկի (ռուս.) – հայերեն:

35 **Ստեփանյան Գ.**, Համազասպ, Երևան, 2016, էջ 110–111:

ցող Ասկերանի կիրճը և կասեցնել թաթար հրոսակների հարձակումները Շուշիի ուղղությամբ<sup>1</sup>:

Ջինվորի երգի ինքնատիպ նմուշ է նաև հետևյալ երգը, որտեղ հիշատակվում են Հայաստանի հերոսական անցյալն ու արցախահայ երիտասարդի՝ ազգի համար գոհվելու պատրաստակամությունը.

*«Մուսերս փո՛ւր, մայրի՛կ,  
Մուհնս փո՛ւր, քայրի՛կ,  
Հանուն ազգիս թե՛ չգոհվեմ,  
Հասպա ինչո՞ւ ծնվեցի ես»:*

Հայրենական պատերազմի (1941–1945 թթ.) տարիներին ստեղծված երգերը ևս իրենց ուրույն տեղն են գտել արցախցիների երգացանկում.

*«Նեմե՛ց<sup>2</sup>, նեմե՛ց, կուդա՛ փի<sup>3</sup>,  
Գիդացել ես, թե՛ Բըղըղորակը<sup>4</sup>  
Հավի բուդ ա՛. դե՛ մին նազադ<sup>5</sup>,  
Բումբը<sup>6</sup> կրամ կնդազադ<sup>7</sup>»:*

Եվ կամ՝

*«Առավոտյան ժամը ութին  
Ինձ վայենկոմադ<sup>8</sup> կանչեցին,  
Վեշ մեշոկը<sup>9</sup> շալակս փվին,  
Դեպի Կերչը հողարկեցին,  
Երբ որ մրանք Կերչի հողը,  
Սիրդս մրավ մահվան դողը...»:*

Երկարաշունչ այս երգի ավարտին, անօգնական ու անհույս ընկած մահամերձ հայ զինվորը խնդրում է.

*«Ընկերներ ջան, հավաքվեցեք,  
Դողոկները փչիլ փվեք,  
Գերեզմանիս քարին վրեն  
Սայաթ-Նովեն<sup>10</sup> երգիլ փվեք»:*

1 Նույն տեղում:

2 Նեմեց (ռուս.) – գերմանացի:

3 Կուդա տի (ռուս.) – այդ ո՛ւր:

4 Բըղըղորակ – Պյատիգորակ:

5 Նազադ (ռուս.) – ետ:

6 Բումբ (ռուս.) – ռումբ:

7 Կնդազադ – գլուխ (ծաղրական):

8 Վայենկոմատ (ռուս.) – զինկոմիսարիատ:

9 Վեշ մեշոկ (ռուս.) – ուսապարկ:

10 Սայաթ-Նովա – (Հարություն Սայադյան, ծնվ. 1712 թ., Թիֆլիս – 1795 թ., Հաղպատ) հայ բանաստեղծ-աշուղ, ժողովրդական-աշուղական նոր դպրոցի հիմնադիր:

Եվ նա հանգում է՝ շնչալով.

«Չեմ մոռանա Մայր Հայաստան»:

Մայր Հայաստանի, բնօրրան Արցախի կարոտը մշտապես ուղեկցել է օտարության մեջ ապրող Պյատիգորսկ գաղթած արցախցիներին: Նրանց մեջ կային նաև ինքնուս ստեղծագործողներ, ինչպիսին էր 58-ամյա Աշխեն Մուսայելի Վանիլովան: Նա իր մտորումներն արտահայտում էր չափածո հանգավորմամբ և երգային կատարումով: Նրա երգած **եղերերգի** սեղմ տողերի մեջ խտացված էին արցախահայոց կրած անլուր տառապանքները, նրանց հարկադրված գաղթը բնօրրանից դեպի Պյատիգորսկ.

«Դնրդոր, կարոտ էս կյանքի մեջ  
Տանջվեցինք մոնք անհանգիստ,  
Դաղված, էրված ջիգյարներով  
Մնացինք մոնք անհանգիստ:

Մոնք շար մրեծ ցեղ ունեինք,  
Բոլորին էլ կորցրրինք.  
Էկանք-հասանք Պրտիդորսկ,  
Նեուժեղի<sup>11</sup> մոնք կարել չընք  
Հանգիստ մասնք փանջանքից:

Բավական է, մեր ծնողներն  
Ինչքան արյուն թափեցին,  
Ժողովրդին մեր փչացրին,  
Մըեզ փնավեր արեցին:

Մենք պիտի կովենք  
Ինչքան ուժ ունենք,  
Մեր լին կորուսարները  
Փառքով ենք բերենք»:

Անհատական այս ստեղծագործության ավարտը լավատեսական է և լուսավոր, որն այնքան բնորոշ է արցախի հայությանը, ասես, այն աղոթք լինի առ Աստված: Այն մաղթանք է՝ ուղղված նաև համայն մարդկությանը.

«Թող մեր անգին Հայոց ազգին  
Էն ուժն ու պարիմն ինի,  
Որ իլնիլ ա հին-հին վախարից,  
Թող փրկի Տերը սաղ աշխարքին,  
Լոխ էլ ապրին խաղաղ, երջանիկ»:

**III. Ասույթային քանահյուսություն** բաժնում ուշագրավ են երեք տարեկան Անժելա և Մարգարիտա Ավագյանց զույգ քույրերից իմ գրառած **մանկական թոթովանքները**: Երբ փոքրիկ Անժելային ես հարցրեցի իր անունը, նա **շուրասեղուկի** պես պատասխանեց.

«Փըլջմեղի<sup>12</sup> դերո Կևանեն ծոռն ըմ,  
Փըլջմեղի Ղազարեն ծոռն ըմ,  
Փըլջմեղի Ասրեյեն թոռն ըմ»:

11 Նեուժեղի (ռուս.) – մի՞թե:

12 Տեղավայր:

Իսկ երբ նրա գուգակից Մարգարիտային հարցրեցի.

«— Մայրդ որտե՞ղ է աշխատում:

Նա պատասխանեց. — Ռոդդոմ<sup>13</sup>:

— Ի՞նչ է անում:

— Խոհա ս պրոնըմ<sup>1</sup> (— Մանուկ է բռնում)»:

Պյատիգորսկի Արցախի հայերի **հանելուկների**ն բնորոշ է իրենց բնօր-  
րանի կենդանական և բուսական աշխարհի գեղարվեստական արտացոլումը,  
որտեղ գաղտնագրված կերպով ներկայանում են արցախցիների կյանքին ու  
— Թաքավերեն տղեն հըմար պալատ ընք շինըմ:

Ախչիգյըն ասըմ ա.

— Ես ծեզ էսքան վըեսկե կյտամ, թն խնթիրքս կատարեք:

— Խնթիրքտ հինչ ա, – հրցընըմ ըն վարպետներն:

— Թաքավերեն տղան շտեղ վըեր քնելու ա, էն օթախումը մի հանց տըեղ շինեցեք, վըեր պատի մեչ մտնիմ, փակվիմ, տոնու կյնաուց էլ՝ պեցվի:

Տրանք վըեսկեն յոր ըն օնըմ, պատվերը կդարըմ: Ախչիգյը մտնըմ ա տըեղ, տոնու կյնմ, թաքավերեն տղեն կատավաթեն յրա պտկըմ:

Թաքավերեն տղան կյամ ա թն պտկի, վըեր քոն ինի, տեսնըմ ա հինչ. մի նախշուտ ախչիգյ ուրան տեղըմը պտկած:

Ախչիգյը լոխ պատմըմ ա: Տղան ասըմ ա.

— Աստված ա քեզ ինձ հըսցրալ, իմ կնեգյը կընիս...

Մին օր էդ տղան քյինըմ ա վըերսի: Ընդրա հընգերը կյնմ ա էս թաքավերեն տղեն պալատը: Տըեսնըմ ա՝ դնչննագ հարսենը, նախանձից փոնըմ ա ախչըգյա ծամերը պկավը տամ, խընխտըմ:

54 Կակոագ (ռուս.) – իսկ և իսկ:

55 Ա տո (ռուս.) – թե չէ:



Թաքավերեն տղան վրերսան կյամ ա տոն, տըեսնըմ կնեգյը մըեռած: Վերցնըմ ա խանչալը, իրան սպանըմ: Թաքավերը կյամ ա, տեսնըմ հարսն ու տղան մըեռած: Էրկան դանրդ ա անըմ, տանըմ ա, վրեր թաղի: Դիմացից մի պառավ ա տոնս կյամ, ասըմ ա.


— Ինձ էտ էրկուսի դաթըմը<sup>56</sup> թըղեցեք:

Ըտըհենց անըմ ըն, թաղըմ ըն: Թաքավերը քյինըմ ա, համ էլ միտք անըմ՝ էտ հինչի պոավեն թըղեցեն էրկու ջահելի դաթըմը: Էքսվա օրը քյինըմ ա, տըեսնըմ ուրան տղեն թաղած տըեղը մնեշակ ա փսնձ, հարսի յրան՝ վարթ, պառավի յրան էլ՝ ցնքյի փոշ<sup>57</sup>:

Քամեն վրեր փչըմ ա, մնեշակն ու վարթը օզըմ ըն մուտանան ուրոն, համա ցնքյի փոշը թողըմ չի:

Քյամբախտ թաքավերը էտ էլ վրեր տեսնըմ ա, խանչալը հանըմ ա, իրան սպանըմ:

Իրիքյնակն էլ կաղնած թամաշա<sup>58</sup> ա անըմ:



---

56 Ղաթըմը – արանք, միջև:

57 Ցնքյի փոշ – փշե թուփ:

58 Թամաշա անիլ – դիտել, զմայլվել:

## 2. ԻՐԱՊԱՏՈՒՄ ՅԵՔԻԱԹՆԵՐ

1 (7).

### ՅԼՈՒԿԵՐՆ ՈՒ ՇԱՅ ԱԲԱԱԸ

Շահ Աբասը շենը շոռ ա եկալ, վրեր տրեսնա ժողովուրթը ուրան մասին հինչ ա խոսըմ: Մի շենըմ քյոնջումը մին հլովեր մարթ ա պըտահալ, տեսալ ա փոս ա քանդըմ՝ խուրմա ծառ տնգե: Շահ Աբասը եշալ ա, ծըծաղալ, շոռ եկալ, վրեր քյինա, հլովերը ծեն ա տվալ.

— Այ ախպեր, ես հլովեր մարթ ըմ, խե՛ ըս ինձ յրա ծըծաղըմ:

Շահ Աբասը ասըմ ա.

— Պա հոնց չծըծաղիմ, մըեծ մարթ ըս, խուրմա ծառ ըս տընգըմ: Բիդի քըռասուն տարե էլ ապրիս, վրեր խուրմա տա, հսցընիս օտիս:

Հլովերը ասըմ ա.

— Ա՛յ, ախպեր, մըհենգ էլ ես ծըծաղիմ քե վրա:

— Մըեր պապերը ծառ ըն տնգալ, մունք բարը կերալ ընք: Մհենգ էլ մունք բիդի տնգինքյ, հանցու մըեր հետագաները օտին:

2 (8).

### ԿՅՈՂՆ ՈՒ ԿՅԸՆԳՅԸՏԱԿԵՐԸ

Մի մարթ ասըմ ա.

— Լոբի ըմ ցանալ բախչըմը: Էս տարի անհաշիվ լոբի ա պուսալ, համա ամեն օր մին խուրջին լոբի ա պըկասըմ:

Մի օր էլ կնգանն ասըմ ա.

— Էս քշեր քյինամ դարավուլ<sup>59</sup> կաղնիմ բոստանըմը:

Քյինըմ ա, տըեսնըմ մին մարթ շըվշըվալավ լոբին քաղըմ ա, վրեր տանի: Էս մարթը փոնըմ ա տրան, ասըմ.

— Ա՛, շան տղա՛, ամեն օր տո՛ւ ըս լոբիս կյոտանըմ:

Չաթվավ<sup>60</sup> կապըմ ա ընդրա վըենները: Համա էն մարթը նստած տեղն էլ ձըռքերավը խաղ ա անըմ:

Բուստընատարը<sup>61</sup> եշըմ ա, ասըմ.

— Շան տղա, վըեչ քըլզանա կյոդ տո՛ւս կիկյա, վըեչ էլ ինձանն՝ կընգըտավեր:

59 Ղարավուլ, կարաուլ (ռուս.) – պահակ:

60 Չաթ – կապ, պարան:

61 Բուստընատեր – բոստանի տեր:

### 3 (9).

#### ԽԵԼՔԱՎ ԱԽՉԻԳՅԸ

Մի պատավ մարթ եկալ ա, վրեր մին տըսնըհենց տըրեկան ախչիգյ օգի:  
Ախչիգյը օգըմ չի: Հերն ու մերը օգըմ ըն տան, չունքի քյասիբ ըն իլնլ:

Բիճան ասըմ ա.

— Խն՞ չըս կյամ, քեզ մհար բարխըտի<sup>62</sup> դերյա<sup>63</sup> կառնիմ, ես կհաքնիմ  
Ղարաբաղի չոխսա, քեզ պն մբակի մեջ կըպահիմ:

Ախչիգյը ասըմ ա.

— Ես քեզ օգըմ չըմ, տու վացուն տըրեկան ըս, սրտետ սերը սատած, ես  
նոր կպնող վատարան ըմ: Ծնողներս խոսք ըն տամ, համա էտ ինող պեն չի:  
Զուր ա ընդրանց խոստանալը: Պատավ ծին ցիլլնննլ չի, թեկուզ խոզիս պոչն  
ու յալը<sup>64</sup>: Երեսդ վեր ընելավ կորցըրալ ըս մրքետ չալը<sup>65</sup>: Տու սկանըմ չըս, վրեր  
մունք ուրոնր սազըմ չընք, մունք ուրոնր պարա<sup>66</sup> չընք:

### 4 (10).

#### ԱՆԿՈՒԾՏ ՄԱՐԹԸ

Մի մարթ հղե ա քյինըմ: Տըեսնըմ ա մի ծիավեր ա կյամ: Փիադա<sup>67</sup> մարթը  
չուզելավ տրան պարի օր ա ասըմ:

Անծանոթը ասըմ ա.

— Ա՛յ մարթ, էս ծին՝ քյեզ, նստի, քշի: Հիշքան քշիս, էնքան վըեղ ըն  
տլական քյեզ:

Էտ մարթը նստըմ ա ծին, հիշքան կարըմ ա, քշըմ ա, ծին վեր ա ընգնըմ,  
ստակըմ: Ինքը եր ա կենըմ, վազ տամ, էնքան, վրեր հոքին տոնս կյալու յրա ա  
իներմ: Շունչը փչելիս ծերքը կես մետր մըեկնըմ ա, վրեր էտ մի պատառ վըեղն  
էլ ուրան հսնի: Շտեղ<sup>68</sup> մըեռնըմ ա, ընդեղ փոս ըն քանդըմ, թաղըմ, ասըմ.

— Էս ա քու փայ վըեղը...

62 Բարխըտ (ռուս.) – թավիշ:

63 Դերյա – հագուստ:

64 Յալ – բաշ:

65 Չալ – խայտաբղետ:

66 Պարա (ռուս.) – գոյգ:

67 Փիադա – հետիոտն:

68 Շտեղ – ուր:

### 3. ԱՌԱԿՆԵՐ

1 (11).

#### ՎՐԵԹԵՍ<sup>69</sup> ՄՈՔԻՐԸ

Մի մարթ ա իլնլ, ընդրան մի թամբալ կնեգյ ա իլնլ: Քյինացալ ա օխտը փութ պնորթ առալ, պերալ, տրվալ կնեգյանը, ասալ.

— Ես քյինըմ ըմ դուրբեթ<sup>70</sup>, կյնմ՝ տրեսնամ էտ օխտը փութ պնորթը կյիգած, մանած, կրասկա<sup>71</sup> տված, կարպետ ու գյնբա<sup>72</sup> կյործած:

Էտ կնեգյը քնենքյ<sup>73</sup> ա անըմ.

— Պա ես հինչ կանիմ, հոնց կանիմ:

Էքյսի առավոտը էտ կնեգյը շփոթ ա իփըմ, ածըմ ջնդղներեն<sup>74</sup>, սկսըմ շտնհալ հանց լրպզտոտելը, վըեր էտքանը տրեսնող սադանեն սոված ճոտեն<sup>75</sup> պոկը օռչըմ ա:

Սադանա մարը փոնըմ ա իրա ճոտեն կոնան, շոն կյամ, վըեր մինին նշանց տա, եթե լրվննն, մադարիչ<sup>76</sup> ա խոստանըմ:

Քյինըմ ա կակոագ<sup>77</sup> էն մուհալ կնգանը հոնրթավը<sup>78</sup> եշըմ: Ճոտն էլ ա եշըմ, թնն հոնց ա էն կնեգյը շփոթը լրպզտըմ, պեցուր ծիծաղըմ ա, պկեն օոոցը տրաքըմ ա, պրծնըմ: Սադանան հոնրթավը մտնըմ ա տոն, էն կնգանըն ասըմ.

— Քեգ հինչ տամ, վըեր իմ խոխաս լրվնցալ ա:

Կնեգյը ասըմ ա. — Քյըզանա մին պեն չըմ օզըմ: Մարթս օխտը փութ պնորթ ա առալ, հանցվեր կյիգիմ, մանիմ, կարպետ ու գյնբա կյործիմ:

Սադանան ասըմ ա.

— Վախել մի, էս քշեր լոխ կպըդրաստիմ:

Քշերը սադանան ոնրան թայ-թուշ հընգրենուցավը յրան ըն տըետնըմ, գյնբա, կարպետնեն կյործըմ:

Մարթը կյնմ ա, տըեսնըմ՝ լոխ պըդրաստած:

Հաց ըն քցըմ, վըեր օտին: Մի վըեթես կյամ ա, ընդըեղավ անց կենըմ:

69 Վըեթես – գետնավոր միջատ, ինքնապաշտպանվում է տհաճ հոտ արձակելով:

70 Ղուրբեթ – օտարություն:

71 Կրասկա (ռուս.) – ներկ:

72 Գյնբա – գորգ:

73 Քնենքյ անել – խորհել:

74 Ջնաղ – ուս:

75 Ճոտ – 1. ճուտիկ, 2. երեխա:

76 Մադարիչ (արաբ.) – շտրիավորեք տալ, նվեր, կաշառք:

77 Կակոագ (ռուս.) – իսկ ու իսկ:

78 Հոնրթ – երդիկ:

Մարթը օգրմ ա սպանի վրեթեսին, կնեգը թողըմ չի.

— Ա՛յ, մարթ, — ասըմ ա, — էտ իմ մոքիրս ա:

Մարթը ասըմ ա.

— Էտ վրեթես ա:

Կնեգը ասըմ ա.

— Էնքան գործ ա ըրալ՝ վրեթես ա տրեռալ:

— Ա՛, կնեգ, — ասըմ ա մարթը, — էլ գործ չանիս, թա՛ն չե՛ տու էլ վրեթես կտրեռնաս:

## 2 (12).

### ՎԸԵԹԵՍՆ ՈՒ ՄՈՒԿՈՒՆԸ

Մի մուկուն ճամփա ար քյինըմ: Ճամփին մի վրեթես ա պրտահըմ:  
Վրեթեսը հրցընըմ ա.

— Մուկուն ախպեր, շտեղ ըս քյինըմ:

— Քյինըմ ըմ հրքսանեք:

Ասըմ ա.

— Ինձ էլ կտանին: Հինչ կինի, բաջի<sup>79</sup>, մեկ չինինք, էրկու ինինք:

Ճանապարհին ցեխ ա ընըմ: Մուկունը լոք-լոք ընեղավ քյեցալ ա, վրեթեսը մնացալ ա ցեխըմը:

Վրեթեսը մրետքը փոխըմ ա, ասըմ.

— Օգրմ չըմ կյամ, տու քյինի:

Մուկունը քյինըմ, հըսնըմ ա հրքընքատոն: Հարսենը կշտին մի խուրջին ա ինըմ՝ պաղարկեքը<sup>80</sup> հետե, մեչը ճուղոպուր<sup>81</sup> էլ կար: Մուկունը մտնըմ ա, ճուղոպուրը օտըմ: Վրեթեսը ելի-ելի<sup>82</sup> կյամ ա, հըսնըմ հրքսընքատոն: Մուկունը տոնս ա կյանլիս, տրեսնըմ՝ վրեթեսը եկալ ա, ասըմ ա.

— Ե՛կ քյինանք, փորս կոշտ ա:

Վրեթեսը ստրեղ կըզնըվըմ<sup>83</sup> ա.

— Կորի, քյինա, ես քյըզանսա խոավ ըմ, էլ օգրմ չըմ իրեստ տրեսնամ:

79 Բաջի (թուրք.) – քույրիկ:

80 Պաղարկա (ռուս.) – սվեր:

81 Ճուղոպուր – ընկույզ:

82 Ելի-ելի (ռուս.) – հազիվ-հազ:

83 Կըզնըվիլ – ջղայնանալ:

II.  
ՔԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ

1. ՕՐՈՐՈՑԱՅԻՆՆԵՐ

ԼԱ՛Յ-ԼԱ՛Յ ԱՐԱ, ԲԱԼԱ՛

1 (13).

Լւայ-լւայ արա, բալւի, Շոնը կյամ ա, լւայ-լւայ,  
Կարուն կյամ ա, լւայ-լւայ, Չոո, զւհրումւնր, քոն իլ:

2 (14).

Լւայ-լւայ-լւայ արա, քոն իլ, Բւայ, բալւի, բւայ, կուկլա բալա,  
Ջելիմ խանը կիկյա՝ քլեգ փանե. Բւայ, բալա ջան, բւայ, ջան, բալւի:

3 (15).

Լւայ-լւայ արա, բալւի, Իսիս մըծանաս, ինձ պահիս,  
Պապան գործ ա անըմ, Տղա պահի, աղջիկ պահի,  
Փող պիրի՝ կարօնու փամ, Հանցուվեր մորը պահի:

4 (16).

Լւայ-լւայ արա, բալւի, Շոքերը ընկալ ա,  
Արեր փոն ա եկալ, Ա՛ի, իմ դարդեր:

5 (17).

Ծառերը կանանչ ա, Հարսն ու ախշիգ  
Շոքերը թանձր ա, Հարած ման կրկյան:

6 (18).

Ա՛ի, բալւի, լւայ-լւայ, Իմ ցավերը շար ա,  
Քոն իլ, բալիկա, քոն իլ, ջանիկա, Ա՛ի, յարար, յար ջան,  
Իմ դարդերը շար ա, Մայրիկ ջան, յար ջան:

7 (19).

Ես ծնվել եմ անբահար, Էս քանբահար փեղը:  
Որտեղից ինձ բերար, Ա՛ի, բալւի, լւայ-լւայ:

8 (20).

Ա՛ի, լւայ-լւայ, բալւի, Տու էլ հանցու ինձ պահիս:  
Մաման քյինս գործի, Բալա ջան, լւայ-լւայ,  
Փող պերի, քլեգ պահի, Ջան բալւի, լւայ-լւայ:

9 (21).  
ՔՆԻՐ ՈՒ ԱԾԻՐ

Քնիր ու աճիր,  
Շուր արա, բալեն,  
Կոունկներն էկան,  
Թողին մըեր երկիր  
Սև ամպով պարած:

Քնիր ու աճիր,  
Դարդերս քշիր,  
Շուր արա, բալեն:

Հույունք եմ կապել,  
Կախել օրոցքից,  
Քո զար աչքերից  
Որ հեռու մնա  
Թշնամու աչքից:

Քնիր ու աճիր,  
Դարդերս քշիր,  
Շուր արա՛, բալեն:

10 (22).  
ԲԱ՛Յ, ԲԱ՛Յ, ԱՅ ԵԹԻՄ ԽՈՒՄԱ

Ղանչանգ<sup>84</sup> խոխա<sup>85</sup>,  
Եթիմ<sup>86</sup> ըս մացալ,  
Քոս քյամբախար մորդ  
Պլեն<sup>87</sup> ըն րարալ:  
Նն քյինաց՝ կորալ,  
Էլ եր չի կյնու,  
Էլ վեչ մի հեր  
Քյեզ ծրեծ չի րալու:  
Բախրեն<sup>88</sup> ըրվաց,  
Ասաց՝ եկալ ըմ,

Վըեր քյեզ ծրեծ րամ,  
Վըեր քյեզ պահիմ,  
Իմ խոխի նման...

Նա քյեզ փթաթից  
Լեն-լեն րիրեվալ,  
Ճոճքըմ<sup>89</sup> կապից՝  
Նանե ըսելալ:  
Բնյ-բնյ, այ եթիմ,  
Բնյ-բնյ, այ բալամ:

84 Ղանչանգ (թուրք.) – գեղեցիկ:

85 Խոխա (ռուս.) – մանուկ:

86 Եթիմ (թուրք.) – որք:

87 Պլեն (ռուս.) – գերի:

88 Բախրա (թուրք.) – եղնիկ:

89 Ճոճք – օրորոց:

## 2. ՍԻՐԱՅԻՆ ԵՐԳԵՐ

1 (23).

Էրևան քաղ եւ՝ արեւ,  
Ջիգյարս դաղ եւ՝ արեւ,

Դոստ-դոստմանի միջին  
Լացս ծիծաղ եւ՝ արեւ:

2 (24).

Կանգնել ես ալիսս, բալիսս,  
Լաչակիդ փուրը կախ ս,

Յարն անուշ է, յարն անուշ,  
Քո մոր բերածն է անուշ:

3 (25).

Հաց ըն՝ թըխալ՝ կյարի ս,  
Ին՝ յարս սափարի ս,

Սափար երթալիդ մընունիմ,  
Խոսքերքդ շաքարի ս:

4 (26).

Սարերի թոխալը պըրփի,  
Վարերի կոխալը պըրփի,

Կեսօրանց մինչև կեսօր,  
Յարիս ծնկան թոխալը պըրփի:

5 (27).

Ախչի, ո՞ր ես, դու հոր ես,  
Ես ծարավ եմ, դու ջուր ես,  
Համբարձում օրը դուն ո՞ր ես,

Արի, ըսրեղ պար բունենք:  
Հայրն՝ ջան, հայրն,  
Համբարձում, հայրն:

6 (28).

Ա՛յ, փղան, փուն արի,  
Վընններդ՝ շաղոփս արի,

Էս թաղը դըլմըղալ<sup>90</sup> ս,  
Երէ թաղոփս արի:

7 (29).

Նագիկ, Նագիկ, նագ մի՛ անի,  
Չոխեղ քաշի, թոզ մի՛ անի,  
Նագիդ մեռնեմ, նագով աղջիկ.

Դերյեղ<sup>91</sup> քաշի, թոզ<sup>92</sup> մի՛ անի,  
Տեսքիդ մեռնեմ, գյոզով աղջիկ:

8 (30).

Դագեպրան՝ բարձր սարեր,  
Սարերից բարձր սարեր,

Երանի էն սիրածներին,  
Որ իրար շուր կճարեն:

90 Դըլմըղալ (թուրք.) – աղմուկ, իրարանցում:

91 Դերյա – հագուստ, զգեստ:

92 Թոզ (թուրք.) – փռչի:



9 (31).

Անպել ւ, ձուն չի գալիս,  
Մթնել ւ, րուն չի գալիս,

Գիշերները մինչ լուսարաց  
Աչքերիս քուն չի գալիս:

10 (32).

Աչքերդ չես ինսայում,  
Դու միայն ինձ ես նայում,

Չգիտեմ՝ միտքդ ինչ ւ.  
Գաղտնիքդ էլ չես հայրնում:

11 (33).

Տեսս պարտեզում կանգնած,  
Երկար մազերդ սանրած,

Միրքս, հոգիս հանեցիր,  
Մնացել եմ շվարած:

12 (34).

Թասովդ ջուր եմ խմել,  
Քո սիրով եմ ես վառվել,

Դեռ քեզի խոսք չգրված,  
Քո սիրով եմ ես այրվել:

13 (35).

Այ րդա, իւեր<sup>93</sup> անիլ րուր,  
Մարնասափ գիր անիլ<sup>94</sup> րուր,

Ինձնից քեզ հարայ չկա,  
Գլուխդ վեր անիլ րուր:

14 (36).

Քանաքեռ բարձր րեղ ւ,  
Ջուր հանելու վանքի րեղ ւ,

Միրածը սիրածին չեն րայ,  
Էս ինչ անասարված գեղ ւ:

15 (37).

Ախչի՛, անունդ ասս,  
Գլխիդ Բաղդարին իսս ւ,

Քյինս քո մորն էլ ասս՝  
Ես իմ սիրածին րըեսս:

16 (38).

Լսել եմ, յար ես ճարել,  
Մրտով սիրածդ ըլլի,

Հոգով սիրածդ ըլլի,  
Ինձնից հեպո՝ քեզ իւեր չըլլի:

17 (39).

Քյեզ եմ րայիս իմ իրեք խոխան,  
Անմաշ պաղարկա<sup>95</sup> եմ րայիս  
Ինձնից հիշարակ էր իրեք խոխան,  
Մաղթում եմ՝ նրանց բարը րու քաղիս:

93 Իւեր (թուրք.) – բարիք, լավություն:

94 Գիր անել – հմայել:

95 Պաղարկա (ռուս.) – նվեր:

18 (40).

Բարձր ւ յայլու սարը,  
Քաղցր ւ սիրած յարը,

Ջինվոր փարան իմ յարը,  
Բա հոնց կինի իմ ճարը:

19 (41).

Ծառի փակը լաքի<sup>96</sup> ւ,  
Իմ յարը Բաքի ւ,

Բաքվա սարը թող շոռ գա,  
Գոցե իմ յարը փուն գա:

20 (42).

### ՀԱԲԸՐԲԱՆ

Տղա. —

Սիրուն ախշիկ, աննման ախշիկ,  
Գեղեցիկ ախշիկ,  
Քեզ որ փեսա, խելագարվեցա,  
Քեզ չփեսանեի, չէի փանջվի:

Աղջիկ. —

Աննման փղա, անունդ՝ Ավան,  
Ինձ սիրեցիր, քեզ շար եմ հավան:  
Միայն թե սաս ճշմարիտ մի բան.  
Դու հո Մելիք Շահնազարյանը չես:

Տղա. —

Ախշիկ սիրուն, ինչիդ է պերք, թե ով եմ ես,  
Տո՛ր քո ձեռքը, սո՛ իմ ձեռքը,  
Մեր փնտրին հաշտություն բերենք.  
Մեր ծողներին մեր սիրով գերենք:

---

96 Լաքի – կեղտոտ:

### 3. ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԵՍ ՈՒ ԵՐԳ

1 (43).

#### ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԵՍ ՈՒ ԵՐԳ

Արցախում հարսանեկան ծեսի վերաբերյալ՝ թե ինչպիսի ծիսակատարություններ և ինչ ծիսական երգեր էին կատարում բնօրրանում ապրած տարիներին, պատմել է 88 տարեկան բանասաց Աննա Բագդասարովա Ակոպովան:

Հարսի գլուխը քող էին զցում: Հարսը նույնիսկ փեսային չէր տեսնում, իսկ կեսուրին և պատրոնին<sup>97</sup>, տեսնում էր, երբ մտնում էր նրանց տուն:

Հարսը հայրական տնից դուրս գալու ժամանակ երգում էր.

*Վայ, ազի ջան, փանրմ ըն,  
Հորաս, մորաս հանրմ ըն,  
Վայ, ազի ջան, փանրմ ըն,  
Ազիզ մորաս հանրմ ըն,  
Տանրմ ըն, փանրմ ըն,  
Ազիզ մորաս հանրմ ըն:*

Հարսի բարեկամներն ու հարևանները նվերներ էին տալիս նրան: Հետո նստեցնում էին ձիու վրա: Հարսի ախպերը ձիու սանձը բռնած էր լինում: Բոլորը շրջապատում էին հարսին: Հետո հարսին տանում էին փեսայի տուն:

Սկեսուրն ու սկեսրայրը դուրս էին գալիս դիմավորում էին հարսին, մաշալաներ՝ ջահեր, էին վառում և դուրս էին բերում փեսայի առաջը:

Այդ ժամանակ հարսի կողմից մեկը գալիս, նստում էր հարսի պրեդանիայի՝ օժիտի, կապոցի վրա և մինչև փող չէին տալիս՝ չէր զիջում:

*Վայ, ազի ջան, աշքղ լիւս,  
Տղադ պերենք, հարսդ պերենք,  
Էկած պարեկամներիդ աշքղ լիւս:*

Փեսայի տան շենը մտնելիս հարսի ոտքերի տակ ափսե էին դնում, որ կոտրի: Հարսի գլխին մանրադրամ, չիր ու չամիչ կամ շաքար էին շաղ տալիս:

Փեսայի տանը՝ զարդարված, առատ սեղանի շուրջ նստում հաց էին ուտում, թագավորի, թագուհու, նաև խնամիների կենացներն էին խմում:


Այա սազանդարը՝ նվագողը, դադարեցնում էր նվագը: Փեսայի բարեկամները, որպես նվեր, փող են տալիս կամ մերել<sup>98</sup>, սունդուկ՝ հագուստները

97 Պատրոն – սկեսրայր:

98 Մերել (ոռու.) – կահույք:

պահելու համար, կուվշին՝ փարչ, և այլ կարևոր իրեր: Նաղարաջին՝ տեփ խփողը, այսինքն՝ թմբկահարը, բարձրաձայն հայտարարում էր նվիրատուի անունը:

Երգում էին, պարում և ուրախանում, մաղթում էին նորապսակներին երջանկություն:



#### 4. ԱՃԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՐԳԵՐ

1 (44).

##### ԿԱԼԻ ԵՐԳ

Հով արա, հո՛, Ջեյրան ջան,  
Կալը թակինքյ, Ջեյրան ջան,  
Ցորենը հանինքյ, Ջեյրան ջան,  
Ցորենը աղինքյ, Ջեյրան ջան,  
Հով արա, հո՛, հո՛, հո՛, հո...

2 (45).

##### ՅՈՐՈՎԵԼ

Ձիգ փոս, քաշի, այ եզո՛,	Խոր-խոր ակոս դե փորի,
Արա հո՛, Մարալ հո՛,	Արա հո՛, Մարալ հո՛,
Լուծդ մաշի, այ եզո՛,	Մաճը բոնողն իմ հերն ա,
Արա հո՛, Մարալ, հո՛:	Արա հո՛, Մարալ հո՛:

3 (46).

##### ՄՈԹԱ՛Լ, ՄՈԹԱ՛Լ

Մոթա՛լ, մոթա՛լ,	Նա հիւր առե,
Դիլի մոթալ,	Նա մար առե,
Հեյրան դուլի,	Լակուս քցի,
Ջեյրան դուլի,	Տիւս քցի:

4 (47).

##### ԿՈՆՏՆՏԵՍԱՅԻՆ ԵՐԳ

Ծլել է արբա, ծփում է արբա,	Եկել է նորը, խնդության օրը,
Կորել է դարդա, ջան,	Գյոզալ <sup>99</sup> փրակորրը, ջան:
Խնդուն-զվարթ է.	Մովելի գալը խոր թաղեց գալը,
Բացված նոր վարդ է,	Կանաչ-կարմիր է, ջան:
Կյանքը ազար է, ջան:	Շողիկը դող է, արևի շող է.
Կանաչ է դաշտը,	Շողիկս նոր է, ջան,
Կորավ երաշտը,	Կարմիր թռչուն է՝ ազար բաղի մեջ,
Ամառը հաշտ է, ջան,	Պիոներ Շողիկ, ջան:

99 Գյոզալ (թուրք.) – գեղեցիկ:

## 5. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՎ ԾԻՍԱԿԱՆ ԵՐԳԵՐ

1 (48).

### ՄԱՐՏԻ 8-Ն Ա, ԱՅ ՆԱՆԻ

Լաշակդ պիւց, այ նանի,  
Քիթկայդ պիւց, այ նանի,  
Թող արև քա՛ չորանս  
Արցունք ու լաց, այ նանի:

Էնքան չաննադ<sup>100</sup> կապ մնաց,  
Տափակել ա, այ նանի,  
Քիթ ու պերանդ ծովնովել,  
Տնն վիճակդ, այ նանի:

Հոկրեմբերը քեզ համար  
Նոր կյանք պերավ, այ նանի,  
Ցուրտ ձմեռը վերացավ,  
Գարուն դարձավ, այ նանի,

Ականջներդ պիւց արա,  
Էսօր Մարտի 8-ն ա.  
Շաբաշ<sup>101</sup> կանչի, ծափ արա,  
Կանանց փոռն ա, այ նանի:

2 (49).

### ՔՈՒՅՐԻԿԻՍ՝ ՏՈՒՓԼԻ, ԿԱԼՈՇ

Քոյրիկիս՝ փոսիլի<sup>102</sup>, կալոշ<sup>103</sup>,  
Մայրիկիս՝ կոշիկներ,  
Իսկ հայրիկիս՝ մի զոյգ փրեխ,  
Էն էլ փոկեր չունենա:  
Դարդ ու բալա ա,  
Ցավ ու կրակ ա:

Քոյրիկիս՝ մի փայտոն<sup>104</sup>,  
Մայրիկիս՝ դիլիջան,  
Հայրիկիս՝ մի արաբա,  
Էն էլ ակներ չունենա:  
Դարդ ու բալա ա,  
Ցավ ու կրակ ա:

Քոյրիկիս՝ շոկվի<sup>105</sup> դերյա<sup>106</sup>,  
Մայրիկիս՝ արիսալուդ,  
Խեղճ հայրիկիս՝ մի փոխան,

Էն էլ ռեզին չունենա:  
Դարդ ու բալա ա,  
Ցավ ու կրակ ա:

Քոյրիկիս՝ դոլմա,  
Մայրիկիս՝ բոգրաշ,  
Խեղճ հայրիկիս՝ անհամ ճաշ,  
Էն էլ առանց աղ:  
Դարդ ու բալա ա,  
Ցավ ու կրակ ա:

Քոյրիկիս՝ ամեն օր,  
Մայրիկիս՝ ամեն շաբաթ,  
Խեղճ հայրիկիս՝ կես դոյլ ջուր,  
Էն էլ առանց սապոն<sup>107</sup>:  
Դարդ ու բալա ա,  
Ցավ ու կրակ ա:

100 Չաննա (թուրք.) – կզակ:

101 Շաբաշ (ռուս.) – բանթոդ, գործադադար:

102 Տուֆլի (ռուս.) – բարձրակրունկ կոշիկ:

103 Կալոշ (ռուս.) – կրկնակոշիկ:

104 Փայտոն (ռուս.) – ձիակառք:

105 Շոկվի (ռուս.) – մետաքսյա:

106 Դերյա – զգեստ:

107 Սապոն (թուրք.) – օճառ:

## ՁԵՉ՝ ԲԱՐԵԿԵՆՂԱՆ, ՄԵՉ՝ ԲԱՐԻ ՉԱՏԻԿ

— Գնացեք, րեւեք, ղիլ է կերել այգին,  
Գնացին, րեւսան այծն է կերել այգին.  
Ձեզ՝ Բարեկենդան, մեզ՝ բարի Ջարիկ:

— Գնացեք, րեւեք, ղիլ է կերել այծը,  
Գնացին, րեւսան գայլն է կերել այծը,  
Գայլն ու այծը, այծն ու այգին.  
Ձեզ՝ Բարեկենդան, մեզ՝ բարի Ջարիկ:

— Գնացեք, րեւեք, ղիլ է կերել գայլը,  
Գնացին, րեւսան արջն է կերել գայլը,  
Արջն ու գայլը, գայլն ու այծը, այծն ու այգին.  
Ձեզ՝ Բարեկենդան, մեզ՝ բարի Ջարիկ:

— Գնացեք, րեւեք, ղիլ է կերել արջը,  
Գնացին, րեւսան սուրն է կերել արջը, սուրն ու արջը,  
Արջն ու գայլը, գայլն ու այծը, այծն ու այգին.  
Ձեզ՝ Բարեկենդան, մեզ՝ բարի Ջարիկ:

— Գնացեք, րեւեք, ղիլ է կերել սուրը,  
Գնացին, րեւսան ժանգն է կերել սուրը,  
Ժանգն ու սուրը, սուրն ու արջը, արջն ու գայլը,  
Գայլն ու այծը, այծն ու այգին.  
Ձեզ՝ Բարեկենդան, մեզ՝ բարի Ջարիկ:

— Գնացեք, րեւեք, ղիլ է կերել ժանգը,  
Գնացին, րեւսան յուղն է կերել ժանգը,  
Մուկն ու յուղը, յուղն ու ժանգը, ժանգն ու սուրը,  
Սուրն ու արջը, արջն ու գայլը, գայլն ու այծը, այծն ու այգին.  
Ձեզ՝ Բարեկենդան, մեզ՝ բարի Ջարիկ:

— Գնացեք, րեւեք, ղիլ է կերել յուղը,  
Գնացին, րեւսան մուկն է կերել յուղը,  
Մուկն ու յուղը, յուղն ու ժանգը, ժանգն ու սուրը,  
Սուրն ու արջը, արջն ու գայլը, գայլն ու այծը, այծն ու այգին.  
Ձեզ՝ Բարեկենդան, մեզ՝ բարի Ջարիկ:

— Գնացեք, րեւեք, ղիլ է կերել մուկը,  
Գնացին, րեւսան կապոնն է կերել մուկը,  
Կապոնն ու մուկը, մուկն ու յուղը, յուղն ու ժանգը,

Ժանգն ու սուրբ, սուրն ու արջը, արջն ու գայլը,  
Գայլն ու այծը, այծն ու այգին.  
Ձեզ՝ Բարեկենդան, մեզ՝ բարի Ջարիկ:

— Գնացեք, րեւելք, ի՞նչ է փարել կապուն,  
Գնացին, րեւսան հարսն է փարել կապուն,  
Հարսն ու կապուն, կապուն ու մուկը, մուկն ու յուղը,  
Յուղն ու ժանգը, ժանգն ու սուրբ, սուրն ու արջը,  
Արջն ու գայլը, գայլն ու այծը, այծն ու այգին.  
Ձեզ՝ Բարեկենդան, մեզ՝ բարի Ջարիկ:

— Գնացեք, րեւելք, ի՞նչ է փարել հարսը,  
Գնացին, րեւսան փեսան է փարել հարսը,  
Փեսան ու հարսը, հարսն ու կապուն, կապուն ու մուկը,  
Մուկն ու յուղը, յուղն ու ժանգը, ժանգն ու սուրբ,  
Սուրն ու արջը, արջն ու գայլը, գայլն ու այծը, այծն ու այգին.  
Ձեզ՝ Բարեկենդան, մեզ՝ բարի Ջարիկ:





## 6. ԿԱՏԱԿԵՐԳԵՐ

1 (51).

ՍԱՐ, ՍԱՐ

Սար, սար, սարի րկինն անի կանեմ,  
Ջան, ջան, մոկը ճրիցդ կախ կանեմ,  
Ջան, ջան, ես սարերի ծաղիկն եմ,  
Ջան, ջան, ես Լևոնի քոյրիկն եմ:

2 (52).

ԿԻՍԼԱՎՈՂՍԿԻ ՕՐԻՈՐԴՆԵՐԸ

Կիսլավողսկի օրիորդները  
Ժամը տասին ըն գարթնում,

Մաշքը<sup>108</sup> կոտրած կարվի նման,  
Ման ըն կյնի բուլվարում<sup>109</sup>:

3 (53).

ԾԻՏԸ ԾԱՌԻՆ ՏԻՏԻԿ ԱՐԱՎ

Ծիրը ծառին տիտիկ արավ,  
Ախորնիկը<sup>110</sup> ուրիտ արավ<sup>111</sup>,  
Վրեպնան փոնավ, դամոյ<sup>112</sup> տարավ,  
Ժարովսիկում<sup>113</sup> ժարիտ արավ<sup>114</sup>,  
Նարեց մի լավ կուշիտ արավ<sup>115</sup>.  
Ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ:

---

108 Մաշք – մեջք:

109 Բուլվար (ռուս.) – ճեմելիք:

110 Ախտոնիկ (ռուս.) – որսորդ:

111 Ուրիտ (ռուս.) անել – սպանել:

112 Դամոյ (ռուս.) – դեպի տուն:

113 Ժարովսիկ (ռուս.) – տապակ:

114 Ժարիտ (ռուս.) անել – տապակել:

115 Կուշիտ (ռուս.) անել – ուտել:

## 7. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՎ ՉԻՆՎՈՐԻ ԵՐԳԵՐ

1 (54).

ՆԵՄԵ՛Ց, ՆԵՄԵ՛Ց, ԿՈՒՐԱ՞ ՏԻ

Նեմե՛ց, նեմե՛ց, կուդա՛ տի<sup>116</sup>,                      Հավի բուդ ա՛, դե՛ մին նազադ<sup>118</sup>,  
Գիդացել ես, թե Բըդըդորսկը<sup>117</sup>            Բոմբը<sup>119</sup> կրամ կնդազադ<sup>120</sup>:

2 (55).

ՀՈՒԼԻՍ ԱՄՍՎԱ ՔՍԱՆՅԻՆԳԻՆ

Հուլիս ամսվա քսանհինգին,                Երեք հարյուր հայ քաջերով  
Մոսին հրացանը բռնած ձեռքին,      Բոլորը զինված մոսիններով,  
Թուրքի ոխը մեջը սրտին,                Նենգ թշնամուն լավ ջարդ տալով,  
Կարոն գոչեց՝ տղերք, կովի՛...            Կարոն ընկավ՝ վրեժ կանչելով...

3 (56).

ԱԳՈՒԼԵՑԻ ՔԱԶ ՊԱՏԱՆԻ

Ագուլեցի քաջ պարանի,  
Հորդ, մորդ ո՛վ լուր տանի,  
Ձեզպեսներին միշտ երանի,  
Դո՛ւք եք հույսը Հայասրանի:

4 (57).

ԱՍԿԵՐԱՆԻ ԲԵՐԴԻ ՄԻՋԻՆ

Ինչպես կորյուն քաջ Վարդանը,  
Համազասպը<sup>121</sup> քաջանուն,  
Ասկերանի բերդի միջին  
Կորորում են թշնամուն:

5 (58).

ՍՈՒՍԵՐՍ ՏՈ՛ՒՐ, ՄԱՅՐԻ՛Կ

Սուսերս տո՛ւր, մայրի՛կ,  
Մոսիսս տո՛ւր, քույրի՛կ,  
Հանուն ազգիս թե չգոհվեմ,  
Հապա ինչո՛ւ ծավեցի ես:

116 Կուդա տի (ռուս.) – ո՛ր ես գնում:

117 Բըդըդորսկ – Պյատիգորսկ:

118 Նազադ (ռուս.) – ետ:

119 Բոմբ (ռուս.) – ռումբ:

120 Կնդազադ – գլուխ (ծաղրական):

121 1905–1906 թթ. թաթարական ոտնձգությունների ժամանակ Համազասպ Սրվանձտյանը (1873, Վան - 1921, Երևան) կազմակերպել է Գանձակի հայության հերոսական պաշտպանությունը, երբ իր քաջերի հետ Ասկերանի կիրճում հինգ օր շարունակ կովերով հաղթել է, և 200 հոգուց բաղկացած թուրք ջարդարարների ջոկատից ողջ են մնացել միայն վեցը, որոնք փախուստի են դիմել:

6 (59).

ԱՌԱՎՈՏՅԱՆ ԺԱՄԸ ՈՒԹԻՆ

Առավորյան ժամը ութին,  
Ինձ վայելնկումար կանչեցին,  
Վեջ մեշոկը շալակս փվին,  
Դեպի Կերչը ուղարկեցին:

Երբ որ մրանք Կերչի հողը,  
Միրյա մրավ մահվան դողը,  
Սև մազերս դրին հողը,  
Խարեք մորս՝ վիրավոր եմ:

Դիրքում նստած ժամանակս  
Միյա ընկավ սիրած յարս,  
Ինձ կարոտ է իմ սիրածը,  
Յարս և իմ քաղցր մայրս:

Գյուլեն էկավ, խփեց դոշիս,  
Բժիշկն էկավ, կանգնեց կողքիս,

Չարչարվելով փվի հոգիս,  
Յանա-յանա, թշվաճ բալա:

Դիրքում նստած փեղս թաց էր,  
Քամին փչեց, վերքս բաց էր,  
Գնդակ խփողն անաստված էր,  
Յանա-յանա, դիլիտճ բալա:

Մեծ եղբայր ջան, ես մեռնում եմ,  
Ընտանիքս քեզ եմ փայխս,  
Ընտանիքս լավ կպահես,  
Ձեռքիդ թիքեն չխրնայես:

Ընկերներ ջան, հավաքվեցեք,  
Դողուները փչիլ փվեք,  
Գերեզմանիս քարի վրեն  
Սայաթ-Նովեն երգիլ փվեք:

7 (60).

ԵՍ ԻՄ ՎԻՃԱԿՍ ՅԱՆԵՏԻ

Ես իմ վիճակս հանեցի,  
Ընկա զինվոր ու գնացի,  
Տսից-փեղից զրկվեցի,  
Զինվորության մեջ մնացի:

Իմ մայրիկը ինձ պահել է,  
Նահաշուն բալին օրորել է,  
Օրորոցի մեջ մեռնեի,  
Բալքի զինվոր չզրնայի:

Փութ ու կես շոր վերցրեցի,  
Թիֆլիզից ճանապարհվեցի,  
Անուշ քունս խանգարեցի,  
Զինվորության մեջ մնացի:

Արի՛, արի՛, իմ սիրելի,  
Ես գնում եմ զինվորության,

Գուցե գնամ, էլ ետ չգամ,  
Կանաչ կյանքիս վերջը գրնամ:

Ես գնում եմ, հեռանում եմ  
Այս աշխարհի երեսից,  
Գերեզմանիս մոտենում եմ,  
Որ փորած է սև հողից:

Այս երգը ես եմ կապել,  
Աղի արցունք շար եմ թափել,  
Իմ սիրուհու մոտ հիշատակ՝  
Այն մատանին ես եմ փվել:

Արի՛, արի՛, իմ ազատ օրեր,  
Իմ հինգ փարին երբ լրանա,  
Եթե զոհվեմ ես Դազեստան,  
Չեմ մոռանա, Մայր Հայաստան:

8 (61).

ՍԱԼԴԱԹ ՏՐԻ ՄՈՐ ԵՐԳԸ

Սալդաթ տղիս մարտաղ ընիմ,  
 Աչքերիս քուն չի կյանի,  
 Մարներս գրիչ կշինիմ,  
 Արցունքս թանաք կշինիմ,  
 Քեզ նամակ կկրիմ, որդի ջան.  
 «Անհանգիստ սրտիս  
 Ուրախ մի օր պեր:  
 Աման, տեր Աստված,  
 Չմեռնի իմ բալեն,  
 Առողջ ու զվարթ  
 Տուն գա իմ բալեն»:

9 (62).

ՄՈՐ ԲԱՂՁԱՆԲԸ

Օտեմ մի բալս,	Մին մենձ մեղալ.
Անուն է Արշակ,	Օգըմ ըմ տեսունսս
Նասալնիկից օնի սրացած	Մենձ գեներալ:

10 (63).

ԹՈՂ ԼՈՒՍ ԱՊՐԻՆ ԽԱՂԱՂ, ԵՐՋԱՆԻԿ

Դանդոտ, կարոտ էս կյանքի մեջ Տանջվեցինք մոնք անհանգիստ, Դաղված, էրված ջիգյարներով Մասցինք մոնք անհանգիստ:	Ժողովրդին մեր փչացրին, Մըեզ տնավեր արեցին:  Մենք պիտի կովենք Ինչքան ուժ ունենք, Մեր լոխ կորուստները Փառքով ենք բերենք:
Մոնք շար մըեձ ցեղ ունեինք, Բոլորին էլ կորցրինք. Էկանք-հասանք Պըրտիղորակ, Նեռժեղի մոնք կարել չընք Հանգիստ մասնք տանջանքից:	Թող մեր անգին Հայոց ազգին Էն ուժն ու պատիվն ինի, Որ իլնն ա հին-հին վախարից, Թող փրկի Տերը սաղ աշխարքին, Լոխ էլ սարին իսաղաղ, երջանիկ:
Բավական է, մեր ծնողներն Ինչքան արյուն թափեցին,	

### III.

## ԱՍՈՒՅԹԱՅԻՆ ԲԱՆԱՅՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ

### 1. ՄԱՆԿԱԿԱՆ ԹՈԹՈՎԱՆՔՆԵՐ

1 (64).

#### ՓԼՋՄԼԵՑԻՆ

Փրլլջմլէցի դէդո Կևանէն ծոռն ըմ,  
Փրլլջմլէցի Ղազարէն ծոռն ըմ,  
Փրլլջմլէցի Անդրէյէն թոռն ըմ:

2 (65).

#### ԽՈՒՄԱՅԻ ՊԱԴԱՍԽԱՆԸ

- Մայրդ որտե՞ղ է աշխատում:
- Ռոդդոմ<sup>122</sup>:
- Ի՞նչ է անում:
- Խոհաւ ա պրոնրմ:



122 Ռոդդոմ (ռուս.) – ծննդատուն:

## 2. ԱՌԱՃՆԵՐ, ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ

1 (66).

Ամեն մարթոու հետե ուրան վրեղն ա անօջ:

2 (67).

Ամենաքաղցրը՝ մարթին քրտնոնքն ա:

3 (68).

Աշխադաձ հացն ա հալալ:

4 (69).

Աշխարքը շոռ ա եկալ, դրախտը ուրան վրեղըմը քթալ:

5 (70).

Ըշխարքես ամենադուզ քաթը «Քաջ Նազարն է»:

6 (71).

Հնրը հնձի, մարը փնջի, խոխան օղի, վրեռը պնդի:

7 (72).

Հնրուր տըրեկան էլ ինիմ, ծոռ փադան չալիզ չըմ շինիլ:

8 (73).

Նաաբառոտ<sup>123</sup> մունք չիստի արմյանսկի ընք խոսըմ:

9 (74).

Պառապ ծին ջրհիլանալ չի, թն խօզիս պոչն ու յալը<sup>124</sup>:

10 (75).

Սարը սարին պտահըմ չի, մարթը մարթին պտահըմ ա:

11 (76).

Վըչխարեն տմական օտըմ չըմ, քմական մոտե ա:

12 (77).

Փեշքերքըդ թափ մի՛ տա՝ կաղնի, տու եկ հպարապ մի՛ կաղնի:

123 Նաաբառոտ (ռուս.) – ընդհակառակը:

124 Յալ (թուրք.) – բաշ:

### 3. ՃՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ

1 (78).

Քյւթ, քյւթ,  
Մին չվալ ցակար<sup>125</sup>,  
Վէչ կոթ օնի, վէչ արկար<sup>126</sup>:

2 (79).

Ճիաց են կրրեն՝ օխարը կյուլ<sup>127</sup>,  
Օխարը կյուլին՝ մի քնկրնկ:  
Բնկրնկ, քնկրնկ, փոննը պեց,  
Հասանը կյամ ա՝ կրոխը պեց:

3 (80).

Մին հավ օնիւ՝ լոխ փրդնոց,  
Պասպան կորե, քյինսս հոնձ,  
Եփ կրպիրի մի չաղ կրոնձ<sup>128</sup>:  
Տական<sup>129</sup> կրծե՝ փազ կանե,  
Կրլխան կրծե՝ սազ կանե:

4 (81).

Ա՛յ ախպեր, շելակր հինչ ա.  
Քե մարաղ, կյեզար<sup>130</sup> ա:  
Պա ըռաշկենար հինչ ա.  
Կյիզնն<sup>131</sup> ա:

---

125 Յակատ – կացին:

126 Արկարթ – երկարթ:

127 Կյուլ – գայլ:

128 Կրոնձ – կեղտ:

129 Տական – տակից:

130 Կյեզար – գազար, ստեպղին:

131 Կյիզնն – գզած:

#### 4. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1 (82).

Մըեզ էրկու պեն օնինքյ՝  
Սաղ աշխարքըս տրեսնըմ ա,  
Ինքը՝ տեղը:  
(Աչքեր)

2 (83).

Մըեզ մինն օնինքյ՝  
Պիծի պըտըրիան,  
Պրինձավ լիգյը:  
(Բերան)

3 (84).

Մըեզ մինն օնինքյ՝  
Աշխարքս շոռ ա կնլիս,  
Ուրնուգննը կյնն ա տոանը  
Վըեր ընգնըմ:  
(Տրեխ)

4 (85).

Մըեզ մինն օնինքյ՝  
Կկընանչի,  
Կծաղկի սիվտակ,  
Կըկյիրմիրի,  
Ետնան ալ կթուխի:  
(Մոշ)

5 (86).

Մըեզ մինն օնինքյ՝  
Քաքըմ ա, կկըզըմ չի:  
(Հավ)



6 (87).

Մըեզ մինն օսինքյ՝  
Կըլխըյեր տերտակ ա,  
Կըլխըվեր՝ լիգը:  
(Գլխարկ)

7 (88).

Մըեզ մինն օսինքյ՝  
Միոտնանի,  
Տիւ կա տոռնը,  
Շոն կտանի:  
(Մունկ)



## 5. ՄԱՂԹԱՆՔՆԵՐ

1 (89).

Ամեն տրեղ հիշվեք պատվով:

2 (90).

Բախտավոր-երջանիկ լինեք:

3 (91).

Եղնիկի պես թովոաք:

4 (92).

Սեր ունենաք, ծլեք, ծաղկեք:

5 (93).

Ուրախ, երջանիկ լինեք:



## 6. ՕՐՅԱՆՔՆԵՐ

1 (94).

Ազատ, էրկան կյանք ունընաա:

2 (95).

Բարի մարթկանց միշտ ջիհիս<sup>132</sup>:

3 (96).

Գործդ հաջող քիհնա:

4 (97).

Երկրագունդը թըղ բարի ըրագավ ապրի:

5 (98).

Ջորանաա, շուքավեր տըլեոնաա:

6 (99).

Կյանքդ լնվ օրերավ լիգը ինի:

7 (100).

Հինչ նեղութին քաշըմ ըս, վերչըտ բարի թըղ ինի:



---

132 Ջիհիլ – հանդիպել:

# ՓԱՍՏԱԳՐՈՒՄ

## ՊՅԱՏԻԳՈՐՄԿ ԳԱՂԹԱՃ ԱՐՑԱԽՅԻ ԲԱՆԱՍԱՅՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՂՈՐԴԱՃ ՆՅՈՒԹԵՐԻ (1964 թ.)

Ը/հ	Բանասացի անուն-ազգանունը	Ծննդյան տարեթիվը և վայրը	Գրառման վայրը
<b>I.</b>			
<b>ՎԻՊԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ</b>			
<b>1. ՀՐԱՇՄԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐ</b>			
1 (1).	Աննա Ակոպովա	1876 թ., Արցախ	Պյատիգորսկ
2 (2).	Աննա Ակոպովա	1876 թ., Արցախ	Պյատիգորսկ
3 (3).	Սոնյա Դանիելյան	1904 թ., Արցախ	Պյատիգորսկ
4 (4).	Աննա Ակոպովա	1876 թ., Արցախ	Պյատիգորսկ
5 (5).	Թանկե Սարգսյան	1903 թ., Արցախ	Պյատիգորսկ
6 (6).	Արևիատ Վարդանյան	1905 թ., Արցախ	Պյատիգորսկ
<b>2. ԻՐԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐ</b>			
1 (7).	Լուսիկ Սարգսյան	1904 թ., Արցախ	Պյատիգորսկ
2 (8).	Աշխեն Վանիլովա	1904 թ., Արցախ	Պյատիգորսկ
3 (9).	Աշխեն Վանիլովա	1904 թ., Արցախ	Պյատիգորսկ
4 (10).	Արևիատ Վարդանյան	1905 թ., Արցախ	Պյատիգորսկ
<b>3. ԱՌԱԿՆԵՐ</b>			
1 (11).	Արևիատ Վարդանյան	1905 թ., Արցախ	Պյատիգորսկ
2 (12).	Վարսենիկ Պողոսյան	1904 թ., Արցախ	Պյատիգորսկ
<b>II.</b>			
<b>ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ</b>			
<b>1. ՕՐՈՐՈՑԱՅԻՆՆԵՐ</b>			
1 (13). – 8 (20).	Աննա Ակոպովա	1876 թ., Արցախ	Պյատիգորսկ
9 (21).	Աշխեն Վանիլովա	1904 թ., Արցախ	Պյատիգորսկ
10 (22).	Թանկե Սարգսյան	1903 թ., Արցախ	Պյատիգորսկ

<b>2. ՍԻՐԱՅԻՆ ԵՐԳԵՐ</b>			
1 (23). – 14 (36).	Լուսիկ, Թանկե Սարգսյաններ	1904 թ., Արցախ 1903 թ., Արցախ	Պյատիգորսկ Պյատիգորսկ
15 (37). – 19 (41).	Աստղիկ Հարությունյան	1904 թ., Արցախ	Պյատիգորսկ
20 (42).	Լուսիկ, Թանկե Սարգսյաններ	1904 թ., Արցախ 1903 թ., Արցախ	Պյատիգորսկ Պյատիգորսկ
<b>3. ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԵՍ ՈՒ ԵՐԳ</b>			
1 (43).	Աննա Ակոպովա	1876 թ., Արցախ	Պյատիգորսկ
<b>4. ԱՇԵՆԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՐԳԵՐ</b>			
1 (44).	Մայկո մայրիկ	1897 թ., Արցախ	Պյատիգորսկ
2 (45).	Լուսիկ, Թանկե Սարգսյաններ	1904 թ., Արցախ 1903 թ., Արցախ	Պյատիգորսկ Պյատիգորսկ
3 (46).	Թանկե Սարգսյան	1903 թ., Արցախ	Պյատիգորսկ
4 (47).	Լուսիկ, Թանկե Սարգսյաններ	1904 թ., Արցախ 1903 թ., Արցախ	Պյատիգորսկ Պյատիգորսկ
<b>5. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՎ ԾԻՍԱԿԱՆ ԵՐԳԵՐ</b>			
1 (48).	Լուսիկ, Թանկե Սարգսյաններ	1904 թ., Արցախ 1903 թ., Արցախ	Պյատիգորսկ Պյատիգորսկ
2 (49).	Վարդանուշ Գրիգորյան	1904 թ., Արցախ	Պյատիգորսկ
3 (50).	Լուսիկ, Թանկե Սարգսյաններ	1904 թ., Արցախ 1903 թ., Արցախ	Պյատիգորսկ Պյատիգորսկ
<b>6. ԿԱՏԱԿԵՐԳԵՐ</b>			
1 (51).	Լուսիկ, Թանկե Սարգսյաններ	1904 թ., Արցախ 1903 թ., Արցախ	Պյատիգորսկ Պյատիգորսկ
2 (52).	Թանկե Սարգսյան	1903 թ., Արցախ	Պյատիգորսկ
3 (53).	Աստղիկ Հարությունյան	1904 թ., Արցախ	Պյատիգորսկ
<b>7. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՎ ԶԻՆՎՈՐԻ ԵՐԳԵՐ</b>			
1 (54).	Վարդանուշ Գրիգորյան	1904 թ., Արցախ	Պյատիգորսկ
2 (55).	Վարդանուշ Գրիգորյան	1904 թ., Արցախ	Պյատիգորսկ
3 (56).	Աշխեն Վանիլովա	1904 թ., Արցախ	Պյատիգորսկ
4 (57).	Աշխեն Վանիլովա	1904 թ., Արցախ	Պյատիգորսկ
5 (58).	Աշխեն Վանիլովա	1904 թ., Արցախ	Պյատիգորսկ
6 (59).	Թանկե Սարգսյան	1903 թ., Արցախ	Պյատիգորսկ
7 (60).	Թանկե Սարգսյան	1903 թ., Արցախ	Պյատիգորսկ

8 (61).	Աշխեն Վանիլովա	1904 թ., Արցախ	Պյատիգորսկ
9 (62).	Մայկո մայրիկ	1897 թ., Արցախ	Պյատիգորսկ
10 (63).	Աշխեն Վանիլովա	1904 թ., Արցախ	Պյատիգորսկ
<b>III.</b>			
<b>ԱՍՈՒՅԹ-ԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ</b>			
<b>1. ՄԱՆԿԱԿԱՆ ԹՈԹՈՎԱՆՔՆԵՐ</b>			
1 (64).	Մարգարիտա Ավազյանց	1961 թ., Պյատիգորսկ	Պյատիգորսկ
2 (65).	Անժելա Ավազյանց	1961 թ., Պյատիգորսկ	Պյատիգորսկ
<b>2. ԱՌԱԾՆԵՐ, ԱՍՏՅՎԱԾՔՆԵՐ</b>			
1 (66).	Թանկե Սարգսյան	1903 թ., Արցախ	Պյատիգորսկ
2 (67).	Թանկե Սարգսյան	1903 թ., Արցախ	Պյատիգորսկ
3 (68).	Թանկե Սարգսյան	1903 թ., Արցախ	Պյատիգորսկ
4 (69).	Աննա Ակոպովա	1876 թ., Արցախ	Պյատիգորսկ
5 (70).	Թանկե Սարգսյան	1903 թ., Արցախ	Պյատիգորսկ
6 (71).	Անժելա Ավազյանց	1961 թ., Պյատիգորսկ	Պյատիգորսկ
7 (72).	Աշխեն Վանիլովա	1904 թ., Արցախ	Պյատիգորսկ
8 (73).	Աստղիկ Հարությունյան	1904 թ., Արցախ	Պյատիգորսկ
9 (74).	Թանկե Սարգսյան	1903 թ., Արցախ	Պյատիգորսկ
10 (75).	Թանկե Սարգսյան	1903 թ., Արցախ	Պյատիգորսկ
11 (76).	Թանկե Սարգսյան	1903 թ., Արցախ	Պյատիգորսկ
12 (77).	Թանկե Սարգսյան	1903 թ., Արցախ	Պյատիգորսկ
<b>3. ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ</b>			
1 (78). – 4 (81).	Աննա Ակոպովա	1876 թ., Արցախ	Պյատիգորսկ
<b>4. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ</b>			
1 (82). – 7 (88).	Աննա Ակոպովա	1876 թ., Արցախ	Պյատիգորսկ
<b>5. ՄԱՂԹԱՆՔՆԵՐ</b>			
1 (89). – 5 (93).	Աշխեն Վանիլովա	1904 թ., Արցախ	Պյատիգորսկ
<b>6. ՕՐՀՆԱՆՔՆԵՐ</b>			
1 (94). – 7 (100).	Թանկե Սարգսյան	1903 թ., Արցախ	Պյատիգորսկ



## ՅԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

ՎԵՐԺԻՆԵ ԳԱՌՆԻԿԻ ՍՎԱԶԼԵԱՆ քանազետ, քանահավաք, ժողովրդագետ, ցեղասպանագետ, ՀՀ Գիտության վաստակավոր գործիչը ծնվել է 1934 թ. Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում, Հայոց ցեղասպանությունից մազապուրծ, գրող, հասարակական գործիչ Գառնիկ Սվազլյանի ընտանիքում:

Նախնական կրթությունն ստացել է տեղի հայկական Պողոսյան ազգային վարժարանում, ապա նաև՝ Անարատ Հղության հայ քույրերի ֆրանսիական թեքունով դպրոցում:

1947 թ. ծնողների հետ հայրենադարձվել է Մայր Հայաստան:

1952–1956 թթ. սովորել և «Գերագանցությամբ» ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի Պատմալեզվագրական բաժինը:

1958 թ. աշխատել է Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի Հայ ժողովրդական քանահյուսության բաժնում՝ որպես լաբորանտ:

1958–1961 թթ. ուսումը շարունակել է ՀՍՍՌ ԳԱ ասպիրանտուրայում՝ «Հայ ժողովրդական քանահյուսություն» մասնագիտությամբ (գիտական ղեկավար՝ ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյան): Ասպիրանտական ուսումնառության ընթացքում եղել է Մ. Աբեղյանի անվան թոշակառու:

1961 թ. աշխատանքի է անցել ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հայ ժողովրդական քանահյուսության բաժնում, սկզբում՝ կրտսեր, 1972 թվականից Բանահյուսական սկզբնաղբյուրների վավերագրման բաժնում՝ ավագ, 1995 թվականից առ այսօր՝ առաջատար գիտաշխատողի պաշտոններով:

1996–2004 թթ. միաժամանակ աշխատել է նաև ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում:

1965 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1995 թ.՝ դոկտորական թեզերը:

1996–2004 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստի-

տուտի Գիտական խորհրդի անդամ, իսկ 1996-2018 թթ.՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության, ինչպես նաև Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտներում գործող Մասնագիտական խորհուրդների անդամ:

Մասնակցել է հանրապետական և միջազգային մի շարք գիտաժողովների, ինչպես նաև՝ զեկուցել սփյուռքահայ գաղթօջախների տարբեր կազմակերպություններում (Ռուսաստան, Հունաստան, Ֆրանսիա, Ավստրիա, Գերմանիա, ԱՄՆ, Կանադա, Լիբանան, Սիրիա, Եգիպտոս, Թուրքիա)՝ հանդես գալով բանագիտությանը, ժողովրդագիտությանը, ցեղասպանագիտությանը և Հայ Դատին առնչվող թեմաներով:

Հեղինակ է 500-ից ավելի գիտական և հրապարակախոսական հրատարակությունների, ընդ որում՝ շուրջ 30 գրքերի, որոնք տարբեր լեզուներով լույս են տեսել Հայաստանում, Սփյուռքում և արտերկրում:

Բանասիրական գիտությունների դոկտոր Վերժինե Սվազյանն սկսած 1955 թվականից՝ ավելի քան 65 տարիների ընթացքում, անձնական նախաձեռնությամբ և արևմտահայի արյան կանչով բառ առ բառ, պատառիկ առ պատառիկ գրառել, ձայնագրել, տեսագրել, ուսումնասիրել և հրատարակել է մեր զավթված Երկրի՝ Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Անատոլիայի հայաբնակ ավելի քան 150 տեղավայրերից բռնի տարագրված, ապա՝ Հայաստանում և Սփյուռքում (Ռուսաստան, Հունաստան, Ֆրանսիա, Իտալիա, Գերմանիա, ԱՄՆ, Կանադա, Սիրիա, Լիբանան, Իրաք, Եգիպտոս, բալկանյան երկրներ, Թուրքիա) բնակություն հաստատած Հայոց ցեղասպանության ականատես վերապրողների իրենց բարբառներով հաղորդած ժողովրդական բանավոր ավանդույթի տարաբնույթ նշխարները, ինչպես նաև՝ փաստավավերական վկայություններն ու պատմական բնույթի երգերը (հայերեն և թուրքալեզու)՝ անհետ կորստից փրկելով և տարբեր լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, թուրքերեն) աշխարհին ու մարդկության արդար դատին ներկայացնելով հայ ժողովրդի պատմական հավաքական հիշողությունը:

Վերժինե Սվազյանի աշխատանքների մասին Հայաստանում և արտերկրում լույս են տեսել բազմաթիվ գրախոսականներ, հանրագիտարանային և այլ հոդվածներ, ինչպես նաև նկարահանվել է ֆիլմ՝ «*Սվազյան գերդաստանի հավաքանքը*» խորագրով (սցենարի հեղինակ և ռեժիսոր՝ Լաուրա Մինասյան, Երևան, 2009): Այն նվիրված է 20-րդ դարի ընթացքում Սվազյան գերդաստանի իրարհաջորդ երեք սերունդների ազգանպաստ և հայրենանպաստ գործունեությանը՝ ընդգրկելով հայ ժողովրդի համար բախտորոշ մի ժամանակաշրջան:



## Աշխատությունները.

- Սարգիս Հայկունի.** **Կյանքն ու գործը**, «Հայ ազգագրություն և բանասիրություն», հ. 4, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, 78 էջ:
- Արցախ-Ուտիք**, «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. 6, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, 778 էջ:
- Տարոն-Տուրուբերան**, «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. 12, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, 650 էջ:
- Մուսա լեռ**, «Հայ ազգագրություն և բանասիրություն», հ. 16, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, 215 էջ:
- Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը**, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, 408 էջ:
- Մեծ Եղեռն. Արևմտահայոց բանավոր վկայություններ**, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1995, 234 էջ:
- Մեծ Եղեռնը արևմտահայոց հուշապատումներում և թուրքալեզու երգերում**, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1997, 32 էջ:
- Геноцид в воспоминаниях и туркоязычных песнях западных армян.** Ереван, Изд.-во «Гитутюн» НАН РА, 1997, 32 с.
- Վան-Վասպուրական**, «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. 15, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1998, 590 էջ:
- The Armenian Genocide in the Memoirs and Turkish Language Songs of the Eyewitness Survivors.** Yerevan: “Gitoutyoun” Publishing House of NAS RA, 1999, 44 p.
- Պոլսահայոց բանահիստիոնը**, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, 616 էջ:
- Հայոց ցեղասպանություն. Ակնատես վերապրողների վկայություններ**, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, 500 էջ:
- Հայոց ցեղասպանությունը և պատմական հիշողությունը**, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2003, 144 էջ:
- The Armenian Genocide and Historical Memory.** Yerevan: “Gitoutyoun” Publishing House of NAS RA, 2004, 160 p.
- Le génocide arménien et la mémoire historique du peuple.** Erevan: Ed. «Guitoutium» de l’Académie Nationale des Sciences d’Arménie, 2005, 140 p.
- Der Genozid an den Armeniern und die historische Erinnerung des Volkes.** Jerewan: Verlag „Gitutjun“ der Nationalen Akademie der Wissenschaften der Republik Armenien, 2005, 140 S.
- The Armenian Genocide and the People’s Historical Memory.** Yerevan: “Gitoutyoun” Publishing House of NAS RA, 2005, 140 p.
- Геноцид армян и историческая память народа.** Ереван, Изд.-во «Гитутюн» НАН РА, 2005, 140 с.
- Ermeni Soykırımı ve Toplumsal Hafıza.** İstanbul: “Belge” Uluslararası Yayıncılık, 2005, 160 s.
- Anilarda Ermeni Soykırımı ve Yaşayan Görgü Tanıklarının Türkçe Şarkıları.** “Tehcir Türküleri: Anilarda Ermeni Soykırımı” . İstanbul: “Belge” Uluslararası Yayıncılık, 2005, s. 71-100.
- Armenia.** “The Greenwood Encyclopedia of World Folklore and Folklife.” William M. Clements, ed. (4 volumes). Volume 2: Southeast Asia and India, Central and East Asia, Middle East. Westport (Connecticut), London: Greenwood Press, 2006, pp. 357-372.

**Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ**, Երկրորդ համարված հրատ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, 880 էջ, DVD - «Սվազլյան գերդաստանի հավատամքը» / “The Creed of the Svazlian Extended Family”:

**The Armenian Genocide: Testimonies of the Eyewitness Survivors.** Yerevan: “Gitoutyoun” Publishing House of NAS RA, 2011, 850 p., DVD - «Սվազլյան գերդաստանի հավատամքը» / “The Creed of the Svazlian Extended Family.”

**Ermeni Soykırımı: Hayatta Kalan Görgü Tanıklarının Anlattıkları.** İstanbul: “Belge” Uluslararası Yayıncılık, 2013, 1064 s.

**Survivor Testimonies.** “The Armenian Genocide: The Essential Reference Guide.” Ed. Alan Whitehorn. Santa Barbara (California), Denver (Colorado): ABC-CLIO, 2015, pp. 241-243.

**Ծաղիկ թարգմանությանց. Flor de traducciones** [«Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ» գրքից իսպաներեն թարգմանված հատվածներ], Երևան, ԵՊՀ հրատ., 2015, էջ 19-37.

**Մուսա Լեռան հերոսամարտը. Ականատես վերապրողների վկայություններ. The Heroic Battle of Moussa Dagh: Testimonies of the Eyewitness Survivors.** Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. / Yerevan: “Gitoutyoun” Publishing House of NAS RA, 2015, 240 էջ / p., DVD - «Հին և նոր Մուսա Լեռ» / “Old and New Moussa Dagh.”

**Ռուսաստանի հայերի բանավոր ավանդույթի նշխարներ (Գննի Ռոստով և Պյատիգորսկ). Реликвии устного народного творчества армян России (Ростов-на-Дону и Пятигорск). Relics of the Oral Tradition of the Armenians of Russia (Rostov-on-Don and Pyatigorsk).** Երևան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատ./Ереван, Изд.-во ИАЭ НАН РА/Yerevan: Publishing House of IAE NAS RA, 2020, 288 էջ/с./р.:

**Ամերիկահայոց բանավոր ավանդույթը ժամանակի հողովությունում**, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. (տպ. ընթ.):

**Մուսա Լեռան հերոսամարտը. Ականատես վերապրողների վկայություններ. La bataille héroïque du Moussa-Dagh : Témoignages des témoins oculaires survivants.** Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. / Erevan: Ed. « Guitoutiun » de l’Académie Nationale des Sciences d’Arménie, DVD – «Հին և նոր Մուսա Լեռ»/« Le vieux et le nouveau Moussa-Dagh » (տպ. ընթ.).

### **Կազմել և խմբագրել է՝**

Գառնիկ Սվազլյան, **Հայրենիքիս համար**, Երևան, «Հայաստան» հրատ., 1965, 212 էջ:

Գրիգոր Գյոզալյան, **Մուսա լեռան ազգագրությունը**, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2001, 280 էջ, ISBN 5-8080-0472-1:

### **Պարգևները.**

1975 թ. Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Նախագահության կողմից «երկարամյա բարեխիղճ աշխատանքի համար» պարգևատրվել է «ՍՍՀՄ Աշխարհային Վեպերան» շքանշանով:

1983 թ. մարտի 29-ին արժանացել է Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Նախագահության «Գովեսարագրին»:

1985 թ. սեպտեմբերին «Մուսա լեռ» Հայրենակցական Ընդհանուր Միությունը (Բեյրութ) նրան շնորհել է «Պարտաւոր Մուսակոցի» Ոսկե մեդալ:

1992 թ. Հայաստանի «Զեյթուն» Պատմամշակութային Միությունը նրան շնորհել է «Պարավոր Զեյթունցի» կոչում:

- 1995 թ. սեպտեմբերի 22-ին Միւսա լեռան հերոսամարտի 80-ամյա տարելիցի առթիվ Հայաստանի «Միւսա Լեռ» Հայրենակցական Բարեգործական Միության Վարչությունը նրան շնորհել է «**Պատվոգիր**» «Հայրենակցական շարժմանն օժանդակելու և միության աշխատանքներին գործուն մասնակցություն ունենալու համար»:
- 1996 թ. հուլիսի 11-17-ին Թուրքիայում Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքական Աթոռի հիմնադրման 535-ամյակի տոնակատարության շրջանակներում կազմակերպված «Վարդավառի» միջազգային գիտաժողովին մասնակցելու համար նա արժանացել է Հայոց Պատրիարքի «**Գիր Վկայութեանը**»:
- 1999 թ. Հայաստանի «Վան-Վասպուրական» Հայրենակցական Միությունը նրան շնորհել է «**Պատվավոր Վասպուրականցի**» կոչում:
- 2000 թ. ապրիլի 24-ին, Հայոց ցեղասպանության 85-ամյա տարելիցի առթիվ նա արժանացել է ՀՀ ԳԱԱ Նախագահության «**Պատվոգրին**» «Հայկական Հարցի, Հայոց Ցեղասպանության և Սփյուռքահայության պատմության ուսումնասիրության բնագավառում գիտական հետազոտությունների համար, որոնք կարևոր ներդրում են հայ պատմագիտության մեջ»:
- 2001 թ. հունվարի 20-ին արժանացել է Հռոմի Հովհաննես Պողոս Բ Պապի Վատիկանից հղած «**Օրհնության գրին**». Թիվ. 487.634:
- 2002 թ. մայիսին, արժանացել է Սփյուռքի Թեքեան Մշակութային Միութեան «**Հայկաշէն Ուզունեան**» գրական-բանասիրական մրցանակին:
- 2003 թ. ապրիլի 24-ին, ՀՀ ԳԱԱ Նախագահությունը և «Ճշմարիտները հայերի համար» միջազգային կոմիտեն նրան շնորհել են «**Ֆրիպոֆ Նանսենի**» հուշամեդալ «Հայոց ցեղասպանության դատապարտման և մարդասիրական սկզբունքների հաստատման ուղղությամբ ծավալած գիտական և հասարակական գործունեության համար»:
- 2004 թ. ապրիլի 24-ին նրան շնորհվել է **Փարիզի «Արարար» Հայագիտական Ակադեմիայի Պրոֆեսորի** կոչում:
- 2005 թ. ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի առթիվ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը նրան շնորհել է «**Հուշամեդալ**» «Հայոց Մեծ Եղեռն. Ցեղասպանագիտության մեջ ձեռք բերած վաստակի համար. 1915-2005»:
- 2005 թ. հունիսի 26-ին Մոնրեալում (Կանադա) նրան շնորհվել է Պոլսահայ Մշակութային Միութեան «**Ոսկե մեդալ**»:
- 2005 թ. սեպտեմբերի 30-ին Սիրիայում Հ.Բ.Ը.Մ. Հալեպի մասնաճյուղը նրան շնորհել է «**Մետրոպ Մաշրոց**» հուշամեդալ:
- 2006 թ. հունվարի 30-ին Հայաստանի «Հաճըն» Հայրենակցական Միությունը նրան շնորհել է «**Պատվավոր Հաճընցի**» կոչում՝ «Երկրին և պետականությանը մատուցած ծառայությունների և «Հաճըն» հասարակական կազմակերպության գործունեությանը սատարելու և աջակցելու համար»:
- 2006 թ. ապրիլի 24-ին Ալեքսանդրիայի (Եգիպտոս) Հայոց Քաղաքական Ժողովը նրան շնորհել է «**Նեղոսի Բանալի**» Ոսկե հուշամեդալ:
- 2006 թ. հունիսի 28-ին Հայաստանի Հանրապետության Նախագահը և «Ռոբերտ Պողոսյան և Ռոդիներ Ֆոնդը» (Շվեյցարիա) նրան շնորհել են ՀՀ «**Նախագահի Առաջին մրցանակ**» և «**Ոսկե հուշամեդալ**» «Հայոց ցեղասպանության ճանաչման գործում նշանակալի ավանդ ներդնելու համար»:
- 2008 թ. Ամերիկյան Կենսագրական Ինստիտուտը նրան շնորհել է «**21-րդ Դարի Մեծագույն Միպը**» տիտղոս և հուշամեդալ՝ հայ մշակույթն աշխարհին ներկայացնող իր աշխատությունների համար:

- 2009 թ. մարտի 8-ին՝ Կանանց միջազգային օրվա առթիվ, ՀՀ Կրթության և գիտության Նախարարությունը նրան շնորհել է «**Պարվոզիր**» կրթության և գիտության ասպարեզում ունեցած նշանակալի ավանդի համար:
- 2009 թ. «Հայ մշակույթին և Հայոց ցեղասպանության ճանաչմանը մատուցած ծառայությունների և ծննդյան 75-ամյակի առթիվ» Հայաստանի Ազգային Գրադարանի տնօրինությունը նրան արժանացրել է «**Հայ Առաջին Տպագրիչ Հակոբ Մեղասպարի**» հուշամեդալի:
- 2009 թ. Արևմտահայոց բանավոր ավանդությունը կորստից փրկելու կեղարյա բանահավաքչական, բանագիտական գործունեության և ծննդյան 75-ամյակի առթիվ Հայաստանի «Մուսա Լեռ» Հայրենակցական Բարեգործական Միությունը նրան շնորհել է «**1915. Հավերժ Փառք Մուսա Լեռան Հերոսներին**» հուշամեդալ:
- 2011 թ. հուլիսի 11-ին Հայոց Փիլիսոփայական Ակադեմիան նրան պարգևատրել է «**Եռամեծ Փիլիսոփա Դավիթ Անհաղթ**» Մեծ հուշամեդալով և Դիպլոմով:
- 2012 թ. ապրիլի 19-ին «Հայոց Մեծն Տիկին Վերժինե Սվազյանին Հայ Ազգի 1915 թ. ապրիլյան ցեղասպանությունից վերապրածների ցավի ծանրությունը տանելու և Հայաստանի Երրորդ Պետականության կայացմանը Մեծագույն ծառայություն ցուցաբերելու համար» ՀՀ Ատլետիզմի (Պատերիֆտինգ) Ֆեդերացիան նրան պարգևատրել է «**Ծնորհակալագրով**» և «**Ֆեդերացիայի Պարվավոր Անդամ**» ծանրորդի կոչումով ու հուշամեդալով:
- 2013 թ. հոկտեմբերի 14-ին «ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի 70-ամյակի կապակցությամբ գիտության և կրթության բնագավառում մատուցած ակնառու ծառայությունների համար» Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից արժանացել է Պետական պարգևի՝ «**Մովսես Խորենացի**» մեդալի:
- 2015 թ. ապրիլի 10-ին Երևանի Էրեբունի Վարչական Շրջանի ղեկավարության կողմից արժանացել է «**Ծնորհակալագրի**» «Հայոց Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներին մասնակցելու համար»:
- 2015 թ. ապրիլի 20-ին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախ) Ազգային ժողովի Նախագահի կողմից արժանացել է «**Ղարաբաղյան Շարժում**» ազգային ազատագրության 25-ամյակի Ոսկե հուշամեդալի:
- 2015 թ. ապրիլի 20-ին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի կողմից արժանացել է «**Արցախ-Գանձասար**» Ոսկե հուշամեդալի:
- 2015 թ. սեպտեմբերի 17-ին Հայաստանի «Մուսա Լեռ» Հայրենակցական-Բարեգործական Հասարակական Կազմակերպության կողմից արժանացել է «**Պարվոզիր**» և «**1915. Հավերժ Փառք Մուսա Լեռան Հերոսներին**» հուշամեդալի «իր աշխատություններով Մուսա Լեռան պատմությունը, բարբառը, ավանդույթները, կենցաղը և մշակույթը մանրակրկիտ լուսաբանելու համար»:
- 2015 թ. հոկտեմբերի 16-ին Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումները համակարգող Համառուսաստանյան հանձնաժողովի (Մոսկվա) կողմից պարգևատրվել է «**Հայոց ցեղասպանության 100-ամյա հորեղյանական հուշամեդալով**»:
- 2016 թ. սեպտեմբերի 17-ին Հայաստանի Հանրապետության 25-ամյակի առթիվ «գիտության և կրթության բնագավառում ունեցած վաստակի համար» ՀՀ Նախագահը նրան շնորհել է «**Հայասրանի Հանրապետության Գիտության Վասարակավոր Գործիչ**» պատվավոր կոչում՝ Շնորհագրով և Հուշամեդալով:

- 2017 թ. հունիսի 24-ին Կարեն Դեմիրճյանի թանգարանի տնօրինության կողմից պարզևատրվել է ՀՀ քաղաքական և պետական գործիչ, ՀՍՍՀ Կենտկոմի առաջին քարտուղար (1974-1988 թթ.), ՀՀ Ազգային ժողովի նախագահ (1999 թ.) **Կ. Դեմիրճյանի (1932-1999 թթ.) ծննդյան 85-ամյակին ափիոված հուշամեդալով:**
- 2018 թ. հոկտեմբերի 18-ին Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Հարավային գիտական կենտրոնի, Դաշնային հետազոտությունների կենտրոնի կողմից պարզևատրվել է **«Պատվոգրով»** «հայ ժողովրդի պատմության, լեզվի և մշակույթի հետազոտման գործում չխամրող հետաքրքրության և էական ներդրման համար, Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև գիտական կապերի ամրապնդման, ինչպես նաև ի նշան Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի ժողովուրդների միջև բարեկամության»:
- 2020 թ. դեկտեմբերի 23-ին «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը ստեղծման 25-ամյակի (1995 թ.) առթիվ նրան պարզևատրել է **«Ավրորա Մարդիգանյան (1901-1994 թթ.)»** երախտագիտության հուշամեդալով «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին առաջին բանահավաքչական տեսանյութը նվիրելու և ՀՅԹԻ տեսադարանի հիմքը դնելու համար»:

---

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
 ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ,  
 ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի  
 Հնագիտության և ազգագրության ինստիտուտի  
 Առաջատար գիտաշխատող

Հասցե՝ Մարյան 36 փ., բն. 23  
